ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

БИБЛИОГРАФИЯ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ

ТОМ 2 (1900—1956)

С ПРЕДИСЛОВИЕМ И ПРИМЕЧАНИЯМИ

Составил
ОВ. ПЕТРОСЯН

ЕРЕВАН ГОС. КНИЖНАЯ ПАЛАТА Арм. ССР 1957

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

016:05/07(47.925)
Պ-48

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ՀԱՏՈՐ 2 (1900—1956)

ԱՌԱՋԱԲԱՆՈՎ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Կազմեց
ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՌ
ՊԵՏԳՐԱՊԱԼԱՏ

1957

A III/276

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա հատորով ավարտվում է «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան սկզբից մինչև մեր օրերը (1794—1956 թթ.)»։

Մեծածավալ այդ աշխատությունը բաղկացած է երեք հատորից։

Առաջին հատորն ընդգրկում է 1794 թվից մինչև 1900 թիվը լույս տեսած հայերեն 272 պարբերականների նկարագրությունը, հրատարակվել է 1956 թվին։

Երկրորդ հատորն այս գիրքն է, որ ընդգրկում է 1900 թվից մինչև 1956 թիվը լույս տեսած 1174 պարբերականների բիբլիոգրաֆիան։

Երրորդ հատորում առանձնացված են՝ բոլշևիկյան մամուլը (1902—1920 թթ.) և սովետահայ մամուլը (1920—1954 թթ.),— ընդգրկում է 390 պարբերականներ *։

Այսպիսով մեր կազմած «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայում» 1794—1956 թթ. ընդգրկվել է ընդամենը 1836 թերթ ու ժուրնալ և 45 օտար լեզուներով տպագրված պարբերականներ։

Ինչպես այս աշխատության մյուս երկու հատորներում ենք գրել, այստեղ նույնպես կրկնում ենք, որ մեր կազմած բիբլիոգրաֆիան, չենք համարում ոչ լիակատար և ոչ էլ սպառիչ։

Սպառիչ բիբլիոգրաֆիա ընդհանրապես գոյություն չունի, իսկ աշխարհով մեկ ցրված հայ գրքի և պարբերական մամուլի լիակատար բիբլիոգրաֆիա կազմելն առայժմս գոնե անհնարին է։

Անհնարին է, որովհետև ոչ Սովետական Հայաստանի, ոչ Մխիթարյանների գրապահոցներում և ոչ էլ Սփյուռքի որևէ այլ հայկական կուլտուրական օջախում, չի կարելի գտնել հայ պարբերական մամուլի բոլոր անունները և լրիվ կոմպլեկտները։

Մխիթարյաններից Հ. Ռ. Կարապետյանը, որ երկար տարիներ ուսումնասիրել է և կազմել «Լիակատար ցուցակ հայերեն լրագիրներու, որոնք կգտնվին Մխիթարյան մատենադարանին մեջ ի Վիեննա» ** (1794—1921) ընդամենը 892 հայ պարբերական է արձանագրել։

Գ. Ջ. Լեոնյանը, որ նույնպես երկար տարիներ զբաղվել է հայ պարբերա-

---

* Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա։ Երևան, 1934։

** Վիեննա, 1894։

կան մամուլի հավաքման ու ցուցակի մշակման գործով, իր գրքում՝ «Հայոց պարբերական մամուլը։ Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794—1934)» տալիս է 1586 պարբերականների ցանկ։

Ես քսան տարի է աշխատում եմ հայ գրականության ու պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի վրա, ընդամենը նկարագրել եմ 1836 անուն պարբերական։

Իհարկե ավելի մոտ է լրիվության մեր կազմած բիբլիոգրաֆիան, որը միաժամանակ տալիս է նաև պարբերականների մի խոշոր մասի (ժուռնալների) հոդվածային նկարագրությունը և բոլոր թերթերի, ամսագրերի մասին ընդարձակ ծանոթագրություններ։

Սակայն մի երկու հեղինակ պնդում են, որ հայ պարբերականների թիվը մոտ 2600 է, իսկ Ա. Կարինյանը իր «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» գրքի I հատորում գրել է. «Հայ պարբերական մամուլի պատմության անդաստանը հսկայածավալ և բավական բարդ մի աշխարհ է։ Գ. Լևոնյանի հայտնի աշխատության մեջ («Հայոց պարբերական մամուլը», 1934), օրինակ, նշվում են մոտավորապես 1800 պարբերականներ։ Պոտուրյանն իր «Հայ հանրագիտակ» աշխատության մեջ գտնում է, որ պարբերականների թիվը շատ ավելի մեծ է եղել (համենայն դեպս երկու հազարից ավելի է)։ Պոտուրյանը, սակայն, նկատի չի առել 1935-ից հետո լույս տեսած օրգանները և մանավանդ Սովետական Միության սահմաններում հրատարակված բազմաթիվ զինվորական, գործարանային, շրջանային լրագիրները։ Մենք չենք սխալվի, եթե պնդենք, որ իր ծագման օրից մինչև այսօր հրապարակված հայ պարբերականների թիվը չորս հազարից ավելի է։ Ավելորդ է ասել, որ այդ թվի մեջ չեն մտնում մեր բազմաթիվ պատի լրագրերը» *։

Չնայած իր հիշված գրքով, ընկ. Ա. Կարինյանը գնահատելի ավանդ է մտցրել հայ պարբերական մամուլի պատմության մեջ, բայց նա էլ ունի սխալներ, թերություններ։

Եթե երեք բիբլիոգրաֆիական աշխատություններ հայ պարբերականների թիվը հասցնում են ընդամենը 1836-ի, ինչպես կարելի է, ընդհանուր դատողությունների հիման վրա պնդել, թե հայ պարբերականների թիվը 4000-ից ավելի է։

Սխալվում է ընկ. Ա. Կարինյանը. նախ Գ. Լևոնյանն իր գրքում նշել է 1586 պարբերական և ոչ թե 1800 անուն։

Երկրորդ. եթե Հ. Պոտուրյանը հաշվի չի առել 1935 թվից հետո Սովետական Միության սահմաններում հրատարակված զինվորական, գործարանային, շրջանային լրագրերը մեր կազմած բիբլիոգրաֆիայի 2-րդ և 3-րդ հատորների մեջ դրանք լրիվ ընդգրկվել են, այն էլ ըստ Միութենական և Հայկական ՍՍՌ Պետական Գրապալատների պաշտոնական նյութերի։

Եթե այսօր մի չլուսաբանված հարց կա հայ պարբերական մամուլի ընդհանուր քանակի վերաբերյալ, դա Հայկական գավառական մամուլի հարցն է։ Խնդիրն այն է, որ դեռ XIX դարի ընթացքում, բոլոր հայաշատ կենտրոններում (Կ. Պոլիս, Իզմիր, Թիֆլիս, Բաքու, Մոսկվա, Էջմիածին, Փարիզ, Կահիրե, Թեհրան, Վան և այլն, և այլն) տպագրական-հրատարակչական գործը որոշ

---

* Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության։ Երևան, 1956, էջ 8.

նվաճումներ է ունեցել, շատ պարբերականներ իսկ ունեցել են իրենց տպարանները։

Ինչ վերաբերում է հայկական գավառին, թե Ռուսաստանում, թե Թյուրքիայում և Իրանում, հայկական գավառը զուրկ է եղել՝ տպարաններից ու հրատարակություններից։

Ամբողջ Երևանի նահանգում, մինչև 1900 թիվը միայն մի քանի տպարան է գոյություն ունեցել և հրատարակվել են միայն՝ «Պսակ»-ը (1880 թ.), «Երևանի Հայտարարություններ»-ը (1883 թ.) և «Առողջապահական թերթ»-ը (1811 թ.)։

Իսկ Թյուրքիայում հայկական գավառը զուրկ է եղել գուտենբերգյան հրաշալիքից։

Տպարանների չգոյության և սուլթանական ու ցարական կառավարությունների հալածանքների ու ընդհանուր կուլտուրական հետամնացության պատճառով, հայկական գավառը զուրկ է եղել պարբերական մամուլից։

Հայ լրագրության սկզբից, այսինքն 1794 թվից մինչև 1894 թիվն ընկած հարյուրամյակի ընթացքում Թյուրքիայում հրատարակվել է՝ Կ. Պոլսում 77 պարբերական, Զմյուռնիայում 16, իսկ ամբողջ գավառում՝ Վանում, Մուշում, Նիկոմիդիայում, Անդրիանապոլսում, Հալեպում, Կարինում, Պրուսայում, Ատանայում — մեկական պարբերական։

1908 թվի օսմանյան սահմանադրությունից հետո, Թյուրքիայի գավառում որոշ չափով սկսում է զարգանալ հայ մամուլը։ Բայց ինչպես երևում է ստորև դրված, 1908—1916 թվերին լույս տեսած Թյուրքիայի գավառական թերթերի ցանկից, տպարանների չգոյության պատճառով, այդ թերթերի մեծագույն մասը լույս են տեսել՝ խմորատիպ, աննշան տիրաժներով։

Ահա 1908—1916 թթ. լույս տեսած գավառական թերթերի ցանկը.

— Վանում «Հորձանք» 1908 *։ [Դաշնակցական ուղղութ.]։
— Վանում «Նոր-սերունդ», 1909 *։
— Վանում «Ջարթիր», 1908 *։
— Վանում «Արծվիկ», 1908 *։ [Վարագա վանքի]։
— Վանում «Աասուպ», 1908 *։ [Հնչակյան].
— Կավաշ «Ծովակ» 1908 * [Կուլտուրական Միության]։
— Կավաշ «Կոտոշ» 1908 *։ [Դաշնակցական]։
— Աղթամար «Կոխվ» 1908 *։ [Աշակերտական]։
— Կարին «Ազատության լույս» 1908 *։
— Ռոտոսթո «Կայծեր» 1908 *։
— Պարտիզակ «Պարտիզակ» 1908 *։
— Պարտիզակ «Կշիռ» 1908 *։
— Պարտիզակ «Պայքար» 1908 *։ [Հնչակյան].
— Օվաճըգ «Ծնարիկ» 1908 *։
— Երզնկա «Արօր» 1909 *։ [Խմորատիպ, հետո տպագիր]։
— Սիվրիհիսար «Անահիտ» 1909 *։
— Նիկոմիդիա «Բութանիա» 1910։ [Տպվել է Կ. Պոլսում].
— Սեբաստիա «Անդրանիկ» 1909։

* Աստղանիշները տպագրվել են խմորատիպ

— Տրապիզոն «Խարիսխ» 1909։
— Վան «Մայրենի աշխարհ» *։
— Կարին «Հառաջ» 1909։ [Դաշնակցական].
— Եոմուրա (Տրապիզոն)— «Գեղջուկ» 1909 *։ [Ուսուցչական Միություն].
— Խարբերդ «Եփրատ». 1909։
— Պարտիզակ «Փարոս» 1910 *։ [Ե. Ք. Ը.].
— Կիրասոն «Փեթակ» 1910։ [Խմորատիպ, ապա տպագիր]։
— Մարզվան «Նոր-Այգ» 1910։
— Մարզվան «Հայկունի» 1910։ [Ս. Սահակյան վարժարանի].
— Մունճուսոն (Կեսարիա) «Հայեկ» 1910։ [Խմորատիպ, հետո տպագիր].
— Տրապիզոն «Մոծակ» 1910։ [Խմորատիպ, հետո տպագիր].
— Կեսարիա «Շեփոր» 1910 *։
— Տրապիզոն «Պոնտոս» 1910 *։
— Տրապիզոն «Շարժում» 1910։
— Ամասիա «Ապառաժ» 1911։ [Դաշնակցական].
— Դիարբեքիր «Տիգրիս» 1919 *։ [Վիմատիպ].
— Դիարբեքիր «Ծոլքեր» 1910 *։
— Սեբաստիա «Հող-Դար» 1910։
— Թոքատ «Իրիս» 1910։
— Ատաբազար «Երկիր» 1910։ [Հնչակյան, տպվել է Կ. Պ.].
— Սեբաստիա «Նշդրակ». 1910 *։ [Արամյան վարժարանի ուսուցչութ. վիմատիպ]։
— Այնթապ «Եէնի-Էօմըր» 1911 *.
— Տրապիզոն «Բժիշկ». 1911։
— Մարզվան «Բողբոջ». 1911։
— Ամասիա «Ամասիա» 1911։
— Կարին «Սիրտ». 1910 *։
— Գոնիա «Հուշարձան» 1911 *։
— Վան «Աշխատանք» 1911 *։ [Դաշնակցական].
— Վան «Վան Տոսպ» 1911։ [Ռամկավար].
— Պարտիզակ «Պարտիզակ» 1911 *։ [Բարձրագ. վարժարանի].
— Խարբերդ «Ամենուն համար» 1910 *։ [Գերմանակ. միսիոներներին].
— Գոնիա «Իկոնիոն». 1912 [Ծինանյան կոլեճի].
— Պարտիզակ «Մեղու» 1912։ [Դաշնակցական].
— Եանիա (Եպիրոս) «Գըշլա» 1912 *։ [Ձեռագիր. հայ զինվորների].
— Ջինճիտերե «Իբեհպեր» 1912 *։
— Խարբերդ «Լուսաշավիղ». 1913 *։ Վիմատիպ. հայ կաթոլիկների վարժարանի։
— Վան «Լույս» 1913.
— Դիարբեքիր «Թռուցիկ կարմիր տետրակ» 1913 *։
— Կարին «Երկիր» 1913 *։ [Հ. Ե. Միություն].
— Խարբերդ «Դէտ» 1913։ [Ամերիկ. միսիոներների].
— Սամսոն «Դպրոց» 1914։ [Ներսիսյան վարժարանի].
— Կարին «Ալիք» 1914։ [Հ. Ե. Միություն].

— Թոքատ «Դարբնոց» 1915 *,
— Տարոն «Կյուտնոս» 1913 *,[Պողոսյան կոլեճի ուսանողների].
— Այնթապ «Հազիգաթ» 1914 *, [Վիմատիպ]։

Ընդամենը տպագրվել են 64 անուն լրագիր, որոնցից 9 Վանում, 5 Կարինում, 6 Պարտիզակում, 4 Խարբերդում, 3 Սեբաստիայում, 3 Տրապիզոնում, 3 Մարզվանում, 3 Դիարբեքիրում, 2 Կավաշում, 2 Ամասիայում, 2 Թոքատում, 2 Այնթապում, 2 Կեսարիայում, 2 Գոնիայում, 1 Աղթամարում, 1 Նիկոմիդայում, 1 Կիրասոնում, 1 Ատաբազարում, 1 Սամսոնում, 1 Տարոնում, 1 Խանիայում, 1 Ջինճիտերե և այլ վայրերում 8 անուն։

Հաշվի առնելով նույնիսկ խմորատիպ պարբերականները, որոնց մեծագույն մասը չկա, չի ճարվում, ստացվում է ընդամենը 1900 պարբերական։ Ընդունենք, որ շուրջ 100 անուն մենք թերի ենք թողել, չենք ճարել, ուրեմն հայ պարբերականների թիվը կարող է հասնել ընդամենը 2000-ի։

Երկրորդ կարևոր հարցը դա մեր բիբլիոգրաֆիայի մեթոդոլոգիայի հարցն է։

Մեզ մոտ՝ Սովետական Միությունում բարձր է գնահատվում բիբլիոգրաֆիայի դերը։ Բիբլիոգրաֆիան ընդունվում է որպես գաղափարական աշխատանքի մի կարևոր բնագավառ, որը կոչված է բացահայտելու, մասսայականացնելու գիրքն ու պարբերական մամուլը, պարզաբանելու նրանց՝ իդեական, գիտական և գործնական արժեքը, դյուրացնելու, օգնելու ընթերցողներին տիրապետելու՝ մշակույթի ու տեխնիկայի բարձրունքներին։

Մեզ մոտ բիբլիոգրաֆը ոչ թե պասիվ արձանագրող է, այլ սկզբունքային, քաղաքական մոտեցմամբ աշխատող, որ նյութերի ընտրության, ծանոթագրման և բիբլիոգրաֆիական մշակման գործում պիտի ապահովի՝ գիտականությունը և պարտիականությունը։ Բայց գիտականությունը և պարտիականությունը, դրանք երկու տարբեր հասկացողություններ չեն։ Պարտիականությունը դա մարքսիստական-լենինյան աշխարհայացքով բիբլիոգրաֆիայի մշակումն է, դա միաժամանակ նյութի գիտական մշակումն է՝ քննադատական մոտեցումը՝ նյութերի ընտրությանը, փաստական տվյալներին, ծանոթագրումը, սխալ հայացքների բացահայտումը։

Վ. Ի. Լենինը կազմել է բիբլիոգրաֆիա և քննադատական է գրել բիբլիոգրաֆիական աշխատության մասին, նա հանճարեղ կերպով պարզաբանել է բիբլիոգրաֆիայի խնդիրները։ Նա քննադատելով Ն. Ռուբակինի «Среди книг» բիբլիոգրաֆիան, շեշտել է, որ չի կարելի առանց վերաբերմունքի, քննադատության՝ գրել է գրքերի ու մամուլի մասին, գիտական բարձրարժեք բիբլիոգրաֆիան ինչպես գիտականորեն, նույնպես իդեապես ճիշտ պիտի լինի։

Պարբերական մամուլի և հրապարակախոսության վերաբերյալ նույնպես Վ. Ի. Լենինը նշել է ղեկավար սկզբունքներ։ «Ռուսաստանի բանվորական մամուլի անցյալից»[1] հոդվածում Վ. Ի. Լենինը գրել է. «...Բանվորական մամուլի պատմությունը Ռուսաստանում անխզելիորեն կապված է դեմոկրատական և սոցիալիստական շարժման պատմության հետ։ Ուստի միայն ազատագրական շարժման գլխավոր էտապները գիտենալով՝ կարելի է իրոք խելամուտ լինել, թե ինչու բանվորական մամուլի նախապատրաստումն ու ծագումն ընթացել են այսպիսի և ոչ թե որևէ այլ ուղիով»։

---

* Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հտ. 20, էջ 223—230։

Այստեղից պարզ է, որ պարբերական մամուլի և հրապարակախոսության պատմությունն ուսումնասիրողի առաջին խնդիրն է՝ «...խելամուտ լինել, թե ինչո՞ւ...» այս կամ այն պարբերականի «...նախապատրաստումն ու ծագումը ընթացել են այսպիսի և ոչ թե որևէ այլ ուղիով»: Իսկ այս նպատակին կարելի է հասնել միայն պարզելով ու բացահայտելով մամուլի կապը այս կամ այն հասարակական- քաղաքական շարժման հետ:

Նույն հոդվածի հաջորդ թեզը ավելի է լուսաբանում այս հարցը: «Ռուսաստանում բանվորական մամուլի պատմությունը հասկանալու համար պետք է իմանալ ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան մամուլի զանազան օրգանների անունները, որոնք ոչինչ չեն ասում արդի ընթերցողին և միայն շփոթեցնում են նրան, այլ սոցիալ-դեմոկրատիայի զանազան մասերի բովանդակությունը, բնույթը, գաղափարական գիծը»:

Հետևապես, թե ռուսական և թե հայ պարբերական մամուլի ու հրապարակախոսության պատմությունն ուսումնասիրելիս և գրելիս պիտի պարզել, բացահայտել այս կամ այն պարբերականին ուղղություն ցույց տվող հասարակական դասակարգի գաղափարախոսությունը, իդեական ծրագրերը: Ահա այս ցուցումներն են եղել մեր ղեկավար սկզբունքները: Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի վերը նշված դրույթներով մենք ուսումնասիրել և ծանոթագրություններ ենք գրել ամսագրերի ու լրագրերի մասին:

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Հայ պարբերական մամուլի վերջընթաց հիսուն տարվա աճը թվական տվյալներով հետևյալ պատկերն ունի.

1901—1907 թվականներին հրատարակվել են 131 նոր անուն թերթեր, ժուռնալներ:

1908—1910	»	»	132	»
1911—1914	»	»	154	»
1915—1920	»	»	307	»
1921—1930	»	»	251 *	»
1931—1940	»	»	125	»
1941—1950	»	»	44	»
1951—1956	»	»	15	»

Մեր աշխատության առաջին հատորի առաջաբանում, վերլուծելով 1870—80—90-ականների հայ պարբերական մամուլի աճը, մենք, թվական տվյալներով, ցույց ենք տվել մեր մամուլի վերելաց զարգացումը:

Ինչպես երևում է վերը նշված թվական տվյալներից, այդ վերասլաց թվական աճը շարունակվել է՝ 1900—1920 թվականներին նույնպես:

— Ի՞նչի հետևանք է այդ վերասլաց զարգացումը.

1901—1907 թվականներին նոր պարբերականներ են լույս տեսել՝ 131 անուն, հաջորդ երեք տարում (1908—1910 թթ.)— 132 անուն, հետագա չորս

---

* Առանց «Սովետական Հայաստանի» պարբերականների: Բոլշևիկյան նախառևոլյուցիոն շրջանի և սովետահայ պարբերական մամուլի մասին մենք գրել ենք սույն աշխատության III հատորում:

տարում (1911—1914)՝ 154 անուն, հաջորդ հնգամյակում (1915—1920 թթ.) 307 անուն։

Այդ վերաալաց աճը հետևանք չէր սուլթանական Թյուրքիայի կամ ցարական Ռուսաստանի ու խանական Պարսկաստանի դեպի հայերն և նրանց գիրն ու գրականությունը պարբերական մամուլը ցուցաբերած բարեհաճության ու հովանավորության։

Ոչ, թե՛ սուլթանական Թյուրքիան, թե՛ ցարիզմը և թե՛ խանական Պարսկաստանը հալածել, արգելել են հայ կուլտուրան։ Միայն մի երևույթի հետևանք է այդ թվական աճը ։

Իրականում դեպքերն այնպես են ընթացել, որ Թյուրքիայից գաղթելով և ցրվելով բազմաթիվ երկրներում, գաղութահայությունը դպրոցի ու գրականության հետ, հիմք է դրել ու զարգացրել է իր պարբերական մամուլը։

Ինչպես երևում է վերը բերված թվական տվյալներից՝ 1921—1930 թթ. գաղութահայ պարբերականներ եղել են 251 անուն, 1931—1940 թթ. կրճատվել, հասել են 125 անվան, հետագա տասնամյակում, 1941—1950 թթ. ավելի մեծ չափով է իջել գաղութահայ մամուլի քանակը հասնելով ընդամենը 44 անունի, իսկ 1951—1956 թթ. ընդամենը 15 անուն նոր թերթեր են հրատարակվել։

Այս անկումը պարզ է, որ հիմնականում, հետևանք է մայր հողից, ժողովրդից կտրվելուն։

Այժմ անցնենք մեր պարբերական մամուլի գաղափարական բովանդակությանը, տեսնենք ի՞նչ փոփոխություններ է կրել այն։

Համառոտակի վերհիշենք պատմական անցյալը։

1895—96 թվականների ջարդերից հետո, արևմտահայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները՝ գրողները, հրապարակախոսները ցրվել էին տարբեր հորիզոններում։ Իսկ ովքեր մնացել էին Թյուրքիայում, մթնոլորտըն այնքան հեղձուցիչ էր, որ թերթ ու ժուրնալ հրատարակելն անհնարին էր։ Արտասահմանում էին արևմտահայ անվանի հրապարակախոսներ՝ Ա. Արփիարյանը, Լ. Փաշայանը, Ե. Օտյանը, Ա. Չոպանյանը, Տ. Կամսարականը, Ե. Սրմաքեշխանլյանը, Վ. Թեքեյանը և ուրիշներ։

Մինչև 1908 թիվ, Համիդի սարսափն էր փռվել ամենուր, սև գիշեր էր, խեղդվել էր մամուլը և ամեն մի ազատ միտք։

Մինչև Սահմանադրության հռչակումը, [1908], Թյուրքիայում լույս էին տեսնում ընդամենը՝ երկու օրաթերթ. («Մանզումէի էֆքիար» և «Սուրհանդակ»), երկու երեկոյան թերթեր («Արևելք» և «Բյուզանդիոն») և մի քանի շաբաթաթերթեր՝ «Լույս», «Մասիս», «Հանրագիտակ», «Բյուրակն»։

Մնացած պարբերականներից «Մեճմուայի Ախպար»-ը և «Ավետաբեր»-ը հայ կաթոլիկների ու բողոքականների օրգաններն էին։

Թյուրքիայի գրաքննության խստությունները ուղղակի առասպելական բնույթ են ունեցել։

Ինչ որ չէին հասկանում, կամ ականջներին վատ էր հնչում սուլթանական գրաքննիչները՝ ջնջում էին։

Եթե ի նկատի ունենանք, որ Կ. Պոլսի և Իզմիրի հայ թերթերի գրաքննիչները (Ե. Եուսուֆյան, Լևոն Սուրենյան, Երվանդ Վարժապետյան և այլն) հայեր էին, Սուլթանից ավելի մոլեռանդ հետադիմականներ, վախկոտ, վաճառված, հացկատակ, պարզ կլինի, թե ինչ պիտի լիներ հայ մամուլի վիճակը։

Բանը, հասել էր նրան, որ առանձին բառեր իսկ չէր կարելի գործածել։ Օրինակ. չէր կարելի գրել աստղ, *որովհետև տաճկերեն Ելտըզ՝ դա Համիդի պալատի անունն էր. չէր կարելի գրել* ճպուռ, *որովհետև տաճկերեն ճպուռին ասում են օգոստոսի թրթուռ, իսկ Սուլթան Համիդը ծնվել էր օգոստոս ամսին։*

Հայ գրաքննիչներից մեկը, մի անգամ հոդվածում կարդալով «...հովիվն առաջնորդում էր իր հոտին...» բառերը, սկզբից ավելացրել է «Կրթ», այսինքն «կրթական հովիվն առաջնորդում էր իր հոտին», որպեսզի չլինի թե ընթերցողները հասկանան, թե ռևոլյուցիայի մասին է խոսքը։ 1908 թվի հուլիսի 10-ի (23 ն. տ.) Թուրքիայի սահմանադրությունից հետո էլ շատ բան չփոխվեց, որովհետև ժողովուրդն այնքան հետամնաց էր, խավար, սուլթանական դարավոր ճնշումների սարսափն այնքան ուժեղ էր, որ օսմանյան սահմանադրության հռչակումն ընդունվեց իբրև շնոր արյունարբու Աբդուլ Համիդի. Թուրքական ու հայկական թերթերը հենց այդպես էլ հայտարարում էին, թե «Վեհափառ կայսրը բարեհաճած է սահմանադրություն շնորհել»։

Ցարական Ռուսաստանի գրաքննությունն իր խստությամբ հետ չէր մնում սուլթանականից։

Ռուսաստանում ըստ 1865 թվականի ցենզուրական օրենքի, թերթ կամ ժուռնալ հրատարակելու դեպքում, խստորեն քննվում էր հրատարակչի և խմբագրի «բարեհուսությունը», ապա նրանցից մի քանի հազար ռուբլի գրավական էին վերցնում ու հետո միայն թույլատրում հրատարակել։ Պարբերականներում տպագրված «հակապետական» հոդվածների համար հեղինակների, խմբագիրների ու հրատարակիչների «հանցանքները» դիտվում էին իբրև «քաղաքական» հանցանքներ, այդ «հանցագործությունները» քննվում էին հատուկ դատական պալատներում և հրապարակախոսներին, գրողներին պատժում էին իբրև «պետության դեմ կատարած հանցագործների»։ Շատ հաճախ էլ մեծամեծ գումարների տուգանքներ էին դնում և բանտ էին նետում՝ խմբագիրներին, հրատարակիչներին։

Հատկապես ստոլիպինյան ռեակցիայի տարիներին (1907—1912 թթ.) երբ ամբողջ Ռուսաստանում մոլեգնում էր սև հարյուրակային տերրորը շատ ծանր էր բոլշևիկյան մամուլի վիճակը։ Ոստիկանական հալածանքների հետ միաժամանակ սկսվեց սևհարյուրակային մամուլի և բուրժուական-կադետական ու իրենց «անպարտիական», «անկախ» հայտարարող թերթերի հարձակումը ռևոլյուցիոն հերոսական պրոլետարիատի ու նրա բոլշևիկյան պարտիայի վրա։ Ահա, քաղաքական այս պայմաններում, դեմոկրատական, ռևոլյուցիոն մամուլը պայքարել է հանուն լավագույն ապագայի, կռիվ է մղել ռեակցիայի ու դեսպոտիզմի դեմ, իսկ մնացած թերթերը, ժուռնալները հարմարվել են, գործել են «սահմանադրական» շրջանակներում, վատաբանել են «ռևոլյուցիոն պատրանքները», գովերգել են «օրենքն ու սահմանադրությունը»։

Քաղաքական այդ ծանր պայմանների արդյունք էր նաև հայ մամուլի մեծ մասի անբովանդակ լինելը։

Վերցնենք Կ. Պոլսի լրագրերի մի խոշոր մասը, ժուռնալները։

Այդ թերթերը ծայրե-ծայր լցված են՝ եկեղեցական-դպրոցական հարցերով, իսկ հայկական գավառում կատարված՝ բռնությունների, հարստահարությունների, կոտորածների մասին ոչինչ չկա։

Սուլթանական Թյուրքիայում հայ թերթերն ազատ են եղել ամեն մանր-

մանր հարցերի շուրջը փոթորկելուց, բացի թյուրքական «դրախտի» մեջ մահվան ճիրաններում գտնվող հայ ժողովրդի արյան մասին գրելուց ու բողոքելուց։

Հայ բոլոր թերթերում, օրը-օրին տպագրվում էին պատրիարքարանում տեղի ունեցած՝ կրոնական, դավանաբանական, ընտանեկան, դպրոցական և այլ բազմաթիվ, բազմատեսակ հարցերի մասին՝ լուրեր, հոդվածներ, իսկ հայկական վիլայեթներում տեղի ունեցած կոտորածների վայրագությունների մասին՝ քար լռություն։

Վերցրեք Կ. Պոլսի ու Իզմիրի հայ թերթերը՝ լեփլեցուն են՝ լուրերով, հեռագրերով, «Թայմզ»-ից, «Թանե»-ից թարգմանված ամեծանուն դիվանագետների ճառերով, արտատպված թարգմանական նյութերով։

Եթե ի նկատի ունենանք, որ Թյուրքիայում գավառական տպագիր լրագրեր համարյա չկային (տես վերը բերված մեր ցանկը) եղած մանր-մունր խմորատիպ, վիմատիպ օրգաններն էլ՝ անարյուն, աղքատիկ էին, ապա պիտի հանգել այն մտքին, որ հայ գյուղացիական հոծ զանգվածների թշվառ վիճակն ու չահատակությունները, կոտորածները համարյա թե չեն արտացոլվել մեր բազմաթիվ պարբերականներում։

Վերցնենք միքանի ուրիշ հարցեր, որպեսզի ցույց տանք հայ բուրժուական — ամիրայական մամուլի աղքատությունը։ Ցարիզմը և Սուլթանը ամեն ինչ արել են, որպեսզի արգելակեն հայության երկու հատվածների մերձեցումն ու կուլտուրական, քաղաքական կապերը։

Աբդուլ Համիդը արգելել էր ռուսահայ գրքի, գրականության ու մամուլի մուտքը Թուրքիա։

Ռուսական ցենզուրան նույնպես թույլ չէր տալիս ստանալ Թյուրքիայից հայերեն գրքեր ու թերթեր։ Հայության երկու խոշոր հատվածները զրկված էին կուլտուրական ու քաղաքական կապերից։

Տասնյակ տարին — մեկ, երբ կաթողիկոս էր մեռնում կամ էջմիածնում կաթողիկոս պիտի ընտրվեր, իրար էին հանդիպում հայկական երկու հատվածների ներկայացուցիչները, իրար ծանոթանում, հայ մամուլն սկսում էր գրել ազգային հարցերի մասին, հայ ժողովրդի երկու հատվածների կուլտուրական մերձեցման մասին։ Ի պատիվ «Մշակ»-ի պիտի ասել որ հայության երկու հատվածների քաղաքական-կուլտուրական կապի փորձեր նա է կատարել։ «Մշակ»-ում են տպագրվել Արփիար Արփիարյանի («Հայկակ»-ի) բազմաթիվ թղթակցությունները Կ. Պոլսից, Թյուրքահայերի կյանքի մասին, իսկ դրանից հետո, «Արևելք»-ում, «Հայրենիք»-ում և «Ազատամարտ»-ում՝ լուրեր «խապրիկներ» և աղքատիկ տեղեկություններ են տրվել ռուսահայերի կյանքի մասին։ Միայն ռուսական առաջին ռևոլյուցիայից հետո է, որ կապ է ստեղծվում հայության երկու խոշոր հատվածների միջև՝ Կ. Պոլսի ու Թյուրքիայի հայաշատ վայրեր են մուտք գործում ռուսահայ գիրքը և լրագիրը։ Օսմանյան սահմանադրությունն իր հերթին ավելի նպաստում է ռուսահայ գրքի ու մամուլի տարածմանը։ Թյուրքիայից նույնպես ավելի ու ավելի մեծ չափերով է սկսում ստացվել թյուրքահայ մամուլն ու գրականությունը։

Քննելով հայ պարբերական մամուլի էջերը, շատ հաճախակի ենք մենք հանդիպում՝ կրոնական, դավանաբանական աղանդավորական վեճերի, փոխադարձ կշտամբանքների։

Թե ցարիզմը և թե սուլթանական Թուրքիան ամեն կերպ հրահրել են՝

հայ կաթոլիկների, լուսավորչականների ու ավետարանականների միջև կրոնական վեճեր, կռիվներ։

Բաժանիր, որ տիրես նշանաբանը այստեղ էլ է գործել։ Թյուրքիայում կաթոլիկ հայերի անձնագրերի վրա կնքվում էր «կաթոլիկ» բառը, որպեսզի պոլիցիան չխառնի «լուսավորչականների» հետ, որոնց հալածում էին։

Բողոքականները նույնպես չէին հետապնդվում, նրանք հովանավորվում էին ամերիկյան միսիոներական կազմակերպությունների կողմից։

Հայ մամուլն իր հերթին արձագանքում էր. վեճերը, կռիվները անպակաս էին թե կրոնական-եկեղեցական պաշտոնական օրգաններից և թե մյուս թերթերից։

Նույնիսկ թյուրքական սահմանադրությունից հետո, չվերացան հայ մամուլում կրոնական, դավանական վեճերը, չվերացավ անանցանելի վիհը հայ կաթոլիկ, լուսավորչական և ավետարանական համայնքների միջև։

Հայ մամուլի դրական աշխատանքների շարքում պիտի նշել նաև նրա մատուցած մեծ դերը հայ լեզվի և գրականության զարգացման գործում։

Մեր լեզվի մշակման, բառամթերքը հարստացնելու գործում մեծ աշխատանք են կատարել թե ռուսահայ և թե արևմտահայ թերթերը, ժուռնալները։

Պիտի ասել ռուսահայ թերթերն այնքան ուշադիր չեն հետևել թարգմանական լեզվի մաքրության գործին, որքան արևմտահայ պարբերականները։ Ռուսահայ թերթերը նկատելի է, որ որոշ օտար բառեր նույնությամբ գործ են ածում, իսկ արևմտահայ թերթերը՝ հայացնում են այդ բառերը, աշխատում են մատչելի դարձնել հայ ընթերցողին։ Այսպես. սովորաբար ռուսահայ թերթերը գրում են՝ մետաֆիզիկ, արևմտահայերը՝ բնազանցական, մինիստր, արևմտահայերը՝ նախարար, ավտոնոմ, արևմտահայերը՝ ինքնավար, լոգիկա. արևմտահայերը՝ տրամաբանություն, աբսուրդ ,արևմտահայերը՝ անհեթեթություն, անտիկ, արևմտահայերը՝ դասական, դեվիզ, արևմտահայերը՝ նշանաբան, աբսոլյուտ, արևմտահայերը՝ բացարձակ, մոմենտ, արևմտահայերը՝ վայրկյան և այդպես շատ ու շատ բառեր։

Իհարկե գործն երբեմն հասնում էր նաև ծայրահեղության, Կ. Պոլսի թերթերը թխում էին շինծու և քիչ հասկանալի բառեր։ Օրինակ. կորսեթի փոխարեն — սեղմնարան, ֆակուլտետի փոխարեն — մասնուսումնարան, անախրոնիզմի փոխարեն — ամշփոթ և այլն։

Ինչ վերաբերվում է ընդհանրապես հայ մամուլի դերին գեղարվեստական գրականության զարգացման գործում, պիտի ասել, որ այդ դերը մեծ է եղել։

Թե ռուսահայ և թե արևմտահայ մամուլը միշտ էլ պաշտպան են կանգնել, հովանավորել են մայրենի գրականությունը։

Ահա մեր կազմած մամուլի բիբլիոգրաֆիայի երեք հատորը, նաև հայ գեղարվեստական գրականության բիբլիոգրաֆիայի երեք հատորը՝ ձեզ իրական վկաներ։

Հայ գրողներից, հեղինակներից ո՞ւմ ուզում եք վերցրեք, նայեք հիշված բիբլիոգրաֆիաների նյութերին, կհամոզվեք, որ բոլորի ստեղծագործությունների մեծագույն մասը սկզբնապես տպագրվել են հայ պարբերականներում, հայ մամուլի միջոցով է տարածվել մեր գրականությունը, հասել ժողովրդական լայն զանգվածներին։

Ռուսահայ, թե արևմտահայ պարբերական մամուլը կենսատու քուրաներ

են եղել, որ չերմացրել են, կյանք են տվել մեր գեղեցիկ գրականությանը, ժողովրդականացրել են՝ հայ միտքը, գրականությունը և գրական շարժումները։

Իհարկե ամեն ինչ խաղաղ չի ընթացել։ Դասակարգային պայքարը երևան է եկել նաև մամուլում ու գրականության անդաստանում։

Օրինակ Մխիթարյանները, Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի (1512—1912)» գրքի հատորներում տեղ չեն տվել ոչ միայն ռևոլյուցիոն և դեմոկրատ հեղինակներին, այլև նաև մեր հանճարեղ աշխարհիկ գրողների մեծամասնությանը՝ Նար-Դոսին, Վ. Տերյանին, Դ. Դեմիրճյանին, Ստ. Զորյանին, Սիամանթոյին, և ուրիշներին։

Դաշնակցական մամուլը միակողմանի ու չարամտորեն է օգտագործում սովետահայ հեղինակների գործերը։

—

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՄՈՒԼԸ

Վերջընթաց 50—60 տարվա հայ քաղաքական կյանքի պատմությունը, հրապարակախոսության ու մամուլի լրիվ պատմությունը դեռ չկա, չկան նույնիսկ օժանդակ նյութեր, վավերագրերի, արխիվային փաստաթղթերի ժողովածուներ։ Չկան ուսումնասիրություններ արտասահմանի հայկական գաղութների, հայկական քաղաքական պարտիաների, նրանց պարբերական մամուլի մասին։

Ահա այս պայմաններում ենք կազմել մեր բիբլիոգրաֆիան։

Մեր բիբլիոգրաֆիայի հատորներում առանձին պարբերականների նյութերի նկարագրումից առաջ մենք համառոտակի գծերով ծանոթություններ ենք ավել հայ իրականության մեջ գործող առանձին քաղաքական հոսանքների, պարտիաների մասին (հնչակյաններ, դաշնակցականներ, ռամկավարներ, սպեցիֆիկներ և այլն) նրանց մամուլի, վերջինների խմբագիրների ու հրապարակախոսների մասին։

Մեր ծանոթագրությունները չէին կարող տալ յուրաքանչյուր պարբերականի պատմությունը, բնութագիրը՝ կապված պատմական անցքերի, քաղաքական ու տնտեսական, կուլտուրական անցուդարձի հետ։ Չնայած երբեմն մեր ծանոթագրությունները ընդարձակ են, բայց չեն կարող տալ հայ պարբերական մամուլի պատմությունը, հայ հրապարակախոսության և հասարակական մտքի զարգացումը, դա բիբլիոգրաֆիկ աշխատության սահմաններից դուրս է, այդ խնդիրը պիտի կատարվի հատուկ ուսումնասիրությունների միջոցով։ Մեր ծանոթագրություններում աշխատել ենք ընդհանուր գծերով տալ յուրաքանչյուր պարբերականի ուղղությունը, դասակարգային պատկանելությունը, հասարակական ո՞ր խմբակցության գաղափարների արտահայտիչն է հանդիսանում։

Մի խոշոր մաս հայ պարբերականների այնքան կարճատև կյանք ու անորոշ իդական ուղղություն են ունեցել, որ մենք չենք կարողացել որևէ ծանոթագրում տալ, հայ կուլտուրայի ու մամուլի ապագա պատմագիրները պիտի աշխատեն պարզել նրանց գաղափարական էությունը, դասակարգային բնույթը։

Որպեսզի պարզենք տվյալ պարբերականի գաղափարական-քաղաքական ուղղությունը, մենք տվել ենք նրանց՝ ծրագրային հոդվածներից, առաջին համարի խմբագրականից ընդարձակ քաղվածքներ։

Այստեղ նույնպես, ամփոփումների կարգով, համառոտակի գծերով, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել հայ հասարակական-քաղաքական հիմ-

նական հոսանքների, պարտիաների ու նրանց մամուլի գործունեության վրա 1900-ական թվականներից սկսած։

Հայ հակառևոլյուցիոն բուրժուական-նացիոնալիստական պարտիայի Դաշնակցության մասին մենք գրել ենք «Դրոշակ» թերթի կապակցությամբ, մեր աշխատության առաջին հատորում։

Գրել էինք, որ այդ պարտիան կազմակերպվել է 1890-ական թվականներին Անդրկովկասում և իր ամբողջ պատմության ընթացքում պայքարել է բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժման դեմ։

Բոլշևիկները միշտ էլ մերկացրել են Դաշնակցության հակաժողովրդական, հակառևոլյուցիոն դեմքը։

Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի ղեկավարությամբ հայ բոլշևիկյան մամուլը, քայլ առ քայլ հետապնդել է Դաշնակցության գործունեությունը։

Նույնիսկ ռուսական առաջին ռևոլյուցիայի վերելքի տարիներին, 1905—1907 թվերին, երբ մասսաներին խաբելու նպատակով Դաշնակցությունը գունափոխվում էր և հանդես էր գալիս կեղծ «սոցիալիստական» ցուցանակով, մեր բոլշևիկյան թերթերը մերկացրին Դաշնակցության իսկական դեմքը և հայ պրոլետարիատին ներգրավեցին համառուսական ռևոլյուցիոն ընդհանուր պայքարին։

Ստ. Շահումյանը 1906 թվին գրել է. «Սկզբում, իր լեգալ «Հառաջ» թերթի առաջին իսկ համարում՝ նա (Դաշնակցությունը) իրեն անվանում էր աշխատավոր մասսաների պարտիա... Հետագայում տեսնելով այն ավելի ու ավելի մեծ դերը, որ խաղում է պրոլետարիատն ազատագրական պայքարում, տեսնելով, որ հայ կյանքում միակ ակտիվ ռևոլյուցիոն դասակարգը հանդիսանում է պրոլետարիատը և հաճոյանալով նրան — Դաշնակցությունը սկսեց իրեն անվանել «պրոլետարիատին ղեկավարող պարտիա», իսկ հետագայում էլ՝ նույնիսկ նրա «միակ ղեկավարը»։

*— Այնուհետև Ստ. Շահումյանը շարունակում է. «Բայց արդյոք դադարել է նա դրանով իսկ լինել բուրժուական, նացիոնալիստական, ինչպիսին եղել է 15 տարվա ընթացքում։ Ավելին. նա ներկայումս, թերևս թե՛ ավելի բուրժուական է, թե նացիոնալիստական, թե ռեակցիոն քան երբևիցե։ Եվ որ ամենագլխավորն է սոցիալիստական դիմակ հագնելով՝ նա ամենավճռական կռիվ է մղում սոցիալիզմի դեմ, բանվորական շարժման դեմ» *։*

Վերցնենք պատմական շարժման մի ուրիշ փաստ։

Ռուսական 1905—1907 թվականների առաջին ռևոլյուցիայի տարիներին, երբ ռուս ժողովրդի, ռուսական պրոլետարիատի ու գյուղացիության հետ կողք-կողքի, ցարիզմի դեմ էին ծառացել նաև Ռուսաստանի մյուս բոլոր ժողովուրդները, ցարական կառավարությունը ռևոլյուցիայի ուժերը կազմալուծելու համար Անդրկովկասում հրահրեց հայ-թյուրքական ջարդերը։ Անդրկովկասի ազգայնական պարտիաները, այդ թվում նաև Դաշնակցությունը թշնամանք սերմանեցին և հայ-թուրքական եղբայրասպան կռիվներում դարձան ցարիզմի հուսալի հենարանները։

Դաշնակցությունը իբր թե «պաշտպանում» էր հայերին, իր «ջանֆիդաների» միջոցով լցվել էր գյուղ ու քաղաք, մորակի ու մաուզերի զոռով տուրքեր էր հավաքում, բորբոքում հայ-թուրքական ընդհարումները։

---

* Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ, 1948, էջ 228։

Մաուզերիստական իր խմբերով Դաշնակցությունը ոչ միայն արյուն է թափել հայ-թուրքական ընդհարումների տարիներում, այլև հետագայում այդ խմբերն օգտագործել է՝ ճնշելու, արյան մեջ խեղդելու՝ Հայաստանը գյուղացիական ելույթները, հողի և ազատության համար, աշխատավորության ազատամարտական շարժումները։ Պատմական փաստեր են՝ Խնձորեսկի, Բաշքյանդի և Զանգեզուրի գավառի մի շարք գյուղերի ըմբոստ ելույթների ճնշումները։

40316

Թերթեք 1905—1907 թվականների դաշնակցական մամուլի էջերը, և դուք կհամոզվեք, որ ռևոլյուցիայի փոթորկահույզ ձայնը չկա, դաշնակցական թերթերը լցված են եղբայրասպան հայ-թուրքական ջարդերի քարոզումով ,ազգային գործերի համար փող են հավաքում, կազմակերպում ու գլխավորում են «պաշտպանության» ռազմական աշխատանքները։ Միայն բոլշևիկյան հայ պարբերականներում դուք կգտնեք 1905—1907 թվականների սոցիալ-քաղաքական անցուդարձը, հակամարտ դասակարգերի պայքարը, էպոխայի պատկերը, նաև հայ կյանքի ազգային ու սոցիալական պատմությունը։

Օգտագործելով արևմտահայերի թշվառ վիճակը, դաշնակցությունը երկար տարիներ իր մամուլով թմբկահարել է, իբր թե ձգտում է ազատագրել թյուրքահայությանը սուլթանական լծից, իսկ իրականում այդ ամբողջ գործունեությունը ոչ այլ ինչ է եղել,. եթե ոչ իմպերիալիստական դիվանագիտության (Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի, ցարական Ռուսաստանի և Թյուրքիայի) հետ կատարված գաղտնի բանակցությունների, նրանց սպասարկելու, նրանց ձեռքին կույր գործիք լինելու հակաժողովրդական, արկածախնդրական մի շարան։

Համաշխարհային առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին Դաշնակցությունը կազմակերպել ու գլխավորել է հայ կամավորական շարժումը, որպեսզի պաշտպանի Անտանտայի պետությունների իմպերիալիստական շահերը և պատճառ է հանդիսացել հարյուր-հազարավոր թյուրքահայության կոտորածներին։

Ռուսաստանի 1917 թվականի բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո Դաշնակցությունը մենշևիկների ու էսեռների հետ պաշտպանում էր ժամանակավոր կառավարության քաղաքականությունը, որի մի ծայրն ուղղված էր ճնշված ազգերի ազատության դեմ։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան Դաշնակցությունը դիմավորեց թշնամաբար, վրացական մենշևիկների ու ադրբեջանական մուսավաթականների հետ բլոկ կազմած։ Դրա իբրև շարունակություն 1918 թվականին դաշնակցությունը՝ մենշևիկների ու էսեռների հետ միասին դեմ դուրս եկավ Բաքվի կոմունային։ Բաքվի Սովետում պահանջեցին ցրել Սովետական իշխանության օրգանները և հրավիրել անգլիացիներին։

Հետագա 1918—1920 թվականներին, դաշնակցությունը գործակցելով գերմանո-թուրքական զավթիչների հետ, Հայաստանի բուրժուա-նացիոնալիստական կառավարության գլուխ անցավ։

Դաշնակցության իշխանության տարիներին (1918—1920 թթ.), երկրում կիրառվող ագրարային քաղաքականության հիմքում դրվում է կուլակության և կալվածատերերի շահերի պաշտպանության հարցը և առաջ է քաշվում «Հայաստանը միայն հայերի համար» նշանաբանը։

Դաշնակներն իշխանության գլուխ անցնելու օրից սկսում են «մաքրել» երկիրը ադրբեջանցիներից, արշավանքներ են կազմակերպում Վեդի-Բասարի ու Զանգի-Բասարի ադրբեջանական շրջանների վրա, ռուսական գյուղերից ար-

տարում են աշխատավոր գյուղացիներին, վայրագ հալածանքներ են սկսում ռուսական ազգության դեմ։ Դաշնակները ազգային ու սոցիալական ճնշման քաղաքականություն էին վարում նաև՝ եզդիների, ասորիների և հույների վերաբերյալ։

Սերտ կապեր հաստատելով Ռուսաստանի բանվորա-գյուղացիական իշխանության դեմ կռվող սպիտակ գեներալ Դենիկինի հետ, Դաշնակցությունը միաժամանակ ձգտում էր հովանավորություն գտնել Թյուրքիայից։ Այո, Դաշնակցությունը մահվան դեգերումների մեջ, 1920 թվականին արդեն ընդունել էր թյուրքական օրիենտացիա։

Ահա, ստորև դնում ենք Դաշնակցության և նրանց գլխավորած հանրապետության պաշտոնական օրգանի, «Հառաջ»-ի 1920 թիվ, նոյեմբերի 20-ի առաջնորդողը թյուրքական օրիենտացիայի մասին։ «...Տաճկաստանը կարող է ի վերջո հաշտվել մեր պետական գոյության հետ միայն այն ժամանակ, երբ մենք մի անգամ ընդմիշտ կհրաժարվենք Ռուսական օրիենտացիայից։

Ճիշտ է, Մուստաֆա-Քեմալի Տաճկաստանը, որ այսօր պատերազմում է մեզ հետ, հանդես է գալիս, իբրև բոլշևիկյան Ռուսաստանի դաշնակիցը։ Բայց, ռուսների հետ լինելով չէ, որ հայ ժողովուրդը կարող է ապահովել իր և իր պետության գոյությունը։

...Իր փրկության համար Հայաստանն ունի միայն մի ճանապարհ — գտնել անմիջական կերպով մի ընդհանուր լեզու իր հարևանի՝ Թյուրքիայի հետ։

Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական ու ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թյուրքական օրիենտացիա»։

Բացառիկ բթամտությամբ, պատմական այս բոլոր փաստերը հաշվի չառնելով, Դաշնակցության մամուլը տասնյակ տարիներ է ինչ՝ սուտ ու զրպարտության նորանոր տարափներ է տեղում Սովետական Հայաստանի դեմ և գովերգում է 1918—1920 թվականների իրենց ղեկավարած «Հայ դեմոկրատական հանրապետությունը»։

Նրանք իհարկե չեն գրում՝ հայ-վրացական, հայ-ադրբեջանական պատերազմների, երկրի ռևոլյուցիոն — դեմոկրատական ուժերի ոչնչացման, թյուրքական օրիենտացիայի մասին, նրանք գրում են, որ իրենք պարլամենտ ունեին, բոլշևիկները ոչնչացրին դեմոկրատական կարգերը։

Ահա դաշնակցականների պարլամենտի մասին, հենց իրենց կառավարության նախագահի, Հով. Քաջազնունու գրածը. «Պարլամենտ չկար Հայաստանում, մի դատարկ ձև էր առանց պարունակության։ Պետական հարցերը քննության էին առնվում և լուծվում դռնփակ, Դաշնակցական ֆրակցիայի սենյակում, ու ապա հայտարարվում պարլամենտի ամբիոնից»*։

Նույն գրքում ասված է, որ 1920 թվի մայիսի 5-ին պարլամենտի այդ ծաղրածուն էլ մեջտեղից թռավ, դաշնակցության բյուրոն ցրեց պարլամենտը և հիմնեց իր բյուրոյական կառավարությունը։

Հայ ժողովրդի ցասումով Հայաստանի հողից դուրս շպրտված դաշնակները ահա 37 տարի է արտասահմանում դավեր են լարում մեր հայրենիքի դեմ։

Փաստ է, որ իրենց կատաղի պայքարում Սովետական Հայաստանի դեմ

---

* Դաշնակցությունն այլևս անելիք չունի. էջ 38։

դաշնակները համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ գտնըվում էին ֆաշիստների լագերում, նրանց խմբապետների հրամանատարությամբ հատուկ ֆաշիստական զորամասեր արշավում էին Հայաստանի վրա։ Բայց Սովետական հզոր բանակները ջարդուփշուր արեցին թե հիտլերյան բանակներին և թե նրանց պոչից սողացող դաշնակցական-հիտլերականներին։

Դաշնակցության մնացորդները ցրվելով արտասահմանում իրենց թերթիկների միջոցով, տարված խաղամոլի լկտիությամբ, շարունակում են իրենց պայքարը Սովետական Հայաստանի դեմ։ Նրանց բուրժուական մամուլը օրըօրին տեղում է՝ ստերի, զրպարտությունների, հայհոյանքների անսահման տարափ Սովետական Հայաստանի դեմ, դաշնակ ղեկավարները ոստիկանական լրտեսներ դառած մատնում են գաղութահայ դեմոկրատական ուժերին, Դաշնակցությունը վերածվել է անգլո-ամերիկյան գործակալության։ Դաշնակցության թերթուկներ՝ «Հառաջ»-ը, «Հուսաբեր»-ը, «Ազդակ»-ը, «Հայրենիք»-ը, «Ալիքը», «Արևելքը» պրոպագանդում են ամերիկյան հետախուզության առաջադրած նոր պատերազմի հրահրման խնդիրները, խաղաղության թշնամիների հակասովետական հերյուրանքները։ Արկածախնդրությունը, դա Դաշնակցության էությունն է եղել, այժմ էլ կազմում է նրա ոգեշնչման աղբյուրը։

Նոր աշխարհավեր պատերազմ, Ամերիկայի գլխավորությամբ արշավանքներ սոցիալիզմի լագերի երկրների վրա,– ահա դաշնակների ցնորքները։

Դաշնակցական մամուլը սանձարձակ հարձակումներ է կատարում Սփյուռքի հայ դեմոկրատական, պրոգրեսիվ մամուլի ու կազմակերպությունների վրա, նրանք իրենց թերթուկների միջոցով կոչ են անում՝ հալածել, ոչնչացնել հայ դեմոկրատական գործիչներին։

Ահա թե ինչ է գրել Դաշնակցության կենտրոնական օրգան «Հայրենիք»-ը. «...Հարկ է սթափվել, աններող ըլլալ, ակն ընդ ական քաղաքականությամբ հալածել բոլշևիզմը ամերիկյան հողերու վրա և գոտիներու մեջ և կասկածանքով հետևել գործունեության բոլոր անոնց, որոնք թեև համայնավար չեն, բայց վճռաբար դիրք չեն ճշտեր այդ վարդապետության և Խորհրդային Միության դեմ»։

Հայ իրականության մեջ գործած մյուս քաղաքական կազմակերպություններից հայտնի է «Հայ սոցիալ-դեմոկրատական» (սպեցիֆիկների) կազմակերպությունը, որ ունեցել է միքանի պարբերականներ։

Այդ կազմակերպության և նրա մամուլի մասին մենք ընդարձակորեն խոսել ենք այս հատորի մեջ (68—72 էջ), այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել միայն հետևյալը։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, 1905—1907 թվականներին սպեցիֆիկները քողարկվել էին ռևոլյուցիոն ֆրազեոլոգիայով, իսկ հետագա ռեակցիայի ժամանակաշրջանում այդ կազմակերպությունը երևան է եկել որպես աջակողմյան մի կազմակերպություն։

1911 թվի հունվարին Ալ. Մյասնիկյանը իր նամակներից մեկում, ուղղված բանաստեղծուհի Շ. Կուրղինյանին գրել է. «Չի կարելի այդ պարոնների հետ աշխատակցել, չեն ամաչում, մինչև հիմա ծածկված մնալ մարքսիզմի շղարշի տակ, նրանք տիպական նացիոնալիստներ են և օպորտունիստներ. պոլիտիկանությունը թափվում է նրանցից»*։ Սոցիալ-դեմոկրատական հայ

* ՀԿԿ կենտկոմին կից Պարտ. արխիվ. ֆոնդ. 4, գործ 22։

կազմակերպությունը՝ «սպեցիֆիզմը» չնայած հանդես է եկել հայ բանվորության անունից, բայց փաստորեն նացիոնալիստական ինտելիգենտների մի կազմակերպություն է եղել։ Սպեցիֆիկները իրենց նացիոնալիստական բնույթամբ «Բունդի» վիժվածքն են եղել մեր իրականության մեջ։

Սպեցիֆիկները 1905 թվին փորձեցին ֆեդերալիստական հիմունքներով մտնել ՌՍԴԲՊ-ի շարքերը, բայց Վ. Ի. Լենինը 1905 թվին Կենտկոմին գրած իր նամակով զգուշացրել է՝ չթույլատրել այդ բունդական վիժվածքներին՝ մասնակցել ՌՍԴԲՊ-ի ներկայացուցիչների կոնֆերենցիային։

Ահա Վ. Ի. Լենինի ցուցումը սպեցիֆիկների մասին. «Խիստ նախազգուշացնում եմ «Հայկական ս.-դ. ֆեդերացիայի» վերաբերյալ, եթե դուք համաձայնվել եք, որ նա մասնակցի կոնֆերենցիային, ապա ճակատագրական սխալ եք կատարել, որպիսին հարկավոր է ուղղել ինչ էլ որ լինի։ Դրանք մի զույգ ժնևյան կազմալուծիչներ են, որոնք այստեղ հրատարակում են ամենադատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ։ Դա — բունդական կրեատուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը սնելու համար։ Եթե դուք թույլ տաք այդ մարդկանց ռուսական կոնֆերենցիա, այսինքն՝ Ռուսաստանում աշխատող կազմակերպությունների կոնֆերենցիա գալու, դուք սարսափելի կխայտառակվեք։ Կովկասի ընկերները բոլորն էլ դեմ են գրականագետ — կազմալուծիչների այդ շայկային (այդ բանը ես գիտեմ շատերից), և մենք շուտով կշշպռենք նրանց «Пролетарий»-ում։ Դուք կառաջացնեք միայն Կովկասի բողոքները և «հաշտության» ու «միավորման» փոխարեն՝ նոր գզվռտոց։ Ասացեք, խնդրեմ, ինչպես կարելի է անտեսել Կովկասյան Միությունը, Ռուսաստանում՝ բազմաթիվ աշխատողներին և մտերմանալ ժնևյան ճահճի տականքների հետ։ Աղերսում եմ, մի արեք այդ բանը...» **։

Եվ այսպես. պատմական փաստ է, որ ՌՍԴԲՊ-ի համագումարն մերժեց նրանց դիմումը, չթույլատրեց ֆեդերատիվ հիմունքներով ընդունվելու ՌՍԴԲՊ-ի մեջ։

1905—1907 թվականների ռևոլյուցիայի փոթորկալից շրջանում սպեցիֆիկները պասիվ դիտողի դերում էին, իսկ ռեակցիայի ժամանակաշրջանում չքացել էին ասպարեզից, մութ խորշերում՝ «քննադատում», «վերագնահատում» էին, թուք ու մուր էին թափում, ծաղրում էին ռևոլյուցիան։

Իմպերիալիստական առաջին պատերազմի և դաշնակցության կողմից կազմակերպված կամավորական շարժման ժամանակ սպեցիֆիկները դաշն են կնքում դաշնակցականների հետ և գաղափարապես միանում են նրանց։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, ինչպես ամբողջ բուրժուական աշխարհը, սպեցիֆիկներն ընդունում են՝ թշնամաբար, մի շարք թերթեր ու գրքեր են հրատարակում բոլշևիզմի դեմ։ 1918—1920 թվականներին, Դ. Անանունի ու Բ. Իշխանյանի գլխավորությամբ Դաշնակցական Հայաստանում սպեցիֆիկները փոխում են իրենց ֆիրման և վերանվանվում «Հայաստանի Ս. Դ. Բ. Կուսակցություն» և ապա նրանց հետ միասին գլորվում են անգլո-ամերիկյան ռեակցիայի գիրկը ու փախչում արտասահման։

Մյուս պարտիան, որ 1900—1957 թվականներին զգալի քանակով հայերեն թերթեր ու ամսագրեր է հրատարակել, դա հնչակյան պարտիան է։ Այդ

---

* Վ. Ի. Լենին. Երկեր, հտ. 34, էջ 383—384։

պարտիան կազմակերպվել է 1887 թվին։ Բավական մեծաքանակ է եղել հնչակյան մամուլը. ըստ իրենց տվյալների 41 տարբեր երկրներում հրատարակվել են 107 անուն պարբերականներ։

Մեր աշխատության առաջին հատորում հնչակյանների մասին գրել ենք հետևյալը։

Հնչակյան պարտիան մանր-բուրժուական ազգայնական պարտիա էր։ Չնայած հնչակյաններն իրենց ծրագրում գրել էին սոցիալիզմի հարցը, իրենց կոչում էին «Հայ սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն», բայց նրանց պատմական ընթացքը ցույց տվեց, որ հակասոցիալիստական վարքագիծ են ունեցել։ Այսպես. գաղտնի կոմիտեներ են կազմակերպել, տեռորներ ու զինված հարձակումներ են կատարել և այլն։

Ռուսահայաստանում հնչակյաններն աշխատել են ջլատել, հետ կասեցնել հայ աշխատավորությանը և բանվորներին պրոլետարիատի ռևոլյուցիոն շարժումներից։

Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման հարաճուն զարգացումը և հայ պրոլետարիատի ու գյուղացիության կազմակերպումը ՌՍԴԲԿ (բոլշևիկների) շուրջը կազմալուծում բերեց հնչակյաններին։

Առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ հնչակյանները տարվելով Անտանտայի պետությունների խոստումներով, կազմակերպեցին կամավորական խմբեր։

1920 թվից հետո, գաղութահայ իրականության պայմաններում Հնչակյան պարտիան և նրա օրգանները հիմնական վերակառուցում ապրեցին։ Մանավորապես վերջին շրջանի նրանց գործունեությունը բնորոշվում է որպես առաջադիմական գործունեություն։ Այդ վերակառուցման մեջ վճռական նշանակություն ունեցավ Սովետական Հայաստանի գոյությունը և նրա հարաճուն վերելք ապրող պայծառ իրականությունը։ Ի դեմս Սովետական Հայաստանի Հնչակյանները տեսան Հայ ժողովրդի փրկության միակ ճիշտ ուղին և դարձան Սովետական Հայաստանի բարեկամները։ Հնչակյան պարբերական մամուլը բարյացակամ վերաբերմունք ունի դեպի Սովետական Հայաստանը։ Նրանց կենտրոնական օրգանի «Հնչակ»-ի 1935 թվի № 1-ում ասված է. «Հնչակյան կուսակցությունը կը նկատե Խորհրդային Հայաստանն իբրև հայության հույսերու և ցանկության միակ կռվանը, հետևաբար զայն օր քան զօր ամրացնելու համար, անհրաժեշտ է դրական աշխատանքներու առջև կանգ չառնել։ Հնչակյան կուսակցությունը կըհավատա, որ Խորհրդային Հայաստանը հայության գոյության ու փրկության միակ խարիսխն է, ապա ուրեմն զայն ոչ միայն անխորտակելի, այլև պատկառելի դարձնելու համար մեր հզոր աշխատանքը պիտի դնենք...»։

Մոտավորապես նույնն է պարագան նաև Սփյուռքում գործող մյուս խոշոր քաղաքական կազմակերպության՝ Հայ Ռամկավար-Ազատական կուսակցության (ՌԱԿ)։ Մեր ներկա աշխատության առաջին հատորում, «Անահիտի» կապակցությամբ մենք գրել ենք, որ Հայ Ռամկավարները, դրանք Ռուսահայ ժողովրդական (կադետական) պարտիան են Սփյուռքում։ Ռամկավարները գաղութահայ բուրժուազիայի պարտիան լինելով, իրենց շահերով կապված են եվրոպական ու ամերիկյան բուրժուազիայի հետ։

Ռամկավարները միշտ թմբկահարել են, որ «...Բովանդակ կարելին արա-

մաղթել են Հայաստանի վերականգնումի գործին», բայց իրականում այդ օգնությունն աննշան է եղել։ Սովետական Հայաստանի աշխատավորությունը, միայն Սովետական Մեծ Միության անշահախնդիր օգնությամբ վերաշինեց իր հայրենիքը և արտասահմանից ընդունեց հարյուրհազարավոր հայեր։

Սովետական Հայաստանի կենսահաստատ իրականությունը և հայ ժողովրդի վերածնունդը սովետական արևի ներքո, վճռական ազդակ հանդիսացան Ռամկավար-Ազատական կուսակցության վերջին շրջանի գործունեության համար, նրանց եա միացնելով Սովետական Հայաստանի բարեկամների բանակին։

Ինչպես Հնչակյան նույնպես և Ռամկավար մամուլը Սփյուռքահայ իրականության մեջ ակտիվ պայքար են տանում դաշնակցության դեմ մերկացնելով նրա հետադիմական, հակաժողովրդական էությունը։

Ճիշտ է Ռամկավար-Ազատական կուսակցության աջ թևը, հատկապես ամերիկահայ հատվածը ժամանակ առ ժամանակ որոշ հարձակումներ է կատարում Սովետական Միության և Սովետական Հայաստանի դեմ, սակայն պիտի ենթադրել, որ նրանք ժամանակի ընթացքում կազատագրվեն այդ մոլորությունից և ավելի առողջ աքերլով կկարողանան տեսնել ու գնահատել քաղաքական դեպքերն ու իրադարձությունները։

Սփյուռքահայ իրականության մեջ լույս են տեսնում առաջադիմական ուղղության նաև բազմաթիվ այլ անպարտիական օրգաններ («Հայ մամուլ»,— Արգենտինա, «Արաքս»— Եգիպտոս, «Ժամանակ»— Ստամբուլ, «Կոռնկ»— ԱՄՆ, «Սուրիա»— Սիրիա, «Լրաբեր»— ԱՄՆ, «Մեր նշանաբանն է հառաջ»— Լիբանան և այլն)։

Մենք Կոմունիստական և սովետական մամուլին մի ամբողջ հատոր ենք նվիրել * Նախապատրաստվում է երկրորդ հրատարակությունը, որ կընդգրկի երկու մեծադիր հատոր, որտեղ տրվելու է նաև արտասահմանյան կոմունիստական մամուլը։ Այդ իսկ պատճառով կոմունիստական մամուլի մասին այստեղ չենք խոսում։

Հնչակյան, Ռամկավար-Ազատական մամուլի հետ միացյալ ճակատ կազմած այս առաջադիմական օրգանները մեծ աշխատանք են կատարել և շարունակում են կատարել տարագիր հայության մեջ վառ պահելու համար սերը դեպի Սովետական Հայաստանը, դեպի հայ լեզուն և կուլտուրան։ Նրանք հայրենասիրական ջերմությամբ են տաքացնում ժողովրդական լայն մասսաների կենսատու հույսերը դեպի Սովետական հայրենիքը, օրը-օրին տեղեկացնում են մեր ստեղծագործ աշխատանքների ու նվաճումների մասին։

«Ողջույն հսկաններուդ, էլեկտրակայաններուդ, ջրանցքներուդ, գործարաններուդ, կրթարաններուդ, համալսարաններուդ, արվեստի և լույսի հաստատություններուդ... և հայրենի բոլոր բնագավառներու մեջ քրտնող մարդի ու բազկի տերաններուդ»... («Հայ մամուլ» 1956 նոյեմբ. 28)— ահա ինչ ջերմությամբ են ողջունում հայ ժողովրդի վերածնունդը գաղութահայ առաջադեմ թերթերը։

Հայ առաջադեմ-դեմոկրատական թերթերն ապրում են մեր եղբայրների, գաղութահայ բանվորական-աշխատավորական ժողովրդի հետ, մաս-

---

* Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա — Հայ բոլշևիկյան մամուլը 1900—1920 թթ. Սովետահայ մամուլը 1920—1954 թթ., Երևան, 1956, 686 էջ։

նակցում են նրանց վշտին ու տառապանքներին, լուսաբանում են նրանց կյանքն ու լավագույն ձգտումները։

Հայ առաջադեմ-դեմոկրատական թերթերը մերկացնում են դաշնակների պառակտիչ գործունեությունը, որի նպատակն է ամեն կերպ թուլացնել արտասահմանի հայության կապը և հայրենասիրական ձգտումը դեպի Սովետական Հայաստան։

Հակառակ հայ ժողովրդի թշնամի դաշնակների, արտասահմանի հայ գաղութներում անընդհատ աճում ու հզորանում է հայրենասիրական շարժումն ու կապը Սովետական Հայաստանի հետ, մյուս կողմից ավելի մեծ թափ է ստանում առաջադիմական-դեմոկրատական ուժերի գործունեությունը։

Պրոգրեսիվ հայ մամուլն արտասահմանում ընթանում է Արևելքի առաջավոր ուժերի հետ միասին, Մերձավոր Արևելքի և Ասիայի մյուս երկրներում վճռականորեն պաշտպանում է Բանդունգի կոնֆերենցիայի կողմից հռչակված՝ ազգային անկախության, ազատության ու խաղաղության սկզբունքները, պաշտպանում է Եգիպտոսի ու մյուս արաբական երկրների իրավունքներն ու պայքարը ազատ կյանքի համար։ Արաբական աշխարհի բազմալեզու մամուլի հետ միասին հայ առաջադեմ մամուլը նույնպես այսօր վճռական պայքար է տանում «էյզենհաուերի դոկտրինայի» դեմ, որը մի նոր փորձ է ամերիկյան իմպերիալիզմի՝ ներթափանցել ու ստրկացնել Մերձավոր Արևելքը։

***

Այժմ մի քանի խոսք ներկա բիբլիոգրաֆիայի և նրա թերությունների մասին։

1. Աշխատել ենք, որ ներկա բիբլիոգրաֆիան լրիվ լինի, բայց այն չենք անվանում՝ լիակատար և ոչ էլ սպառիչ։ Քննադատելով Գ. Լևոնյանի կազմած բիբլիոգրաֆիան Վենետիկի Մխիթարյաններից Ն. Գասպարյանը գրել է. «Լրագրական ցուցակ մը մեր մեջ, որքան ալ ձգտի կատարյալ ըլլալ միշտ կունենա իր թերինները, առնվազն անկարելի է 140 տարվան ընթացքին աշխարհիս զանազան մասերուն մեջ հրատարակված հայերեն բոլոր թերթերը տեսած կամ անոնց մասին տեղեկություն քաղած ըլլալ...» *։

Քննադատելով Գ. Լևոնյանի կազմած բիբլիոգրաֆիան թե Վենետիկի և թե Վիեննայի Մխիթարյանները, օգտվելով իրենց գրապահոցների հարուստ նյութերից բավական մեծ քանակով բացեր ու թերիներ էին նշել, մենք օգտագործել ենք այդ բոլոր հավելումներն և ուղղումները։ Այսպիսով արտասահմանի երկու կարևոր հայկական կուլտուրական կենտրոնների նյութերը և քննադատական խոսքը օգտագործվել է մեր կողմից։

Իհարկե, մարդիկ, կարող են ասել, թե դա քիչ է, անմիջական համագործակցություն, աշխատակցություն պիտի պահովեիք արտասահմանի հայ կուլտուրական բոլոր կենտրոնների հետ։ Միանգամայն ճիշտ պահանջ է դա, բայց առայժմ հնարավոր չի իրագործել այն։

Ով տեղյակ է վերջընթաց քսան տարիների անցուդարձին, նա կասի, որ

---

* Բազմավէպ, 1927, № 6—9.

իրոք հնարավոր չէր կապ և աշխատակցություն ստեղծել։ Այդ բացը վերացնելու պայմանները նոր են միայն ստեղծվում, սակայն միջազգային հարաբերությունների և քաղաքական իրադարձությունների ներկա բարդ պայմաններում, այդ կապն էլ հաճախ խզվում է։

2. Սա հայ պարբերական մամուլի առաջին ընդհանուր բիբլիոգրաֆիան է։ Առաջին անգամն է, որ հայ պարբերականների հոդվածային նկարագրությունն է տրվում, լայն գաղափար է տրվում նրանց բովանդակության մասին։

Երեք մեծադիր հատորներում (2100 էջ, 270 տպ. թերթ) մենք տվել ենք կարևոր ամսագրերի և որոշ դեպքերում նաև երկշաբաթաթերթերի, շաբաթաթերթերի բովանդակությունը,— հոդվածային նկարագրությունը։

Մենք չենք տվել լրագրերի հոդվածային նկարագրությունը, որովհետև միքանի տասնյակ հատոր կպահանջվեր, այդ մեծածավալ նյութն ընդգրկելու համար։

Մնացած պարբերականների բոլոր նյութերը չէ, որ նկարագրել ենք՝ արժեքազրկված, գիտական-ուսումնական, հայագիտական որևէ արժեք չներկայացնող, անկարևոր, շատ) հնացած, նույնպես և նեղ-կրոնական, եկեղեցական-դավանաբանական, վարքագրական նյութերը չենք նկարագրել։

Պարբերականների մի զգալի մասը իր ժամանակի հասարակական-քաղաքական կյանքում որևէ դեր չի խաղացել, բռնել են սունկի պես, կյանքից կտրված, անբովանդակ, և կամ թերթի նպատակը խմբագրին ապրուստ մատակարարելն է եղել։ Պարզ է որ նման պարբերականների անունները ենք հիշատակել միայն, որևէ անհրաժեշտություն չկար նրանց բովանդակությունը նկարագրել։

Կան սովետական բիբլիոգրաֆիայի ներկա դրվածքին անտեղյակ մարդիկ, որոնք ամեն առթիվ կրկնում են, թե բոլոր պարբերականները պիտի ընդգրկել, նրանց բոլոր նյութերը պիտի նկարագրել։

Դա սխալ է, չի կարելի տալ հատուկ պահպանման ենթակա մամուլը, պատմական և գրական որևէ նշանակություն չունեցող կրոնական և կամ մոնարխիստական նյութերը։

Եվ վերջապես նյութական և մարդկային հնարավորություններ չկան տասնյակ հատորներ հատկացնելու զանազան բիբլիոգրաֆիաների։ Նույնիսկ Պետական գրապալատները առայժմ չեն մշակում և հրատարակում ամբողջ սովետական մամուլը։

Այժմ Սովետական Միությունում լույս տեսնող 7537 անուն լրագրերից Համամիութենական Պետական գրապալատը բիբլիոգրաֆիական նկարագրման է ենթարկվում միայն 38 անուն՝ կենտրոնական և ռեսպուբլիկական թերթեր։ Իսկ 2500-ից ավելի անուն ամսագրերից և այլ պարբերականներից միայն 120 անուն է մշակվում ժուռնալային հոդվածների տարեգրում։

— Չեն նկարագրվում՝ 1. մասսայական ժուռնալները, 2) նեղ-վարչատնտեսական բնույթ ունեցող պարբերականները, 3) մինիստրությունների, գործկոմների ինֆորմացիոն-տեղեկատու բյուլետենները, 4) մանկական ամսագրերը, և այլն։

3. Պարբերականների նկարագրությունը մենք կատարել ենք նորագույն մեթոդներով Համամիութենական Պետական գրապալատի մշակած և այժմ ամբողջ Սովետական Միությունում կիրառվող բիբլիոգրաֆիական կանոնների համաձայն։

Նախ տրվում է թերթի, ժուռնալի լրիվ անունը, ո՞ւմ օրգանն է, հրատարակության վայրը, հրատարակության տարիները, հրատարակիչների-արտոնատերերի, խմբագիրների անուն-ազգանունները և ըստ հնարավորի՝ տպաքանակները։

Իհարկե անհնարին է եղել 163 տարվա ընթացքում լույս տեսած հայ բոլոր պարբերականների լրիվ նկարագիրը տալ, որովհետև մի զգալի մասը չկա մեր գրապահոցներում, շատ-շատերի վրա չեն տպագրվել՝ տպաքանակները, անհրաժեշտ տվյալներ՝ հրատարակիչների-խմբագիրների ու աշխատակիցների մասին և այլն։

Բայց ի նկատի ունենալով, որ հայ պարբերական մամուլը հանդիսանում է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության կարևոր աղբյուրը, հայ հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման կարևոր միջոց, մենք երկար տարիների համբերատար պրպտումներով կազմեցինք այս երեք հատորանոց բիբլիոգրաֆիական աշխատությունը։

Ճշմարտացի, օբյեկտիվ և գիտական քննադատությունը պիտի նպատակ ունենա լրացնել մեր աշխատության բացերը—թերիները, ապացուցել տեղ գտած սխալները և ուղղել, օգնել հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան պահանջված բարձրության վրա դնելու։

ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ակադեմիա — ակադ.
արտադրական — արտադր.
առողջապահություն — առողջապահ.
բանաստեղծություն — բանաստեղծ.
բիբլիոգրաֆիա — բիբլիոգր.
բովանդակություն — բովանդ.
բնագիտական — բնագիտ.
գեղարվեստական — գեղ.
գիտական — գիտ.
գյուղատնտեսական — գյուղատնտ.
գրադարան — գրադ.-ն
գրական — գրակ.
գրախոսություն — գրախոս.
թարգմանություն — թարգմ.
թիվ — թ.
ժողովրդական — ժող.
լեզու — լեզ.
խմբագիր — խմբ.
ծանոթություն — ծանոթ.
կուլտուրական — կուլտ.
համալսարան — համալս.
հայկական — հայկակ.
հասարակական — հասարակակ.
հատոր — հտ.
հեղինակ — հեղ.
հրատարակություն — հրատ.
մաս — մ.
նկարիչ — նկ.
շապիկ — շպկ.
շարունակություն — շար.
շրջան — շրջ.
պարբերական — պարբ.
պրակ — պր.
ռուսական — ռուս.
սանտիմետր — սմ.
Սանկտ Պետերբուրգ — ՍՊԲ
վիճակագրություն — վիճ.
տիրած — տիր.
տնտեսական — տնտ.
տպարան — տպ.
ուսումնական — ուս.
քաղաք — ք.
օրինակ — օր.

1900

ՀԱՆԴԵՍ: *Սոցիալիստական օրգան։ Տնտեսական, քաղաքական, հասարակական ամսագիր։ Ժնև, տպ. «Հանդես»-ի, 1900. 64 էջ (22×15 սմ)։ Բաժանորդագինը 6 ռ.։*

— Խմբագիր-հրատարակիչ՝ Երվանդ Պալյան։

Андес. Журнал. Социалистический орган. Экономический, политический, общественный ежемесячник. Женева, 1900.

1900 օգոստոս № 1, էջ 1—64

1900 սեպտեմբեր № 2, էջ 65—128

1900 հոկտեմբեր № 3, էջ 129—192

1900 նոյեմբեր-դեկտեմբ. № 4—5, էջ 193—288

«Հանդես»-ի նպատակների մասին 1900 թ. № 1-ում տպված է. «Ներկա 1900 թվականի հուլիս ամսից մենք ձեռնարկել ենք սույն «Հանդես»-ի հրատարակության։ «Հանդես»-ը իր որոշ և հետևողական ուղղությամբ պիտի գրավե այն տեղը, որ մինչև այժմ բաց էր մնացել Կովկասյան, թե Տաճկահայաստանի, թե Պարսկաստանի, թե Բուլղարիայի և թե արտասահմանյան մամուլի մեջ։ «Հանդես»-ը պիտի լինի արտահայտիչն ու ներկայացուցիչը հայ մարքսայի, հայ արհեստավորի և հայ բանվորի, որոնց տնտեսական-հասարակական կյանքի էությունը և ընթացքը բաց են անում մեր առաջ նոր ուսումնասիրության անհրաժեշտություն և գործունեության նոր ճանապարհ։ «Հանդես»-ը պիտի լինի մի նոր կուսակցության հիմնողն ու կազմակերպողը։ «Հանդես»-ը պիտի լինի նոր հասարակական մտքի և հասարակական կռվի օրգան, մշակողն ու տարածողը նոր սկզբունքների և թեորյաների ամեն հայաշատ երկրների մեջ»։

«Հանդես»-ի խմբագիր Երվանդ Պալյանի մասին անհրաժեշտ ենք համարում հաղորդել հետևյալը։

Նա ծնվել է 1869 թվի օգոստոսի 20-ին (հ. տ.) Ղրիմի Թեոդոսիա քաղաքում, ուսուցչի ընտանիքում։

Նախնական կրթություն ստացել է Թեոդոսիայի ռուսական դպրոցում, միջնակարգը՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և էջմիածնի Գևորգյան ճեմարանում, բարձրագույնը՝ Ժնևի համալսարանի սոցիալական գիտությունների ֆակուլտետում։

Ե. Պալյանը արտասահմանում հրատարակել է՝ «Հանդես» և «Բանվոր», իսկ Բաքվում՝ «Սոցիալ-դեմոկրատ», «Էկոնոմիկա» և «Ճեփոր» պարբերականները։ 1921 թվից գործել է Սովետական Հայաստանում, իբրև պրոֆեսոր Երևանի Պետական Համալսարանի։ 1924 թվից հիվանդացել է մտավոր դերհոգնածությամբ և մահացել 1941 թվին։

Ե. Պալյանը սկզբում եղել է հնչակյան, հետագայում հայ սոց. դեմ. կազմակերպության (սպեցիֆիկների) գործիչներից մեկը։

Սպեցիֆիկների մասին մենք գրել ենք մանրամասը «Կյանք» թերթի կապակցությամբ։ [1906 թ.]։

Ե. Պալյանի ծածկանունններն են՝ D. Wander, *Վ. Վահունի, Վ. Վ., Ե. Պ., Լ. Արեգյան,* D., *Ա. Վանանդյան, Խ. Դիմաքսյան,* Demon*։*

Խմբագրել է՝ «Հանդես», սոցիալիստական օրգան. 1900 թ., № 1—5. «Բանվոր» (Ժնև) 1904, № 1—2. «Սոցիալ-դեմոկրատ». [Հեկտոգրաֆ, Բաքու]. 1905, № 1—2։

«Экономика». Ежемес. журн. Орган комисси по продовольств. при Совете Рабочих, Красно-

арм., Матросск. и Крестьянск. депут. Баку, 1918, № 1, 20/VI.

«Շեփոր» Բաքու, 1918 № 1։

Նրա աշխատությունները։

I. «Հանդես»-ում. *1. «Հանդես»-ի հրատարակությունը (№ 1, էջ 1—3), 2. Հայ սոցիալիստ կուսակցությունը. (№ 1, էջ 4—46)։— 3. Ամերիկայի հայ բանվորները։ (№ 1, էջ 65—85)։—4. Երկաթուղիները Տաճկաստանում։ (№ 2, էջ 86—90)։—5. Սոցիալիզմ։ Թեորիա և պրակտիկա։ (№ 4—5, էջ 91—96)։—6. Վիլհելմ Լիբկնեխտ։ (№ 2, էջ 110—115)։—7. Սոցիալիստական կազմակերպություն։ (№ 3, էջ 129—139)։— 8. Հայկական իրականությունը։ (№ 3, էջ 4—5)։— 9. Լեհերը և մենք։ (№ 3, էջ 174—178)։— 10. «Դրոշակ» և երիտասարդ թուրքերը։ (№ 3, էջ 179—191)։— 11. Եվրոպայի հայ ուսանողները։ (№ 4—5, էջ 193—206)։— 12. Երկրագործությունը հայ ժողովրդի մեջ։ (№ 4—5, էջ 252—258)։— 13. Անհրաժեշտ ուսումնասիրություն։ (№ 4—5, էջ 265—269)։— 14. Բուրժուազիա և սոցիալիզմ։ (№ 4—5, էջ 270—283)։—15. Սոցիալիստական կոնգրես։ (№ 4—5, էջ 284—286)։— 16. Սոցիալիստական քրոնիկա։ (№ 4—5, էջ 124—127)։— 17. Քաղաքական տեսություն։ (№ 4—5, էջ 128)։*

II. «Բանվոր»-ում 1904 № 1 2. *I. Խմբագրությունից։ II. Հայ սոցիալ-դեմոկրատիան և հայկական իրականությունը։ III. Ծրագիր Հայ սոցիալ-դեմոկրատ կուսակցության։ Ժնև, 1901. 32 էջ.*

IV. Հայ սոցիալ-դեմոկրատ միությունը և յուր «Պրոլետարիատ» օրգանը։ Ժնև, 1903. 36 էջ.

V. *Հնչակյան կուսակցությունը և հայ սոցիալ-դեմոկրատիան։ Ժնև, 1903. 4 էջ.*

VI. Rapport an conqres sociaaliste internationale. *1900. 4 էջ.*

VII. Rapport an conqres sociaaliste internationale. *1904. 4 էջ.*

VIII. «Դաշնակցության տարեդարձը»։ [Երգիծանք]. «Ապտակ», 1896, մայիս [«Demon» *կեղծանունով*]։

IX. «Միքայել Նալբանդյանի տնտեսական թեորիան» Բաքու 1911. 52 էջ։

X. Производительная рабочая кооперация и индустрия. Баку, 1918. 32 стр.

XI. Экономическое учение Л. Толстого. «Вестник Прикаспийск. кооперации» 1918, № 1—2, стр. 36.

XII. Толстой и кооперация. «Вестник Прикаспийск. кооперации», 1918, № 1—2, стр. 51.

XIII. Памяти Плеханова. «Вестник Прикаспийск. кооперации» 1918, № 4—5.

XIV. Воля пролетариата. «Известия», Баку. 1918 июль.

XV. Продовольственный кризис и домовые комитеты. Баку, 1918. 32 стр.

Բազմաթիվ հոդվածներ ունի՝ «Баку», «Каспий», «Кавказ. телеграф» *ռուսական թերթերում՝ 1911—1917 թվերին։*

— Բազմաթիվ ոտանավորներ, պոեմներ, պատմվածքներ, գրաքննական հոդվածներ ունի՝ «Տարազ»-ում, «Մուրճ»-ում, «Նոր-Դար»-ում 1887—1895 թվականներին (տես մեր ներկա աշխատության I հտ. Ե. Պալյան)։

Ըստ իր թողած ինքնակենսագրության, Ե. Պալյանն ունի նաև անտիպ աշխատություններ. թվենք մի քանիսը.

1. Տնտեսական մոնիզմը և պատմական դիալեկտիկան. 1923—1931. 250 էջ.

2. Տնտեսական փազերի զարգացումը։ 1923. 130 էջ.

3. Քաղաքատնտեսության պատմությունը։ [*Իր դասախոսությունները Երևանի Պետհամալսարանում. 300 էջ*].

4. Բանվորական շարժումների պատմությունը։ [*Իր դասախոսությունները Երևանի Պետհամալսարանում։ 300 էջ*].

5. Իր ինքնակենսագրությունը։ [*1930 թ. 250 էջ*]։

1900 № 1, ՕԳՈՍՏՈՍ, ԷՋ 1—64

1 «Հանդես»-ի *հրատարակությունը։* [*Խմբագրական*]. *էջ 1—3*

2 Վահունի, Վ. *Հայ սոցիալիստ կուսակցություն. էջ 4—46*

3 Ա-ՂՆ։ (Տոնիկյան)։ *Հայկական հեղափոխության ծագումն ու պատճառները. էջ 47—53, № 2, էջ 97—109*

4 Ժորես, Ժան։ *Սոցիալիզմ և գյուղացիներ։* [*Թարգմ. տիկ. Ա. Երվանդյան*]. *էջ 54—59*

5 Արեգյան, Լ. *Սոցիալիստական քրոնիկ։* [*Եվրոպական երկրների բանվորական շարժման մասին*]. *էջ 60—62*

6 Վանանդյան, Ա. *Սոցիալիստական մամուլ։ [Եվրոպայի]*. էջ 63—64

1900 № 2, ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԷՋ 65—128

7 Վանունի, Վ. *Ամերիկայի հայ բանվորները*. էջ 65—85

8 Դիմաքսյան, Խ. *Երկաթուղիները Տաճկաստանի մեջ*. էջ 86—90

9 Ն. Գ. *Թեորիա և տակտիկա*. էջ 91—96, № 3, էջ 157—173, № 4—5, էջ 230—241

10 Ն. Գ. *Վիլհելմ Լիբկնեխտ։ [Կենսագրական]*. էջ 110—115

11 Ժորես, Ժան։ *Սոցիալիզմ և գյուղացիներ։—Գյուղական պրոլետարիատը։ [Թարգմ. Ա. Երվանդյան]*. էջ 116—123

12 Արեգյան, Լ. *Սոցիալիստական քրոնիկ։ [Եվրոպայի սոցիալիստական պարտիաների մասին]*. էջ 124—127

13 D. *Քաղաքական տեսություն*. էջ 128

1900 ՀՈԿՏԵՄԲԵՐ, № 3, ԷՋ 129—192

14 Վանունի, Վ. *Սոցիալիստական կազմակերպություն։ [Գրում է, որ «Հանդես»-ը հրապարակ է ելնում իբրև սոցիալիստ օրգան, որի նպատակն է — կազմել հայ սոցիալիստ կուսակցությունը, և կազմակերպված ու սնված սոցիալիստական սկզբունքներով, ձեռնարկել սոցիալիստական տակտիկայով, սոցիալիստական գործունեություն»]*. էջ 129—139

15 Վ. Վ. *Հայկական իրականությունը*. էջ 140—156, № 4—5, էջ 207—230

16 Դիմաքսյան, Խ. *Լեհացիք և մենք*. էջ 174—178

17 Արեգյան, Լ. *«Դրոշակ» և երիտասարդ թուրքեր*. էջ 179—191

1900 ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, № 4—5, ԷՋ 192—288

18 Վանունի, Վ. *Եվրոպայի հայ ուսանողությունը*. էջ 193—206

19 Ժորես, Ժան։ *Սոցիալիզմ և գյուղացիներ։ [Շարունակութ. № 2]*. էջ 242—251

20 Դիմաքսյան, Խ. *Երկրագործությունը հայ ժողովրդի մեջ*. էջ 252—258

21 Թղթակցություններ։ *[Երզնկա, 1900 դեկտեմբ., Բաքու, 1900]*. էջ 259—264

22 Արեգյան, Լ. *Անհրաժեշտ ուսումնասիրություն։ [Հայ հասարակական, տնտեսական կյանքի]*. էջ 265—269

23 Արեգյան Լ. *Բուրժուազիա և սոցիալիզմ*. էջ 270—283

24 Սոցիալիստական *Միջազգային հինգերորդ կոնգրես։ [Տեղեկություններ ընդունված որոշումների մասին]*. էջ 284—286

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ։ *Ազգային, քաղաքական, տնտեսական, գրական, գեղարվեստական, կրոնական, բարոյական թերթ։ Նյու-Եորկ, տպ. «Հայաստանի կոչնակի», 1900—1956. (շարունակվում է). 24 էջ (26×19 սմ). Բաժնեգինը 10 դոլար։*

Айастани кочнак. Гонг Армении. Национальный, политический, литературный, художественный и религиозно-моральный журнал. Нью-Иорк, 1900—1956.

Այս հանդեսը սկզբում հրատարակվել է Բոստոնում և կոչվել է «Կոչնակ Հայաստանի» (1900—1909), հետագայում փոխադրվել է Նյու-Եորկ և կոչվել է «Կոչնակ» (1905—1920), ապա վերանվանվել է «Հայաստանի Կոչնակ» (1921—1956)։

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ։ *Ամսաթերթ կրոնական և աստվածաբանական։ Մանչեստր, 1900—1901. էջ 32 (33×27 սմ)։ Բաժանորդագինը 4 շիլինգ։ — Խմբագիր՝ Թեոդոր Իսահակ։ (Թորոս Զուլայեցի)։*

Ай екехеци. Армянская церковь. Журнал. Манчестер, 1900—1901.

Նմուշի համար ստորև բերում ենք ամսաթերթի 1901 թ. հունիսի № 16-ի բովանդակությունը։

25 Կյանք *Հիսուսի։ [դ. մաս]*. էջ 161—168

26 Քարոզ *Հայկական եկեղեցու վրա*. էջ 169—177

27 Առաջարկ *բարեկարգության եկեղեցական մատյանից*. էջ 177—182

28 Թղթակցություններ։ *[Ամերիկայից, Անգլիայից և լն]*. էջ 183—185

29 Երկու *տողներ։ [Չափածո]*. էջ 186—192

ՆՅՈՒԹ: *Բանասիրական, ուսումնական և մանկավարժական։ Կ. Պոլիս, տպ. Հ. Ասատուրյան, 1900, 80 էջ, (19×12 սմ.). բաժանորդագինը տարեկան 50 ղրշ։*

Խմբագիր՝ Հովնան Գ. Փալագաշյան։

Нют.— Материал. Филологический, учебно-педагогический журнал. Константинополь, 1900.

Այս ամսագրի 1900 թվի Ա. հատորի «Նյութ»-ին նպատակը» հոդվածում խմբագիրը հետևյալն է գրել. «Գործիս անունն, «Նյութ» բանասիրական, ուսումնական և մանկավարժական, ինքնին բավական կը բացատրե իր նպատակը։ Ծոխ հավաքածո մը, կամ թե ըսենք, մատենադարան մը պիտի լինի այս բանասիրական-պատմական շահագրգիռ նյութերու և ուսումնասիրություններու, ինչպես և ուսումնական և մանկավարժական պիտանի ծանոթություններու և նորություններու նվիրված. տեսակ մը հանրագիտարան, ուրկե պիտի կրնան օգտվիլ ամեն դասակարգի ընթերցողք, զարգացածն ու թերուսն, ուսուցիչն և ուսանողը։ «Նյութ»-ը կոչված է, իր դյուրատար գիրքով, ընտրյալ պարունակությամբ և հետզհետե կազմելիք առանձին հատորներու շարքովը, մասամբ դարմանելու այս անպատեհությունները. [Լրագրերի բացը՝ մնայուն, կարևոր նյութերի ուղղությամբ]։

Մանկավարժական բաժինը պիտի պարունակե՝ ի մեջ այլոց՝ զանազան դասընթացքներ, որք պիտի ծառայեն դյուրացնելու Ուսումն. խորհրդո ուսմանց ծրագրին գործադրությունը»։

1900 ՀՏ. 1 № 1, ԷՋ 5—80

30 20-րդ *դար։ [խմբագրական]. էջ 5—8*

31 Նախապատմական *մարդը. էջ 13—16*

32 ԽնլոՖ *Կարապետ։ [Կենսագրական]. էջ 17—20*

33 Հինդլյան, *Հ. Թ. Իրագիտության կարևորությունը և դասավանդության եղանակը. էջ 20—28*

34 Պատիկներուն *համար։ (Մայրական դպրոց, ծաղկոց, մանկապարտեզ). էջ 47—51, № 2, էջ 154—159, № 3, 230—235, № 4, էջ 309—313*

35 Ձեռագործի *դասը. էջ 51—53, № 2, էջ 151—153, № 3, 236—237, № 4, էջ 304—306*

36 Մանկական *խաղեր և զբաղումներ։ Մալում. էջ 53—58*

37 Մալարյան, *Գ. Ա. Գրի և ընթերցանության ուսուցմունք. էջ 61—80, № 2, էջ 81—120*

1900 ՀՏ. 1. № 2, ԷՋ 81—160

38 Թադեոսյան, *Ռ. Նիկողայոս Զորայան. [Մանկավարժ]. էջ 121—130*

39 Հինդլյան, *Հ. Թ. Իրագիտության տիպար դաս մը. էջ 130—133*

1900 ՀՏ. 1, № 3, ԷՋ 161—240

40 Հինդլյան, *Հ. Թ. Պատմություն մանկավարժության. էջ 161—179, № 4, էջ 261—271*

41 Մ. *Քերականություն. էջ 180—184*

42 Ոսկյան, *Հ. Քառյակ պատկերք։ [Բանաստեղծութ.]. էջ 185—186*

43 Սալյան, *Մ. Հռովմ քաղաքին հիմնարկությունը. էջ 187—192*

44 *Հ. Գ. Փ. Բնական գիտությանց դասը միջին դասընթացքի մեջ. էջ 193—210, № 4, էջ 282—285*

45 *Հ. Գ. Փ. Տիեզերագրության դասը բարձրագույն դասընթացի մեջ. էջ 211—216, № 4, էջ 291—303*

46 *Հ. Գ. Փ. Միջոցի երկրաչափություն կամ հաստատաչափություն. էջ 216—229, № 4, էջ 286—290*

1900 ՀՏ. 1, № 4, ԷՋ 241—320

47 Պերպերյան, *Ռ. Հ. Ջուրը։ [Գիտական]. էջ 241—244*

48 Հեօլտրին, Ֆրիդրիխ: *Վերադարձ, [Թարգմ. Ռ. Հ. Պերպերյան]. էջ 245—246*

49 Սալյան, *Մ. Պատրիկք և պլեբեյանք Հռոմի մեջ. էջ 256—260*

50 Ինկիլիզյան, Խ. *Ձեռական աշխատությունք. էջ 271—281*

51 Շարադրության *և վայելչագրության դասը տարրական դասընթացքի մեջ. էջ 307—308*

52 Նշանյան, Հովն. *Ժողովրդային բժշկություն. էջ 314—319*

ՆՈՐ-ՕՐ: *Լրագիր։ Ազգային բանասիրական ու քաղաքական։ Սեփականություն լսարան-ընթերցատան։ Կահիրե, տպ. Ս. Դարբինյան, 1900—1901. 4 էջ, (50×33 սմ)։*

— *Արտոնագիր՝ Ժ. Մյումիչէ։*

— *Խմբագիր՝ Սմբատ Բյուրատ, ապա Սմբատ Փափազյան։*

Нор-ор.— Новый день. Национальная, филологическая и политическая газета. Каир, 1900—1901.

ՇԱՎԻՂ։ *Հանդես կիսամսյա։ Գրական, գիտական, ազգային։ Վառնա, տպ. Արևելյան, ապա Օննիկ Բաբուճյանի, 1900—1901. 16 էջ (24×17 սմ)։*

Բաժանորդագինը 10 ֆրանկ։

Отговорник — Н. Драгулев, *ապա* В. Димитрев.

— *Խմբագիր՝ Հ. Ս. Փափազյան։*

1900 № 1—20, ԷՋ 1—320

Шавих. Тропа. Литературно-научный и национальный двухнедельник. Варна, 1900—1901.

Այս կիսամսյա պարբերականի նպատակների մասին 1900 թ. մարտի 15-ի № 1-ում գրված է. «Շավիղ»-ը հրապարակ կհանենք ամեն բանե առաջ իբրև գրական թերթ մը, որ պիտի կրնա ժամադրավայր ըլլալ նաև բոլոր այն ողջամիտ գրողներուն, որոնք փափաքելով հանդերձ հանրության օգտակար դառնալ, զանազան նկատումներով ժամանակե մը ի վեր հեռու մնացած են գրական ասպարեզեն։

Ազգային տեսակետով՝ մեր ուղղությունը պիտի ըլլա ժողովրդին զանազան դասակարգերուն մեջ սերմանել ու մշակել համերաշխության ու փոխադարձ հարգանքի պետքն ու գաղափարը...»։

1900 ՄԱՐՏ 15, № 1, ԷՋ 1—16

53 «Շավիղ»։ [*Խմբագրական*]. *էջ 1—2*

54 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Հայությունը արտասահմանի մեջ. էջ 2—4*

55 **Անեմյան, Տ.** *Մութին մեջ։ [Պատկեր]. էջ 4—5*

56 **Ազախս:** *Օտյանի շիրիմը. էջ 5—8*

57 **Գամեր-Արշավիր:** *Որբը։ [Բանաստ.]. էջ 8—9*

58 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Օղորմություն մը... (Իրական կյանքե պատկերներ). էջ 9—12*

59 **Միս, խոտ,** *թե պտուղ։* [*Գիտական*]. *էջ 13—16*

1900 ԱՊՐԻԼ 1, № 2, ԷՋ 17—32

60 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Արտասահմանի հայ մամուլը. էջ 17—20*

61 **Փափազյան, Ս.** *Կանխածինները. էջ 25—27*

62 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Արյան ուժը. էջ 27—29*

1900 ԱՊՐԻԼ 15, № 3, ԷՋ 33—48

63 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Արտասահմանի հայ եկեղեցին. էջ 33—35*

64 **Ազախս:** *«Շոգօլա»։ (Բարդյան նորերս). էջ 35—38*

65 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Կաղանդչեքը։ (Վիպակ). էջ 41—44*

1900 ՄԱՅԻՍ 1, № 4, ԷՋ 49—64

66 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Արտասահմանի հայության բարոյականը. էջ 49—52*

67 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Տիկին Պայծառ Փասուճյան. էջ 56—59*

1900 ՄԱՅԻՍ 15, № 5, ԷՋ 65—80

68 **Սրմաքեշխանեանլյան, Ե.** *Ժամանակակից ոգին հայության. էջ 65—67*

69 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Հովհաննես Այվազովսքի։ [Մոլանկարիչ]. էջ 74—77*

1900 ՀՈՒՆԻՍ 1, № 6, ԷՋ 81—96

70 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Արտասահմանի հայ ուսանողությունը. էջ 81—84*

71 **Սրմաքեշխանլյան, Ե.** *«Բազմավեպ»-ին. էջ 91—92*

1900 ՀՈՒՆԻՍ 15, № 7, ԷՋ 97—112

72 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Հին երգը։ [Համերաշխության մասին]. էջ 97—99*

73 **Հայ** *որբերը և Անատոլ ֆրանս. էջ 99—101*

1900 ՀՈՒԼԻՍ 1, № 8, ԷՋ 113—128

74 **Սրմաքեշխանլյան, Ե.** *Կրոնքի մղձավանջը. էջ 113—116*

75 **Մոզյան, Գ.** *Մուրացիկ էմոն։ (Պատանեկան հիշատակ). էջ 122—123*

76 Անեմյան, Տ. *Սիրո զոհեր։ [Պատմվածք].* *էջ 124—127*

1900 ՀՈՒԼԻՍ 15, № 9, ԷՋ 129—144

77 Սրմաքեշխանլյան, Ե. *Վտանգին դարմանը։ [Երիտասարդներին օգնելու մասին].* *էջ 129—132*
78 Ի. Ն. *Հայ կիներն ու հայ որբերը.* *էջ 137—139*
79 Նախանձը։ [Վեպիկ]։ *Թարգմ. էջ 140—144*

1900 ՕԳՈՍՏՈՍ 1, № 10, ԷՋ 145—160

80 Սրմաքեշխանլյան, Ե. *Եկեղեցականությունը արտասահմանի մեջ. էջ 145—148*
81 Անեմյան, Տ. *Ո՞ւր ես, ո՞ւր...։ [Բանաստեղծութ.] էջ 152*
82 Օտյան, Ե. *Անքուն հսկողները։ [Հոդված]. էջ 153—155*
83 Սրմաքեշխանլյան, Ե. *Վատիկանի հանդիսաբանը։ [«Թագմավեպ»-ի մասին]. էջ 155—156*

1900 ՕԳՈՍՏՈՍ 15, № 11, ԷՋ 161—176

84 Սրմաքեշխանլյան, Ե. *Սասուն. էջ 161—164*
85 Մանվելյան, Վ. *Ֆիլիպեի հայ գաղութին ծագումը. էջ 169—173*

1900 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, № 12, ԷՋ 177—192

86 Սրմաքեշխանլյան, Ե. *Հոբելյանին առթիվ։ [Ալպայուլ—Համիտի]. էջ 177—179*
87 Մանվելյան, Վ. *Վերջալույսին։ [Պատկեր]. էջ 185—189*

1900 ՍԵՊՏԵՄԲԵՐ 15, № 13, ԷՋ 193—208

88 Սրմաքեշխանլյան, Ե. *Եռանդը. էջ 193—195*
89 Սրմաքեշխանլյան, Ե. *Սայլորդը. էջ 202—204*

1900 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, № 14, ԷՋ 209—224

90 Սարգսյան, Լ. *Անհատին արժանիքը և հասարակաց կարծիքը. էջ 209—212*
91 Սրմաքեշխանլյան, Ե. *Ջեյթուն. էջ 212—216*

1900 ՀՈԿՏԵՄԲԵՐ 15, № 15, ԷՋ 225—255

92 Սրմաքեշխանլյան, Ե. *Հետադարձ շարժում. էջ 225—228*
93 Գամեր—Արշավիր։ *Վերածնումը Ռումինահայոց մեջ. էջ 233—234*
94 Սրմաքեշխանլյան, Ե. *Գաղթականները։ (Վեպ). էջ 234—238, № 16, էջ 241—255*

1900 ՆՈՅԵՄԲԵՐ 15, № 17, ԷՋ 256—272

95 Սրմաքեշխանլյան, Ե. *Օսմանյան սահմանադրությունը. էջ 256—260*
96 Հայաստանի *վիճակը. էջ 264*
97 «Թոռ Արմենիա»։ *[Կիսամյա հանդեսի մասին]. էջ 265—267*

1900 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, № 18, ԷՋ 273—288

98 Սրմաքեշխանլյան, Ե. *Հայերեն լեզուն արտասահմանի մեջ. էջ 273—275*
99 Փափազյան, Հ. Ս. *Ի՞նչպես է քնանալու. էջ 280—282*

1900 ԴԵԿՏԵՄԲԵՐ 15, № 19, ԷՋ 289—304

100 Սրմաքեշխանլյան, Ե. *«Խարազան»։ [Երգիծաթերթի մասին]. էջ 289—292*
101. Անեմյան, Տ. *Վերա։ (Ամուսնական բարքեր). էջ 293—298*
102 Ե. Ս. *Մատթեոս Մամուրյան. էջ 301—303*

1901 ՀՈՒՆՎԱՐ 1, № 20, ԷՋ 305—320

103 Սրմաքեշխանլյան, Ե. *61-րդ հոդվածը. բացատրություն մը. էջ 305—309*
104 Անեմյան, Տ. *Մարդահամարը տաճկարնակ գյուղի մը մեջ. էջ 312—318*
105 Սրմաքեշխանլյան, Ե. *Դաշնակիցները. [Ինտելիգենցիայի մասին, որ հեռանում են ժողովից]. էջ 318—320*

ՈՐԲՈՒՆԻ *կամ պատկերազարդ բացառիկ բազմավեպ։ Վենետիկ, Մխիթարյան տպ. 1900. 38 էջ. (40×29) սմ. գինը 2,50 ֆր.*
— *Խմբագիր՝ Հ. Ս. Երեմյան։*
Ворбуни. Сиротский. Венеция, 1900

1900 ՀՈՒԼԻՍ, ԷՋ 1—38

106 Երեմյան, Հ. Ս. *Պատառ մը հաց հայ որբին. էջ 1—2*
106ա Ալիշան, Հ. Ղ. *Երբյակ Ներսիսյանք։ [Ներ-*

սեւ Պարթևի, Ներսես Շնորհալու և Ներսես Լամբրոնացու մասին]. էջ 2—5

107 Մի քանի *ազգային նշանավոր բարերարք ինն և տասաներորդ դարու* [*Ռաֆայել Էդվարդ Ղարամյան, Սամվել Մուրատ, Ներսես Ե., Լազարյանք, Աստվածատուր Ջուխտ, Հարություն Պողոսյան Խալիպյան, Մկրտիչ Սանասարյան, Հարություն Ամիրա Պեզճյան, Հովհաննես Պեյ Տատյան, Պողոս Պեյ Տատյան, Կարապետ ամիրա Պալյան*]. էջ 5—11

108 Թոռոսյան, Հ. Հ. *Հայագիտություն Եվրոպայի մեջ*. էջ 11—17

109 Ազգային *գավառական որբանոցներ* [*Թյուրքիայում*]. էջ 17—22

110 Լադոռ: *Ողորմություն* [*Բանաստեղծութ. թարգմ. Ա. Ղազիկյան*]. էջ 22

111. Լեսսեր, Գրոգե դը: *Փոքրիկ մուրացկանը* [*Բանաստեղծութ. թարգմ. Ա. Ղազիկյան*]. էջ 22

112 Սեար, Լուիզա: *Որբուհին* [*Բանաստեղծութ. թարգմ. Ա. Ղազիկյան*]. էջ 22

113 Բնաշխարհի վանքեր: [*Թովմա կամ Ագուլյաց, Ամաղվա Նորավան, Այրի վանք կամ Գեղարդավանք, Աստվածածին անապատ, Աստվածածին* [*Սյունաց Վայոց ձոր գավառում*], *Արատես—Արատենք—կամ Արիտես (Սյունաց Վայոց Ձոր գավառում), Արկազն կամ Արկազան*]. էջ 22—30

114 Կենսագրական *մեկ քանի նմուշներ* [*Կարապետ Յութուճյան, Սիպիլ (Զաբել Տոնելյան), Աղեքսանդր Փանոսյան, Գրիգոր Զոհրապ, Ռեթեոս Պերպերյան, Բյուզանդ Քեչյան, Հովհաննես Թոլայան, Հարություն Մրմրյան, Հրանտ Ասատուր, Եղիշե Դուրյան, Մելիքսեդեկ Մուրատյան, Տրդատ Պալյան, Եղիա Տեմիրճիպաշյան, Դուրգեն*]. էջ 30—36

115 Ժամանակագրական *հուշիկք* [*Հայ գրական դեմքեր*]. էջ 36

116 Նկար: [*Ն. Պալյան, Բասմաջյան, Տյուսաբ, Ե. Լալայան, Ալյան, Հր. Աճառյան, Լ. Մանվելյան, Տ. Արփիար, Մ. Պեշիկթաշլյան, Թերեզյան, Բոլատ, Ս. Հեքիմյան*]. էջ 17

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Journal Asiatique. Recueil trimestril publié par la sociéte Asiatique. Paris, *1822—1838 232 էջ. (22×14 սմ.).*

Literatur Blatt fur Qrientalische Philologie. Leipzig Otto Jchulze, *1883—1886, 262 էջ. (22×13 սմ).*

Le Haiastan. Qrgane de l'association patriotique arménianne. Londres, *1888—1892 4 էջ (33×26սմ), Բաժանորդագինը 12 ֆր.*

— Հայաստան, Բերան հայկական հայրենասիրաց ընկերության (Կենտրոնական մասնախումբ 'ի Լոնտոն. Նախագահ՝ Կ. Հակոբյան)։

Քաղաքական տնօրեն՝ Հ. Պրուսալյան։

Խմբագրապետ՝ Մ. Սիվազլյան։

Այս թերթը լույս է տեսել 1888 թվի նոյեմբեր 1-ին և հրատարակվել է իբրև երկշաբաթաթերթ՝ 4 էջը ֆրանսերեն 4 էջն էլ հայերեն։

«Հայաստան»-ի 1888 թվի նոյեմբերի 1-ի № 1-ում հետևյալն է ասված. «Բազում ժամանակաց ի վեր, պետք կզգացվեր հայ ազգին համար, մի անկախ թերթ ունենալ, առ 'ի յազդու պաշտպանություն յուր դատին...։

...Մեր գլխավոր դերն պիտի լինի թարգման կանգնել ընդմեջ Հայաստանի և Եվրոպո, ընդմեջ դիվանագիտաց, հրապարակագրաց և Եվրոպական մամլույն, առ 'ի լուսաբանություն ժողովրդական կարծյաց 'ի վերա տանջանաց Հայոց թըշվառ ազգին...»։

L'Arménie. Jornal politique et littéraire. *Լոնդոն-Փարիզ, 1889—1905. 4 էջ, (43×34սմ.) Խմբագիր՝ Մինաս Չերազ։*

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ: *(1852—1929)։ Ծնվել է Խասգյուղ։ Սովորել 'է նույն գյուղի Ներսիսյան ու Նուպար-Շահնազարյան վարժարաններում։ Սկզբում Մ. Չերազն ուսուցչությամբ է պարապել։ Հետագայում տարել է մի շարք հասարակական-քաղաքական աշխատանքներ։ 1870-ական թվականների սկզբում. եղել է՝ Կ. Պոլսի հայկական ուսումնական խորհրդի անդամ, Ազգային ժողովի երեսփոխան, 1878 թվին եղել է Բեռլինի Վեհաժողովին ներկայացող հայ պատվիրակության անդամ։*

Բեռլինի վեհաժողովից հետո Մ. Չերազը գրել է՝ «Ի՞նչ շահեցանք Բերլինի Վեհաժողովեն» [1878] և «Հայաստան և Իտալիա» [1879] գրքերը, որոնց մեջ քննում է և ամփոփ տեղեկություններ է հաղորդում հայկական հարցի մասին։

Հետապնդվելով սուլթանական կառավարության կողմից 1889 թվին Մ. Չերազը փախչում է Կ. Պոլսից և Թյուրքահայաստանի մի շարք գավառներ շրջելուց հետո, մեկնում է Լոնդոն, ուր 1889 թվին հիմնում է «L'Arménie» քաղաքական թերթը, որ լույս էր տեսնում ֆրանսերեն և ուներ անգլերեն բաժին։ Այդ թերթի նպատակն էր Եվրոպային ծանոթացնել, պրոպագանդել հայկական հարցը։

1889 թվից «L'Arménie»-ն հրատարակվել է Փարիզում։

1908 թվին, Տաճկական սահմանադրության հռչակումից հետո, Մ. Չերազը ընտրվել է՝ նախագահ Ազգային ժողովի։ Երկու տարի հետո նա նորից մեկնում է արտասահման և աշխատում է հայկական հարցի ուղղությամբ։ Մեռել է 1929 թ. Մարսելում։ Մինաս Չերազը բացի «L'Arménie»- էն հայկական հարցի պրոպագանդա է մղել նաև՝ «Revue des Revues», «Revue d'Eurpe», «La France littéraire», L'Orient inédit», «Poétes arméniens» և «Nouvelles orintales» հրատարակություններում։

Մ. Չերազն ունի նաև մի շարք բրոշյուրներ, որոնք նվիրված են հայկական հարցին կամ մանկավարժական խնդիրների։ «Գրական փորձեր» (1874)։ Ազգային դաստիարակություն» (1876), «Նոր-ճառեր» (1881—1889), «Կրթական դասախոսություններ» (1882—1883), «Առաջին ուղևորություն Եվրոպայի մեջ» (1885—1887), «Հայկական խնդիրներն և Ազգային սահմանադրությունը Թյուրքիայում» [Թիֆլիս, 1912], «Գրիչ և սուր» [1881] և պարբերականներում ցրված այլ հոդվածներ։

Ազգայնական-լիբերալ գործիչ է եղել Մինաս Չերազը։

Osterreichische Monatsschrift für den Qriet, Wien, 1889—1913. 16 էջ (28×19 սմ).

Գերմաներեն այս պարբերականում նյութեր կան հայերի մասին։

Qrientalische Bibliocraphie Herausqeqeben von Dr. A. Müller. Berlin, 1894—1910. 303 էջ (20×12 սմ).

Բիբլիոգրաֆիաներ են Արևելյան երկների մասին։

Qeuvre des écoles D'Qrient. Paris 1896—1920, 32 էջ, (21×13 սմ).

Orientalistische Liteatuzeitnug. Monatsschrift für die Nissenschaft vom canzen Qrient und Jeinen bezihuncen zu gen ancrenzengen kulturkreisen. Leipzic, 1897—1941. 36 էջ (26×20 սմ).

The Friend of Armenia. Qrgan of the Societu of the «Friends of Armenia». Published quartezly. London, 1897—1917. 16 էջ (25×20 սմ).

Pro Armenia. Paris, 1900—1914. 16 էջ. (32×25սմ). գինը 10 ֆր.

— Խմբագիր՝ M. Varand։

— Դիրեկտոր՝ Վիկտոր Բերարդ.

Այս ֆրանսերեն թերթը հիմնվել է 1900 թվի դեկտեմբերի 12-ին և նպատակ է ունեցել ֆրանսիական հասարակական կարծիքը նպաստավոր տրամադրել դեպի հայկական հարցը ու արտագանել եվրոպական միջամտությունը հօգուտ հայկական դատի։

«Pro Armenia»-յին աշխատակցում էին այնպեսի անվանավոր դեմքեր, ինչպես՝ ժորժ Կլեմանսոն, ժան-ժորեսը, Անատոլ Ֆրանսը, Ֆրանսիս դը Պրեսանսին և թերթի խմբագիրն էր Պիեռ-Քիառը, որին օգնում էր բժիշկ Հովհաննես Լորիս-Մելիքյանը։ Սակայն եվրոպական հասարակական կարծիքը ոչնչով չխանգարեց Աբդուլ-Համիդին նորանոր ջարդեր, կոտորածներ ու հրդեհներ վառելու հայկական վիլայեթներում։ «Pro Armenia»-յի ցընցող հոդվածներն անզոր եղան պաշտպանելու հայերին, իսկ եվրոպական պետությունները համր մնացին։

1901

ԱԶԱՏ ԽՈՍՔ։ Azad khosk. [Ամսագիր]. Փարիզ—Ալեքսանդրիա, տպ. «Արաքս», 1901—1908, 16 էջ, (13×20 սմ). Բաժանորդագինը 5 ֆր.

— Խմբագիր՝ Երվանդ Օտյան

Азат хоск. Свободное слово. Журнал. Париж—Александрия. 1901—1908.

1901 № 1—4, էջ 1—64
1902 № 5—9, էջ 65—142
1903 № 10, էջ 143—162
1906 № 11—13, էջ 163—208
1906 հտ. Ա. տետր № 1—20, էջ 1—320
1906 հտ. Բ. տետր № 21—32, էջ 321—512
1907 հտ. Գ. № 33—39, էջ 513—616
1907 օգոստոս 17 էջ 1—16 առանց համարի։
1907 սեպտեմբեր 23 էջ 1—16 » »
1907 հոկտեմբեր 23 էջ 1—16 » »

1908 Զ. տարի № 1—3, էջ 1—48 » . »

«Նախաբանի տեղ եթե կուզեք» խմբագրականում (1901 թ. օգոստոս № 1) հետևյալն է ասված այս պարբերականի նպատակների մասին. «Ազատ խոսք... Մենք մենք չենք ծածկեր բնավ 'ազատ խոսքը ազատորեն բանալու դժվարությունները։ Բայց մեր անկախությանը հաճելի է այս գործին ձեռք զարնել, ու մեր ծիծաղը կամ զայրույթը լսելի ընել՝ վախկոտ իրավախոհություններու, գաճաճ վախերու, տխմար զգուշավորություններու, լիրբ լռություններու ու ընդոստացնող ապուշ հավակնություններու մեջտեղ։

Հավակնությունը չունինք անպատճառ բան մը շինելու. Փրկչի հովեր մի սպասեք մենե. այդ ապրանքին չունինք այստեղ. դրացիին նայեցեք։ Ճշմարտության ալ խանութ բացած չենք, ու բնավ օր մը մեր բերնին պիտի չսեք թե մենք զատ ուրիշի քով պիտի չգտնենք անիկա։

Բայց մենք մեր գոհացումը պիտի փնտռենք ծաղրելով կամ ձաղկելով, մեր օրվան տրամադրությանը համեմատ, կեղծ փրկիչները, Սուտին ճարտարապետները, գողցված համբավները, անշարժ պոռչտողները, հաշվող խանդավառները, անկեղծության աճապարարները, հայրենասիրության ձեռնածուները, ու կ'ավելցնենք, «այլովքն հանդերձ», որպեսզի մեկուն խայթը չմնա։

Ազնիվ երևույթ մը, բարի գործ մը, իրական արժանիք մը մեզի սակայն անտարբեր չեն թողուր։ Եթե առանց հանդիպելու մխիթարությունը ունենանք մեր ճամփուն վրա, սրտագին համակրանքի բարև մը պիտի տանք։

Բայց — ու ի՞նչ հաճույթյամբ ու առատաձեռնությամբ — ուրիշներուն կձգենք իրենց «փառքը», իրենց՝ «բարերարները», իրենց «համբավները», իրենց «արժանավորները»։ Իրենց մարսողությունը թող րոպե մը իսկ չխանգարի մրցակցության մը կարելիութենեն։ Մթռած խունկի հոտը անախորժ է մեզի։ Ձեռքներուն մեջ, տաժանագին քրտինքներն ժանգոտած իրենց բուրվառները գանելանք ազգեն մեզի։

Մեր գերազանցությանը համոզված ու անոր մեջ փաթթված մարդիկ չենք այստեղ։ Կընդունինք ամեն թելադրություն, կբավե որ համոզվինք անկեղծությանը։ Ամեն հայ կեդրոններն, ուր ազատ խոսքը ըլլալու դժվարության հանդիպողներ կան, կրնան համարձակ մեզի դիմել։ Ըսենք միայն որ ճառերը չենք սիրեր, շատախոսներեն հեռու կփախչենք ավելի քան թե ժանտախտեն, ու գայթակղությամբ ապրողները կատենք։

Այսչափը կօգնե, կարծենք»։

1906 թվի «Նոր շրջանը» խմբագրականում դրըված է հետևյալը. «...Այս թիվով «Ազատ խոսք»-ը կսկսի հրատարակվիլ կանոնավորապես ամեն շաբաթ օր։ Այն ընդունելությունը զոր ընթերցողներն ըրին անկանոն ու «Ազատ խոսք»-ին, վստահ ենք, որ այժմ ավելի պիտի շեշտվի. և որովհետև մեր դրած հաջողությունը մեր բռնած ուղղության արդյունքն է բնական է, որ պիտի հարատևենք այդ ուղղությանը մեջ։

«Ազատ խոսք»-ը հիմնվելով, առաջին օրեն, մեր նպատակը եղած է բացարձակապես անկախ թերթ մը ունենալ, ուր կարող ըլլանք իրերն ու մարդիկը անկաշկանդորեն դատել և եթե հարկ տեսնենք՝ դատափետել։ Այս տեսակը օրկանը չեղավ ու չպիտի ըլլա որևէ կուսակցության մը, որևէ խմբակի մը, որևէ անձի մը։

«Ազատ խոսք»-ը ո՛չ հին կամ նոր Հնչակյաններու օրկանն է ուրեմն, ո՛չ դաշնակցականներու, ո՛չ սահմանադրականներու, ո՛չ միութենականներու, և ոչ ալ ենամակալյաններու, «Ազատ խոսք»-ը և ո՛չ իսկ Տ. Հակոբ Ուղուրլյանի օրկանն է. բացարձակապես ինքզինքին կպատկանի»։

«Ազատ խոսք»-ը շարունակել է մնալ երգիծաբանական, հրատարակվել է իբրև շաբաթաթերթ։

ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ։ Երվանդ Օտյանը ծնվել է Ենիքեօ (Վոսփորի վրա) 1869 թվին։ Նա, մանկության տարիներին, իր հորեղբոր՝ Գրիգոր Օտյանի հետ ճամփորդել է՝ Ֆրանսիայում, Իտալիայում։

Ե. Օտյանը սիստեմատիկ կրթություն չի ստացել, կարճ ժամանակով, սովորել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում, ուր հրատարակել է ձեռագիր՝ «Վառարան» և «Անհաշտ» թերթերը։

Երկարամյա եռանդուն ինքնազարգացմամբ Ե. Օտյանը լրացրել է իր ուսման թերին։

Գրական ասպարեզ մտնելով Ե. Օտյանն աշխատակցել է «Մասիս», «Մանզումէ» շաբաթաթերթերին տպագրելով կենսագրական հոդվածներ՝ Գրիգոր Օտյանի, Ն. Ռուսինյանի և Սերենցի մասին։

Ե. Օտյանը հետագայում եղել է մի շարք պար-

բեռականների խմբագիր։ Աթենքում նա խմբագրել է՝ «Միություն» ամսագիրը, Եգիպտոսում՝ «Ազատ խոսք»-ը «Ազատ Բեմ»-ը, «Օրենք» շաբաթաթերթը (1905 թ.) «Թերթիկ» լրագիրը (1906 թ.), «Կրակ» շաբաթաթերթը (1906 թ.), «Արև» օրաթերթը (1907 թ.), 1912—1913 թվերին խմբագրել է՝ «Սև կատու» և «Մանանա» երգիծաբանական շաբաթաթերթերը, 1919—1920 թվերին՝ «Իգնա Աղա» երգիծաբանական շաբաթաթերթը, ապա «Ճավիղ» անկախ թերթը։ 1925—1926 թվերին Ե. Օտյանը եղել է Բեյրութում և խմբագրել է «Հայկական Սիննեմա» երգիծաբանական թերթը։

Ե. Օտյանը գրել է բազմաթիվ հայ թերթերում, ամսագրերում, իր տաղանդով շարժում, կենդանություն է մտցրել ամենուր։

Նրա կեղծանուններն են «Տրոտ», «Պարույր», «Վահրամ», «Վահրամ Վահրամյան», «Ս. Ժիրայր» և այլն։

Ե. Օտյանը միշտ եղել է շարժման, թափառումների մեջ։ Նա Փարիզում աշխատակցել է՝ «Նոր Դար» և «Անահիտ» պարբերականներին, Լոնդոնում գրել է Ա. Արփիարյանի «Նոր Կյանք»-ում, 1902 թվին մենք նրան հանդիպում ենք Ալեքսանդրիայում (Եգիպտոս) իբրև «Ազատ Բեմ»-ի խմբագիր, դրանից հետո, նա մեկնում է Հնդկաստան և այնպես հարավ։

Թյուրքական սահմանադրության հռչակումից հետո Ե. Օտյանը մեկնում է Կ. Պոլիս և աշխատակցում է՝ «Ժամանակ» և «Բյուզանդիոն» թերթերին։

Ե. Օտյանն իբրև հրապարակախոս և գեղարվեստական գրող շատ-շատ է գրել. Այդ գրվածքների մեծ մասը ցրված է թերթերում։ Ե. Օտյանի գրվածքները կարելի է բաժանել երկու կարգի՝ վիպակներ և երգիծաբանական գործեր։

Նրա վիպակները, նորավեպերը հետևյալներն են՝

— Վաշխառուն։ («Հայրենիք» 1893, № 412—414).

— Զուկին փոխարենը։ («Մասիս» 1893, № 3996).

— Իֆոպրա։ («Մասիս» 1893, № 4001).

— Քարիտեզճին։ («Մասիս» 1893 № 3976).

— Գինովին վարձքը։ («Մասիս» 1893 № 3989).

— Կաղանդի վիպակ։ («Հայրենիք» 1895 № 1041).

— Աղոթքը։ («Նոր Կյանք» 1899 № 24).

— Այրին։ («Նոր Կյանք» 1900 № 6).

— Լեոնի բանտը։ («Նոր Կյանք» 1899 № 23).

— Ոսկեմոլը։ («Շիրակ» 1905 № 10, 11).

— Վրեժը։ («Նոր Կյանք» 1900 № 2, 3, 4, 5,).

— Մարտիկ աղա։ («Նոր Կյանք» 1898 № 19—24 1899 № 3, 5, 6).

— Ազգային բարեր։ («Շիրակ» 1905 № 1—4).

— Մատնիչը։ («Շիրակ» 1909).

— Ընտանիք, պատիվ, բարոյական։ («Արևելք»).

— Թաղականի կնիկը։ («Ժամանակ»).

— Միջնորդ Տեր-Պապան։ [Գինեա].

— Միքելի սիրականը։ [«Մանանա» 1914].

— Անառակ որդին։ [«Ճավիղ—Իգնատ» 1920—21].

— Հայ կուսակցականները։ («Ճավիղ—Իգնատ», 1921, № 81 և հաջորդները).

— Մարգարիտե մանյակը։ («Ճավիղ—Իգնատ» 1922, № 130 և հաջորդ.).

Մի շարք ուրիշ պատմվածքներ, վիպակներ էլ ունի Ե. Օտյանը, որ անհրաժեշտ ենք համարում թվարկել.

— Ապտուլ Համիտ և Շերլոք Հոլմս։

— Սալիհա հանըմ կամ բանակը բռնավորին դեմ։ (1921)

— Ջաքըր Ավրամ։ (1920)։— Դատաստանական խորհրդին առջև (1921)։— Ես դրանցի չեմ առներ։ («Ժամանակ»)։— Կանաչ հովանոցով կինը։ («Ժամանակ»)։— Կայլե հերոսներ։ («Ժամանակ»)։ — Տաքեթա։ («Ժամանակ»)— Վարպետ Պողիկարպոս։ («Ժամանակ»)։— Հայ Տիտարոպան։ («Արև»)։ — Մօսա Քլեսիմ։ («Անահիտ» 1898, 1899)։— Մուլետ։ («Անահիտ» 1899)։— Բարի դահիճը։ («Անահիտ» 1899)։— Գործի մարդիկ։ «(Անահիտ» 1900, 1901)։— Բրոքականտիստը։ («Նոր Կյանք»)։— Փառքի ետևե։ («Իգնատ աղա», 1919 № 2 և հաջորդ)։

Ե. Օտյանի հանճարն իր ամբողջ վեհությամբ փայլել է երգիծաբանական գրվածքների մեջ։

Հիշատակենք մանրամասը.

— Հեղափոխության մակաբույծները։ («Նոր Կյանք» 1899 № 1, 2, 22—24. 1900 № 6).

— Համբարձում Աղա։ («Բամբեր գրակ. և արվեստի» Բ. Գիրք, 1904 էջ 91—106).

— Պատերազմ և խաղաղություն կամ ընտանեկան նամականի։ («Ճանթ» 1911. № 1—8, 11).

— Վաճառականի մը նամակները կամ կատարյալ մարդ ըլլալու արվեստը. («Մանանա» 1913—1914).

— Առաքելություն մը ի Տապլվար և ընկեր Փանջունին Վասպուրականի մեջ, որ նախ տպվել է «Բյուզանդիոն»-ում, ապա ունեցել է մի շարք հրատարակություններ (1911, 1914)

— Ընկեր Փանջունին տարեգրության մեջ. (1914 թ).

— Ութ գավաթ ջուր. («Հայրենիք» 1892 № 337).

— Գործ եփող մը. («Հայրենիք» 1895 № 1186, 1200, 1214, 1221. 1228, 1235, 1242, 1249, 1256).

— Ազնվաշուքներու շուրջը։ («Հայրենիք» 1895 № 1277).

— Ժամանց։ (Այս վերնագրի տակ մի շարք ծաղրական հոդվածներ են լույս տեսել «Նոր Կյանք»-ում (1898 № 17, 1900 № 3, 1898 № 15 և այլն)։

— Հայ Ճերլոք Հոլմսի մը իրարանցումը։ («Մանանա» 1914)։

— Ճեպընթաց Նորածինը։

— Ազգային երեսփոխան. («Մանանա» 1913—1914).

— Ոմանց տարեցույց։ (Ալեքսանդրիա, 1909).

— Ապուշներու տարեցույցը. (Կ. Պոլիս, 1912).

— Երգիծական տարեցույց. (Կ. Պոլիս- 1921—1922).

Ե. Օտյանն ունի նաև մի շարք կատակերգություններ՝

— Չարշըլը Արթին Աղա կամ ֆրանքո-թրքական պատերազմ. (1909).

— Ջավալլըն. (1909).

— Հերոսախաղ. (1928).

— Վարդան Մամիկոնյան։— Սահմանադրության 69-րդ հոդվածը և այլն։

— Արագ դարմանում մը (Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1923, էջ 161).

— Իգնատ աղայի խորհրդածությունները։ («Ճավիղ Իգնատ» թերթում)։

Ե. Օտյանը կատարել է նաև արժեքավոր թարգմանություններ և իր գրական կյանքի սկզբնական շրջանում «Հայրենիք»-ում գրել է նաև խրոնիկաներ։ Նրա կատարած թարգմանություններից են՝

— Լ. Ն. Տոլստոյ— Հարություն։— Աննա Քարենինա։

— Էմ. Զոլա— Արգասավորություն։

— Դոստոևսկի— Մեռյալներու տունը։ («Հայրենիք»)։

— Ա. Դյումա։ Անժ Փիթու։ («Հայրենիք»)։

— Պուրժե, Պոլ։ Տավիտ։ (Արևելք»)։

— Շլումպերժե, Կ. Հովհաննես Զմշկիկ և այլն։

Օտյանի քրիկոնները տպվել են «Հայրենիք»-ի 1893, 1894 և 1895 թվերի համարներում։

Ե. Օտյանը հետևողական պայքար է մղել հայ բուրժուական-ազգայնական պարտիաների դեմ։ Նա քաղաքական սուր ծաղրանքի է ենթարկել՝ դաշնակցականներին։

«Հեղափոխության մակարույծներ»-ում, «Պրոպագանդիստները» և ուրիշ գրվածքներում Ե. Օտյանը մերկացրել է բուրժուական-ազգայնական պարտիաներին և նրանց պորտաբույծ գործիչներին։ «.. Ոճրագործներ, գողեր, խաբեբաներ, դրամաշորթներ, հաջողած են այս կամ այն կուսակցության մեջ սպրդնել — գրել է Ե. Օտյանը ազգայնական պարտիաների մասին,— և հանուն հեղափոխության առաջ տանել իրենց շահատակությունները»։ Ե. Օտյանի նկարագրած մի շարք տիպերը՝ Զաքեոսը, Դաշույն Արտունին, Վարդհոդյանը, Կակայանցը, դրանք դաշնակցական գործիչների ծաղրանկարներ են, նրանց «հերոսները»՝ ղեկավարներն են։

Հակոբ Պարոնյանից հետո, Երվանդ Օտյանը հայ քաղաքական սատիրայի մեծ վարպետն է, պրոգրեսիվ հրապարակախոս, ռեալիստ վիպասան և գրական քննադատ։

Ազգայնական-բուրժուական պարտիաները հալածանքներով ու տեռորով են պատասխանել Ե. Օտյանի մերկացումներին։

1898 թվին դաշնակցական Հ. Ճանդուլյանը մահափորձ է կատարում Ե. Օտյանի վրա, որն անհաջող է անցնում, 1905 թվի մարտի 9-ին Եգիպտոսում հարձակում է կազմակերպվում այն տպարանի վրա, որտեղ տպագրվում էր «Ազատ բեմ»-ը, ջարդվում են մեքենաները, տառերը ցրիվ են տրվում, երկու օր հետո, 1905 թ. մարտի 11-ին նորից տեռորի փորձ է կատարվում Ե. Օտյանի

վրա, մի քանի օր հետո երկրորդ անգամ դավադիրները հարձակվում են «Ազատ խոսք»-ի տպարանի վրա և այսպես հաճախակի, բուրժուական-ազգայնական տարրերը հալածանքի են ենթարկում առաջավոր հրապարակախոս Ե. Օտյանին։

Ե. Օտյանը ռուս մեծ ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի հետ էր կապում հայ ժողովրդի ազատության գործը. «Այն օրը, որ ռուս ժողովուրդը խորտակե իր շղթաները, հայությունն ալ նոր վերածնությամբ մը պիտի ողջունի...»։ Ե. Օտյանը հասկանում էր նաև ռուսական ռևոլյուցիայի միջազգային նշանակությունը. Նա գրել է. «Բացի հայկական տեսակետին, եթե Ռուսիո պարտությունը (1905 թվին) ընդհանուր կերպով նկատենք, կրնանք ըսել, որ իր հետևանքը անհուն պիտի ըլլա և անկարելի է այժմեն գուշակել զայն, այսուհանդերձ կրնանք ապահովաբար ըսել, որ միշտ լավ է այդ հետևանքը»։

1901 ՕԳՈՍՏՈՍ, № 1, ԷՋ 1—16

117 Նախարանի *տեղ եթե կուզեք*։ [*Ամսագրի նպատակների մասին*]. *էջ 1—2*

118 Բաց նամակ *պ. Մանթաշյանին*։ [*Ծաղրում է նրա բարեգործությունը*]. *էջ 2—3*

119 Մեկ *հորի ջուր*։ [*Երգիծանք Փարիզում կայացած «Պատվո ատյանի» մասին*]. *էջ 4—5*

120 Պատվո *ատյանը*։ [*Փարիզի «Հայկական Միության» անդամներ՝ Գ. Խաքենտերի, Ա. Չոպանյանի ու նրանց հատակորդ՝ Մ. Գալփակչյանի և Հ. Գայայանի մասին*]. *էջ 5—6*

121 Դաշնակցական *ժողովը*։ [*Փարիզում հուլիսի 31-ին կայացած հայ-դաշնակցականների ժողովի մասին*]. *էջ 6—8*

122 Հոգի *և մարմին*։ [*Մանթաշյանի և հայ մեծապատիվ մուրացկանների մասին*]. *էջ 8—9*

123 Ավաղանք *և խիղճ*։ [*Եգիպտոսի «Փարոս» պարբերականի և Ա. Հանըմյանի մասին*]. *էջ 9—10*

124 Դռանը *պատճառը*։ [*Երգիծանք Փարիզում հուլիսի 31-ին կայացած ժողովի մասին*]. *էջ 10—11*

125 Աղվոր *Երրորդություն մը*։ [*Երգիծանք՝ Մ. Ջերազի, Ա. Չոպանյանի և Ս. Հախումյանի ու հայ մուրացկանության մասին*]. *էջ 11—13*

* *Բոլոր հոդվածները անստորագիր են։*

126 Զուգակշիռ... *ու Պլուտարքոսի*։ [*Ա. Չոպանյանի ու «Անահիտ»-ի մասին. Երգիծանք*]. *էջ 13*

127 [Մատ *երգիծանք*]։ *Լրագրական պարկեշտություն*։ [*Ս. Հախումյանի մասին*]։—*«Նոր կյանք» պարբերականի մասին. էջ 14*

128 Վսեմ *անձնավորություն մը*։ [*Հայտնում է, որ «Ազատ խոսք»-ի խմբագիրն է Երվանդ Օտյանը*]. *էջ 15—16*

1908 ԱՊՐԻԼ 18, ԷՋ 1—16*

129 Կյուրճյան, Մ. Ս. *Կցկտուր խոսքեր...* [*Ա. Արփիարյանի սպանության առթիվ*]. *էջ 1—6*

130 Վ. Թ. *Թաղումին գիշերը*։ [*Ա. Արփիարյան*]. *էջ 7—9*

131 Մկրտչյան, Լ. *Արփիարը մատնիչ. էջ 9—13*

132 Օտյան, Ե. *Դավաճանին մահը. էջ 14—16*

ԳԵՂՈՒՆԻ: *Պատկերազարդ հայաթերթ։ Լույս կտեսնի երկու ամիսը մեկ համար։ Վենետիկ, տպ. Մխիթարյան, 1901—1906, 1909, 1927. 8 էջ 24, 84 էջ (40×29 սմ)։ Բաժնեգինը 3 ֆր. [Տիրաժ 3000 օր.]։*

— *1907—1908 թվերին լույս չի տեսել։*

— *Խմբագիր՝ Հ. Ս. Երեմյան, Հ. Մ. Պոտուրյան։*

Гехуни. Прекрасное. Худож. иллюстр. журнал. Венеция, 1901—1906, 1909, 1927.

1901 Ա. տարի դեկտ. № 1, էջ 1—8
1902 Ա. տարի փետրվ. № 2, էջ 9—16
1902 Ա. տարի ապրիլ № 3, էջ 10—24
1902 Ա. տարի հունիս № 4—5—6, էջ 25—50
1903 Բ. տարի № 1—10, էջ 1—80
1904 Գ. տարի № 1—10, էջ 1—80
1905 Դ. տարի № 1—10, էջ 1—80
1906 Ե. տարի № 1—10, էջ 1—80
1909 Զ. տարի № 1—10, էջ 1—84
1927 № 1, էջ 1—72

«Գեղունի»-ն Վենետիկի Մխիթարյանների պատկերազարդ ժուռնալն է։ Ինչպես երևում է նրա ստորև զետեղված բիբլիոգրաֆիայից «Գեղունի»-ին տպագրել է՝ գրական-գեղարվեստական, պատմական, բանասիրական և թարգմանական նյութեր։ «Գեղունի»-ն հիմնականում նվիրված է եղել հայ որբերի օգնության գործին։

* *Այս համարն ամբողջովին նվիրված է անվանի հրապարակախոս Ա. Արփիարյանի հիշատակին։*

«Գեղունիս»-ում պատմական-բանասիրական և գրական-գեղարվեստական նյութերը դրվել են՝ կրոնական-պահպանողական ուղղությամբ։

1901 ԴԵԿՏԵՄԲԵՐ, № 1, ԷՋ 1—8

133 Նկար. [Իտալացի երաժիշտներ]. էջ 1

134 Երեմ, Հ. Ս. Օգնենք ու գործենք։ [Որբերի մասին]. էջ 1

135 Վերդի: Այտա։ [Թարգմ. Ա. Ղազիկյան]. էջ 2—4, № 3, էջ 21—23

136 Նկար: [Ապաստան մեղավորաց—Նկար Ճիճի Նոնոյի—Դարձ ձկնորսութենե—Նկար Անջեր Միքայելի]. էջ 3

137 Երեմ, Հ. Ս. Գեղունիս։ [Հոդված]. էջ 5—6

138 Էփրիկյան, Հ. Ս. Թրքահայ դեմքեր։ [Պողոս Օտյան Սրբուհի Գալֆայան, Տիգրան Փեշտիմալճյան]. էջ 6—7

139 Էփրիկյան, Ս. Դավրեժ կամ Թավթիզ։ [Տեղագրութ.]. էջ 7—8

1902 ՓԵՏՐՎԱՐ, № 2, ԷՋ 9—16

140 Մատյանք հոր Ալիշանի. [Երկերի ցանկը]. էջ 9

141 Բալաս, Գ. Թափառական որբի արցունքը։ [Բանաստեղծութ.]. էջ 9

142 Նկար: Հ. Ղ. [Ալիշան]. էջ 10

143 Երեմ. Հ. Ս. Համերաշխություն. էջ 10

144 Թոռոսյան, Հ. Հ. Ղևոնդ Ալիշան։ [Կենսագրական]. էջ 10—16

1902 ԱՊՐԻԼ, № 3, ԷՋ 16—24

145 Օրմանյան, Մ. Շրջաբերական։ [Գավառական ազգային արհեստանոցներ կազմակերպելու մասին]. էջ 17

146 Նկար: [Հ. Այվազովսկու—Հաղթական գնացք Պղուտոնի։— Երասխ]. էջ 17

147 Երեմ. Հ. Ս. Մեր թշվառներուն—Ջատիկը. էջ 18

148 Թոսյուն: Բժիշկ Սերվիչեն։— Անդրեաս Փափովիչ։ [Կենսագրականներ]. էջ 19

149 Բալասանյան, Գր. Ռուսահայոց նորագույն բանաստեղծական դեմքեր։ [Ալ. Ծատուրյան]. էջ 19—21

150 Էփիկ, Հ. Ս. Աղեքսանդրիա և հայք. էջ 23—24

1902 ՀՈՒՆԻՍ, № 4—5—6, ԷՋ 25—50

151 Մարդկության ամենամեծ թշնամին։ [Ալկոհոլիզմ]. էջ շպկ.

152 Ողբացյալ Ջանշևի հիշատակին։ [Անստորագիր. բանաստեղծութ.]. էջ 25—26

153 Հրպետ: Րաֆֆիի հեռապատկերը. էջ 25

154 Նկար: Րաֆֆիի տունը...]. էջ 26

155 Նկար: [Թևարեկ հրեշտակ]. էջ 27

156 Րաֆֆիի բնակարանը ի Թիֆլիս. էջ 28

157 Առրպետ: Կարս-Մուրզա։ [Հիշողություն]. էջ 28—29

158 Հ. Ալիշանի մահվան առթիվ։ [Ճառեր, բանաստեղծութ.]. էջ 30—33

159 Թոխանյան, Ս. Սարըյանի վերջին տարիները. էջ 33—34

160 Սֆարսելլի, Ա. Մախոխյանի ցուցահանդեսը։ [Գայիրեյում]. էջ 35

161 Բուբու:— Երգ թաղավորաց։ [Մշեցոց ժողովրդ. երգեր]. էջ 35—36

162 Հրպետ: Հայոց արդի գրականությունը. էջ 37—48

163 Նկար: [Հայ գրողների խմբանկար]. էջ 45

1903 Բ. ՏԱՐԻ, № 1—10, ԷՋ 1—80

164 Երեմյան, Հ. Ս. «Գեղունիս» և հայ գեղարվեստը. էջ 1—5

165 Փափազյան, Վ. Հաշիվ։ [Պատմվածք]. էջ 6—8

166 Սեյրի: Գնում ենք վաթան։ [Բանաստեղծութ.]. էջ 8

167 Առրպետ: Կալվածատիրությունը և կալվածական հարկերը Ատրպատականում. էջ 9—16

168 Անդրիկյան, Հ. Ն. Գրական դեմքեր. էջ 17—37

169 Ղազիկյան, Ա. Պատկեր Վենետիկյան Մխիթարյան հայկաբանության. էջ 37—45

170 Նշանավոր ազգայինք: [Նկար]. էջ 44

171 Լեո: Ռուսահայոց գրականությունը. էջ 45

172 Արտասահմանյան թերթեր։ [Բազմավեպ։— L. Armenie։— Հանդես Ամսօրյա։— Արմենիա։— Ռուսահայ թերթեր։— Թրքահայ թերթեր]. էջ 76—80

1904 Դ. ՏԱՐԻ, № 1—10, ԷՋ 1—80

173 Երեմ. Հ. Ս. *Կաաաննւ* [*Խմբագրական*]. էջ 1—2

173 Լեռ: *Ա. Աճառյան*. էջ 2—8

· 174 Ցլորյան: [*Հատվածներ առակներից*]. էջ 9—16

175 Առաքելյան, Հ. *Ակնարկ Պարսկաստանի հայերի անցյալի*. էջ 16—23

176 Զառաֆյան, Մ. *Թեհրանի ազգային վարժարանները*. էջ 23—24

177 Նահապետ Սիմոն: *Լուսանկարչության դյուրին կերպ*. էջ 24—31

178 Բանդալամիստա, Ճ. *Անտոն Ռոզզա. ժամանակակից պատկերահան*. էջ 31—40

179 Երեմ. Հ. Ս. *Սաթենիկ. Ողբերգ*. էջ 41—68

180 Նատիկար, Փ. Հ. *Սինանյան երաժիշտ և յուր խումբը*. էջ 72—75

181 Աղանուր, Վիկտորիա: *«Լեճեննտաս»* [*Թարգմ. Ա. Ղազիկյան*]. էջ 76—80

1905 Դ. ՏԱՐԻ, № 1—10, ԷՋ 1—80

182 Երեմ. Հ. Ս. *Գեղունի* [*Խմբագրական*]. էջ 1—2

183 Սեյլան: *Հովհան Վարագացի կամ Թաղմաղ—շահի արշավանքը Վասպուրական*. *Ներածություն*. էջ 2—6

184 Հովնան Վարագացի. [*Ողերերգ*]. էջ 6—9

185 Սահակյան, Հ. Կ. Տ. *Հայ կայսերաց դրամները*. էջ 9—16

186 Սահակյան, Հ. Կ. Տ. *Հայ կայսրուհիներ*. էջ 17—34

187 *** *Հովհաննես Մյուհենախյան*. [*Կենսագրական*]. էջ 36—42

188 Մաfu, Լի: *Վտակի հոսանքը*. [*Թարգմ. Ա. Ղազիկյան*]. էջ 42

189 Վարուժան, Դ. *Սարսուռներ*. [*Մուսային— Հայր օրհնե— Ջյունե դագաղը— Դաստիարակ— Տղաք ներեցե՛ք— Մոխիրներուն առջև— Վշտին— Վիժածը— Մուրացիկը— Մեռածին համբույր մը— Հիվանդ է— Ավազանին ձուկերուն— Արյունոտ ճյուղը— Չորս տարեկանի մը նամակը*]. էջ 42—52

190 Գրական *հուշեր*. էջ 53—58

191 Էփրիկյան, Հ. Ս. *Բնաշխարհի նշմարներ*, էջ 59—72

192 Ատրուշան: *Խոովք* (*Անրջական*). էջ 73—74

193 Երեմ. Հ. Ս. *Պատկերներու լեզուն*. [*«Գեղունու»*]. էջ 74—80

1906 Ե. ՏԱՐԻ, № 1—10, ԷՋ 1—80

194 Երեմ. Հ. Ս. *Ռուսահայք* (*Պատմական*). էջ 1—18

195 Պայրոն, *լորդ*. *Մանֆրեդ*. *Բանաստեղծական վիպագրություն երեք արարվածով*. էջ 18—62

196 Բեկ Հովսեփյան, Ա. *Մակար եպիսկոպոս Բարխուդարյան*. էջ 63—65

197 Ավօ: *Դերասանուհի տիկին Սիրանույշ*. *Իր հասարակական գործունեության 30-ամյակի առթիվ*. էջ 65—73

198 Սերյան, Հ. *Վոլոսեն Նեղոս*. էջ 73—77

1909 Զ. ՏԱՐԻ, № 6, ԷՋ 1—84*

199 Պոտուրյան, Հ. Մ. *Կիլիկիո աղետին դիմաց*, էջ 1—2

200 Զոպանյան, Ա. *Որբերը*. [*Հոդված*]. էջ 13

201 Վարուժան, Դ. *Դիակի սայլը*.]*Բանաստեղծութ*.[. էջ 14

202 Տոrկուատո Տասսո: *«Գիշեր էր, չէին դեռ քաղցրաքուն հանգստյան...»*. [*Իտալական գրողի գործի թարգմ.*]. էջ 17—22

203 Թեոդիկ, Արշակունի: *Կեավուր Քէօյի մանկիկը*. էջ 29—30

204 Թոռոմանյան, Թ. *Կաթիլ մը հայ գեղարվեստի ծովեն*. [*Հայ ճարտարապետության մասին*]. էջ 32—39

205 Վիրգիլ: *Լայոկոն*. [*Ենէականի բ. գրքից*. *Թարգմ. Ա. Ղազիկյան*]. էջ 41

206 Կարտուչչի: *Սիկիլիա և հեղափոխությունը*. [*Թարգմ. Ա. Տիրոյան*]. էջ 42

207 Կարտուչչի: *Թուրքին հունձը*. [*Բանաստեղծութ.*. *Թարգմ. Ա. Տիրոյան*]. էջ 43

208 Ֆլամարիոն, Ք. *Աղբիայի հիշատակները*. էջ 50—51

209 Կոմիտաս: *Ախ մարալ ջան...* [*Ձայնագրված*]. էջ 56

210 Հյուգո, Վ. *Տեսիլ Տանդեի*. [*Թարգմ. Բյուզանդացի*]. էջ 57

---

* *Համարի նաև խալերեն հոդվածներ են*.

211 Եսայան, Թ. *Գանգատ զքաղաքակրթությունէ.* էջ 60

212 Կյուրտիկյան, Ս. Հ. *Ակնարկ մը օսմանյան գրականության պատմության վրա,* էջ 62—63

213 Ժյուլ Ռոմա: *Աստվածային արյունը։* [*Բանաստեղծութ.։ Թարգմ. Ա. Ղազիկյան*]. էջ 69

214 Սեյրի: *Երջանկություն.* էջ 70—71

215 Աղանոր, Վիկտորիա: *Սաֆոյի վերջին երգը։— Հեռավոր եղբայրներուս։* [*Բանաստեղծութ.։ Թարգմ. Ա. Ղազիկյան*]. էջ 72

216 Շիրվանզադե: *Լուսո ծարավը։* [*Արվեստի մասին*]. էջ 74—75

217 Անդրիկյան, Հ. Ն. *Լևոն Տոլստոյ.* էջ 76—78

218 Տայան, Հ. Ղ. *Հառաչ որբուկին վերջալույսին դիմաց։* [*Բանաստեղծութ.*]. էջ 78

219 Թորգոմյան, Վ. *Հայ բժշկական պատմության համար.* էջ 79

220 Սևակ, Ռ. *Այս դանակը։* [*Բանաստեղծութ.*]. էջ 80

221 Մինասյան, Ի. *Արշալույսի պայծառություն.* [*Պատմվածք*]. էջ 81—84

1927 № 1, էջ 1—72

222 Խանճյան, Ա. *«Արարատի ծեր գմբեթից...»։* [*Բանաստեղծութ.*]. էջ 1

223 Քիպարյան, Հ. Կ. *Գաղափարը՝ միակ ճշմարտությունը։* [*Խմբագրական*]. էջ 2

224 Մարկըրի, Հ. *Սրբազան պարեր հին Հայաստանի մեջ.* էջ 3—8

225 Ջերազ, Մ. *Պարոնուհին և Ալիշան.* էջ 9

226 Էոկար *Շահին։* [*Նկարիչ*]. էջ 10

226ա Խանճյան, Ա. *Երանելին Աբբա Մարկոս։* [*Պատմվածք*]. էջ 9—14

227 Հյուգո, Վ. *Զորություն հավասար բարության։* [*Բանաստեղծութ. Թարգմ. Ե. Դուրյան*]. էջ 15

228 Ատրպետ: *Հայաստանի էլեկտրականացումը և Երևանի ջրէլեկտրական կայանը.* էջ 16—19

229 Երեմյան, Ա. *Երևանի Պետական թատրոնը. (1921—1926).* էջ 20—24

230 Միրաքյան, Վ. *Աշխատանքի երգերից։— «Արևը գնաց մարում է հեռվում...»։—Հնձվոր գեղջուկները։— Հավաքող գեղջկուհիները։— Նոր հոտաղները։— Պապը։— Բոլոր ջահելները.* էջ 23

231 Ահարոն: *Կեռասենին։* [*Բանաստեղծութ.*]. էջ 23

232 Փրաշը, Ի. Կ. *Ադամյան։* [*Նկարիչ*]. էջ 24

233 Մ. Պ. *Ակնարկներ հայ ճարտարապետության վրա.* էջ 25—28

234 Ահարոնյան, Ա. *Արարատյան դաշտ։* [*Բանաստեղծութ.*]. էջ 29—30

234ա Հովհաննիսյան, Վ. *Փշրված զենքեր.* էջ 31—41

235 Ռոժե-Միլե, Լ. *Արսեն Շապանյան։* [*Նկարիչ*]. էջ 42

236 Ռիշար-Գամել, Զ. *Ցայգախոհք։* [*Թարգմ.*]. էջ 43

237 Փեշիկյան, Հ. Ե. *Ազգային գրականության պատկերը ներկա մամուլին մեջ.* էջ 44—51

238 Տանդե: *Ուկոլին կոմսը։* [*Թարգմ. Գասգանտիշյան, Հ. Ա.*]. էջ 52

239 «Անի» *հայ արվեստագետներու խմբակցությունը.* էջ 53—55

240 Աղանոր, Հ. *Կանթեղ մը։— Հատորին մը հեղինակին անծանոթ գտնված հին գրատան մը մեջ։— Մաղձոտություն։— Վեննետիկ։— Միայն։— Որթին արցունքը։— Ի մահ Երմինիա Ֆուզինադոյի։— Ի չորրորդ դարադարձ Բարլետայի ձայնատու հրավերին։* [*Թարգմ. Հ. Ա. Ղազիկյան*]. էջ 55—57

241 Տայան, Հ. Ղ. *Հայ արդի ձայնագրությունը և հայր Մինաս Բժշկյան.* էջ 58—63

242 Ահարոն: *Վերջին դատաստանը։* [*Բանաստեղծութ.*]. էջ 64—65

243 Արսլան, Վ. *Մարտիրոս Սարյան։ Արդի նկարիչ.* էջ 66

244 Նահապետյան, Գ. *Թռուցիկ ակնարկ մը գմբեթավոր հայ տաճարին. Հոգեբանական հայեցակետով.* էջ 67—71

245 Ստելլա, Մ. *Ցած խոսքեր։* [*Թարգմ. Ա. Ղազիկյան*]. էջ 72

ԳՈՒԹԱՆ: *Հանդես ամսյա. հողագործական, գիտական և արվեստական։ Պատկերներով։ Հովանավորությամբ Պ. Է. Տյուքլոյի տնօրեն Էնստիտյուտի Պաստորի և անդամ Էնստիտյուտի տը Ֆրանսի։ Փարիզ, 1901—1905. 16 էջ, (25×16 սմ) բաժանորդագինը 12 ֆր.*

— *Տնօրեն՝ Գարեգին Գ. Մեծատուրյան։*

Гутан. Плуг. Журнал сельского хозяйства, науки и искусства. Париж, 1901—1905.

Այս հանդեսի նպատակների մասին 1901 թ. № 1-ի «Գութան»-ը խմբագրականում հետևյալն է

տավան. «Գութանն»-ը չի պիտի զբաղի քաղաքական հարցերով, կրոնական խնդիրներով և անհատական կամ կուսակցական վեճերով։ «Գութանն»-ի նպատակն է արթնացնել և տարածել մեր ժողովրդի մեջ՝ հողագործության և արվեստներու ճաշակը, ըլլալ գործնականի ժողովրդական դպրոց մը, մասնանիշ ընել մշակությանց լավագույն եղանակը, գիտական նորությունները և արվեստներու հսկա հառաջադիմությունը։

«Գութանն»-ը պիտի աշխատի համախմբել իր շուրջը ցրված մասնագիտական ուժերը, մշակելու և զարգացնելու համար, իր ուժերում ներածին չափով, մեր հողագործական ու արվեստական գրականությունը։ «Գութանն»-ը անարգված գյուղացիին ու արհամարված արհեստավորին (էսնաֆ) արժանիքը երևան պիտի հանե, ընկերության մեջ իրենց արժանի տեղը պիտի տա, ցույց տալով այս ժրաջան ու աշխատավոր դասակարգի հոգին, արհեստներու ու իրենց նմաններում մատուցած ծառայությունը և մեր ժողովրդի անվան բերած պատիվը։ ...Վստահ ենք, որ «Գութանն»-ը ընդունելություն և համակրություն կգտնե մեր ժողովրդի բոլոր խավերին, քանի որ անոր սիրած հողովը, փայփայած եզովը, օգտակար արհեստներովը, կյանքով և ամեն օրվա հացի խնդրով պիտի զբաղվի»։

1901 ՀՈՒՆՎԱՐ, № 1, ԷՋ 1—16 *

246 Խմբագրություն: «Գութանն»-ը։ [Հանդեսի նպատակների մասին]. էջ 1—2

247 Նամակ Տյուզլոփ։ [Ֆրանսերեն և հայերեն՝ հանդեսի մասին]. էջ 3—4

248 Մեծատունյան, Գ. Գ. Հողը. էջ 5—6

249 Բապսդ, Ք. Հողագործական արձագանք։ (Զրույց). էջ 6—8

250 Հալաճյան, Հ. Արորը. էջ 9—12

251 Դաճսին, Ա. Կնոջ և կովու կաթը. էջ 12—13

252 Ռուսօ, Է. Գին խստակող նյութեր. էջ 13—15

253 Երկրագործին ամսացույցը։ (Հունվար-փետրվար). էջ 16

* Մյուս համարներից գրվում են միայն գիտական արժեք ներկայացնող նյութերը։

1901

254 Մեծատունյան, Գ. Ոիզլեր, Է. [Կենսագրական]. էջ 18—21

255 Մեծատունյան, Գ. Հողագործությունը ժԹ դարու վերջը. էջ 23—25

256 Մեծատունյան, Գ. Հերերը. էջ 26—28

257 Հալաճյան, Հ. Ցանքը. էջ 32—36

258 Գրյուճն, Է. Շերամարույծներու խրատ. էջ 36—37

259 Մեծատունյան, Գ. Պէտք է։ [Դպրոցներում գյուղատնտեսական գիտելիքներ ավանդելու մասին]. էջ 42—44

260 Մեծատունյան, Գ. Գյուղական դասատուներու հողագործության դաս. էջ 81—82

261 Մեծատունյան, Գ. Հողագործություն. էջ 115—117

262 Մեծատունյան, Գ. Արվեստագիտական կրթություն։ 1902, էջ 148—150

1904

263 Մեծատունյան, Գ. Անհուն փոքրիկները։ [Միկրոբներ]. էջ 1—4

264 Մեծատունյան, Գ. Գյուղական կյանքը։— Տնտեսություն և իրականություն. էջ 5—6

265 Նարանյան, Մ. Բույսերի կազմական և անօրգական տարրեր. էջ 7—8, էջ 24—25

1905

266 Մեծատունյան, Գ. Գյուղերու զատարկվելը և երկրագործության ուսումնքը. էջ 32—38

267 Մեծատունյան, Գ. Բուրոս [Կուկու]. էջ 69—71

268 Նարանյան, Մ. Ջերմության և լույսի ազդեցությունը բույսերի վրա. էջ 72—75

ԺԱՄԱՆԱԿ: Հանդես գրական, գիտական, գեղարվեստական և քաղաքական։ Փարիզ, տպ. Փ. Միսաք, 1901, 88 էջ, (33×24սմ).

— Խմբագիր — հրատարակիչ՝ Ս. Գ. Հախումյան.

Жаманак. Время. Литературно-научно-художеств. и политич. журнал. Париж, 1901.

«Նոր հանդեսի գոյության իրավունքը» խմբագրականում հետևյալն է ասված. «...«Ժամանակ»-ը

գալիս է օգնելու և գործակցելու հայի միայն մի ընդհանուր իղձալին, այն է, որ հայ ազգը իրապես, գիտակցաբեն մասնակից լինի եվրոպական մտավոր շարժման, որ նա սիրե իր մայրենի լեզուն իբրև միակ բնական ճշմարիտ և ուժեղ գործիք գիտության և քաղաքակրթության յուրացնելու։ «...Անկախ, զուտ գրական հանդեսի պահանջը երբեք այնքան զգալի չի եղել հայ ազգի մեջ, որքան այժմ...»։

«Ժամանակ»-ը գալիս է, որպեսզի հայ հեղինակներին ապարեզ հրավիրե նոր պայմանների մեջ, ազատ թողնելով նրանց տաղանդները և մտքի թռիչքը կուսակցական անմիտ բռնությունից և ջանալով ապահովել նրանց քրտինքի վարձն այնպես, ինչպես ապահովված է կենսական բոլոր ասպարեզներում ամեն մի արդար և սուրբ աշխատանք։

«Ժամանակ»-ը գալիս է փնտրելու ու գտնելու մեր նորագույն սերնդի մեջ այն տաղանդները, որոնք ասպարեզի պակասության պատճառով շրացված թառամում են և մնում անմասն քաղաքակրթված աշխարհի կյանքին»։

«Միևնույն ժամանակ՝ «Ժամանակ»-ը գալիս է, որպեսզի հայ ժողովրդին հայ լեզվով ծանոթացնե եվրոպական ամենաընտիր երկերի հետ...»։

Այս ժուռնալի ուղղության մասին նույն խմբագրականում ասված է. «Ճշմարտություն, գիտություն, գեղարվեստ։ Ահա «Ժամանակ»-ի ուղղությունը...»։

1901 ՀՈՒԼԻՍ, № 1, ԷՋ 1—88

269 Խմբագրություն: Նոր հանդեսի գոյության իրավունքը։ [«Ժամանակ»-ի նպատակների մասին]. էջ 1—6

270 Փափազյան, Վ. Երկրի ձայնը։ [Պատմվածք]. էջ 7—17

271 Սեգան-Զարուր: Քնար։ [Բանաստեղծութ.]. էջ 17

272 Հ. Ապոլլոն Մայկով։ [Բանաստեղծի կենսագրութ.]. էջ 18—19

273 Մայկով, Ա. Քլերմոնտի ժողովը։ [Բանաստեղծութ.]. էջ 20—24

274 Գոռշյան Գ. Վարժապետը։ Պատկեր։ (Մասամբ իրական). էջ 25—38

275 Իբսեն, Հ. Թերժե Վիժեն։ (Սկանդինավյան կյանքից). էջ 38—48

276 Կոպյոա, Ալֆրեդ: Ռուբենի բաղը։ [Թարգմ. Ս. Հախումյան]. էջ 49—55

277 Ս. Հ. Արման Սիլվեստր։ [Ֆրանսիակ. բանաստեղծի մասին]. էջ 56—57

278 Սիլվեստր, Արման: Վերջին անեչանք։ [Բանաստեղծութ. Թարգմ.]. էջ 57—58

279 Գաղտասարյան, Մ. Գիտության արժեքը։ [գիտական]. էջ 59—61

280 Մանդինյան, Ս. Երազների ստումնական մեկնությունը. էջ 61—66

281 Մ. Ֆրանսիական բժիշկ. ակադեմիան և գաղիական ախտը. էջ 66—70

282 Անրիման: Հայկական մամուլ. էջ 70—81

283 Նավասարդյան, Բ. Նամակ խմբագրության։ [«Ժամանակ»-ի մասին]. էջ 82—83

284 Z. Քաղաքական։ [Տեսություն]. էջ 84—85

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ: [Ամսագիր]։ Փարիզ, 1901. 16 էջ, (33×20 սմ).

— Խմբագիր՝ Մ. Մ.

Жоховурдин амар.— Для народа. Журнал. Париж, 1901.

1901 մայիս № 1, էջ 1—24
1901 հունիս № 2, էջ 24—40
1901 հուլիս № 3, էջ 41—56
1901 օգոստոս № 4, էջ 57—72
1901 Սեպտեմբեր № 5, էջ 73—88
1901 հոկտեմբեր № 6, 89—106

«Ժողովրդին համար»-ի 1901 թ. № 1-ում Մ. Մ. ստորագրությամբ, հեղինակը գրում է հանդեսի նպատակների մասին. «... Մեր անմիջական գործը պիտի ըլլա ժողովրդին տալ իր վիճակին ճըշգրիտ ճանաչողությունը, անոր դարձնել իր ճակատագիրը իր ձեռքով վարելու բռնաբարված իրավունքը, անոր թմրած ու ցավոտ հոգին արթնացնել իմիճարեր ու կամավոր ընդվզումներով, պատճառ ու անտարբեր ընելով զայն արվեստական ու անհարազատ թելադրանքներու...»

Ընչակյան ուղղության հանդես է եղել «Ժողովրդին համար» ամսագիրը։

1901 ՄԱՅԻՍ № 1, ԷՋ 1—24

285 Հիմնադիրները: [Հանդեսի մասին]. էջ 1

286 Մ. Մ. Ժողովուրդին համար։ [Հանդեսի մասին]. էջ 1—4

287 Փառնակ, Գ. *Հայ ցեղը.* էջ 4—8

288 Արսենյան, Լ. *Դարավերջին առթիվ.* էջ 8—11

289 Խաչատրյան, Ա. *Դյուցազնորեն — Ա. Հույսին համբաւ* [Բանաստեղծութ.]. էջ 11—13

290 Վարսամյան, Զ. *Նոր հոգիներ — Երջանկության վախը* [Մենախոսություն]. էջ 14—18

291 Տիրանյան, Վ. *Հայաստանին* [Բանաստեղծութ]. էջ 18

292 Գարբիսյան, Ս. *Դեպի ընդվզում — Կրտսեր եղբայրը* [Պատմվածք]. էջ 19—23

293 Քոլոլյան, Պ. *Հայուն ախտաբանությունը Անձնասպանություն.* էջ 23—24 № 2, էջ 33—34, № 3, էջ 49—51

294 Ազգային կյանք: [*Հայ կյանքից և մամուլից*]. էջ 24

1901 ՀՈՒՆԻՍ № 2, ԷՋ 25—40

295 Արսենյան, Լ. *Եվրոպան* [*Հայկական հարցի մասին*]. էջ 25—28

296 Փառնակ, Գ. *Պատմական հայացքներ.* էջ 28—30, № 3, էջ 43—44

297 Խաչատրյան, Ա. *Աստվածացումը* [Բանաստեղծութ.]. էջ 30—31

298 Վարսամյան, Զ. *Նոթատետրս.* էջ 32—33, № 3, էջ 47—49

299 Գարբիսյան, Ս. *Ջավակը.* էջ 35—38

300 Տիրանյան, Վ. *Այցելություն* [Բանաստեղծութ.]. էջ 38—39

1901 ՀՈՒԼԻՍ № 3, ԷՋ 41—56

301 Արսենյան, Լ. *Հեղափոխական գաղափարը.* էջ 41—43

302 Խաչատրյան, Ա. *Արշալույսները* [Բանաստեղծութ.]. էջ 45—46

303 Գարբիսյան, Ս. *Խորանն ու պատնեշը.* էջ 51—53

1901 ՕԳՈՍՏՈՍ, № 4, ԷՋ 57—72

304—11 Աղասի: *Երկու սխալ հասկացողություններ և նոր ուղին.* էջ 57—61

312 Ասատուր Հմայակ: *Վրեժի աղբյուրը.* էջ 65—66

313 Ազգային *կյանք* [*Ներքին տեսություն*]. էջ 69—72

1901 ՍԵՊՏԵՄԲԵՐ, № 5, ԷՋ 73—88

314 Արսենյան. Լ. *Ճիգը* [*Քաղաքական տեսություն*]. էջ 73—75

315 Փառնակ, Գ. *Անցյալն ու ներկան.* էջ 75—77

316 Խաչատրյան, Ա. *Ճակատամարտը* [Բանաստեղծութ.]. էջ 79—81

317 Մ. Մ. *Ժողովրդին համարձ-ին շուրջը.* էջ 83—85

1901 ՀՈԿՏԵՄԲԵՐ, № 6, ԷՋ 89—106

318 Ժ. Հ. *Ճշմարիտ ուժը,* էջ 89—91

319 Վարսամյան, Զ. *Նոթատետրս.* էջ 91—92

320 Ասատուր, Հ. *Միք իր ձեռքով.* էջ 92—97

321 Ֆրանսիա և *Թուրքիա.* էջ 99—101

ԼՈՒՅՍ: *Հանդես գիտական, բարոյական և իմաստասիրական: Քեմբրիջ—Բոստոն* [*Ամերիկա*], *1901—1907, 8 էջ, (27×18 սմ). բաժանորդագինը կես դոլար*

— Խմբագիր Մ. Մինասյան:

Луйс. Свет. Научный, этический и философский журнал. Кембридж—Бостон, 1901—1907.

1901 № 1—4, էջ 1—32 տարին սկսել է նոյեմբերի 1-ից

1902 № 5—24, էջ 33—192

1902 № 1—4, էջ 1—64

1903 № 5—24, էջ 1—384, № 1—4 էջ 1—64

1904 № 1—2, էջ 1—64

1904 № 3—12, էջ 65—384

1905 № 1—2, էջ 1—64

1905 № 3—12, էջ 65—384

1906 № 1—2, էջ 1—64

1906 № 3—12, էջ 65—84

1907 № 3—12, էջ 65—384

Այս երկշաբաթաթերթի 1901 թ. նոյեմբեր 1-ի «նպատակը» առաջնորդողում ասված է. «նպատակը իր ընթերցողներում զգացումները ազնվացնել և խորհուրդները լայնացնել պիտի ըլլա...»:

Ամերիկյան կրոնական պրոպագանդին, հավատվորսությանը և հետախուզությանը ծառայող պարբերական է եղել «Լույս»-ը:

«Կհավատամ եկեղեցվո անհրաժեշտությանը, կհավատամ կրոնի փրկարար զորությանը, կհավատամ հոգվո անմահությանը...» ահա «Լույս»-ի սկզբունքները։ [1903 № 5]։

«Լույս»-ը 1907 թվին հրատարակվել է Բաստոնում, որպես ամսագիր։

1901 ՆՈՅԵՄԲԵՐ 1, № 1, ԷՋ 1—8

322 Նպատակ: [*Պարբերականի մասին*]. *էջ 1—2*
323 Ինչո՞ւ *վախկոտ ենք. էջ 2—4*
324 Երկու *հակապատկերներ։ [Մարդկության կյանքը հին և նոր դարերում]. էջ 5—6*
325 Կյանքի *տևողությունը կենդանիների մեջ. էջ 6—8*

ՎՏԱԿ: *Գրական-բանասիրական ժողովածու Գրիգոր Ջանշյանի հիշատակին։ Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսյան, 1901. 422 էջ (23×16 սմ)։*

— *Խմբագիր՝ Վ. Փափազյան։*

Втак. Приток. Литературно-филологический сборник. Тифлис, 1901.

«Խմբագրության կողմից»-ում Վ. Փափազյանը գրում է, որ «Այս ժողովածուին մասնակցելու կոչին պատասխանեցին գրեթե բոլոր հայ հայտնի գրողները։ Հայկական ժամանակակից ինքնուրույն գրականության արդյունքի մի հավաքածու է, որ դնում ենք հրապարակի վրա։ Այստեղ իրենց լուման նվիրել են հայ նահապետ-գրողից սկսած՝ մինչև ամենանոր, թեև սկսնակ, բայց հուսատու հեղինակները»։

1901 ԷՋ 1—422

Մաս Ա.

326 Հովհաննիսյան, Հ. *«Մենք միասին գնում էինք ճանապարհ...»։ [Բանաստեղծութ.]. էջ 10*
327 Իսահակյան, Ա. *Սիրո երգը։ [Արձակ բանաստեղծութ.]. էջ 10—19*
328 Մառուրյան, Ա. *«Մեր եղբայրները»։— Աղերս։— Անվերջ մաքառումն։— Դեպի գործ։— Թող մեզ չսիրեն։— Աշնան տերևներ։ [Բանաստեղծութ.]. էջ 21—22*
329 Փափազյան, Վ. *Ավետյաց երկրում։ (Մի գլուխ անտիպ աշխատությունից). էջ 23—32*
330 Իսահակյան, Ա. *«Ա՞խ մեր սիրտը...»։ [Բանաստեղծութ.]. էջ 33*
331 Թումանյան, Հ. *Պոետն ու մուսան։ (Հատված). էջ 64—80*
332 Բաշինջաղյան, Գ. *Բարեբարներ։ (Պատկերներ). էջ 81—100*
333 Մառուրյան, Ալ. *Զանգի ձայն։— Արևի շողքը։— Մխիթարանք։— Ես՞ր եմ կանչում։ [Բանաստեղծութ.]. էջ 101—102*
334 Հախումյան, Ս. *Ընդհատվող հեկեկանքներ (Տպավորություններ), էջ 103—116*
335 Սրինգ: *Ի՞նչ երգեմ։ [Բանաստեղծութ.]. էջ 117*
336 Նազարյան, Լ. *Բեկորներ. էջ 118—121*
337 Պռոշյան, Պ. *Հինգերորդ գինագիծը։ (Ազգագրական պատկեր). էջ 122—144*
338 Տեր-Միրաքյան, Հ. *Անցած, գնացած օրերից։ (Գերմանական հայ ուսանողների կյանքից). էջ 145—169*
339 Զոպանյան, Ա. *Լեոնարդո դա Վինչի. էջ 170—171*
340 Զուքար, Գ. *Երազ, էջ 172—181*
341 Պատկանյան, Ռ. *Փորսուղին Ավագը։ (Նոր-Նախիջևանի բարբառով). էջ 182—197*
342 Փորսուղին *Ավագը։ (Գրական լեզվով). էջ 198—214*
343 Նալբանդյան, Մ. *Գրիգոր Կարապետյանին. [Նամակ. Մոսկվա, 1859. հոկտեմբ. 27]. էջ 215—217*
344 Փափազյան, Վ. *Ըմբոստ երգեր. էջ 218—226*

Մաս Բ.

345 Աճառյան, Հ. *Հայոց ծագումը և նախապատմական շրջանը. էջ 227—235*
346 Սուրենյան, Վ. *Հայկական ճարտարապետության տեղը գեղարվեստի պատմության մեջ։ (Պատմական ակնարկ). էջ 236—254*
347 Շահազիզ, Ե. *Հայոց վանքերը և նրանց դերը հայոց կյանքում. էջ 255—302*
348 Բասմաջյան, Կ. Հ. *Ջվարթնոց եկեղեցին և նաշիկ Ծ. Վ. Դադյանի պեղումները. էջ 303—305*
349 Խատիսյան, Գ. *Հայոց լեզուն և իր բարբառները. էջ 306—321*
350 Նազարյան, Լ. *Հայոց սովորության իրավունքի ուսումնասիրության նշանակությունը և մեթոդը. էջ 322—333*

351 Թերբերյան, Մ. *Սմբատ Շահազիզ (էտյուդ). էջ 334—368*

352 Վեսելովսկի, Յու. *Արևմտյան եվրոպայի ազդեցությունը ռուսահայ գրականության վրա. էջ 369—390*

353 Վանցյան, Գ. *Մեր ստիլիստները և լեզուն. էջ 391—397*

ՖՈՆՈԿՐԱՖ: *Տասնօրյա։ Կ. Պոլիս, 1901*

— Խմբագիր՝ Վահան Փափազյան։

Фонограф. Ежедекадный журнал. Константинополь, 1901.

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ՇԱՐԺՈՒՄ ԻՎԱՎԵՍԻ: *(Շաբաթաթերթ)։ Վառնա, 1901. № 1—10 [Հավելված «Շարժումի»].*

Шаржум. Ивавеси. (Еженедельник). Варна, 1901.

Հայատառ — թուրքերեն շաբաթաթերթ.

Armenia. Macyar— örmény havi szemle. Szamosujvar, *1901. 32 էջ (24×15 սմ).*

Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlendes. Wien' *1901—1913, 140 էջ (22×15 սմ).*

Արևելագիտական այս պարբերականում հայագիտական ուսումնասիրություններ կան։

ՀԱՆԴԵՍ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ: Zeitschrift für armnische Philologie Marbyrg, *1901. 96 էջ (24×16 սմ).*

— Redacteur, Esnik Ciadschezian und Agop Manandian.

1902

ԱԽՈՒՐՅԱՆ: *Հայ կանանց օրացույց հանդես։ Ալեքսանդրապոլ, տպ. Մալխասյան, 1902. 122 էջ, (15×22 սմ).*

— Խմբագիր՝ Նվարդ Աֆինյան։

Ахурян. Журнал календарь армянских женщин. Александрополь, 1902.

ԱՐՏԵՄԻՍ: *Ամսահանդես ընտանեկան և գրական։ Օրգան քսաներորդ դարու հայ կանանց։ Կահիրե, 1902—1903, բաժանորդագինը 12 ֆր.*

Հիմնադիր տեր և տնօրեն—խմբագիր՝ Մարի Պեյլերյան։

Артемис. Журнал семейный и литературный. Орган армянских женщин XX века. Каир, 1902—1903

1902 թ. № 1—8, էջ 1—256

1903 թ. № 1—12, էջ 1—338

Այս հանդեսի նպատակների մասին, «Արտեմիս»-ի 1902 թ. № 1-ի «Ի՞նչ կ'ուզե այս թերթն» առաջնորդողում Մարի Պեյլերյանը գրում է. «...Արտեմիս պիտի հանդիսանա խորհող և լուրջ մայրը, իմաստուն և պարտաճանաչ դաստիարակը, որ խանդագին պաշտելով հանդերձ մին իր զավակը, մյուսն իր աշակերտը, խստիվ կհանդիմանե, և շատ անգամ ցույց չարաչար կծեծե զայն, ուղղելու համար որևէ թերություն, կամ մոլություն...

Արտեմիս պիտի զբաղվի գավառաց կնոջ ներկա տխուր կյանքով, նա պիտի ջանա արթնացնել անոր նախապաշարումներով թմրած հոգվույն, ու տգիտությամբ քնած մտքին մեջ գիտակցությունը իր թշվա՜ռ վիճակին։

... Մայրեր տվեք ինձ, և ազգեր տամ ձեզ, ըսեր է մեծ խորհող մը։

Արտեմիսի նպատակը պիտի ըլլա ուրեմն պատրաստել օրիորդներ, ամուսիններ, մայրեր, որպեսզի օր մը հպարտությամբ կարենա ըսել, ահա՛ ձեզ մայրեր, տվե՛ք ազգը։

«Արտեմիս»-ի հիմնադրի ու խմբագրի մասին տես ներքևում։

ՄԱՐԻ ՍՎԱՃՅԱՆ: *Գրել է Կ. Պոլսի «Հայրենիքում», փոխադրվելով Փարիզ, հիմնել է «Արտեմիս» պարբերականը, որտեղ գրել է օրվան հարցերի ու կանանց ազատագրման մասին։*

Մարի Սվաճյանն ունի երեք վեպ, մի քանի նորավեպեր և փոքրիկ պատմվածքներ։ Նրա վեպերն են՝

1. Հայուհի մը ի Բարիզ. («Հայրենիք» 1892, № 281—311)

2. Բռնի ամուսնություն («Հայրենիք» 1894, № 840—864)

3. Ամիրան։

Սվաճյանի վեպերում և նովելներում հիմնականում կանանց հարցն է քննվում, հայ կնոջ ամուսնական, ընտանեկան հարցերը և ազատագրումը։

Մ. Սվաճյանի նորավեպերից են՝—Գրավ մը. («Հայրենիք» 1893, № 506),— Բաղդին կամքովը, («Հայրենիք» 1893 № 540),— Հացի համար («Հայրենիք» 1894 № 899),— Ապարանչանը («Հայրենիք» 1893 № 361) Հոլիոսեյ («Հայրենիք» 1894 № 945) և այլն։

Այս բոլոր նորավեպերում շոշափվում է կանանց հարցը, նրա ընտանեկան երջանկության և սիրո հարցերը։

1902 ՀՈՒՆՎԱՐ, № 1, ԷՋ 1—32

353ա **Մառի։** *Թե ինչո՞ւ այս թերթն ալ։ [Հանդեսի նպատակների մասին]. էջ 1—3*

353բ **Ավօ։** *Մեր ուղեգիծը. էջ 3—7*

353գ **Ս.—Վարդ։** *Եվրոպայի կանանց շուրջը. էջ 7—10*

353դ **Օր. Սարեճիկ։** *Նամակ Բաքվից։ [Թղթակցութ.]. էջ 10—12*

353ե **Զեփյուռ։** *Իմ երգը։ [Բանաստեղծութ.]. էջ 12*

353զ **Կեօրե։** *Գուսանի աներքը։ [Թարգմ. բանաստեղծութ.]. էջ 13—15*

354 **Ավօ։** *Երազում սեր։ [Բանաստեղծութ.]. էջ 15*

355-56 **Մառի։** *Մէճէ։ (Արաբական կյանքէ)։ [Պատմվածք]. էջ 16—18*

357 **Տերվիշ։** *Կնահաճը։ (Աշուղական երգեր). էջ 19*

358 **Ա. Վ. Օ.** *Տարեգլուխ քրոնիկ։ 1901—1902. էջ 20—24*

359 **Զ.** *Տիկին Տյուսարի մահվան տարելիցին առթիվ. էջ 24—26*

360 **Ավօ։** *Մազթաղինե։ (Գաղափարական վեպ). էջ 27—30, № 2, էջ 62—64*

361 **[Լուրեր]։** *Օգնություն Կարնո արկածյալներուն։— «Արտեմիսի» նամակատուփ. էջ 30—32*

1902 ՓԵՏՐՎԱՐ, № 2, ԷՋ 32—64

362 **Մառի։** *Ջավակը։ [Կնոջ ազատության մասին]. էջ 33—37*

363 **Ավօ։** *Կեղծիքը։ [Կնոջ դերը]. էջ 37—41*

364 **Օր. Հայկանդուխտ, Շ.** *Տայոց աշխարհի կանայք. էջ 41—42, № 3, էջ 75—76*

365 **Մառի։** *Կը հիշեմ։ [Բանաստեղծութ]. էջ 45*

366 **Ավօ։** *Տոմինո։ (Պատկեր բարեկենդանի կյանքին). էջ 46—51*

367 **Քիուսսան։** *Գրգանք։ [Բանաստեղծութ.]. էջ 58*

368 **Ավօ։** *Կոունկին եռեենը։ [Բանաստեղծութ.]. էջ 52—53*

369 **Մառի։** *Մամուլը և մեր քույրերը. էջ 54—59*

370 **Կարենցի։** *Ալեքսանդր Երիցյան։ [Մահվան առթիվ]. էջ 59—60*

371 **Գրեեր** *և թերթեր։ [Տեսություն]. էջ 60—61*

1902 ՄԱՐՏ, № 3, ԷՋ 65—96

372 **Մառի։** *Ակնարկ մը հայ կնոջ անցյալին վրա. էջ 65—69*

373 **Տիկին Խ.** *Հայ կինը. էջ 72—75*

374 **Տիկին Ս. Վարդ։** *Ի՞նչ պիտի լինի մեր աղջիկներուն ապագան. էջ 76—79*

375 **Սֆոր, Վոլտր։** *Վիլհելմ և Հելենե։ [Բալլադ. թարգմ. ֆրանս.]. էջ 80—83*

376 **Թեքեյան, Վ.** *Քրչամոլ կինս. էջ 83—85, № 4, էջ 114—118*

377 **Հ. Ս.** *Մեծ անկումը։ [Բանաստեղծութ.]. էջ 86*

378 **Ավօ։** *Վարպետին։ [Բանաստեղծութ.]. էջ 87*

379 **Տերվիշ։** *Ինկած կինը։ [Բանաստեղծութ.]. էջ 88*

380 **Մառի։** *Կեսուրը։ (Գավառական կյանքե). էջ 88—96*

1902 ԱՊՐԻԼ, № 4, ԷՋ 97—128

381 **Մառի։** *Դպրոցը. էջ 97—100*

382 **Ավօ։** *Բարեշրջության զգալի պետք ունի հայ կինը. էջ 101—104, № 5—6, էջ 133—137*

383 **Տիկին Շուշանիկ, Ս.** *Նամակ Թիֆլիսեն. էջ 104—107*

384 **Երանյակ։** *Ընտանեկան կյանքեն. էջ 107—109*

385 **Մավենց։** *Մանուկներու դիեցումը, էջ 110—114*

386 **Կարենցի։** *Քրիստափոր Կարա Մուրզա։ [Մահվան առթիվ]. էջ 122—123*

1902 ՄԱՅԻՍ—ՀՈՒՆԻՍ, № 5—6, ԷՋ 129—192

387 Մառի: Աշխատելու պետքը կնոջ համար. էջ 130—133
388 Քնարիկ: Նամակ Փարիզեն. էջ 141—144
389 Տեուեզ, Ռ. Փ. Կինը, իր հրապույրը և ույժը, [Թարգմ.]. էջ 47—158, № 7—8, էջ 215—222, 1903 № 1, էջ 22—27,
390 Զեփյուռ: Խռով լճակը, [Բանաստեղծութ.]. էջ 158
391 Հ. Ս. Դյուցազնին քունը, [Բանաստեղծութ.]. էջ 159
392 Մառի: Վեղարավորը, Բագրատ վարդապետ Թավաքալյանի հիշատակին. էջ 161—179
393 Կարենցի: Ղազարոս Աղայանց, (40-ամյա հոբելյանին առթիվ). էջ 175—178
394 Ավո, «Յուլքերը» (Սիպիլի). էջ 179—181

1902 ՀՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ, № 7—8, ԷՋ 193—256

395 Մառի: Երկու խոսք մեզ լավ չմբռնողներուն. էջ 193—197
396 Տիկին Ս. Վարդ: Ամուրիները. էջ 198—202
397 Ռուստաճայ: Նամակ Թիֆլիսեն. էջ 208—211
398 Կյոթե: Գտնվածը, [Բանաստեղծութ. Թարգմ. Կ. Մկրտչյան]. էջ 214
399 Տոլստոյ, Լ. Կանայք, [Թարգմ.]. էջ 222—225
400 Շելի: Պատկառուկը, Օ. Ս. Մ-ին. էջ 227—232
401 Տերվիշ: Չի՛ մնար, [Բանաստեղծութ.] էջ էջ 237—238
402 Մառի: Ջավակը, էջ 239—250
403 Ավո: Նահապետ Քուչակի դիվանը, [Ա. Չոպանյանի հրատ. մասին]. էջ 250—254

1903 ՀՈՒՆՎԱՐ, № 1, ԷՋ 1—48

404 Խմբագրություն: «Արտեմիսի» Բ տարեշրջանին առթիվ. էջ 2
405 Մառի: Կանացի աշխատության տեսակներ. էջ 3—8
406: Ավո: Բարեշրջության զգալի պետք ունի հայ կինը. էջ 8—11
407 Մեր—Մառուկ: Կնոջ ընկերական իրավունքները. էջ 11—15
408 Թեկ—Հովսեփյան, Թ. Մեր առօրյա ցավերից [Ղարսից]. էջ 15—21
409 Խ. Ոսկի կտիկին վրեժը, (Սեբաստիո բարբառով). էջ 34—35
410 Ավո: Արևելյան պատմվածքներ, Հեզեր—ֆենտին հեքիաթը. էջ 38—40
411 Ավո: Մագթաղինե, (Գաղափարական վեպ). էջ 42—45

1903 ՓԵՏՐՎԱՐ—ՄԱՐՏ, № 2—3, էջ 49—96

412 Մառի: Ի՞նչ ընել պետք է. էջ 49—51
413 Ավո: Կանացի հավաքական ուժերու պետքը կա. էջ 52—54
414 Արզարյան, Տ. Նոր-Ջուղայի կանանց կրթությունը. էջ 55—56
415 Կանանց մամուլի դերը հայերի մեջ. էջ 66—69
416 Խոսրով: Մեր զատիկը, (Հին օրերին). էջ 79—82
417 Ավո: Անհուն իղձեր, [Բանաստեղծութ.]. էջ 83
418 Գասպար: Դերասանուհին կինը. էջ 84—86
419 Մառի: Ջյուպեյտա, (Արաբական կյանքե). էջ 88—94

1903 ԱՊՐԻԼ—ՄԱՅԻՍ, № 4—5, ԷՋ 97—144

420 Մառի: Ընտրել գիտնականք. էջ 97—99
421 Ավո: Հինները և նորերը. էջ 100—102
422 Մառի: Ծովուն, [Բանաստեղծութ.]. էջ 102
423 Շիրինյան, Կ. Իշխանուհի մարիամ Թումանյան, [Կենսագրական]. էջ 109—112
424 Ավո: Սև իղձեր, [Բանաստեղծութ.]. էջ 112
425 Ավո: Տրտունջքի ձայներ. 123—125
426 Ա. Ք. Թագավորը և բանաստեղծը, (Արաբական լեգենդ). էջ 125—127
427 Մառի: Սելիմ աղան, (Պատկեր արաբական կյանքե). էջ 129—131
428 Ա. Իշխան Գվիտոն Լուսինյանի ֆրանսահայ նոր բառագիրքը. էջ 140—142

1903 ՀՈՒՆԻՍ—ՀՈՒԼԻՍ, № 6—7, ԷՋ 145—192

429. Մառի: Առաջարկ մը, [Աղջիկների դպրոցների մասին]. էջ 145—148
430 Քնարիկ, Եվրոպայի բանվորուհիներու կյանքեն. էջ 154—156

431 Ավո: *Ի՞նչ բրած են ցարդ վարժարանեն ելող հայ աղջիկները.* էջ 159—161, № 8, էջ 199—202

432 Լեոբարտի: *Իր քրոջ Պոլինայի ամուսնության առթիվ.* էջ 171—172

433 Տերվիշ: *Ո՞րտեղ ես։ [Բանաստեղծութ.].* էջ 173

434 Ավո: *Արևելյան պատմվածքներ։ Ով ինչ ընե, իրեն կընե.* էջ 175—176.

435 Մառի: *Պէտէվին։ (Արաբական կյանքէ).* էջ 177—180

436 Մ. *Բիրամիտի ներկայացումները։ [Ալեքսանդրիայի հայ դերասանական խմբի].* էջ 184—187, № 9, էջ 252—256, № 10—11, էջ 300—303

437 Ավո: *«Բամբեր գրականության և արվեստի» [Տեսություն].* էջ 189—192

1903 ՕԳՈՍՏՈՍ, № 8, ԷՋ 193—224.

438. Մառի: *Իտեալի կիները.* էջ 193—194

439 Տիկին Թագուհի: *Կերթանք մըր վաթան.* էջ 202—206

440 Ավո: *Բաղդավոր Մարգարիտը։ (Արևելյան հեքիաթ).* էջ 213—223

1903 ՍԵՊՏԵՄԲԵՐ № 9; ԷՋ 225—256

441 Բաց նամակ։ *[Բաժանորդներին, բաժնեվճարները չտալու առթիվ].* էջ 225

442 Մառի: *Թե ի՞նչպես պետք է ըմբռնել ազատամտությունը.* էջ 226—228

443 Ավո: *Մի պատկեր ավերակ Հայաստանեն։ [Բանաստեղծութ.].* էջ 245—246

444 Աժդահար: *Անցյալ օրերին.* էջ 248—250

445 Խնուրով: *Կոտորած-կատարած։ [Բանաստեղծութ.].* էջ 251

1903 ՀՈԿՏԵՄԲԵՐ—ՆՈՅԵՄԲԵՐ, № 10—11, ԷՋ 257—304

446 Մառի: *[Ընթերցանությունը հայ կանանց մեջ].* էջ 258—259

447 Ավո: *Հայ կինը ազգային ինքնուրույն նկարագիր չունի.* էջ 265—269

448 Մալեզյան, Մ. *Հայ աղջիկը.* էջ 270—272

449 Տերվիշ: *Ի՞նչ են։ [Բանաստեղծութ.].* էջ 280

450 Տոլստոյ, Լ. Ն. *Դաստիարակության և ուսման մասին։ [Թարգմ. Ռ. Քաջբերունի].* էջ 281—286

1903 ԴԵԿՏԵՄԲԵՐ, № 12, ԷՋ 305—338

451 Մառի: *Հա՞յ կնոջ հարց մասնավորապես, թե «ֆեմինիզմի» պահանջ.* էջ 305—309

452 Զաքարյան, Գ. *Տպավորություններ։ [Ճուշուց].* էջ 314—316

453 Տեունզ, Ռ. Փ. *Կինը, իր հրապույրը և ուժը։ [Թարգմ.].* էջ 321—326

454 Տերվիշ: *Աշխարքին բաները։ [Բանաստեղծութ.].* էջ 326—327

455 Ավո: *Ղազի Բուրխանը։ (Ավանդապատ).* էջ 328—332

456 Խմբագրություն: *Բաց նամակ։ [Ընթերցողներին հայտնում է, որ «Արտեմիս»-ը դադարում է, որովհետև բաժնեվճարները չեն տալիս։ Անազնիվ բաժանորդներին անվանում է՝ «անխիղճներ», «ամենալավ ձգտումներու սպանիչներ»].* էջ 338

ՀԱՅ ՀԱՆԴԵՍ: *Ազգային և գրական կիսամսյակ։ Վենետիկ, տպ.* Edwardo Nahabed, *1902—1903, 16 էջ (27×20սմ). բաժանորդագինը 10 ֆր.*

. *Հիմնադիր—տնօրեն՝ Ա. Արփիարյան։*

— *Հրատարակիչ՝ Եդվարդ Նահապետյան։*

Ай андес. Армянский журнал. Литературно-национальный двухнедельник. Венеция, 1902—1903.

1902 օգոստոս 1. № 1, էջ 1—16

1902 օգոստոս 15. № 2, էջ 7—32

1902 սեպտեմբեր 1 № 3, էջ 33—48

1902 սեպտեմ. 15, № 4, էջ 49—64

1902 հոկտեմբ. 1, № 5, էջ 65—80

1902 հոկտեմբ. 15, № 6, էջ 81—96

1902 նոյեմբ. 1, № 7, էջ 97—112

1902 նոյեմբ. 15, № 8, էջ 113—128+հավելված Ա—Դ

1903 հունվ. 1, № 9, էջ 129—144

1903 հունվ. 15, № 10, էջ 145—160

Այս հանդեսի նպատակների մասին 1902 թ. № 1-ի «Մեր առաջադրությունը» հոդվածում Լևոն Բաշալյանը հետևյալն է գրել. «Այս թերթը հիմնելով՝ մեր առաջադրությունն է մեր աշխատու-

թյան բաժինը ունենալ մեր վերածնունդի ու վերստացումներու շարժումին մեջ։

...Պիտի աշխատենք որ մեր գործը մեզի համար խոսի կարելի եղածին չափ հստակորեն։ Կուզենք սակայն որ անմիջապես գիտցվի թե այս թերթը ազատ է ամեն կապե կաշկանդումե որոնք դատողությունը կպրկեն։

Կանխակալ կարծիքներու բեռը թոթափած, բարձրեն ու լայնորեն դիտելով մարդիկն ու իրենց գործերը, պիտի ջանանք անկախորեն հայտնել անոնց մեզի թելադրած մտածումը։ Հետո, կուզենք որ գիտցվի նաև թե սրբազան խղճահարությունը պիտի ըլլա մեր առաջնորդը այն գործերուն մեջ՝ որոնք մեր Հայրենիքին գերագույն շահերուն հետ առընչություն ունին։ Հայրենիքին նկատմամբ պարտականություն մը ստանձնելը ու կատարելը չի բավեր. պետք է նաև այդ պարտականությունը որոշել գիտենալ։ Հունգարացի մեծ հայրենասերին, Տէաքի խոսքով, «Մենք պարտավոր ենք ամեն վտանգ աչք առնել հայրենիքին համար, բայց ոճիր է ամենադույզն ձախողվածքի վտանգին ենթարկել հայրենիքը»։

Հնչակյան ուղղության հանդես է եղել «Հայ հանդես»-ը։

1902 ՕԳՈՍՏՈՍ 1, № 1, ԷՋ 1—16

457 Բաշալյան, Լ. *Մեր առաջադրությունը։ [Հանդեսի նպատակների մասին]. էջ 1—2*

458 Հ. Ղևոնդ, Ալիշան։ *[Մահվան առթիվ]. էջ 2—4*

459 Կայծը։ *[Հայկական հարցի մասին]. էջ 5—6*

460 Հայասեր համաժողովը։ *[Բրյուսելում 1902 թ. հուլիս 17—18]. էջ 6—8*

461 Արփիարյան, Ա. *Կարմիր ժամուց։ Վեպ. էջ 8—14 № 3, էջ 40—45, № 4, էջ 55—59, № 5, էջ 74—77, № 6, էջ 87—89, № 8, էջ 139—141, № 10, էջ 151—154*

462 Արփիարյան, Ա. *Կեղծարարները։ [Դաշնակցության դեմ]. էջ 14*

463 Արձագանք։ *[Ընթացիկ լուրեր]. էջ 14—16*

1902 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, № 3, ԷՋ 33—48

464 Ա. Ա. *Անպատիվ մարդ՝ անպատիվ գործ։ [Ա. Չոպանյանի մասին]. էջ 45—46*

465 Արձագանք։ *[Ընթացիկ լուրեր]. էջ 47—48*

1902 ՍԵՊՏԵՄԲԵՐ 15, № 4, ԷՋ 49—64

466 Վերադարձ *պատրիարքին։ [Հայկական հարց]. էջ 49—50*

467 Ֆրանսիա *և Հայաստան. էջ 50—52*

468 Ա. Ա. *Մխիթարին միջնորդությունը։ [Հնչակյանների ու դաշնակների մասին]. էջ 52—53, № 5, էջ 71—74*

469 Սկեպտիկ։ *Մակարույծ գաղափարներ։ [Դաշնակների ու հնչակյանների միացման մասին]. էջ 59—61*

470 Թուրքիա *և պետությունները. էջ 62—63*

1902 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, № 5, ԷՋ 65—80

471 Հրազդան։ *Պատիժը։ [Պատմվածք]. էջ 65—71*

472 Արձագանք, *[Լուրեր]. էջ 78—80*

1902 ՀՈԿՏԵՄԲԵՐ 15, № 6, ԷՋ 81—96

473 Ժողովուրդներուն *հարությունը։ [«Միգարոս»-ի հոդվածներից]. էջ 81—82*

474 Խաղաղության *ապագան. էջ 84—86*

475 Օրը-օրին։ *[Ե. Օտյանի «Ազատ խոսք»-ի մասին և այլ լուրեր]. էջ 91—93*

476 Ա. Ա. *Դադար։ [Հնչակյան և դաշնակցական պարտիաների միացման մասին]. էջ 93—94*

1902 ՆՈՅԵՄԲԵՐ 1, № 7, ԷՋ 97—112

477 Ա. Ա. *Տագնապյալները։ [Ա. Չոպանյանի դեմ]. էջ 96—97*

478 Եվրոպայի *խաղաղությունը. էջ 103—108*

479 Օրը-օրին։ *[Լուրեր]. էջ 108—110*

1902 ՆՈՅԵՄԲԵՐ 15, № 8, ԷՋ 113—128

Հավելված էջ Ա-Դ.

480 Մ.-Սե. *Նյութեր Վանի ժամանակակից պատմության. էջ 114—118, № 9, էջ 131—136, № 10, էջ 148—151*

481 Հրազդան։ *Վազգեն երգարան։ [Գրախոսու-*

թյուն երգարանի, որ հրատարակել է «Հայրենիքը» Բոսթոնում]. էջ 118—121

482 Ալիշանին տարելիցը։ [Մահվան]. էջ 124

483 Հավելված։ «Կարմիր ժամուց»-ի շարունակութ. էջ Ա—Դ.

1903 ՀՈՒՆՎԱՐ 1, № 9, ԷՋ 129—144

484 Պաշտոնատար հայեր։ [Խմբագրական]. էջ 129—131

485 Սուլթանին ուժը, քաղաքագիտությունը։ [Անստորագիր]. էջ 136—138

1903 ՀՈՒՆՎԱՐ 15, № 10, ԷՋ 145—160

486 Վտանգված հայ պաշտոնատարությունը։ [Թյուրքիայում]. էջ 145—148

487 Արևելյան խնդիրը. էջ 154—157

ՊԱՏԱՆԻ։ Հանդես պատանեկան, բարոյական և կրթական։ Լոնդոն, տպ. Հայկական որբանոցի Ջիկվել, 1902—1907. է, 16 էջ (19×12 ապա 24×17 սմ)։ Բաժանորդագինը 2 և կես շիլինգ։

— Խմբագիրը չի նշված։

Патани. Юноша. Учебно-моральный, исторический. Лондон, 1902—1907.

1902 № 1—12, էջ 1—196

1903 № 1—12, էջ 1—100+1—64

1904 № 1—12, էջ 64—160

1905 № 1—12, էջ 161—256

1906 № 1—12, էջ 257—352

1907 № 1—12, էջ 1—96

1902 թվի հունվար № 1-ի «Ծրագիր» խմբագրականում հետևյալն է ասված. «Մենք, խումբ մը դեռատի ուսանողներ Անգլիո նման քաղաքակիրթ երկրի մը մեջ գտնվելու բարեբաղդությունն ունենալով ձեռք կզարկինք այսպիսի համեստ ծավալով ու պարունակությամբ թերթի մը հրատարակության։ Նպատակ դրած ենք բարի տրամադրություն ունեցող երիտասարդաց և պատանյաց բարոյական միություն մը երևան հանել և անոր բերանը (օրկան) և հասարակաց ժամադրավայրը ըլլալ, ուր կարենան նոքա իրար հանդիպելով իրարու գաղափար ճանչնալ և հարգել։

... Քաղաքական և կրոնական կամ դավանական խնդիրներ բոլորովին դուրս են մեր ծրագրեն։ Ոչ ալ երբեք կուսակցական որևէ խնդիրներու միջամտելով դեր կամ դեմ պիտի գրենք։ Իսկ անձնական վեճերով կամ քննադատություններով բնավ չպիտի զբաղվինք»։

Ինչպես ցույց է տալիս ներքևում ղետեղված մեկ համարի բովանդակությունը՝ անստորագիր են հոդվածները և մանր-մունր թարգմանությունները՝ անգլիական թերթերից։ 1903 թվի հուլիսի № 7-ից «Պատանի»-ն վերանվանվել է «Պատկեբաղարդ ամսաթերթ», ծավալն էլ մեծացել է։ Չնայած 1903 թվից վերակազմվել է, բայց բովանդակությամբ մնացել է աղքատիկ։

1902 ՀՈՒՆՎԱՐ, № 1, ԷՋ 1—20

488. Ծրագիր։ [Խմբագրական]. էջ 1—7

489 Շնորհավոր նոր-տարի և բարի կաղանդ. էջ 7—12

490 Կոխվեներու ծագումը։ [Անստորագիր պատմվածք]. էջ 13—14

491 Ճշմարտախոսություն. էջ 14—15

492 Ճշմարիտ հայրենասեր մը. էջ 15—18

493 Ավելցումները հարստության աղբյուր են. էջ 18—19

494 Զվարճալիք. էջ 20

1903 ՀՈՒԼԻՍ, № 7, ԷՋ 1—8

495 Խմբագրական։ [Հանդեսի ծավալը մեծացնելու մասին]. էջ 1

496 Վանանդեցի տպագրական ընտանիքը. էջ 2—3

497 Այծն ու աղվեսը. էջ 3—6

498 Մաղկաքաղ հանդեսներից։ [Անգլիական]. էջ 6—7

499 Զվարճալիք. էջ 8

ՔԱՂԱՔԱՑԻ։ Շաբաթաթերթ։ Ֆրեզնո (Կալիֆորնիա), 1902—1909. 8 էջ (29×21 սմ)։

Գինը [№-ի] 5 սենթ։

— Խմբագիր-տնօրեն՝ Հ. Էկինյան։

Қахакаци. Гражданин. Фрезно (Калифорния), 1902—1909.

Այս երկշաբաթաթերթը շատ անբովանդակ ու աղքատամիտ է։ Ներքևում բերված մեկ համարի նկարագրությունը ցույց է տալիս, որ զանազան անարժեք մանր-մունր լուրերից, աֆորիզմներից,

խրատներից զատ թերթը լցված է հիմնականում հայտարարություններով։

1902 ՆՈՅԵՄԲԵՐ 15, № 14, ԷՋ 105—112

500 Ջանազան լուրեր. էջ 105
501 Ոսկեփորիկ: [Մանր լուրեր]. էջ 106
502 Մաղկաճաղ: [Աֆորիզմներ, մտքեր]. էջ 107
503 Ինչո՞ւ կատեն մեզ։ [Ամերիկացիք]. էջ 108—109
504 Հավկիթ հավեն արհեստական կերպով. էջ 109
505 Հ. Է. Ամերիկահայ աղջկան երազը։ [Բանաստեղծութ.]. էջ 110
506 Լոնկ: Առողջապահական. էջ 111—112
507 Հայտարարություններ. էջ 111—112

1903

ԱԶԱՏ ԲԵՄ: Շաբաթաթերթ գրական, գիտական, ազգային և քաղաքական։ Ալեքսանդրիա, 1903—1905. տպ. «Արաքս», Կահիրե, 1906—1907, տպ. «Կիլիկիա». 4 էջ, (31×47 սմ)։
— Խմբագիր՝ Երվանդ Օտյան։
— Ասյա՝ Բարսեղ Օհանյան։
— » Օննիկ Թաշճյան։
— » Լևոն Լարենց։

Азат бем. Свободная арена. Еженедельный литературный, научный, национальный и политический журнал. Александрия, 1903—1905, Каир, 1906—1907.

ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ: Կիսամսյա նկարազարդ հանդես։ Թիֆլիս, տպ. Վրաց հրատ. Ընկ.-թյան, 1903—1905. 24 էջ (24×16 սմ)
— Բաժանորդագինը 2 ռ. 50 կ.։
— Խմբագիր-հրատարակիչ՝ Դ-ր Վահան Արծրունի։

Арохчапаик терт. Газета здравоохранения. Иллюстрированный двухнедельник. Тифлис, 1903—1905

1903 թ. № 1—6, էջ 1—152 [1903 թ. հոկտեմբեր 1-ից 1904 թ. հունվար 1-ը]։
1904 թ. № 7—24, էջ 145—574 [1904 թ. հունվար 1-ից 1904 թ. հոկտեմբեր 1-ը]։
1904 թ. № 1—6, էջ 1—131 [1904 թ. հոկտեմբ. 1-ից 1905 թ. հունվ. 1-ը]։
1905 թ. № 7—25, էջ 133—592 [1905 թ. հունվ. 1-ից 1905 թ. հոկտ. 1-ը]։

«Մեր նպատակը» խմբագրականում հետևյալն է ասված այս երկշաբաթաթերթի նպատակների մասին. «...Մեր թերթի նպատակն է, որ տա ժողովրդին դյուրամատչելի ձևով այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ամեն մեկին իր առողջությունը պահպանելու համար։ Նա պիտի արծարծի ժողովրդի բոլոր խավերի մեջ գիտության մշակված ու անհերքելի դարձած ճշմարտությունները առողջապահության և բժշկականության վերաբերյալ։ Նա ձգտելու է ներշնչել ժողովրդին լուրջ հայացքներ արդի առողջապահական պահանջների մասին և այդպիսով զարթեցնել նրա մեջ ինքնապաշտպանության փրկարար գաղափարը։

Քանի որ անհատական առողջապահությունը սերտ կապված է հասարակական առողջապահության հետ, մեր թերթը կզբաղվի նույնպես և այս ճյուղի վերաբերյալ խնդիրներով»։

«Առողջապահիկ թերթ»-ին աշխատակցել են. բժիշկներ՝ Ա. Աղասարյան, Ա. Բաբայան, Ա. Բուդաղյան, Գ. Գեորգբեկյան, Հ. Գարանֆիլյան, Ջալյան, Ա. Ջարգարյան, Վ. Թորգոմյան, Վ. Վարդանյան, Ն. Տաղավարյան, Փաշայան-խան և ուրիշները։

1903 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, № 1, ԷՋ 1—24

508 Արծրունի, Վ. Մեր նպատակը։ [Հանդեսի նպատակների մասին]. էջ 3—7
509 Բաբայան, Ա. Ողջույն «Առողջապահիկ թերթին». էջ 8—9
510 Բուդաղյան, Ա. Ի՞նչ պիտի պահանջել «Առողջապահիկ»-ից. էջ 10—13
511 Նավասարդյան, Թ. Առողջապահական թերթի անհրաժեշտությունը. էջ 13—14
512 Տաղավարյան, Ն. Օդը և լույսը առողջապահիկ դերն. էջ 14—17
513 Փաշայան խան: Ցրտառություն և մարմնի ամրապնդումն. էջ 17—18
514 Գարանֆիլյան, Հ. Ստամոքսի առողջապահությունից. էջ 19—21
515 Արծրունի, Վ. Ինչպե՞ս պետք է չափել մարմնի տաքությունը. էջ 21—22
516 Հայտարարություններ. էջ 23—24

1903 *

517 Արծ. Վ. Առողջապահության նշանակությունը. № 2, էջ 26—27

518 Վ. Ա. Մայրը և հիվանդ երեխան. № 2, էջ 33—35, № 3, էջ 52—54, № 5, էջ 101—106

519 Տոք. Խորասանճյան էֆ. [Մահախոսական]. № 2, էջ 37—41

520 Արծ. Վ. Ի՞նչպես է կազմված մարդու մարմինը. № 2, էջ 41—44, № 3, էջ 56—60, № 4, էջ 77—81, № 5, էջ 125—127, № 7, էջ 153—158

521 Մամուլը «Առողջապահիկ»-ի մասին. № 3, էջ 68—70

522 Բաբայան, Ա. Տնային բժշկության մասին. № 4, էջ 85—86, № 5, էջ 117—118

523 Շիրինյան, Ա. Ընտանի կենդանիների առողջապահությունը. № 4, էջ 89—93

524 Կռիվ արբեցողության դեմ։ [Առաջնորդող]. № 5, էջ 98—100

1904

525 Դավրյան: Հղի կնոջ առողջապահությունից. № 7, էջ 151—153

526 Լեո: Հայ բժիշկներ. № 14, էջ 306—309, № 15, էջ 328—331

527 Աղասարյան, Ս. Վաղաժամ ամուսնության առթիվ. № 14, էջ 310—313

528 Կովկասյան հանքային ջրերը։ [Առաջնորդող]. № 16, էջ 352—354

529. Մի անմիտ բժշկություն։ [Առաջնորդող]. № 19, էջ 424—427

530 Տեր-Դանիելյան, Գ. «Ջոփ փչելը» և մեր ժողովուրդը. № 19, էջ 427—430

531 Դև թե՞ հիվանդություն։ [Առաջնորդող]. № 21, էջ 472—476

532 Վ. Ա. Համայնական կռիվ խոլերայի դեմ. № 22, էջ 504—506

533 Մեր քաղաքները։ [Առաջնորդող]. № 23, էջ 528—530

534 Մելիք-Շահնազարյան, Կ. Տնային բժշկությունը Ղարաբաղում. № 23, էջ 537—538, № 4, էջ 98—99

535 Ղահրամանյան, Մ. Բժիշկների կարիքը մեր գյուղում. № 1, էջ 4—8

536 Վ. Ա. Դր. Ն. Տաղավարյան։ [40-ամյա գործունեութ. առթիվ]. № 1, էջ 11—14

537 Բանվորի առողջապահությունը։ [Առաջնորդող]. № 2, էջ 25—28, № 3, էջ 49—55

538 Առfo. Բռնի սպանությունների և դիպվածական մահացումների վիճակագրությունը Երևանի նահանգում 1902 թվին. № 3, էջ 52—55

539 Խոլերան տարածվում է։ [Առաջնորդող]. № 4, էջ 73—75

540 Բանվորի առողջապահությունը Բաքվում. № 5, էջ 105—108

1905

541 Բժ. Գ. Կանկանյան: [Մահվան առթիվ]. № 7, էջ 157—158

542 Շինծու սրբատեղիներ։ [Առաջնորդող]. № 8, էջ 177—180

543 Ամբոխային ոճրագործություն։ [Առաջնորդող]. № 11, էջ 233—236

544 Վ. Ա. Քթի, բկի և ականջի առողջապահությունը։ [Սկիզբը № 9—10]. № 12, էջ 277—280

545 Բուդուղյան, Ա. Ֆիզիքական դաստիարակության մասին. № 13, էջ 301—304

546 Մանկաբարձական օգնություն գյուղում։ [Առաջնորդող]. № 15, էջ 345—349

547 Առողջապահության դասեր մեր դպրոցներում։ [Առաջնորդող]. № 16, էջ 371—373

548 Բաբայան, Ա. Եկեղեցական առողջապահություն. № 16, էջ 373—376

549 Մկրտումյան, Գ. Բժշկապետ Մ. Հ. Առըստամյան. № 16, էջ 383—387

550 Զեմստվոն և բժշկական օգնությունը գյուղում։ [Առաջնորդող]. № 17, էջ 393—396

551 Վ. Ա. Բժիշկը և հասարակությունը. № 17, էջ 404—407, № 18, էջ 420—432

552 Վ. Ա. Կովկասի հանքային ջրերի մասին. № 17, էջ 411—413

553 Վ. Ա. Թոքախտ. № 19—20, էջ 443—447

554 Փաշայան-խան: Դպրոցական առողջապահություն. № 19—20, էջ 456—459

555—56 Գյուղական բժշկություն. № 21, էջ 507—509

* Մնացած համարների հոդվածները արվում են համառոտ նկարագրությամբ։

557 Առողջապահության դասավանդման մասին։ [Առաջնորդող]. № 22, էջ 513—516

558 Առողջապահության և հիվանդախնամության ուսուցման ծրագրի մասին։ [Առաջնորդող]. № 23, էջ 537—541

559 Աղասարյան, Ա. Սովից առաջացած հիվանդությունները. № 23, էջ 541—544

560 Դպրոցական առողջապահության մասին։ [Առաջնորդող] .№ 24, էջ 562—564

561 Վ. Ա. Երիկամները կամ պլոճիկները. № 24, էջ 567—573

562 Միճանի կարևոր առողջապահիկ կանոններ դպրոցների համար։ [Առաջնորդող]. № 25, էջ 585—588

563 Աղասարյան, Ա. Որովայնատիֆ. № 25, էջ 588—592

ԲԱՄԲԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ:

Հանդես վեցամսյա։ Ս. Պետերբուրգ, Պուշկինյան տպ. 1903—1904. էջ 255, 217. (20×29 սմ)։ Բաժանորդագինը 2 գրքինը 4 ռուբ.։

— *Հրատարակիչ՝ Ա. Մելիքյան։*

— *Խմբագիր՝ Ն. Ադոնց։*

Ա. Գիրք, 1903, էջ I—VII, 1—255+նկար 14 թ.

Բ. գիրք, 1904, էջ I—VII, 1—217+նկար 8 թ.

Банбер гракамутян ев арвести.— Вестник литературы и искусства. 6-месячн. журнал. СПб. 1903—1904

Ա. ԳԻՐՔ, 1903, ԷՋ VII, 1—255

564 Ադոնց, Ն. [Գեղարվեստի մասին. անվերնագիր]. էջ I—VII

565 Արփիարյան, Ա. Կարմիր ժամուց։ [Վեպ]. էջ 1—62

566 Փափազյան, Վ. Դատավորը։ [Պատմվածք]. էջ 62—79

567 Զարդարյան Ռ. Սև հավը կանչեց։ [Պատմվածք]. էջ 80—102

568 Բերգե, Հ. Նախագարունը։ Թարգմ. գերմ. Ա. Տեր-Պողոսյանի։ [Պատմվածք]. էջ 103—112

569 Գնել: Լճակին զամբիկը։ [Պատմվածք]. էջ 112—121

570 Ռենիե, Հ. դը. Հերմագորի պատմությունը։ [Պատմվածք. Թարգմ.]. էջ 121—127

571 Ռենիե, Հ. դը. Անսպասելի բաժակ։ [Պատմվածք]. էջ 127—130

572 Ա. Ն. Հալածված ուրվականը։ [Բանաստեղծութ.]. էջ 130

573 Թումանյան, Հովհ. Պանդուխտ եմ քույրիկ։ [Բանաստեղծութ.]. էջ 131

574 Թեքեյան, Վ. Հնչակներ։— 1. Հրաժեշտ։— 2. Մտածում։— 3. Պատրանքներ։— 4. Միամիտ քերթվածներ։ [Բանաստեղծութ.]. էջ 133—136

575 Կյուրճյան, Մ. Վայրկյաններ ու վանկեր։— Դալկուհին— Իրիկուն—Հոգիս ի ծով։— Հուշերդ։ — Գիշեր։—Պատուհանին քերթվածը։—Գթություն։ [Բանաստեղծութ.]. էջ 137—142

576 Եարճանյան, Հ. Հոգևարքին ջահերը։—1. Աղոթք։— 2. Չարչարանքին երազը։— 3. Թաղում։ — 4. Գթություն։— 5. Ծարավ։ [Բանաստեղծութ.]. էջ 143—147

577 Բաքիյանց, Ս. Մայիսյան գիշեր։ [Բանաստեղծութ.]. էջ 148

578 Աթաբեկյան, Լ. «..Մայր տանջանքը երկունքի մեջ ծնավ միտքը զորավոր...»։ [Բանաստեղծութ.]. էջ 148

579 Ալբեր, Սամեն: Տեսիլ։— Երեկոյան։—Կլեոպատրա։ [Բանաստեղծութ. Թարգմ.]. էջ 149—151

580 Ադոնց, Ն. Գրական նշմարներ։— Դեկադանս և սիմբոլիզմ. էջ 153—174

580ա **, Արևմտյան հայոց արդի գրականությունը. էջ 174—207, գիրք Բ. էջ 155—189

581 Կուսիկյան, Ա. Իրավունք և բարոյականություն. էջ 207—214

581ա Ադոնց, Ն. Հայոց եկեղեցու 1600-ամյակի նախօրեին. էջ 214—224

ՊԱՏՄԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

582 Պատասխանի շրջաբերական թղթույն Լևոնի ԺԳ. քահանայապետին Հռոմայեցոց. էջ 224—230

582ա Ս. Նազարյանի նամակները։— 1. Իմ ազնիվ բարեկամ. (Մոսկվա, 19 հունիսի 1868 թ.)։— 2. Ազնիվ բարեկամ Կ. Եզյանի։ (Մոսկվա, հուլիսի, 1868 թ.)։— 3. Իմ ազնիվ եղբայր Ազգով և Քրիստոսով։ (Մոսկվա, սեպտ. 12, 1868 թ.)։— 4. Մեծապատիվ բարեկամ։ (Թիֆլիս, Նոյեմբ. 23, 1869 թ.)։— 5. Իմ խոհական բարեկամ։ (Թիֆլիս, 22 փետրվ. 1870 թ.)։— 6. Իմ պատվական բարեկամ։ (Մոսկվա, 22 փետրվ. 1876 թ.)։— 7. Ազնիվ հայ-

րենակից եղբայր։ (Մոսկվա, 6 մարտի, 1876 թ.)։ — 8. Քրիստոս հարյավ ի մեռելոց, աղնիվ բարեկամ։ (Մոսկվա, 6 մարտի, 1876 թ.)։— 9. Մեծապատիվ բարեկամ։ (Մոսկվա, 26 սեպտ. 1876 թ.). էջ 231—246

583 Պատկերներ և քանդակներ։ [Կցված նկարների բացատրություններ]. էջ 247—255

Բ. ԳԻՐՔ, 1904, ԷՋ VII, 1—220

584 Շանթ, Լ. Ես-ի մարդը։ Դրամա 5 արարով. էջ 1—48

584ա Առանձար: Տասը տարի ետքը։ Հայ գրողի մը հիշատակներեն. էջ 59—82

585 Փափազյան, Վ. Արդար, թե մեղավոր։ [Պատմվածք]. էջ 82—91

586 Օտյան, Ե. Համբարձում աղա։ [Պատմվածք]. էջ 91—107

586ա Իսահակյան, Ա. «Ի՞նչ ես գազազում...»։ —«Մենակ մանկության օրերն են անուշ...»— «... Սերն է անկումը մեր աստվածության...»։ [Բանաստեղծութ.]. էջ 107—109

587 Հովհաննիսյան, Հ. Լուսավորչի կանթեղը։ —«... Դարեր անցուցինք մենք տառապանքով...»։ [Բանաստեղծութ.]. էջ 113—114

587ա Նարենյան, Ա. Հողաւորքին ջահերը։— 1. Հողիս։— 2. Արյուն։ [Բանաստեղծութ.]. էջ 115—116

588 Անոփյան, Ո. Աշնանային խոհեր։— Հոգ չէ, ընկերներ։ [Բանաստեղծութ.]. էջ 118—119.

588ա Թեքեյան, Վ. Աշնան իրիկուն։— Խոստովանանք։—Գարուն։—Հեթանոս սեր։ [Բանաստեղծութ.]. էջ 120—123

589 Մալեզյան, Վ. Անհավատը։ [Բանաստեղծութ.]. էջ 124

589ա Կյուրճյան, Մ. Երկվորյակները։ [Բանաստեղծութ.]. էջ 125

590 Համբարձումյան, Ն. «Ու կյանքն ու սըրտեր...»։ «Կայծակն ինձ նետ...»։ [Բանաստեղծութ.]. էջ 127

590ա Թումանյան, Հով. «Աղջի՛կ, երնեկ ալ լինեմ...»։ [Բանաստեղծութ.]. էջ 128

591 Ադոնց, Ն. Գրական նշմարներ։— Լեզվական, ուղղագրական. էջ 129—155

591ա [Աղբալյան, Ն.]։ Երգ ու վերքից հետո։ [Ա. Իսահակյանի «Բանաստեղծություններ» Բաքու, 1903. 136 էջ. բանաստեղծութ.]. էջ 189—198

592 Մուրեյ, Գ. Մի հայ փորագրիչ— Եդգար Շահին. էջ 199—204

593 Նալբանդյան, Մ. [Կայպակ]. էջ 205—217

594 Պատկերներ և քանդակ։ [Իլլյուստրացիաների բացատրություններ]. էջ 218—220

ԳՈՐԾ: Պաշտոնական, գրական, գիտական և առևտրական շաբաթաթերթ։ Թավրիզ, տպ. Թեմական, 1903. 8 էջ, (28×38սմ).

— Հրատ. Հայոց առաջնորդարանի.

— Խմբագիր՝ Եղիշե ծ. վարդապ. Մուրադյան։

Горц. Дело. Еженедельная, официальная, литературная научная и торговая газета. Тавриз. 1903.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ: Երկշաբթաթերթ։ Սոց. դեմ. Հնչակյան կուսակցության օրգան։ Բոստոն, 1903—1905. Նյու-Յորք, 1906—1912։ Պրովիդենս, 1913—1917. Բրավիդենս, 1917—1922, Նյու-Յորք, 1923—1957. տպ. «Երիտ. Հայաստան», 4 էջ, (60×48 սմ). գինը 5 սենթ.

— Խմբագիր՝ Ս. Սապուհ—Գուլյան, հետո՝ Ե. Սաֆո, . Սիրվարդ և ուրիշներ.

Еритасард Айастан.— Молодая Армения. Двухнедельник. Орган с.-д. партии. «Гнчак». Бостон—Нью-Иорк, 1903—1957

«Երիտասարդ Հայաստան»-ը 1906—1912 թվերին եղել է շաբաթաթերթ, 1923—1980 թվերին կոչվել է «Քաղաքական, տնտեսական և ընկերային» թերթ։

Խմբագրական կազմը նույնպես փոփոխվել է։

Ստորև դնում ենք մեկ համարի բովանդակությունը։

1956 ՓԵՏՐՎԱՐ 17, № 77

595 Արևելցի, Մ. Կործանվող Թուրքիան։ [Հոդված]. էջ 1

596 Շահեն, Մ. Խորհրդային Հայաստանի իրական պատկերը. էջ 1

597 Սիրվարդ: Թերացողներու ուշադրության։ [Թերթին բաժանորդագրվելու և բաժնեգինը վճարելու մասին]. էջ 1

598 Լինզըն: [Խմբագրական Աբրահամ Լինկոլնի մասին]. էջ 2

599 Վարդանանք: [Վարդանանց տոնի առթիվ]. էջ 2

600 Ավարայրի դյուցազնամարտը։ [«Էջմիածին» ժռնալից]. էջ 2

601 Վազգեն Ա. կաթողիկոս. Սովետական Հայաստան 1955-ին. էջ 2

602 Հ. Բ. Ը. Միության հիսնամյա հոբելյանը... էջ 3

603 Սմբատ Բուրատ: Զեյթունի վրեժը։ Պատմական վեպ։ [Բերթոն]. էջ 4

604 Լրատու: Հայտարարություններ. էջ 4

ԺՈՂՈՎՈՒՐԴ: Ամսաթերթ քննադատական։ Կահիրե, տպ. «Արաքս», ապա «Արարատ», 1903—1904. 16 էջ, 18 սմ. բաժնեգինը 5 ֆր.

Жоховурд. Народ. Журнал. Каир, 1903—1904

Տեր և տնօրեն՝ Ա. Պալյան։

1903 № 1—12, էջ 1—208

1904 № 1—22, էջ 1—322

1903 թվի հունվարի № 1-ի առաջին էջի վրա տպագրված է՝ «Ժողովուրդ»—ժողովրդին։

«Ժողովրդին» ուղղությունը

1. Անձերով չզբաղիլ։

2. Գաղափարներն ուսումնասիրել։

3. Համերաշխաբար գործել։

«Ժողովուրդ»-ին ազատությունը» խմբագրականում հետևյալն է ասված այդ պարբերականի նպատակների մասին. «...Անիկա մեկ կողմեն կփափափակի իղձերուն թարգմանն ըլլալ եգիպտակարնակ ազգայնոց այն ինքնագիտակ, ծանրախոհ, հարգալի և հետևաբար հարգելի մեծամասնության որ բարեկարգ պայքարին խույս չտար որ կասկածելի է փողահարություններն չվըրդովեր, որ իր հայրենակիցը կսիրե Հայությունը բարձրացնելու համար և Հայությունը կսիրե հայրենակիցը ազնվացնելու համար։

«Ժողովուրդ» այդ ազնիվ և բարեմտությամբ միշտ խարվելու հակամիտ դասակարգին հետ պիտի ինքն ըլլա, միշտ իրարու թիկունք ըլլալով, միշտ իրարու մենտորություն ընելով։ Ու մյուս կողմեն պիտի ճգնի—միշտ իր ընթերցողներուն աջակցությամբ — հանրային գործերու մեջ մտնել և հանրային բնույթ ունեցող արարքի մը, եղելության մը օգտաշատությունը կամ վնասակարությունը ի վեր հանել։ ... Մեր ամսաթերթին էջերը բաց պիտի ըլլան այն ամեն հայրենակցի առաջև որ կբաղձա հաղորդակցել հայության հետ։ Այս ամսաթերթի խմբագիրը շարունակ կրկնել է, որ իր թերթը անկուսակցական է, ինքը միայն ազգասեր է։ Ինչպես ցույց են տալիս ներքևում նկարագրված մեկ տարվա համարները, «Ժողովուրդ»-ը եղել է անբովանդակ, ընթացիկ լուրերով, ասեկոսներով լի մի պարբերական, ավելի լրագիր է քան ամսագիր։ Մենք տվել ենք միայն մեկ տարվա բովանդակությունը։

1903 ՀՈՒՆՎԱՐ, № 1, ԷՋ 1—16

604ա Խ. «Ժողովուրդին» ազատությունը. էջ 2—8

604բ «Երկու խոսք» [Հանդեսի մասին]. էջ 9—12

604գ Ազգային: [Կահիրե. Ալեքսանդրիա. լուրեր]. էջ 12—16

1903 ՓԵՏՐՎԱՐ, № 2, ԷՋ 17—32

605 Խ. «Երևելի հայ»-ը և հայությունը [Խորհրդածություններ]. էջ 17—20

606 Թափառաշրջիկը: [Պատմվածք]. էջ 21—24

607 Ս. Օ. «Ժողովուրդին» առթիվ. էջ 25—26

608 Ազգային. [Լուրեր]. էջ 27—28

609 Քաղաքական: [Տեսություն]. էջ 29—30

1903 ՄԱՐՏ, № 3, ԷՋ 33—48

610 Լ'Արմենի և Օրմանյան։ [Խմբագրական]. էջ 33—39

611 Քելլոկ. Պտուղը եփել պետք է. [Առողջապահական]. էջ 40—42

612 Կորկոտյան, Ն. Կոչ մեր գեղեցիկ սեռին։ [Աղքատներին օգնելու, խնամելու մասին], էջ 42—46

613 Ազգային: [Լուրեր.] էջ 47—48

1903 ԱՊՐԻԼ, № 4, ԷՋ 49—64

614 Ա. Պ. Քիչեն՝ շատ։ [Բարեգործության մասին]. էջ 49—52

615 Կորկոտյան, Ն. Նախագիծ հայ կիներու գործատան մը. էջ 52—54

616 Լ'Արմենի: [Տեսություն]. էջ 54—56

617 Ազգային: [Լուրեր.] էջ 62—64

1903 ՄԱՅԻՍ, № 5, ԷՋ 65—84

618 Ա. Պ. Կորկոտյան առաջարկը։ [Կանանց գործատան մասին]. էջ 65—68

619 Ա. Պ. *Մեր անուշիկը.* էջ 76—79

620 Վոլբեր: *Կրոնական անթույլատվություն հանդեպ բնական և մարդկային իրավանց.* էջ 79—82

1903 ՀՈՒՆԻՍ, № 6, ԷՋ 85—100

621 Կորկոտյան, Ն. *Ազգային տոն մ'ունենանք.* էջ 85—88

622 Ա. Պ. *Կղերը.* էջ 89—91

623 Ս. Օ *Եգիպտահայ հոամեականները,* էջ 93—96

1903 ՀՈՒԼԻՍ, № 7, ԷՋ 101—116

624 Ա. Պ. *Ազրիլ գիտնանք։ [Դպրոցների, լուսավորության մասին].* էջ 101—106

625 Եզիկեյան, Ս. Վ. *Գործունյա և ձեռներեց ինքնաճանաչություն.* էջ 106—109, № 8 էջ 120—123

1903 ՕԳՈՍՏՈՍ, № 8, ԷՋ 117—132

626 Գալստյանը: *[Կահիրեի դպրոցի մասին].* էջ 117—120

627 Լևոն, Ժ. Գ. *[Հռոմի պապի մասին].* էջ 126—128

1903 ՍԵՊՏԵՄԲԵՐ, № 9, ԷՋ 132—152

628 Եկեղեցական *կալվածները։ [Ռուսական կառավարության կողմից գրավելու առթիվ].* էջ 132—137

629 Լրատու: *[Կովկասյան լուրեր]* էջ 138—139

630 Ս. Օ. *Ձայն բազմաց, ձայն աստուծո։ [Ա. Արփիարյանի վրա կատարված մահափորձի մասին].* 140—145

631 Թորսյան, Օ. *Տպավորություններ Եգիպտահայ մամուլեն.* էջ 146—149

1903 ՀՈԿՏԵՄԲԵՐ, № 10, ԷՋ 153—170

632 Դարձյալ *եկեղեցապատկան կալվածները.* էջ 153—161

633 Լրատու: *Կովկասյան լուրեր.* էջ 161—165

1903 ՆՈՅԵՄԲԵՐ, № 11, ԷՋ 171—188

634 Ա. Պ. *Կյանքի պայքարը.* էջ 171—173

635 Աճաշ: *Բազմաչարչար հայ եկեղեցին.* էջ 175—176

636 Ազգային։ *[Լուրեր].* էջ 186—188

636ա Պատենե *ուրացի։ [Ռուսական ցարի].* էջ 177—181, № 12, էջ 197—199

1903 ԴԵԿՏԵՄԲԵՐ, № 12, ԷՋ 189—208

637 Առաջին *տարին։ [«Ժողովրդի»].* էջ 193—197

638 Կովկասյան *լուրեր.* էջ 200—203

639 Մեղու: *Բողոքեւ [Գրադարան—լսարանի մասին].* էջ 204—206

640 Այլ *և այլք։ [Լուրեր].* էջ 207—208

ԼՐԱԲԵՐ: *[Լրագիր]։ Ալեքսանդրիա, 1903.*
— Տեր և տնօրեն՝ Գրիգոր Սաֆարյան։

Лрабер. Вестник. Газета. Александрия, 1903

1901 թվին լույս է տեսել միքանի համար—խմորատիպ։

ՀԱՅԱԹԵՐԹ: *(Եռօրյա լրագիր)։ Վառնա-Ռուշչուկ, 1903—1904. տպ. Գ. Մաղմանյան.*
— Խմբագիր՝ Տ. Ճգնավորյան. ապա՝ Տ. Էլմասյան.

Айатерт. Армянская газета. Трехдневная газета. Варна—Рущук, 1903—1904

ՁԻԹԵՆԻ: *Պատկերազարդ կիրակնօրյա թերթ մանկանց։ Ռուշչուկ, տպ. Սթ. Ի. Բոկլեֆ, 1903. Սոֆիա, տպ. Մալգիև 1904. 4 էջ (24×16 սմ)։ Բաժանորդագինը 3 ֆր.*
Տեր և տնօրեն՝ Հակոբ Շահվելետյան։

Дзитени. Оливковое дерево. Детский журнал. Рущук, София. 1903—1904

1903 № 1—52, էջ 1—208
1904 № 1—52, էջ 1—208

1903 թվի № 1-ում հետևյալն է ասված «Ձիթենի»-ի մասին. «Նոր տարվան հետ «Ձիթենի» անունով պատկերազարդ կիրակնօրյա նոր թերթի մը հրատարակությունը ձեռնարկելու համարձակություն ունեցած ենք՝ հայ մանկտիներուն բարոյական և հոգեկան կրթության մեծ ու կարևոր գործույն մեջ համեստ ծառայություն մը մատուցած ըլլալու քաղցր հուսով ու տենչովն։

Այս շաբաթաթերթը կրոնական-բարոյական նյութերով լի է։ Խմբագրությունը հենց սկզբից գրում է, որ «մեր ջանքը եղավ միշտ Ձիթենիի պարունակությունը բարոյալից խրատներով, թե-

լագրություններով, պատմություններով ընթերցասեր տղոց հետաքրքրական ընելու [№ 1, էջ 3]։

1903, № 1, ԷՋ 1—4

641 Նվեր մը հայ զարմին։ [Բանաստեղծութ.]. էջ 2 *

642 Շահվելետյան, Հ. Խմբագրական ազդարարություն «Զիթենիս»-ի. էջ 3—4

643 Հակոբ Շահվելետ Երեցս «Զիթենիս» կիրակնօրյա թերթ մանկանց. էջ 1—4

1903 ՀՈՒՆՎԱՐ 11, № 2, ԷՋ 5—8 **

644 Իրարու ծառայել. էջ 5—7

645 Մեղքը պատվել. էջ 7—8

ՊԱՐՏԵԶ: *Շաբաթական հանդես։ Գրական, գիտական և մանկավարժական։ Ալեքսանդրիա, տպ. Ասքանազյան, 1903—1904. 16 էջ (27×20 սմ)։ Բաժանորդագինը 60 ղահեկան։*

— Խմբագիր-տնօրեն՝ Միհրան Ասքանազ։

Партез. Сад. Детский журнал. Александрия, 1903—1904

1903 № 1—9, էջ 1—160

1904 № 10—49, էջ 161—764

1903 թվի նոյեմբերի 1-ի «Ինչո՞ւ «Պարտեզ»-ը խմբագրականում ասված է, որ ««Պարտեզ»-ի խմբագիր տնօրենը, որ անտիական հասակեն ի վեր ազգային մանկավույն կրթության գործին նվիրված կյանք մը տարած է, խմբագրական ասպարեզ կիջնի, ձեռնտու ըլլալու փափագով հայ ծնողներու, ուսուցչուհիներու և ուսուցիչներու իրենց կրթական գործին մեջ և ամեն հայ միտքերու իրենց վերասլացման մեջ»։

«Պարտեզ»-ում տպագրվել են հետևյալ բաժինների նյութեր՝ ա) գրական, բ) մանկավարժական, գ) գիտական։

Գրական նյութերի մեծ մասը կրոնա-բարոյախոսական բնույթ ունեն, կան նաև թարգմանություններ։ Գիտական և մանկավարժական նյութերի մեծ մասը նույնպես՝ խրատական-բարոյախոսական են։ Նյութերի մեծ մասը աղքատիկ բովանդակություն ունեն։ Ստորև դնում ենք մեկ համարի նկարագրությունը։

1903 ՆՈՅԵՄԲԵՐ 1, № 1, ԷՋ 1—16

646 Մ. Ա. Ինչո՞ւ «Պարտեզ»-ը։ [Պարբերականի հրատ. մասին]. էջ 1—5

Քրոնիկ:

647 Մ. Ա. Ոսկեզար և Բազրատունի. էջ 5—7

648 Սաղկեփունչ: Մայրս. (հոր մը նամակը իր տղուն). էջ 7—9

Թերթոն «Պարտեզ»-ի։

649—50 Տոտե, Ա. Տարասկոնցի թարթարենը. էջ 9—10

651 Մ. Ա. Ընտանեկան և բարոյական խոսակցություն. էջ 10—11

652 Բառագրնույկ. էջ 12

Կեցցե ծիծաղ:

653 Ջվարճալի տեսարան մը Կ. Պոլսո Եոփ Գուլեի ազգ. հիվանդանոցին մեջ. (1880). էջ 12—13

Մանկապարտեզ.

651 Մ. Ա. Ընտանեկան և բարոյական խոսակցություն. էջ 13—14

655 Խաղեր ակումբի համար. էջ 15

Բժիշկին ծանոթություններ:

656 Ինչպես խմելու է կաթը. էջ 16

Սֆինքս:

657 Հանելուկներ. էջ 16

ՍՈՑԱԼԻՍՏ: *Օրգան Սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության։* Le socialiste. *Ժնև, Կազմակերպության տպարան, 1903—1906. 64 էջ, (20×13 սմ). գինը 30 սանտիմ։*

— Խմբագրություն չի նշված։

Социалист. Журнал. Орган Социал-демократической рабочей армянской организации. Женева, 1903—1906

«Սոցիալիստ»-ը եղել է Սոցիալ-դեմոկրատ հայ կազմակերպության (սպեցիֆիկների) օրգանը։ Ինչպես երևում է ներքևում նկարագրված համարների նյութերից «Սոցիալիստ»-ը սկզբում հրատարակվել է ամիսը մեկ երկու անգամ, իսկ 1906 թվից՝ իբրև ամսագիր։ «Սոցիալիստ»-ը տեսական հոդվածների հետ տպագրել է նաև ընթացիկ հարցերին նվիրված նյութեր։

* Չեն թվակալված, մենք ենք թվակալել։

** Մյուս համարների նյութերը նույնպես նման աղքատ բովանդակություն ունեն։

Հայկական ժուռնալներ

1905 թ. հունիսի 25-ից [№ 7] փոխվել է այս պարբերականի ծավալը, լույս է տեսել լրագրի ծավալով (46×30 սմ)։

Ներքևում դնում ենք միքանի համարների նկարագրությունը։

1905 ՀՈՒՆԻՍ (12 ՀՈՒՆԻՍ) № 7, ԷՋ 1—4

658 Իմքնապաշտպանությունը: [Հայ-թյուրքական ընդհարումների մասին։ Խմբագրական]. էջ 1

659 Բոլոր երկրների պրոլետարներին։ [Կենտկոմի հանձնարարությամբ «Սոցիալիստ»-ի խմբագրութ. նորից հայ-թյուրքական ընդհարումների մասին]. էջ 1

660 Մեր լիբերալները ինքնակալության ոտների տակ։ [Անստորագիր]. էջ 1—2

661 Լեռ: Ջարդերն Անդրկովկասում. էջ 2, № 9, էջ 2—3

662 Սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը։ [Դաշնակցականների դեմ]. էջ 2—3

663 Սոցիալիզմը և հայ պրոլետարիատը. էջ 3—4

664 Հայ բանվորը և նրան շրջապատող աննպաստ պայմանները. էջ 4

665 Բանվորական շարժում։ [Լուրեր, ինֆորմացիա բան. շարժման մասին]. էջ 4

1905 ՕԳՈՍՏՈՍ 22 (9), № 9, ԷՋ 1—6

666 Կապիտալիստների միլիցիան։ [Բաքվում]. էջ 1

667 Հայ պատգամավորությունը Դաշկովի մոտ։ [Եկեղեցական կալվածների գրավման առթիվ]. էջ 1—2

668 Դպրոցները: [Հայկական]. էջ 2—3

669 Ջարդերի քաղաքականությունը. էջ 3—4

670 Ամեն տեղ նույնը։ [Դաշնակները Բուլղարիայում]. էջ 4

671 Դարձյալ անհաջող։ [Հնչակյանների մասին]. էջ 4

672 Հանքանանների 16-րդ միջազգային համագումարը։ [Բելգիայում]. էջ 5

673 Սոցիալիստական պրոպագանդը և դաշնակցությունը. էջ 6

1905 ՍԵՊՏԵՄԲԵՐ 14 (1), № 10, ԷՋ 1—6

674 Միապետական ցույց։ [Դաշնակների մասին]. էջ 1

675 Ի՞նչ անել։ [Անդրկովկասի բանվ. շարժման մասին]. էջ 1—2

676 Բանվորական շարժումը Ֆրանսիայում. էջ 2—5

677 Նսալեմ: Ցույցի դեմ ցույց։ [Նորից եկեղեցական կալվածների առթիվ]. էջ 2—3

678 Հ. Հ. Դաշնակցության կովկասյան գործունեության նախագիծը. էջ 3—4

679 Անիշխանականությունը սոց. դեմոկրատիայի դիմակի տակ. էջ 3—4

680 Կոտորածները Անդրկովկասում։ [Հայ-թյուրքական ընդհարումներ]. էջ 6

1905 ՀՈԿՏԵՄԲԵՐ 14 (1), № 11 ԷՋ 1—6

681 Թաթար-հայկական հարաբերությունները։ [Խմբագրական]. էջ 1—2

682 Գրավական բայց ո՞ւմ համար։ [Հայ-թյուրքական ընդհարումների մասին]. էջ 2—3

683 Ի զեն։ [Հնչակյանների թռուցիկի մասին]. էջ 3

684 Նարեկ: Բաքվի վերջին դեպքերը։ [Հայ-թյուրքական ընդհարումներ]. էջ 3

685 Մարդկային սպանդանոց Թիֆլիսում։ [Հայ-թյուրքական ընդհարումներ]. էջ 4—5

686 Հետադիմական քայլեր։ [Դաշնակցության մասին]. էջ 6

687 Դաշնակցությունը և վաշխառուները. էջ 6

1905 ՀՈԿՏԵՄԲԵՐ 30 (17), № 12, ԷՋ 1—4

688 Գերմանական սոցիալ-դեմոկրատիան։ [Խմբագրական]. էջ 1

689 Կազմակերպության ձևը։ [Մենշևիկների և բոլշևիկների տարաձայնութ. մասին] էջ 1—3

690 Սոցիալիզմը և հայ պրոլետարիատը. էջ 3

691 Բուրժուազիայի կռիվը աշխատանքի բորսաների դեմ։ [Ֆրանսիա]. էջ 3—4

1905 ՆՈՅԵՄԲԵՐ 14 (1), № 13, ԷՋ 1—6

692 Ռուսիայի ընդհանուր գործադուլը։ [Խմբագրական]. էջ 1

693 Կաուցկի, Կ. Ազգային հարցը Ռուսաստանում. էջ 1—3

694 Al. R. Կազմակերպական սխտեմ։ [Սոց.

դեմ. տարբեր հոսանքների]. էջ 3—4, № 14, էջ 3, № 15, էջ 2—3

695 Շալոնի կուգրին։ [Ֆրանսիա]. էջ 3—4

696 Ռուսաստանի հեղափոխական ազդեցությունը Եվրոպայում. էջ 5

697 Հայնոյանը համոզիչ չէ։ [Դաշնակների դեմ]. էջ 6

698 Նամակներ։ [Շուշուց]. էջ 6

1905 ՆՈՅԵՄԲԵՐ 30 (17), № 14, ԷՋ 1—4

699 Մանմետական սոցիալ-դեմոկրատիան։ [Խմբագրական]. էջ 1

700 Հեղափոխության համար։ [Ռուսաստանում]. էջ 1—2

701 17 Հոկտեմբերի։ [Մանիֆեստի մասին]. էջ 2

702 Հեղափոխական կոալիցիա ռեակցիայի դեմ։ [Բաքվում]. էջ 3

703 Ցարի մանիֆեստը և նրա հետևանքները Բաքվում. էջ 3—4

1905 ԴԵԿՏԵՄԲԵՐ, № 15, ԷՋ 1—64

704 Միությունների ազատությունը։ [Խմբագրական]. էջ 1

705 Բանվորական սինդիկատը. էջ 1—2

706 Դարձյալ թաթար-հայկական հարաբերությունները. էջ 3—4

707 Խարեբա նացիոնալիզմը։ [Բոլոր երկրների նացիոնալիստների տակտիկայի մասին]. էջ 4

1906 ՀՈՒՆՎԱՐ 22 (9), № 18—19, ԷՋ 1—64

708 Խմբագրություն։ Ինը հունվարի։ [Արյունոտ կիրակիի մասին]. էջ 1—2

709 Դ. Տ. Ղ. Սոցիալիզմ և հայրենիք։ [Հերվեյի գաղափարը հայրենիքի և սոցիալիզմի հարաբերության մասին։ Ժորեսի հերքում և այլն]. էջ 3—26

710-11 B. F. Bold. Բուրժուազիան և պառլամենտարիզմը. էջ 27—40

712 Բանվոր։ Գործատիրոջ տան պատվիրանները. էջ 41—42

713 Լատիշ Սոցիալ-դեմոկրատ բանվորական կուսակցության 2-րդ համագումարի որոշումները։ [Ազգային սոց. դեմ. կազմակերպությունների մասին։— Զինված ապստամբության մասին։— Ընդհանուր գործադուլի մասին։— Եկեղեցիներում ցույցեր անելու մասին։— Խնդրագրերի (պետիցիա) մասին։— Գյուղերի ագիտացիայի մասին։— Սոցիալիստ հեղափոխականների մասին։— Լիբերալների մասին]. էջ 43—54

714 Միջազգային Սոցիալիստական բյուրոյի կոչը. [Արյունոտ կիրակիի առթիվ]. էջ 54—58

715 Ամերիկայի հայ բանվորներին։ «Սոցիալիստ»-ի խմբագրությունից։ [Ասված է. «Միացե՛ք հայ բանվորներ, միացե՛ք սինդիկատների մեջ, սոցիալիստական կազմակերպության մեջ»]. էջ 59—63

716 Ազդ։ [Հայտնվում է, որ խմբագրությունը որոշել է «Սոցիալիստ»-ում տպագրել «Միայն սոցիալիստական թեորիային և շարժման վերաբերող ուսումնասիրություններ և հոդվածներ]. էջ 64

1906 ԱՊՐԻԼ 11 (մարտ 29), № 20, ԷՋ 1—64

717 Կենտրոնական Կոմիտեի կոչը։ «Պետական Դուման»։ [Սոց. դեմ. բանվ. հայ կազմակերպութ. կենտր. կոմիտեն կոչ է անում չմասնակցել]. էջ 1—2

718 Al. R. Սոցիալիզմը և հայ պրոլետարիատը։ [Սկիզբը՝ «Սոցիալիստ» № 12]. էջ 23—28

719 Անտիմիլիտարիզմը Ֆրանսիայում. էջ 29—38

720 Նորեկ։ Գծեր Բաքվի բանվորների կյանքից. էջ 39—51

721 Նուխու դրությունը։ [Դաշնակցականների արարքների մասին]. էջ 52—56

722 Պատերազմական դրությունը Նուխում։ [Դաշնակներն են հայտարարել]. էջ 57

723 Բողոք դաշնակցության դեմ։ [Ռ. Ս. Դ. Բ. պարտիայի գանձակի կազմակերպությունից]. էջ 58—59

724 Պ. Տեղեկատու [Ինֆորմացիա]. էջ 60—64

1906 ՀՈՒՆԻՍ, № 21, ԷՋ 1—64

725 «Սոցիալիստ»-ի խմբագրության կողմից։ [Դադարեցնելու մասին]. էջ 1—2

726 Ղ. Դուման և հեղափոխությունը. էջ 3—12

727 Մ. Ի. Գործադուլը և ֆրանսիական սինդիկալիզմը. էջ 13—22

728 Նորեկ։ Պրոլետարիատի նոր շարքերը և սոցիալ-դեմոկրատիան. էջ 23—27

729 «Բունդ»-ի VIII խորհրդաժողովը. էջ 28—34

730 Օնանես։ «Դաշնակցական» միապետությունը. էջ 55—59

ՎԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆ: *Շաբաթաթերթ։ Ռուսչուկ [Բուլղարիա], 1903—1904. 4 էջ (44×30 սմ)։ Բաժանորդագինը 10 ֆրանկ.*

— Отговорник Степан Г. Степанян.

Верацнутюн. Возрождение. Еженедельник. Рущук, 1903—1904

1903 № 1—29, էջ 1—4 յուրաքանչյուր №-ը։

1904 № 30—52, էջ 1—4 յուրաքանչյուր №-ը։

1903 թվի հունիսի 14-ի «Վերածնության» խմբագրականում հետևյալն է ասված այս շաբաթաթերթի նպատակների մասին. «Նա [թերթը] հետևվող է այն գաղափարների նա ջատագով է այն սկզբունքների, նա ձգտող է այն նպատակների, որոնք տասնեհինգ տարուց ի վեր քարոզել և տարածվել են Հնչակյան մամուլի մեջ...»։

Ինչպես ցույց է տալիս այս շաբաթաթերթի նյութերի նկարագրությունը, ավելի ընթացիկ քաղաքական հարցերով է զբաղվել այդ շաբաթաթերթը, տպագրել է քաղաքական առաջնորդողներ և տեսություններ։ Թղթակցություններ՝ արտասահմանից, Թյուրքիայից, Իրանից ու Կովկասից, քաղաքական լուրեր և այլն։

1903 ՀՈՒՆԻՍ 14, № 1, ԷՋ 1—4

731 «Վերածնություն»: [*Շաբաթաթերթի հրատ. մասին*]. էջ 1

732 Դիմաքսյան, Խ. *Մեր ընթերցողներուն*, էջ 2

733 Տաշիր, Ս. *Մի հզոր ձայն։* [«Armenia und Europa»- *թերթի մասին*]. էջ 2—3

734 Պերճ, Ն. *Երախտագիտություն։* [*Դեպի հայ հասարակական գործիչները*]. էջ 3—4

735 Ազատություն *ու տնտեսական էվոլուցիան։* [*Թարգմ. ֆրանս.*]. էջ 2

736 Անլուր *խաչագողություն։* [*Արտատպ. «Երիտ. Հայաստանից», դաշնակների մասին*]. էջ 4

737 Ս. *Արևմտյան նամականի։* [*Մակեդոնական հարցի մասին*]. էջ 4

1903*

738 Կայյան, Ս. *Նոր Ռայստագի ընտրությունները։* [*Բեռլինից*]. № 2, էջ 1—3

* *Մյուս համարները նկարագրված են համառոտ*

739 Կայյան, Ս. *Բաց նամակ խմբագրության։* [*Շաբաթաթերթի մասին*]. № 4, էջ 2—3

740 Կայյան, Ս. *Ռուս իշխանության անամոթությունը։* [*Թղթակցութ. Բեռլինից հայոց եկեղեցիների ու դպրոցական կալվածների գրավման մասին*]. № 8, էջ 1—2, № 9, էջ 2—3

741 Կայյան, Ս. *«Բազմավեպ»-ը իրավարանի դերում*, № 12, էջ 2—3, № 13, էջ 2—3, № 4, էջ 2—3

742 Կայյան Ս. *Գերմանիայի սոցիալ-դեմոկրատ կուսակցության կոնգրեսը*. № 15, էջ 3

1904

743 Սոցիալ-դեմոկրատիա: [*ՌՍԴԲՊ մասին*]. № 34, էջ 1—2

744 Կայյան, Ս. *Դաշնակցականները Կովկասում.* № 35, էջ 2—3, № 36, էջ 2—3, № 37, էջ 2—3, № 39, էջ 1—2, № 40, էջ 1—2 № 47, էջ 2, № 48, էջ 2, № 49 էջ 2—3

745 Ռուսահայ *նացիոնալիզմ։* [*Խմբագրական*]. № 36, էջ 1—2

746 Գորկի, Մ. *Գարնանային մեղեդիներ։* [*Թարգմ. Ահրիման*]. № 36, էջ 3, № 37, էջ 3

747 Ա.-յանց, Հ. *Գաղափարի ազդեցությունը.* № 43, էջ 1—2, № 44, էջ 1—2

748 Մեկ էջ *Ռ. Ս. Դ. Բ. Կ. ծրագրից։* [*Խմբագրական*]. № 48, էջ 1—2

ՓԵԹԱԿ: *Ազգային, գրական, քաղաքական և զավեշտական շաբաթաթերթ։ Աղեքսանդրիա, 1903, տպ. «Արտեմիս», 16 էջ, (20×28 սմ).*

— *Խմբագիր՝ Ս.(իմեոն) Չեամլեկճյան.*

Ս.(երոբ) Թյուֆենկճյան.

Петак. Улей. Еженедельная национ. литературная, политическая и сатирическая газета. Александрия, 1903

1904

ԱԶԴԱՐԱՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ: [*Շաբաթաթերթ*]։ *Թավրիզ, տպ. Թեմական, 1904. 4 էջ, (26×36սմ).*

— *Կարգադրությամբ Ատրպատականի Առաջնորդարանի։*

4333 Եղիկյան, Գ. Քաղաքական կուսակցությունները։ [Իտտի-հատա- դաշնակցական համաձայնութ. մասին]. № 15, էջ 170—171, № 16, էջ 183—184, № 17, էջ 195—196, № 18, էջ 207—208

4334 Լիբկնեխտ, Վ. Սոսյալիստներուն նպատակը։ [Թարգմ.]. № 16, էջ 184, № 17, էջ 197—198, № 19—20, էջ 224—225, № 21—22, էջ 255—256

4335 Նեգրի, Ա. Աշխատավորները։ [Բանաստեղծութ. թարգմ.]. № 16, էջ 185

4336 Մանիտ, Ա. Քյուրտիստանի վիճակը. № 17, էջ 199—200, № 19—20, էջ 222—223, № 21—22, էջ 240—241, № 23, էջ 262—263

4337 Զարեն, Պլպուլ: Աղբյուրը։ [Բանաստեղծութ.]. № 18, էջ 207

4338 Օզանյան, Գ. Գրական նոր շավիղ. № 19—20, էջ 221—222

4339 Հրազդան, Հ. Հայկական իրականության շուրջը. № 21—22, էջ 243

4340 Միրքօ, Օ. Տխմար հովիվներ. [Պիես]. № 19—20, էջ 231—232

4341 Օսմանյան երեսփոխանական ժողով. № 21—22, էջ 238—239

4342 Արծրունի: Գործավորական կյանք. № 21—22, էջ 239—240

4343 Ծրագիր սօսիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության։ (Տաճկաստանի համար). № 21—22, էջ 241—243

4344 Հրազդան, Հ. Հայ կուսակցությունները. № 21—22, էջ 243—245, № 23, էջ 257—259

1911

4345 Արամյան, Հ. Մ. Փորձության բովեն։ [«Կոհակ»-ի Բ. տարվա մասին]. № 49, էջ 2—3

4346 Օզանյան, Գագիկ: Նահատակին գերեզմանը. № 49, էջ 5

1912

4347 Կուրղինյան, Շ. Արծվի սերը։ [Բանաստեղծութ.]. № 1, էջ 2

4348 Սատուրն: Ռուս-պարսկական արյունահեղ կիռվները Թավրիզի մեջ. № 2, էջ 17

4349 Հ. Հ. Դաշնակցության ծրագիրը։ [Քննադատական]. № 2, էջ 26—27, № 4, էջ 39, № 5, էջ 51, № 6, էջ 62—63, № 7, էջ 75—76

4350 Օզանյան, Գ. Վիեննայի Մխիթարյանները. № 4, էջ 38

4351 Միրիմանյան, Գ. Հայոց աղջիկները։ [Բանաստեղծութ.]. № 6, էջ 66

4352 Վերհարն, Է. Սերը։ [Բանաստեղծութ.]. № 12, էջ 122—123

4353 Օզանյան, Գ. Բրոֆ. Գրիգոր Խալաթյան. № 13, էջ 134—135, № 14, էջ 146—147, № 15, էջ 158, № 16, էջ 170

4354 Գերպերյան, Կ. Զեյթուն. № 32, էջ 356—358, № 33, էջ 369—370, № 34, էջ 381, № 35, էջ 393, № 36, էջ 405—406 և շարունակութ.

4355 Ս.-Դ. Հնչակյան կուսակցությունը և բուլեթարիատը. № 34, էջ 377—378

4356 Լերմոնտով, Մ. Մեռնող սուսերամարտիկը։ [Բանաստեղծութ.]. № 43, էջ 486

4357 Կաուցկի, Կ. Ապստամբ Հիսուսը։ [Թարգմ.]. № 46, էջ 524, № 47, էջ 535, № 48, էջ 548

4358 Արամյան, Հ. Հայաստանի ռեֆորմները. № 48, էջ 545—546, № 49, էջ 558

4359 Գապամաճյան, Գ. Հովհաննես Թումանյան. № 48, էջ 549. 1913. № 1, էջ 7—8, № 2, էջ 16—17

1913

4360 Իթթիհատ — դաշնակցական դաշտնի համաձայնության պարտականությունը և անոր հետևանքները. № 2, էջ 18, № 3, էջ 27, № 4, էջ 41—42, № 5, էջ 54

ՀԱՅ: *Ամսաթերթ։ Բոստոն, 1909—1910. 8, 16 էջ, (29×21 սմ). Բաժանորդագինը 50 սենթ։*

— Խմբագիր՝ Գարեգին Մանուկյան։

Ай. Армянин. Журнал. Бостон, 1909—1910.

1909 № 1—3

1910 № 9—10

1909 թվի հոկտեմբերի 15-ի № 1-ում տպագրված «Նպատակը» խմբագրականում հետևյալն է ասված այս պարբերականի մասին. ««Հայ»-ը թերթ մը չէ բառին սովորական առումով։ Ավելի՝ հիշատակարան մէ ուր պիտի արձանագրվեն Հայ ընկերության մեջ ծնունդ առնող Բարեգործական շարժումները, և մասնավորապես Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության գործունեությունները»։ Այնուհետև ասվում է, որ թերթը «ո՛չ քաղաքական, ոչ կուսակցական» հրատարակություն է, որի նպատակն է՝ «...Ծառայել բարեգործության դատին, արծարծել անձնվիրության ոգին, քարոզել ազգաշինության մեծությունը»։

1909 ՀՈԿՏԵՄԲԵՐ 15, № 1, ԷՋ 1—16

4361 Նպատակը։ [Ամսագրի հրատ. մասին]. էջ 1—2

4362 Քյուրճյան, Մ. Հայը։ [Պատմական] էջ 2—5

4363 Քյուրճյան, Մ. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը. էջ 5—11

4364 Մանուկյան, Գ. Կիլիկիո որբերը և Կիպրոսի ազգ. որբանոցին պահեստի դրամը. էջ 11—12

4365 Հ. Բ. Ը. Միություն: Անդամք Պոսդոնի մասնաճյուղին։ [Ցուցակ]. էջ 12—13

4366 Լրաքաղ. էջ 14—16

ՀԱՅ ԱՇԽԱՐՀ: *Գրական, գիտական և հասարակական պարբերաթերթ։ Կ. Պոլիս, տպ. Քեշիշյանի, 1909—1914. 16 էջ, (39×21 սմ).*

— Արտոնատեր և պատասխանատու տնօրեն՝ Վահան Զեյթունցյան։

Ай Ашхар: Армянский мир. Литературно-научная и общественная периодика. Константинополь, 1909—1914.

ՀԱՌԱՋ: *Օրգան Կարնո հայ երիտասարդական Միության։ Հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական թերթ։ Կարին, տպ. «Հառաջ», 1909—1914. 4 էջ, 4 էջ, (48×33 սմ)։*

— Արտոնատեր՝ Ա. Ատրունի.

— Պատասխանատու տնօրեն՝ Վահե Թողանյան, ապա՝ Շավարշ Միսաքյան։

Арач. Вперед. Орган Союза армянской молодежи Эрзерума. Эрзерум, 1909—1914.

Դաշնակցության թերթն է եղել. 1914 թվին կոչվել է «Երկիր», ապա «Ալիք»։

ՀՈՐԻԶՈՆ: *Գրական, հասարակական, տնտեսական և քաղաքական օրաթերթ։ Թիֆլիս,* тип. «Шрома» *ընկ., ապա «Աշխատավորի», 1909—1918, 4 էջ, (56×41 սմ)։ Բաժանորդագինը 8 ռ.*

— Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Նուրալյան, ապա Ս. Սահակյան։

Горизон. Горизонт. Литературно-общественная, экономическая и политическая газета. Тифлис, 1909—1918.

Орган партии, «Дашнакцутюн».

Դաշնակցության կենտրոնական օրգանն է եղել Կովկասում։

ՁԱՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ: *Շաբաթաթերթ։ Կրոնական հանդես։ Կ. Պոլիս. 1909.*

— Խմբագիր-տնօրեն՝ Աշուղ Շահնազար և Արամ Գույումճյան

Дзайн Кртутян. Голос просвещения. Религиозный журнал. Константинополь, 1909.

ՄԵՐ ՏԱՐԵՑՈՒՅՑԸ: *Կ. Պոլիս, Հրատ. տպ. «Շանթ» 1909—1913. 136 էջ, (20×14 սմ). գինը 5 ղրշ.*

Мер Тарецуйц. Наш календарь. Ежегодник. Константинополь, 1909—1913.

1913 Դ. ՏԱՐԻ, ԷՋ 1—136

4367—68 Օրացույց *1913 թ. էջ 1—8*

4369 Գարսամյան, Մ. *Հրեշը։ [Արձակ բանաստեղծութ.]. էջ 9—10*

4370 Գալեմքարյան, Զ. *Խոնջենք։ [Բանաստեղծութ.]. էջ 11*

4371 Ֆլամարիոն, Գ. *Աստղագարդ երազներ։ Ուղևորություն՝ անհունին մեջ. էջ 13*

4372 Մանմուտ *էքրեմ։ [Թյուրք գրող]. էջ 33*

4373 Սողիկյան, Կ. Մ. *Մահվան։ [Բանաստեղծութ.]. էջ 43—45*

4374 Արսլանյան, Վ. *Փոթորկոտ պահեր—Գյուղի առավոտ։ [Արձակ բանաստեղծութ.]. էջ 46—47*

4375 Սիրունի, Հ. Ճ. *Արձան։ [Բանաստեղծութ.]. էջ 54*

4376 Հակոբյան, Ժ. *Նամակ։ [Բանաստեղծութ.]. էջ 55—57*

4377 Մելիք-Թեվեքել: *Տավրոսի բարձրալեռներեն։ [Նկարագրական]. էջ 58—72*

4378 Դեպի *Աֆրիկեյի խորքերը։ [Աշխարհագրակ.]. էջ 97—117*

4379 Վանեվանյան, Գ. *Կիթառի վրա։ [Բանաստեղծութ.]. էջ 118—119*

4380 Բենիամին Գամեր: *Տվայտանք։ (Նորավեպ). էջ 120—122*

4381 Տեվեկյան, Հ. Հ. *Աշնան երգեր։ [Բանաստեղծութ.]. էջ 128—130*

ՆՈՐ ՀՈՍԱՆՔ: *Հասարակական, քաղաքական, տնտեսական և գրական շաբաթաթերթ։ Կ. Պոլիս, տպ. «Շանթ», 1909. 8 էջ, (30×23 սմ)։ Բաժանորդագինը 30 ղրշ.*

— Արտոնատեր՝ Գ. Կոզիկյան.

— Խմբագիրներ՝ Գ. Կոզիկյան և Հրանտ Արծվիկ (Նազարյան)։

Нор-Осанк. Новое течение. Общественно-литературный еженедельник. Константинополь, 1909.

Հնչակյան պարտիայի շաբաթաթերթն է եղել «Նոր հոսանք»-ը։

1909 ՄԱՅԻՍ 2, № 3, ԷՋ 17—24

4382 Նապեմ: *Համաշխարհային բանվորական տոնը։ [Մայիս 1-ը]. էջ 17—19*

4383 Ժան Ժորես: *[Հայկական ջարդերի մասին]. էջ 19*

4384 Կոտղինյան, Շ. *Բանվորների երգերից։ [Բանաստեղծութ.]. էջ 19*

4385 Խ. Ս. *Բանվորական օրենսդրություն. էջ 19—21*

4386 Կլֆա: *Մայիս 1-ը Պուլկարիո մեջ. էջ 21—22*

4387 Բանվորական *գործողություն մը Սքյուպի մեջ. էջ 22—23*

4387ա Գործավորական *կյանք. էջ 23*

4388 Նիզակ: *Կոչ բոլոր գործավորներուն. էջ 24*

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ: *Շաբաթաթերթ։ Ֆրեզնո 1909.*

— Խմբագիր-տնօրեն՝ Հայկ Էկինյան։

Нор-Серунд. Новое Поколение. Еженедельник. Фрезно, 1909.

ՆՈՐ-ՍԵՐՈՒՆԴ-ՔԱՂԱՔԱՑԻ: *Շաբաթաթերթ։ Ֆրեզնո, 1909.*

— Խմբագիր-տնօրեն՝ Հայկ Էկինյան։

Нор-Серунд—Кахакаци. Новое-Покаление—Гражданин. Фрезно, 1909.

Այս թերթը միացումն է «Նոր-Սերունդ-Քաղաքացի» թերթերի։

ՈՄԱՆՑ ՏԱՐԵՑՈՒՅՑԸ *Հայ զավեշտական տարվա։ Ալեքսանդրիա, 1909. 16 էջ, (13×12 սմ).*

— *Հեղինակ՝ Երոտ [Երվանդ Օտյան]։*

Воманц Тарецуйц. Календарь некоторых. Ежегодник. Сатирикон. Александрия, 1909.

ՊԱՐՏԻԶԱԿ: *Հրատարակչություն Պարտիզակի Բարձրագույն վարժարանի ընթացավարտից ընկերակցության։ Կ. Պոլիս, տպ. Օ. Արզուման, 1909—1912. 48 էջ, (27×18 սմ)։ Համարը 100 փարա։*

— *Պատասխանատու-վարիչ՝ Տ. Ս. Մարտիկյան։*

— *Խմբագրապետ՝ Հովսեփ Տեր-Ստեփանյան։*

Партизак. Издание общества выпускников высших школ. Константинополь, 1909—1912.

Այս պարբերականը լույս է տեսել վեց ամիսը մեկ համար՝ ապրիլ և հոկտեմբեր ամիսներին։

Ինչպես երևում է մեկ համարի բովանդակությունից [1912 ապրիլ № 6] — «Պարտիզակ»-ը հիմնականում լուսաբանել է Պարտիզակի բարձրագույն վարժարանի կյանքը և առնչակից հարցեր։ 1912 թ. ապրիլի № 6-ում ասված է, որ «Պարտիզակ»-ը անպարտիական ուղղություն ունի, որ ուսուցիչները «...երբեք չպիտի մշակեն կուսակցական ոգի՝ դպրոցին մեջ»։

1912 ԱՊՐԻԼ, № 6, ԷՋ 1—48

4389 Կուսակցությունները *դպրոցեն ներս։ [Խմբագրական]. էջ 1—2*

4390 Աղեկ *ունակություններ։ [Խմբագրական]. էջ 2—3*

4391 Անհատական *ազդեցություն։ [Խմբագրական]. էջ 3—4*

4392 Սըր *Էտվին Փիրս։ [Իրավագետ-փաստաբան]. էջ 4—5*

4393 Ճենեզյան, Հ. Ա. *Վերհիշումներ և տպավորություններ. էջ 6—8*

4394 Միսալյան, Գ. Հ. *Մեր դերը հանդեպ հայ ժողովրդին. էջ 8—14*

4395 Մալխասյան, Հ. Մ. *Պարտիզակի բարձրագույն վարժարանի ամերիկաբնակ սաները. էջ 14—17*

4396 Մինասյան, Ս. *Փինո Քիասա։ [Հայասեր]. էջ 17—18*

4397 Արապանյան, Գ. Բ. *Եղերերգ։ [Բանաստեղծութ.]. էջ 19*

4398 Պնտիկյան, Ա. *Միքայել Ս. Գաբրիելյան։ [Ճրջանավարտ]. էջ 21—25*

4399 Անրիգանյան, Ա. Հ. *Բանտային կյանքի վերհիշումներ. էջ 26—29*

4400 Կիսամյա *ընդհանուր ժողով Պարտիզակի վարժարանի ընթացավարտից ընկերակցության. էջ 29—34*

4401 Երկանյան, Հ. Գ. *Բերանի առողջապահություն. էջ 34—37*

4402 Կարմիրյան, Հ. Գ. *Պարտիզակի բարձրագույն վարժարանի սանոց Միությունը Նյու-Յորքի մեջ. էջ 37—39*

4403 Բարձրագույն *վարժարանի ներքին կյանքը. էջ 39—42*

4404 Նոթեր *և լուրեր. էջ 42—47*

ՍԱՍՈՒՆ: *Պատկերազարդ ամսաթերթ։ Գրական, բանասիրական, մանկավարժական և քաղաքական։ Կ. Պոլիս, տպ. Օ. Արզուման, 1909. 32 էջ, (23×15 սմ)։*

— *Արտոնատեր՝ Գրիգոր Սյուրմելյան.*

— *Տնօրեն-խմբագիր՝ Տիգրան Սյուրմելյան։*

Сасун. Иллюстрированный литературно-филологический, педагогический и политический журнал. Константинополь, 1909.

Այս ամսաթերթը ունեցել է 1909 թվին միայն երեք համար։ Ինչպես երևում է մեկ համարի նյութերից, կրոնի դասընթացքի կողքին տպագրվել են նաև արևմտահայ անվանի գրողների (Գոլանճյան, Հ. Թլկատինցին, Ռ. Սևակ և այլն) ստեղծագործությունները։

1909 ՄԱՅԻՍ, № 3, ԷՋ 97—128

4405 Թոփճյան, Հ. *Կրոնի էությունը։ [Կրոնի դասընթացք]. էջ 97—100*

4406 Հրայր: *Վրեժին երգը։ [Բանաստեղծութ.]. էջ 115*

4407 Գոլանճյան, Ե. *Հեշտանքի մարգարիտները։ [Բանաստեղծութ.]. էջ 116—117*

4408 Թլկատինցին: *Ո՞ւր փնտրել հայը. էջ 118—122*

4409 Ջեոկյուրյան, Տ. *Միջին դար։ [Բանաստեղծութ.]. էջ 123—124*

4410 Թեվֆիգ *Ֆեքրեթ։ [Թյուրք բանաստեղծ]. էջ 124—126*

4411 Լատանյան, Լ. Զկնորսները։ [Բանաստեղծութ.]. 126—127

4412 Սևակ, Ռ. Հայաստան։ [Բանաստեղծութ.]. էջ 127

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ: Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդյունաբերական անկուսակցական օրաթերթ։ Թիֆլիս, տպ. «Էպոխա», ապա «Կուլտուրա», 1909—1912. 4 էջ, (59×40 սմ).

— Խմբագիր-հրատարակիչ՝ Աս. Երիցյան։

Сурандак. Курьер. Литературно-политическая, общественная и торгово-промышленная беспартийная газета. Тифлис, 1909—1912.

ՏԱՃԱՐ: Ժողովրդային շաբաթաթերթ։ Կրոնական, ազգային, գրական։ Կ. Պոլիս, տպ. Տ. Տողրամաճյան, ապա «Ճանթ». 1909—1915. 16, 24, 40 էջ, (25×17 սմ)։ Բաժանորդագինը 30 ղրուշ.

— Արտոնատեր՝ Հմայակ քահ. Էքսերճյան։

— Տնօրեն-խմբագիր՝ Զարմայր քահ. Կեղյուրյան։

— Վարիչ՝ Ղևոնդ վ. Դուրյան։

Тачар. Храм. Религезно-церковный иллюстрированный еженедельник. Константинополь, 1909—1918.

1909. № 1—3

1910. № 1—36

1911. № 1—52

1912. № 1—46

1913. № 1—41

1914. № 1—19։ Դարձել է երկշաբաթաթերթ։

1915. № 1—24

1916. № 1—24

Ինչպես ցույց է տրված «Տաճար»-ի մեկ համարի նյութերի նկարագրությամբ, այդ պարբերականը եղել է՝ նեղ կրոնական-եկեղեցական հարցերին նվիրված շաբաթաթերթ (1914 թվից երկշաբաթաթերթ)։ Նա ունեցել է հատուկ հրատարակություն՝ «Տաճար մանկանց», որ տարածվել է երեխաների ու պատանիների մեջ։

1914 ՀՈՒՆՎԱՐ, № 1, ԷՋ 1—24

4413 Շնորհակալություն և շնորհավորություն։ [Խմբագրական]. էջ 1—2

4414 Քրիստոնեական մտածումներ։ [Խմբագրական]. էջ 2

4415 Զարմայր քահ. Բեթղեհեմի աստղը։ [Կրոնական]. էջ 3—6

4416 Վահան-Ասլան: Բեթղեհեմ։ [Բանաստեղծութ.]. էջ 6—7

4417 Նիկողոսյան, Հ. Ժողովրդին պարտքը. էջ 7—9

4418 Սինանյան, Կ. Հ. Հիսուսի պատմականությունը. էջ 10—12

4419 Իսպիրյան, Մ. Նախասարդ-հունվար կաղանդ. էջ 13—15

4420 Ամանորի բարեմաղթություններ։ [Թարգմ.]. էջ 15—17

4421 Տիգրան-Երկաթ: Նոր տարի։ [Բանաստեղծութ.]. էջ 17

4422 Ձագիրները կամ Թեոդին սնտուկը։ [Թարգմ.]. էջ 17—20

4423 Գավառի արձագանք։ [Լուրեր]. էջ 20—21

4424 Ազգային կյանք։ [Կրոնական լուրեր]. էջ 21—24

ՏԱՐԵՑՈՒՅՑ ԼԻԼԱ: Ընտանեկան, ընկերական, երգիծական, զավեշտական, ծաղրական և կճուկ։ Կ. Պոլիս, տպ. Հ. Ասատուրյան, 1909. 192 էջ, (19×12 սմ).

— Խմբագիր՝ Վահան Փափազյան։

Тарецуйц Лила. Календарь Лила. Сатирический сборник. Константинополь, 1909.

ՈՒՂԻ: Ամսագիր սոցիալ-դեմոկրատ հայ կազմակերպության։ Բաքու, 1909.

— Խմբագիր՝ Դ. Անանուն.

Уги. Дорога. Ежемесячник соц.-дем. армянской организации. Баку, 1909.

ՈՒՍԱՆՈՂ: Օրգան Եվրոպայի դաշնակցական Ուսանողական Միության։ Ամսագիր։ Փարիզ 1909, (№ 1—2), Ժնև, 1909. (№ 3—4), Փարիզ, 1910. (№ 5), Ժնև, 1911. (№ 6), Կ. Պոլիս, 1912. (№ 7), Ժնև, 1914. (№ 8). 264—300 էջ, (24×16 սմ).

— Գործադիր խմբագրական մարմին։

Усанох. Студент. Журнал, Париж,—Женева, 1909—1914.

ՓՅՈՒՆԻԿ: *Պատկերազարդ հանդես ընկերային, գրական և քաղաքական։ Կհրատարակվի երկուշաբթի և հինգշաբթի օրերը։ Կ. Պոլիս, տպ. Զարեհ, Ն. Պերպերյան, 1909. 16 էջ, (30×23 սմ)։ Բաժանորդագինը 60 ղրուշ։*

— Տնօրեն-խմբագիր՝ Սմբատ Բյուրատ։

Фюник. Феникс. Иллюстрированный, литературно-политическ. журнал. Константинополь, 1909.

«Փյունիկ»-ի հրատարակության առթիվ խմբագրականում ասված է, որ այդ պարբերականի սկիզբը դրվել է 1899 թվին Կահիրեյում, 1900—1901 թվականներին «Փյունիկ»-ը լույս է տեսել Կահիրեյում (կիսամսյա, ապա շաբաթաթերթ), 1909 թվին նորից հրատարակվում է «Փյունիկ»-ը Կ. Պոլսում։ Այնուհետև ասվում է «Փյունիկ»-ի նպատակը նույնը [ինչ որ առաջ] պիտի մնա։ Ըլլալ անկախ, քննադատող օական մը՝ մութի մեջ խեղդված իրավունքներու, արդար դատելու պաշտպանության, լուսավորել հայությունը՝ ընկերային թե քաղաքական կարևոր ու կենսական հարցերու մասին։

Ուղղությունը պիտի ըլլա ինչ որ եղած էր. դիմակազերծ ընել հայրենասիրության, հեղափոխական նվիրականության անունով ռամիկին միամտությունը շահագործող մակաբույծներ ու խաչագողներ, որոնք դժբախտաբար, ազատության հռչակումեն ի վեր մանավանդ, զգալի կդարձնեն իրենց խափանարար գոյությունը։ Քննադատել երկրին քաղաքական ընդհանուր կացության պատասխանատու մարմիններու գործունեությունը, ընթացքը, քննադատել ազգ. պատրիարքարան կոչված սա հինացած շենքեն ներս, ազգին ու գավառներուն անունով գործված շահատակությունները, մատնանիշ ընել վերքը, ձեռնահասներու հանձնարարել դարմանը...»։

— Ինչպես երևում է «Փյունիկ»-ի ներքևում նկարագրված նյութերից նա զբաղվել է՝ եկեղեցական և եկեղեցականների հարցերով, Երուսաղեմի վանքի պարտքերի հարցով և ընթացիկ «աղգային» վեճերով։

1909 ՄԱՐՏ 2, № 1 ԷՋ 1—16

4425 «Փյունիկ»-ի *հրատարակության առթիվ. էջ 1—2*

4426 Վեղարավոր *հերոսը։ [Ջեյթունի կռիվների ժամանակ]. էջ 2—6*

4427 Հուլիս *11-ը։ [Թյուրքական սահմանադրության մասին]. էջ 6—7*

4428 Ջեյրունցի: *Ջեյթունի պատմությունը. էջ 7—11*

4429 Թղթակցություններ. *էջ 11—13*

4030 Երուսաղեմի *խնդիրը. էջ 13—14*

4431 Լրաքաղ. *էջ 15—16*

1 9 0 9*

4432 Արմեն Ենովք: *Վարագույրը վար։ [Երուսաղեմի վանքի մասին]. № 2, էջ 17—22*

4433 Շանպազյան, *Հ. Գավառները. № 21, էջ 23—24*

4434 Զար, Ն. Ն. *Խորհրդարանեն ներս. էջ 32—38*

4435 Արեգ: *Երուսաղեմին կնճիռը. № 3, էջ 39*

4436 Մեր *վերքերը. № 4, էջ 49—51*

4437 Բյուրատ, Սմբատ: *Երուսաղեմի խնդիրը. № 4, էջ 53—56*

4438 Որբերուն *համար. № 5, էջ 67—68*

ՕՐԱԳԻՐ: *Քաղաքական և գրական օրաթերթ։ Կ. Պոլիս, 1909. 4,6 էջ.*

— Խմբագիրներ՝ Եր. Տեր-Անդրեասյան, Հակոբ Տեր-Հակոբյան, Գառնիկ Թուղլաճյան։

Орагир. Дневник. Политическая и литературная газета. Константинополь, 1909.

1 9 1 0

ԱԶԱՏԱՄԱՐՏ: *Գրական, գեղարվեստական, գիտական շաբաթաթերթ։ Կ. Պոլիս, տպ. Հ. Թիրաքյանի, 1910—1912։*

— Արտոնատեր-հիմնադիր՝ Ռուբեն Զարդարյան։

Азатамарт. Битва за свободу. Литературно-художественный, научный еженедельник. Константинополь, 1910—1912.

Այս շաբաթաթերթը հրատարակվել է իբրև հավելված դաշնակցության «Ազատամարտ» թերթի. 1912 թվին կոչվել է՝ «Բազին»։

* *Մյուս համարները տրվում են համառոտ նկարագրությամբ։*

ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ: *Կրոնական-բարոյական, գրական շաբաթաթերթ։ Խարբերդ, 1910—1914*

— Արտոնատեր՝ Պետրոս Կարապետյան։

Аменун Амар. Для всех. Религезно-моральный, литературный еженедельник. Харберд, 1910—1914.

ԱՇԽԱՏԱՆՔ: *Շաբաթաթերթ գրական, քաղաքական, տնտեսական։ Վան, տպ. Բարսեղյան, 1910—1915. 18 էջ, (26×19 սմ). 4 էջ (40×22 սմ)։*

— Բաժանորդագինը 40 ղրուշ։

— Տնօրեն խմբագիր՝ Իշխան (1912), Հմ. Մանուկյան (1914-ից)։

1910 № 1—8, էջ 1—16

1911 № 1—30, էջ 1—16

Ашхатанк. Труд. Литературно-политический, экономический еженедельник. Ван, 1910—1915.

Դաշնակցական պարտիայի օրգանն է եղել «Աշխատանք»-ը։ 1912 թվից դառել է եռօրյա։

1910 ՆՈՅԵՄԲԵՐ 7, № 1, ԷՋ 1—16

4439 Մեր *նպատակը։ [Շաբաթաթերթի մասին]. էջ 1—6*

4440 Միք. Սար. *Քրդերը. էջ 6—7, № 2, էջ 22—23*

4441 Դարօ: *Փորթուկալի հեղափոխությունը. էջ 15—16*

4442 Օրիոն: *Գրական ակնարկներ. էջ 16—17, № 2, էջ 26—28*

4443 Լուսեր: *[Վանի կուսակցություններից] էջ 17*

1910*

4444 Միրամո: *Մեր դատարանները. էջ 20—22*

4445 Ավազակությունները: *[Առաջնորդող]. № 3, էջ 32—34*

4446 Միրամո: *Մեր քաղաքապետությունը. № 5, էջ 74—77*

4447 Բարունակ: *Կրթական գործը գավառներու մեջ. № 7, էջ 93—95, № 13, էջ 112—114. 1911. № 1, էջ 6—8*

** Մնացած համարների նյութերը տրվում են համառոտ նկարագրությամբ։*

1911

4448 Մեր *ազգային կյանքը 1910—1911 թ. թ. [Առաջնորդող]. № 2, էջ 1—6*

4449 Տեղեկագիր *Վարագա վարժարանի հիսնամյա հոբելյանի. № 3, էջ 10—12, № 5, էջ 11—12*

4450 Դեպի *հետ։ [Թյուրքիայում]. № 6, էջ 1—3*

4451 Մենակ, Ա. *Վանա վիլայեթի վարչական բաժանումը և բնակչությունը. № 6, էջ 3—7*

4452 Կրթական *հարցը։ [Առաջնորդող]. № 7, էջ 1—3*

4453 Մենակ, Ա. *Հայոց Ձորի պատմական-աշխարհագրական նկարագրությունը, բնակչությունն ու ջրերը. № 7, էջ 3—6, № 8, էջ 3—5, № 9, էջ 4—6, № 10, էջ 4—6*

4454 Միրամո: *Վանի թատրոնները. № 7, էջ 11—12, № 8, էջ 5—7*

4455 Սարգիս: *Վասպուրականի Միացյալ կենտրոնական վարժարանը. № 10, էջ 6—7*

4456 Հարստահարությունը. *№ 14, էջ 1—3*

4457 Սայտո: *Կրթական գործը Մոկսում. № 14, էջ 9—11*

4458 Սայտո: *Մոկսա տնտեսական վիճակը հետագիմած ազատությունից հետո. № 18, էջ 10—12, № 23, էջ 8—9*

4459 Բ. *Շատախ։ [Տեղագրական]. № 19, էջ 10—12*

4460 Հ. Մ. Հ. *Օսմանյան պարլամենտը. № 21, էջ 5—7, № 23, էջ 2—3*

4461 Մենակ, Ա. *Գավառի կրթական գործը. № 25, էջ 3—5, № 27, էջ 2—4, № 28, էջ 2—4*

4462 Ուսուցիչ: *Մեր դպրոցների դրությունը. № 26, էջ 5—7*

4463 Մարս: *Մեր դպրոցները. № 29, էջ 5—7*

ԱՇԽԱՏԱՆՔ: *Լրագիր հասարակական, տնտեսական, քաղաքական։ Զմյուռնիա, տպ. Քեշիշյան, 1910—1914. 4 էջ, (52×33 սմ)։*

— Արտոնագիր՝ Մ. Թոքաճյան։

Ашхатанк. Труд. Общественно-экономическая, политическая газета. Измир, 1910—1914.

ԱՊԱԳԱ: *[Թերթ]։ Կ. Պոլիս, 1910. 4 էջ, (52×33 սմ). № 1—20։*

— Արտոնագիր՝ Ն. Զաքարյան։

Апага. Будущее. Газета. Константинополь, 1910.

ԱՐՇԱԼՈՒՅՍ: *Հասարակական, քաղաքական շաբաթաթերթ։ Կահիրե, 1910—1914. 4 էջ, (32×48 սմ)։*

Аршалуйс. Заря. Еженедельник. Каир, 1910.

ԱՐՈՐ: *Ամսագիր հանդես գիտության, գրականության, քաղաքատնտեսության, գեղարվեստի, խաղաղասիրության, արևելագիտության, հայագիտության և կովկասագիտության։ Թիֆլիս, [տպ. չի նշված]. 1910—1912. 176 էջ, (21×14 սմ)։*

Բաժանորդագինը 6 ռ.։

— Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. Առաքելյան։

Арор. Соха. Ежемесячный журнал науки, литературы, политэкономии, художеств, востоковедения, арменоведения, кавказоведения. Тифлис, 1910—1912.

1910 № 1, էջ 1—176. Հավելված՝ Վ. Հյուգո։ Իննսուն երեքը. էջ 6—32

1910 № 2, էջ 1—144. Հավելված՝ Վ. Հյուգո։ Իննսուներեքը. էջ 1—32

1910 № 3, էջ 1—160. Հավելված՝ Վ. Հյուգո։ Իննսուն երեքը. էջ 49—64

1910 № 4, էջ 1—144. Հավելված Վ. Հյուգո։ Իննսուն երեքը. էջ 65—80

1910 № 5, էջ 1—144 . Հավելված՝ Վ. Հյուգո։ Իննսուն երեքը. էջ 81—96

1910 № 6—7, էջ 1—208. Հավելված՝ Վ. Հյուգո։ Իննսուն երեքը. էջ 97—128

1910 № 8—9—10, էջ 1—224. Հավելված՝ Վ. Հյուգո։ Իննսուն երեքը. էջ 129—160

1910 № 11, էջ 1—176

1910 № 12, էջ 1—192

1911 № 1, էջ 1—152

1911 № 2—3, էջ 1—240

1911 № 4, էջ 1—152

1911 № 5—6, էջ 1—200

1911 № 7—8, էջ 1—160

1911 № 9, էջ 1—148

1911 № 10—11, էջ 1—160

1911 № 12, էջ 1—78

1912 № 1, էջ 1—144

1912 № 2, էջ 1—136

1912 № 3—4, էջ 1—144

1912 № 5—6, էջ 1—184

1912 № 7—8, էջ 1—160

1912 № 9—10, էջ 1—148

1912 № 11—12, էջ 1—152

«Արոր»-ի խմբագրականում [1910 № 1, էջ 1—2] հետևյալն է ասված այդ ամսագրի նպատակների մասին. «Վերջին տարիների մեր հուզված, ալեկոծված և հեղափոխական կյանքը շատ սակավ պատեհություն, տրամադրություն և հնարավորություն էր տալիս հայ մտավորականության առանձին ուշադրություն դարձնելու զուտ գրական, գիտական և գեղարվեստական հարցերի վրա, զբաղվել գրականության և գիտության այն ճյուղերով, որոնք անհրաժեշտ են քաղաքակրթվող ժողովրդի, հետևաբար և հայ ժողովրդի կուլտուրական, էվոլյուցիոնական, խաղաղ, մտավոր զարգացման համար։ Չկար մի օրգան, ուր հայ ինտելիգենտը, մանավանդ չեզոք և անկուսակցական ինտելիգենտը, կարողանար իր լուման ձգել հայ մտքի մշակման գանձարանի մեջ։ Այդ պակասը զգալի եղավ մանավանդ «Մուրճ»-ի դադարումից հետո։

...«Արոր»-ը աշխատելու է իր կողմից եև նըպաստելու հայ մտավոր աշխարհի մեծ շենքի կառուցման, գործ դնելով այլ աշխատողների հետ և իր համեստ ուժերը, տալով հայ հասարակության ընթերցանության առողջ սնունդ, նպաստելով նրա մտավոր հորիզոնի ընդլայնման, հայ գրականության և բանասիրության մշակման»։

Չնայած խոսվում է անպարտիականության մասին, բայց «Արոր»-ը փաստորեն հանդիսացել է հայ լիբերալ-բուրժուազիայի ամսագիրը, հայ կադետների օրգանը։

Առաքելյան Համբարձում: *Ծնվել է 1855 թվին Շուշում։ Նախնական կրթությունն ստացել է Շուշու և Թավրիզի հայոց դպրոցներում։ Ավարտել է Բաքվի Ռեալական ուսումնարանը, ապա Պետերբուրգի Ռազումովսկի ակադեմիան։ Եղել է Շուշվա Թեմական ու օրիորդաց դպրոցների տեսուչ։*

Հրապարակախոսական աշխատանքներն սկսել է 1872 թվից, թղթակցելով «Մշակ»-ին։ Աշխատակցել է՝ «Հայկական աշխարհ», «Մեղու Հայաստանի», «Գործ», «Արևելք», «Հայրենիք», «Հանդես Ամսօրյա», «Արարատ», «Новое Обозрение», «Новости», «С. П. б. Ведомости», «Русский Курьер», «Московский Телеграф» *և այլ պարբերականներին։*

Առանձին գրքերով ունի տպագրած մի շարք՝ պատմական, բանասիրական ու թարգմանական

աշխատություններ։ Երկար տարիներ եղել է «Մշակ»-ի խմբագիր։

Նրա գեղարվեստական գործերից են՝ «Ջհուդ Քուչան» վեպը, որի բովանդակությունը պարսկական կյանքից է, որտեղ նկարագրված է Մահմեդ շահ Ղաջարի վայրագությունները և սարսափելի ժամանակաշրջանը։

Այս վեպից բացի Հ. Առաքելյանը գրել է՝ «Եղոյի քոռ բախտը», «Անհաշտ»-ը, «Հեյդար շահ», «Նավակատիք», «Արամի պսակը», «Դու հարուստ ես», «Կաղանդչեք», «Մագեց լույսը» և «Հուսարեր» պատմվածքները։

Այս պատմվածքները և նրա պատմական վեպը չափազանց ծանրաբեռնված են՝ փաստերով, տեղեկություններով և զուրկ են գեղարվեստական արժեքից։

Հ. Առաքելյանը լիբերալ-բուրժուական հրապարակախոս է եղել։

1917 թվին սպանվել է դաշնակցության տեռորով «Մշակ»-ում կատարած մերկացումների համար։

1910 № 1, ԷՋ 1—176

4464 «Arorը»: [*Խմբագրական հանդեսի մասին*]. *էջ 1—3*

4465 Շահրիար: *Բուղդան բեկը։ [Պատմվածք]. էջ 5—23*

4466 Մխիթարյան, Ա. *Հաղթական կամարի մոտ։ [Բանաստեղծութ.]. էջ 24—26*

4467 Արփիարյան, Ա. *Խնդամոլի աղջիկը։* [*Վեպ*]. *էջ 27—44, № 2, էջ 1—15, № 3, էջ 33—50, № 4, էջ 1—20*

4468 Մխիթարյան, Ա. *Երանի՛։ [Բանաստեղծութ.]. էջ 45*

4469 Զոլա, Է. *Արյունը։ [Պատմվածք։ Թարգմ. Կ. Կրասիլնիկյան]. էջ 46—58*

4470 Իբանիես, Բ. *Եվայի ախոռը։ [Պատմվածք]. էջ 60—65*

4471 Սարուխանյան, Ա. *Օսմանյան հայերի ազգային սահմանադրությունը. (1860—1910). էջ 66—84, № 2, էջ 41—59, № 4, էջ 77—83, № 5, էջ 53—66, № 6—7, էջ 100—121, № 8—9—10, էջ 108—136, № 12, էջ 49—68*

4472 Քալանթար, Ա. *Հանդիպումներ Գաբրիել Սունդուկյանի հետ. էջ 85—93, № 2, էջ 68—78*

4473 Մալխասյան, Ստ. *Մի հնչյունին մի գիր. էջ 94—112, № 2, էջ 79—90*

4474 Նազարեթյան, Ա. *Օդը որպես հաղորդակցության միջոց. էջ 113—127*

4475 Արասխանյան, Ա. *Ջեմստվոնների գյուղատնտեսական գործունեությունը. էջ 128—140*

4476 Արզումանյան, Ա. *Ակնարկներ։ [Հայկական ներքին կյանքից]. էջ 140—149, № 2, էջ 122—134, № 3, էջ 135—149, № 4, էջ 104—113*

4477 Կալխաս: *Ռուսական կյանք. էջ 151—155, № 2, էջ 134—138, № 3, էջ 150—155, № 4, էջ 114—119*

4478 Արտասահմանյան *կյանք. էջ 156—163, № 4, էջ 120—128*

4479 Հ. Ա. *Հնագիտական պեղումներ Հայաստանում։— Վրացական ձեռագրեր. էջ 164—168*

4480 Քրոնիկա: [*Գիտական, գրական*]. *էջ 169—172*

1910 № 2, ԷՋ 1—144

4481 Գրեսո, Մ. *Արձանը։ [Պատմվածք։ Թարգմ. Լ. Դանելյան]. էջ 16—24*

4482 Խան-Ազատ, Ռ. *Փաշան։ (Իմ հիշողություններից). էջ 25—39, № 3, էջ 51—58*

4483 Աղամյան, Գ. Հ. *Առ օր. Թ. Սիրանուշ։ [Բանաստեղծութ.]. էջ 40*

4484 Աղամյան, Գ. Հ. *Առ ամենասիրելի քույր իմ Աննա Վասիլյան։ [Բանաստեղծութ.]. էջ 41*

4485 Առաքելյան, Հ. Pax *խաղաղասիրական շարժումն երկրագնդի վրա. էջ 42—66, № 4, էջ 54—64, № 5—6, էջ 166—176, № 8—9—10, էջ 156—182, № 12, էջ 69—91*

4486 Շատ-էլ-արաբ: *Գյուղական մրմունջներ։ [Բանաստեղծութ.]. էջ 67*

4487 Հաուպտ, Լ. *Հայաստանն առաջ և հիմա։ [Թարգմ.]. էջ 91—102, № 3, էջ 98—111, № 4, էջ 74—96*

4488 Նազարեթյան, Ա. *Գիտավոր աստղեր. էջ 112—121*

1910 № 3, ԷՋ 1—160

4489 Տեր-Պողոսյան, Գ. *Հովոցի Եղօն։ [Պատմվածք]. էջ 1—25*

4490 Արմենակի: *(Պատմվածք Մինաս Չերազի). էջ 26—32*

4491 Սամվելյան, Խ. *Եկեղեցական-պետական հարաբերությունները հին Հայաստանում. էջ 59—70, № 4, էջ 65—73, № 6—7, էջ 72—90, № 8—9—10, էջ 137—148*

4492 Նարբեյան, Մ. *Արփիար Արփիարյան։ (Կենսագրական նյութեր)*. էջ 84—96, № 4, էջ 87—94, № 5, էջ66—80

4493 Մեչնիկով, Ի. *Մարդու մարմնի անկատարելությունը*. էջ 113—134

4494 Գրախոսություն: [*«Մխոց» գիտ. ժողովածու Երևան, 1910։— Գրիգոր Մագիստրոսի թղթերը։ Կ. Կոստանյանի 1910*]. էջ 158—160

1910 № 4, էջ 1—144

4495 Բաշինջաղյան, Գ. *Օրիորդի վրեժխնդրությունը։ [Պատմվածք]*. էջ 21—33

4496 Տվեն, Մ. *Հարսնախոսություն հեռախոսով։ [Թարգմ. Մ. Մ.]*. էջ 34—53

1910 № 5, էջ 1—144

4497 Շահրիար: *Տանջվածը։ (Հեղափոխական կյանքից)*. էջ 1—13, № 6—7, էջ 50—61, № 8—9—10, էջ 82—107

4498 Խուրշիդ: *Քեթի խանըմ։ Եղերական վեպ*. էջ 14—36, № 6—7, էջ 24—49, № 8—9—10, էջ 28—71, № 11, էջ 7—44

4499 Ատրուշան: *Սովը։ (Պատկեր)*. էջ 37—42

4500 Բարանցևիչ, Ա. Կ. *Երկու ոգի։ (Նովելլա)։ Թարգմ. Լ. Դանիելյանի*. էջ 43—52

4501 Նազարեթյան, Ա. *Ի՞նչ է ուղղագրությունը։ (Վեպագրության առթիվ)*. էջ 81—105

1910 № 7, էջ 1—208

4502 Բրջին, Ջ. Բ. *Կարա-Օղլու (Հայ տապատակի մը կյանքեն)*. էջ 1—23, № 8—9—10, էջ 11—27, № 11, էջ 45—57, № 12, էջ 33—43

4503 Նամալյան: *Հանելուկը։ (Առակ)*. էջ 62—68

4504 Դորոշևիչ, Վ. *Կասկածը։ (Պալեստինի լեգենդա)*. էջ 91—99

4505 Անդրեև, Լ. *Իմ հուշատետրից*. էջ 122—131

4506 Սալ-Ման: *Պրիստավը։ [Պատմվածք]*. էջ 148—152

4507 Սպասսկի, Ա. *Նա ազատ է։ [Պատմվածք]*. էջ 153—162

4508 Տեռմայեր, Կ. *Նկարչի հիշողություններից*. էջ 163—165

1910 № 8—9—10, էջ 1—224

4509 Րոֆֆոր, Ստ. *Ծիծաղ։ [Պատմվածք]*. էջ 1—10

4510 Սյուտնեռ: *Կարմիր խաչ։ [Պատմվածք]։ Թարգմ.* էջ 183—187

1910 № 11, էջ 1—176

4511 Ատրուշան: *Կարմիր հոսանքը։ (Պատկեր)*. էջ 1—6

4512 Աղամյան, Գ. Հ. *Առ սրտակից բարեկամիս Ա. Ս. (Անտիպ)*. էջ 58

4513 Տեռմայեր, Կ. *Մարդկային հոգին։ [Թարգմ]*. էջ 59—66

4514 *Հ. Ա. Լև Նիկոլայևիչ Տոլստոյ։ [Մահվան առթիվ]*. էջ 67—68

4515 Գիտնականները, *գրողները և գործիչները Լ. Ն. Տոլստոյի մասին*. էջ 69—78

4516 Բուլանժե, Պ. Ա. *(Կազմեց)։ Կոնֆուցիուս (Չինական իմաստուն)։ Խմբագրեց՝ Լ. Ն. Տոլստոյ։ Թարգմ. Սուրխաթյան*. էջ 79—98

4517 Ասացվածքներ *Մահոմեդի, որոնք չեն մտել ղուրանի մեջ։ Ընտրված Լ. Ն. Տոլստոյի ձեռքով*. էջ 99—176

1910 № 12, էջ 1—192

4518 *Հ. Ա. Մաթեոս Իզմիրլյանի հիշատակին*. էջ 1—13

4519 Նարբեյան, Մ. *Ուխտագնացություն մը*. էջ 14—32

4520 Տոլստոյ, Լ. *Պատմվածք*. էջ 44—45

4521 Գրինևսկայա, Ի. *Խոսքի հանճարը։ (Պուշկինի հիշատակին)։ Թարգմ. Լ. Գրիգորյան*. էջ 46—48

1911 ՀՈՒՆՎԱՐ, № 1, էջ 1—152

4522 Գորկի, Մ. *Վալախական լեգենդա։ [Թարգմ. Դ. Նորիկ]*. էջ 2

4523 Շահրիար: *Խիղճը վերածնվեց։ Նորավեպ*. էջ 3—15

4524 Տեր-Հովնանյան, Ա. *Նվագներ։ [Արձակ բանաստեղծութ.]*. էջ 16—19

4525 Աբելյան, Ա. *Երկու թռչուն։ (Պատկեր Շամախու կյանքից)*. էջ 46—54

4526 Մոպասան, Գի դը: *Ննջեցյալը։ [Թարգմ. Հ. Դանիելյան]*. էջ 56—58

4527 Տոլստոյ, Լ. Ն. *Խոստովանություն։ [Թարգմ. Սարուխան]*. էջ 109—114, № 2—3, էջ 53—74, № 4, էջ 25—46

4528 *Հայկական կյանք*. էջ 115—136

1911 ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ, № 2—3, էջ 1—240

4529 Բեռնես, Ռ. «Մթին գիշեր է...» [Բանաստեղծութ. թարգմ. Դ. Նորեկ]. էջ 24

4530 Սկիտալեց: «Անուշ հնչում են...» [Բանաստեղծութ. թարգմ.]. էջ 24—25

4531 Պուշկին, Ա. Ս. Իմ տապանագիրը [Բանաստեղծութ. թարգմ. Ա. Էֆրիկյան]. էջ 32

4532 Ճորտերի ազատագրության հիսնամյակը. (1861—1911). էջ 99—138

4533 Գար.-յան, Ռ. Մարդը, նրա ծագումը և սկզբնական հայրենիքը. էջ 139—150

4534 Ղուլյան, Ա. Լեզուների զարգացումը. էջ 151—176

4535 Հայկական կյանք. էջ 177—190

1911 ԱՊՐԻԼ, № 4, էջ 1—152

4536 Օհանյան, Ս. Օրավարձ [Պատմվածք]. էջ 1—8

4537 Կորոլենկո, Վ. Կայծերը [Թարգմ. Ս. Տ. Արր.]. էջ 9

4538 Գորկի, Մ. Բազեն [Թարգմ. Ա. Տ.-Հովնանյան]. էջ 10—12

4539 Տեր-Մինասյան, Ե. Ս. Էջմիածինը և իր հաստատությունները (Տպարան և Ճեմարան). էջ 78—95

4540 Հայկական կյանք. էջ 96—106

4541 Գևորգյան, Մ. Փառանձեմ (Դրամա 5 գործող.). [Գրախոսութ.]. էջ 147—151

1911 ՄԱՅԻՍ-ՀՈՒՆԻՍ, № 5—6, էջ 1—200

4542 Օհանյան, Ս. Բացիկը [Պատմվածք]. էջ 1—4

4543 Վահանյան, Ս. Հրաժեշտ [Պատմվածք]. էջ 5—6

4544 Կարինե: Մի ժամ [Պատմվածք]. էջ 7—8

4545 Դորոշևիչ, Կ. Մարդկային հիշողությունը [Թարգմ.]. էջ 15—19

4546 Արազյան, Մ. Ջահելն ու ահելը [Բանաստեղծութ.]. էջ 68—70

4547 Մարինոնի, Յ. Սննդադող [Պատմվածք. թարգմ. Լ. Դանիելյան]. էջ 71—74

4548 Գաբրիել քահանա Պատկանյանի ինքնակենսագրությունը. էջ 107—114, № 7—8, էջ 92—105

4549 Մալխազյան, Ա. Կոմս Լև Նիկոլայևիչ Տոլստոյ (Ստեղծագործության խարակտերիստիկայի փորձ). էջ 115—121

4550 Աղասարյան, Ի. Նոր մալտուսյաններ. էջ 140—146

4551 Հայկական կյանք. էջ 156—167

4552 Կալխաս: Ռուսական կյանք [Տեսություն]. էջ 176—182

1911 ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ, № 7—8, էջ 1—160

4553 Բաշինջաղյան, Գ. Ժորժ դը Պարի [Պատմվածք]. էջ 1—10

4554 Սանդել, Մ. Ծնողական սեր [Շվեդական կյանքից. թարգմ. Լ. Դանիելյան]. էջ 24—33

4555 Տոլստոյ, Լ. Ն. Երեք ծերունի [Թարգմ. Ախպեր]. էջ 34—40

4556 Նաբանյան, Մ. Բողոքականության անցյալն ու ներկան մեր մեջ. էջ 106—136

4557 Ե. Դյուցազներգուներ— Հովհաննես Միրզայան Վանանդեցի— Շիրոյան Ղևոնդ քահանա. էջ 137—140

1911 ՍԵՊՏԵՄԲԵՐ, № 9, էջ 1—148

4558 Թումանյան, Վ. Ոճրագործը [Պատմվածք]. էջ 1—5

4559 Ստանյուկովիչ, Կ. «Դուք հարկավոր չեք» [Թարգմ. Կ. Ղազարբեկյան]. էջ 9—19

4560 Ալեյխեմ, Շ. Թեթև ծոմ [Թարգմ. Լ. Դանիելյան]. էջ 20—27

4561 Սկիտալեց: Խաղաղվեց շուրջը [Թարգմ. Դ. Նորեկ]. էջ 31

4562 Թումանյան, Պ. Ղրիմի հայերը. էջ 74—89, № 10—11, էջ 100—111

4563 Ե. Մեր գրողները— Խրիմյան Հայրիկ— Բաղդասար Խաչատուր— Հ. Ղևոնդ Ալիշան— Պեշիկթաշլյան Մկրտիչ— Տեմիրճիպաշյան Եղիա. էջ 90—99

4564 Հայկական կյանք. էջ 109—131

4565 Ռուսական կյանք. էջ 132—135

1911 ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲ., № 1—11, էջ 1—160

4566 Հովհաննիսյան, Ս. Աշնան մեղեդին [Բանաստեղծութ.]. էջ 15

4567 Գրիգորյան, Լ. Մի քիչ լույս [Պատմվածք]. էջ 16—25

4568 Կարինե: *Կույր բախտը։* [Պատմվածք]. էջ 30—34

4569 Բրիէօ, Է. *Գողի օրագիրը։* [Թարգմ.]. էջ 37—45

4570 Արեւյան, Ա. *Նշանվածները։* [Պիես]. էջ 46—80, № 12, էջ 27—43

4571 Հայկական կյանք։— *Ռուսական կյանք։* [Տեսություններ]. էջ 112—146

4572 Ս. *Պոլ Լաֆարգ։* [Մահվան առթիվ]. էջ 157—159

1911 ԴԵԿՏԵՄԲԵՐ, № 12, ԷՋ 1—78

4573 Թումանյան, Վ. *Բարրիկադի վրա։* [Պատմըվածք]. էջ 18—20

4574 Կարինե: *Սերը։* [Պատմվածք]. էջ 21—24

4575 Հայկական կյանք. էջ 66—69

4576 Առաքելյան, Հ. «*Արօրա»-ի երրորդ շրջանի շեմքին*. էջ 75—78

1912 ՀՈՒՆՎԱՐ, № 1, ԷՋ 1—144

4577 Գեղամի: *Ուրվականներ։* [Վեպ]. էջ 1—13

4578 Շահրիար: *Տանջվածները։* [Պատմվածք]. էջ 14—22

4579 Բեջանյան, Մ. *Վերջին թերթը։* [Պատմվածք]. էջ 24—27

4580 Ալեյխեմ, Շ. *Երեխաները։* [Թարգմ. Լ. Դանիելյան]. էջ 19—34

4581 Սիլվա, Կ. *Վրեժ։* [Թարգմ. Հ. Տ. Մ.]. էջ 35—62

1912 ՓԵՏՐՎԱՐ, № 2, ԷՋ 1—136

4882 Գեղամի: *Փաստաբանի մոտ։* [Պատմվածք]. էջ 1—7

4583 Նադսոն, *Մեռավ իմ մուզան։* [Թարգմ. Կ. Կրասիլնիկյան]. էջ 8

4584 Ռոֆֆոր, Ստ. *Ուրիշ ճար չկա։ (Գյուղական կյանքից)*. էջ 9—28

4585 Ալեյխեմ, Շ. *Գերմանացին։* [Պատմվածք։ Թարգմ.]. էջ 30—43

4586 Պո, Էդգար: *Աչքը։* [Պատմվածք։ Թարգմ.]. էջ 44—49

4587 Իվաշևա, Պ. Ա. *Իմ օրը։* [Թարգմ. Վ. Թումանյան]. էջ 51—61

4588 Հայկական կյանք։ [Տեսություն]. էջ 81—104

4589 Ռուսական կյանք։ [Տեսություն]. էջ 120—126

4590 Հ. Ա. *Պիեռ Քիյառ (1864—1912)*. էջ 127—130

1912 ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ, № 3—4, էջ 1—144

4591 Սոլովյան, Հ. *Սավառնող ոգին։* [Պատմըվածք] էջ 1—15

4592 Հայնե, Հ. «*Երազում տեսա...*» [Թարգմ. Դ. Նորիկ]. էջ 15

4593 Կարինե: *Սրբազան անտառ։* [Պատմվածք]. էջ 16—32

4594 Բեջանյան, Մ. *Պոետին։* [Բանաստեղծութ.]. էջ 27

4595 Ռոֆֆոր, Ս. *Ծովի վրա։* [Պատմվածք]. էջ 28—32

4596 Դիմով, Օ. *Տարեդարձ։* [Պատմվածք։ Թարգմ. Ա. Տ-Հովհաննյան]. էջ 33—36

4597 Պոպով, Դ. *Սպիտակ զորապետը։* [Թարգմ. Լ. Գրիգորյան]. էջ 37—38

4598 Բաշինջաղյան, Գ. *Ուսանողներ։ (Պատկեր երեք արարվածով)*. էջ 39—73, № 5—6, էջ 65—93, № 7—8, էջ 59—85

4599 Նադսոն: *Ընկեր վշտատանջ։* [Թարգմ. Կ. Կրասիլնիկյան]. էջ 73

4600 Վեսելովսկի, Յու. *Գերմանական բելետրիստը և հայերը։* [Կուրտ Արամ]. էջ 115—131

4601 Սուրխաթյան: *Ա. Ի. Հերցեն։ (Ծննդյան 100-ամյակի առթիվ)*. էջ 132—140

1912 ՄԱՅԻՍ—ՀՈՒՆԻՍ, № 5—6, ԷՋ 1—184

4602 Հայնե, Հ. «*Ինչո՞ւ, սիրուհիս...*» [Բանաստեղծութ. Թարգմ. Դ. Նորիկ]. էջ 27

4603 Գրիգորյան, Լ. *Է՜յ, արմյաշկա, ուրախ բան...* [Պատմվածք]. էջ 28—36

4604 Տուրգենև, Ի. *Երազ։* [Պատմվածք։ Թարգմ. Փ. Զաքարյան]. էջ 38—58

4605 Զոլա, Է. *Գործադուլ։* [Պատմվածք։ Թարգմ. Սերմնացյան]. էջ 59—64

4606 Գորկի, Մ. *Ծերունին։* [Պատմվածք։ Թարգմ. Ա. Տեր-Հովհաննյան]. էջ 94—98

4607 Հայկական կյանք։ [Տեսություն]. էջ 151—176

1912 ՀՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ, № 7—8, ԷՋ 1—160

4608 Չեխով, Ա. Տիկին NN-ի պատմությունը։ [Թարգմ]. էջ 22—26

4609 Դիմով, Օ. Չար մարդու պատմությունը։ [Թարգմ. Մ. Բեջանյան], էջ 27—43

4610 Նեմիրովիչ-Դանչենկո, Վ. Մեծ սիրտը։ [Թարգմ. Ս. Դավթյան]. էջ 44—58

4611 Դողոխյան, Գ. Նուշիկ։ [Բանաստեղծութ.]. էջ 85

4612 Սպենդիար, Հ. Գեորգ Դոդոխյան. էջ 86—94

1912 ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՀՈԿՏԵՄԲԵՐ, № 9—10, ԷՋ 1—148

4613 Արազյան, Մ. Մենավոր լապտերը։ [Պատմվածք]. էջ 1—10

4614 Նարանյան, Մ. Գթության ոգին։ [Պատմըվածք]. էջ 11—16

4615 Դոդոխյան, Գ. Նվեր Գ. Արծրունու անմահ հիշատակին։ [Բանաստեղծութ.]. էջ 17

4616 Պոտապենկո։ Բախտ։ [Պատմվածք։ Թարգմ. Փ. Զաքարյան]. էջ 18—29

4617 Մանվելյան, Լ. Մաղդա։ Դրամա 5 գործող. էջ 44—46, № 11—12, էջ 94—114

4618 Մետերլինկ, Մ. Երգեր։ [Թարգմ. Գ. Բաբայան]. էջ 67—69

4619 Րոֆֆոր, Ս. Աղբյուր։ [Բանաստեղծութ.]. էջ 80

4620 Բեջանյան, Մ. Աշնան մեղեդին։ [Բանաստեղծութ.]. էջ 95

4621 Վռամ, Շ. Ա. Ակնարկներ հնագույն հայության վրա. էջ 96—107

4622 Անանուն, Դ. «Հայ» բառի բացատրության մի փորձ. էջ 108—117

4623 Քալանթար, Լ. Տանը երազ։ Դրամա 4 գործող։ [Գրախոս-Աղասարյան, Բ]. էջ 118—124

4624 Հայկական կյանք։ [Տեսություն]. էջ 125—147

1912 ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ, № 11—12, ԷՋ 1—152

4625 Արազյան, Մ. Վերջին երազ։ [Պատմվածք]. էջ 1—9

4626 Հայնե, Հ. «Երազիս մեջ լալիս էի...»։ [Բանաստեղծութ. Թարգմ. Դ. Նորիկ]. էջ 24

4627 Չեխով, Ա. Առանց վերնագրի։ [Պատմըվածք։ Թարգմ. Հովառ]. էջ 25—29

4628 Բեջանյան, Մ. Բաժանումը։ [Բանաստեղծութ.]. էջ 29

4629 Արցիբաշև։ Սարսափ։ [Թարգմ. Ա. Բաղդասարյան]. էջ 30—51

4630 Տեկանց, Հ. Կարո՛տ եմ, կարոտ։ [Բանաստեղծութ.]. էջ 52

4631 Էովեյն, Հ. Վանդայի թաղումը։ [Թարգմ. Գ. Բաբուրյան]. էջ 53—57

4632 Ուայլդ, Օ. Վարդն ու սոխակը։ [Թարգմ. Հ. Հարությունյան]. էջ 49—64

4633 Լերմոնտով, Մ. Փախստական։ [Բանաստեղծութ. Թարգմ. Գ. Հայկունի]. էջ 90—93

4634 Դոբրոլյուբով, Դ. Բարոյախոսություն և գիտություն. էջ 115—126

ԱՐՈՐ։ *Ամսաթերթ։ Երզնկա, 1910—1911*

 Арор. Соха. Журнал. Ерзинка, 1910—1911.

ԲՈՒԹԱՆԻԱ։ *Գավառաթերթ ազգային, գրական, քաղաքական, տնտեսական։ Ատա-Բազար, տպ. «Ատրուշան», 1900—1912. 4 էջ (34×22 սմ)։ Բաժնեգինը 12 ղրուշ։*

— Հիմնադիր՝ Հակոբ Ղ. Սարգիսյան։

— Արտոնատեր՝ Գրիգոր Գայյան։

Бутания. Национальная, литературная, политическая и экономическая уездная газета Ата-Базар, 1910—1911.

Ատա-Բազարը Իզմիրի սանջակի վաճառաշահ քաղաք է եղել, մոտ 30 հազար բնակիչներով։ Այդ քաղաքում ապրել են մոտ 13 հազար հայեր։ «Բութանիա» շաբաթաթերթը լուսաբանել է «Ատա-Բազար»-ի և գավառի կյանքը։

Ներքևում տալիս ենք մեկ համարի նկարագրությունը։

1912 ՀՈՒՆՎԱՐ 5, № 1, ԷՋ 1—4

4635 Անցող տարին։ [1911 թվի մասին]. էջ 537

4636 Հ. Բ. Հաշիվ։ [Հաշվի անհրաժեշտութ. մասին]. էջ 538

4637 Ա. Գ. Ը. Մեր տկար կողմերը։— Համագործակցություն. էջ 538

4638 Գավառին մենակագրությունը. էջ 538—539

4639 Պուռմայան, Ս. *Կարևոր գյուտ մը։ [Մի մագաղաթյա ձեռագրի]. էջ 539*

4640 Գիսակ: *Թղթակցություն գյուղից. էջ 539—540*

4641 Ողորմելիություններ: *[Հնչակյան աշակերտների մասին]. էջ 540*

4642 Մելինե: *Մտածումի պահեր. էջ 540*

4643 Հայտարարություններ. *էջ 540*

ԳԱՎԱՌ: *Քաղաքական, հասարակական, տընտեսական և գրական լրագիր։ [Շաբաթաթերթ]։ Գորիս, տպ. «Սասուն», 1910. 16 էջ, (45×32 սմ).*

— Խմբագիր-հրատարակիչ՝ Սիմեոն Տեր-Մինասյան։

Гавар. Провинция. Политическая, общественная, экономическая и литературная газета. Горис, 1910.

ԳՐԻՉ: *Գրական և գիտական պատկերազարդ ամսաթերթ։ Կ. Պոլիս, տպ. Օսմ. Գործակցական ընկ. 1910. 16 էջ, (26× 19 սմ)։ Բաժանորդագինը 15 դրուշ։*

— Տեր և տնօրեն՝ Վահրամ Գոճապըլըգյան։

— Խմբագրապետ՝ Շահնազար Որբունի։

Грич. Перо. Литературно-научный ежемесячный журнал. Константинополь, 1910.

1910 թվի մայիսի 1-ի № 1-ում տպագրված «Խմբագրական»-ում ասված է. «...Մենք անոնք չենք, որ խզենք հինին կամ անցյալին հետ մեր ամեն հարաբերությունները, և մեր ժողովրդին համար խորթ հոսանքներու մեջ նետվենք, ո՛չ ալ նորամոլութենե մոլեռանդված՝ ուզենք բոլոր անցյալ հսկայությունները ոտնակոխ ընել, մենք գրական և ընկերային բոլոր նախապաշարումները քանդելով՝ ազատորեն կմտնենք գրական և գիտական կյանքի բարեշրջումին մեջ, նորագույն պատվաստ մը ըլլալով հինին վրա, անով զորացած դեպի նոր և խիզախ հորիզոններ, նոր իդեալներ ընդգրկելու համար» [1910, № 1, էջ 2]։ Չնայած այս բարձրամիտ արտահայտություններին, ինչպես երևում է ներքևում բերված երկու համարների նյութերից, այդ ամսագիրը աղքատիկ բովանդակություն է ունեցել, ինքնուրույն ստեղծագործությունները քիչ են, մեծ մասը թարգմանություններ ու անարժեք հոդվածներ են։

1910 ՄԱՅԻՍ, № 1, ԷՋ 1—16

4644 Խմբագրական: *[Հանդեսի հրատ. մասին]. էջ 1—2*

4645 Կցաղետապ: *(*Appendicite*). էջ 3—5*

4646 Սիպիլ: *Ծագե՛, արև [Բանաստեղծութ.]. էջ 6*

4647 Մալխաս, Գ. *Կանանց հավասարությունը։— Կնավարության առջև. էջ 7—9*

4648 Պազիլ: *Թոքախտ. էջ 10—11, № 2, էջ 27—29*

4649 Փանոսյան, Ա. *Լեյլակի ոստը։ [Բանաստեղծութ.]. էջ 12*

4650 Ենովք Արմեն: *Մայիսի մեկ. էջ 13—14*

4651 Տաղավարյան, Ն. *Մեքենայք և կենդանիք. էջ 14—15*

4652 Ռոեչոն, Ռ. *Մայիս և Հալլեյ [Բանաստեղծութ.]. էջ 16*

1910 ՀՈՒՆԻՍ 1, № 2, ԷՋ 17—32

4653 Վիքտորիա *Աղանուր։ [Հոդված]. էջ 17—21*

4654 Մարք, Հ. *Խաղաձեռում մը։ (Պատկեր). էջ 21—22*

4655 Որբունի, Շ. *Մոռացված մատաղը։ [Բանաստեղծութ.]. էջ 22*

4656 Նալպանտյան, Մ. *(պրոֆ.)։ Հալլեյի գիսավորը. էջ 23—26*

4657 Գոճապըլըգյան, Վ. *Ռուպեր Քոխի գործը. էջ 29—31*

4658 Քրոնիկ: *[Լուրեր]. էջ 32*

ԴԱՅԼԱՅԼԻԿ: *Երկշաբաթաթերթ։ Բոստոն, 1910.*

Дайлайлик. Трель. Газета. Бостон, 1910.

Այս երգիծաբանական թերթը հրատարակվել է «Ջուռնալ»-ի փոխարեն։

ԵՐԿԻՐ: *Շաբաթաթերթ։ Հասարակական, գրական, տնտեսական և քաղաքական։ Արտա-Բազար 1910, Կ. Պոլիս, 1911. 1919—1922. 4 էջ, (60× 48 սմ).*

— Արտոնատեր՝ Մարկոս Հ. Թերզյան։

— Խմբագիրներ՝ Ասօ (Տիգ. Օտյան), Անդր. Կենճյան, Բանվոր (Ե. Թոփուզյան).

Еркир. Страна. Общественно-литературный, экономический и политический еженедельник. Ата-Базар, 1910, Константинополь, 1911.

Հնչակյան պարտիայի շաբաթաթերթն է եղել։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ։ Շաբաթաթերթ։ Կ. Պոլիս, 1910.

— Խմբագիր-տնօրեն՝ Հարություն Հալաճյան։

Еркрагорцакан Андес. Земледельческий Журнал. Константинополь, 1910.

ԶԱՆԳ։ Շաբաթաթերթ. քաղաքական, տնտեսական, հասարակական և գրական։ Թավրիզ, տպ. «Փարոս», 1910—1922. 4 էջ, (55×38 սմ. 64×48 սմ). բաժանորդագինը՝ 100 ռուբ.

Հիմնադիր-խմբագիր՝ Ալեքս Տեր-Վարդանյան, Վահան Մարայան։

Занг. Звонок. Политический, экономический, общественный и литературный еженедельник. Тавриз, 1910—1922.

Հնչակյան պարտիայի շաբաթաթերթ է եղել։

ԶՈՒՌՆԱ։ Երկշաբաթաթերթ։ Բոստոն, 1910.

Зурна. Двухнедельный сатирическ. журнал. Бостон, 1910.

Այս երգիծաբանական թերթը № 13-ից կոչվել է «Դայլայլիկ»։

ԹԱՏՐՈՆ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ։ Թատրոնական-երաժշտական-գրական-գեղարվեստական պատկերազարդ ամսաթերթ։ Բաքու, тип. С. Т. Шахбагова, տպ. «Труд», 1910—1917. էջ 16—24 (28×22 սմ)

— Բաժանորդագինը 2 ռ.

— Խմբագիր-հրատարակիչ՝ Ա. Մայիլյան։

Татрон ев Еражштутюн. Театр и музыка. Ежемесячный иллюстрированный, театрально-музыкальный журнал. Баку, 1910—

1910 հունվար—փետրվար, № 1—2, էջ 1—24
1910 մարտ—ապրիլ, № 3—4, էջ 25—48
1910 մայիս-հունիս, № 5—6, էջ 49—72
1910—1911, № 7—8, էջ 73—96
1910—1911, № 9—10, էջ 97—128
1912, № 11, էջ 129—140
1913, № 12, էջ 141—160

Այս ժուռնալի 1910 թ. № 1-ում Ա. Մայիլյանը [խմբագիր] հետևյալն է գրել. «...Ժողովրդական և ազգային երգերը ժողովրդի հառաջադիմության, նրա մտքի և զգացմունքների արտահայտությունը լինելով, չունեն մի հայ մասնագիտական օրգան, որի մեջ լուսաբանվեր գեղարվեստի այդ սիրուն ճյուղը։ Բնականորեն չէր կարող լույս չտեսնել մեր օրգանը, որի գոյությունը միանգամայն անհրաժեշտություն պիտի համարել։

Գրի առնել ժողովրդական երգերը, տարածել հայ մասսայի մեջ զտված ու մշակված երգեր, հեռու պահել նրանց շինծու, այլանդակ ու գռեհիկ երաժշտությունից և նորացնել նրանց ճաշակը,— ահա մի գործ, որով պիտի բարձրանա ժողովրդի հոգեկան թափը. մի գործ, որը դպրոցներում դաստիարակության կիսով չափ օգնության պիտի հասնի և ուժ տա սանիկների էսթետիքական, բարոյական, մանկավարժական և ֆիզիոլոգիական պրոգրեսին։

Երաժշտության հետ միասին աննախանձելի դրության մեջ է և հայ թատրոնը, որը նույնպես չունի իր մասնագիտական օրգանը. այդ իսկ նպատակով, մենք թատրոնն էլ միացնում ենք երաժշտության՝ հոգալու երկուսի մեծ կարիքները գեթ փոքրագույն չափով։ Հայ երաժշտի և հայ դերասանի համար բացվում են մեր նվաստ էջերը. թող նրանք էլ հանդես գան խոսելու իրենց անվերջ կարիքների մասին»։

1910 ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ, № 1—2, ԷՋ 1—24

I Երաժշտություն։

4659 Մաիլյան, Ա. Հայ ընթերցողին և հայ հասարակությանը։ [Հանդեսի հրատ. առթիվ]. 2—3

4660 Պապով, Ի. Ե. Հայկական երաժշտությունը։ Թարգմ. էջ 3—4, № 3—4, էջ 28—30

4661 Հեղինե և Եվգինե Աղամյան քույրերը։ [Երաժիշտներ]. էջ 4—5

4662 Էկոռեն։ Հարմոնիում։ (Մեր ուսուցիչների ու խմբապետների ուշադրությանը). էջ 5—6

4663 *** Ղուկասյան, Ն. (Լիրիկո-դրամատիկական տենոր). էջ 7

4664 Մայիլյան, Ա. Երգը ընտանիքում. էջ 7—9

4665 Ֆրիդրիխ Շոպեն։ (Ծննդյան 100-ամյակի առթիվ). էջ 9

4666 ** Շոպեն և Ժորժ-Զանդ. էջ 9—11

4667 Կազաչենկո։ [Երաժիշտ]. էջ 11

4668 Ցիտատներ երաժշտական արվեստի մասին. էջ 12

4669 Կոստանյան, Հ. Ես քայլում եմ վեր։— «Մի նոր արշալույս...»։ [Բանաստեղծութ.]. էջ 12

II Թատրոն:

4670 Իրեմ, Օգտո: *Հայ թատրոնը.* էջ 14—15

4671 Սուրեն: *Ինչպես կազմակերպեցինք գյուղական ներկայացումներ.* էջ 15—17

4672 Անդրեև, Լ. «*Անաթեմանս*»-ն և «*Անֆիսաս*»-ն [*Թարգմ.՝ Խ. Սամվել*]. էջ 17—19

4673 Կոստանյան, Հ. *Վերա Կոմիսարժևսկայայի հիշատակին* [*Բանաստեղծութ.*]. էջ 19

4674 Սակար *Նկմալյանի հիշատակին.* էջ 19

4675 Պետրոսյան, Պ. *Հայկական թատրոնի վիճակը.* էջ 19—20

4676 Հ. Տ. Գ. *Թատրոնը և երաժշտությունը արտասահմանում.* էջ 21—22

4677 Ֆ. *Երեկույթ* [*Բաքվում, զոկերի կազմակերպած*]. էջ 22—23

4678 Խառնըրա-*երաժշտական քրոնիկ.* էջ 23—24

1910 ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ, № 3—4, էջ 25—48

I Երաժշտություն:

4679 Կոմիտաս վարդապետ: *Հայ գեղջուկ պարը.* էջ 26—27

4680 Երաժշտությունը *Բարցելոնայի էսպերանտիստների V միջազգային կոնգրեսում.* էջ 30—31

4681 Ֆ. *Դպրոցական հիշողություններից.* էջ 31—32

4682 Disonans. *Երգ-ձայնագրությունը մեր դպրոցներում.* էջ 32—33

4683 Կ. Մ. *Բանվորական մեծ համերգը Բալախանում.* էջ 33

4684 Երաժշտական *քրոնիկ.* էջ 34

II Թատրոն:

4685 Ջմշկյան, Գ. *Իմ թատրոնական հիշողություններից.* էջ 36—39

4686 Վ. Ֆ. Կոմիսարժևսկայա: [*Օպերային արտիստուհու մահվան առթիվ*]. էջ 39

4687 Մայիլյան, Աննա: *Վերա Ֆեոդորովնա Կոմիսարժևսկայայի հիշատակին.* էջ 40

4688 Հ. Տ. Գ. *Շանտըկլեր: Կենդանական դրամա 4 գործող. էդ. Ռոստանի:* [*Ներկայացումների մասին*]. էջ 41—43

4689 Ջալաքի, Կ. «*Ղարագյոզ*». էջ 41—43

4690 Թառլանյան, Կ. *Մեր անտարբերությունը: (Տ. Մելիքյանի հոբելյանական ներկայացման մասին).* էջ 43—46

4691 Գեդեոն *Միրաղյան:* [*Դերասան*]. էջ 46

4692 Թատերական *քրոնիկ.* էջ 47—48

1910 ՄԱՅԻՍ-ՀՈՒՆԻՍ, № 5—6, էջ 49—72

4693 Ա. Մ. *Երաժշտական գրականությունը Մեքսիկայում.* էջ 50

4694 Կոմիտաս վարդապետ: *Հայ գեղջուկ պարը:* [*Սկիզբը № 3—4*]. էջ 51—52

4695 Պապով, Ի. Ե. *Հայկական երաժշտությունը.* էջ 52—57, № 7—8, էջ 75—78

4696 Աշուղյան, Ռ. *Արևելյան համերգ:* [*Երևանում*]. էջ 57—58

4697 Կոստանյան, Հ. *Կաղնին:* [*Բանաստեղծութ.*]. էջ 60

4698 Խառլանյան, Կ. *Սիրո տողեր:* [*Բանաստեղծութ.*]. էջ 62

4699 Ջմշկյան, Գ. *Իմ թատրոնական հիշողություններից. (1879—1881).* էջ 64—65, № 7—8, էջ 93—94, № 9—10, էջ 124—126, № 12, էջ 149—156

4700 Պետրոսյան, Պ. *Հայկական թատրոնի վիճակը.* էջ 65—68, № 7—8, էջ 94—95, № 9—10, էջ 126—127

4701 Ջալաքի, Կ. *Ղարագյոզ.* էջ 66—69

1910—11, № 7—8, էջ 73—96

4702 Մայիլյան, Ա. *Երգեցիկ խմբի կուլտուրան Մեզանում.* էջ 74—75

4703 Ձայնի *առողջապահությունը:* [*Թարգմ.*]. էջ 80—83

4704 Ռոբերտ *Շուման: Կենսագրական ակնարկ.* էջ 83—86

4705 Antonios. *Ալեքսանդր Սպենդիարյան.* էջ 87—89

4706 Ղազարյան, Ա. *Շիրվանզադե: (30-ամյա հոբելյանի առթիվ).* էջ 89—92

1910—1911, № 9—10, էջ 97—124

4707 Ո՞վ է *հավերժացնելու Եկմալյանի հիշատակը.* էջ 97—98

4708 Էկոռն: *Եկմալյանի պատարագը մեր եկեղեցիներում.* էջ 100—102

4709 Մայիլյան, Ա. *Մակար Եկմալյան.* էջ 103—106

4710 Antonios: Նկմալյանը և Կարա-Մուրզան. էջ 105—106

4711 Օr. Ովսաննա Տեր-Գրիգորյան. էջ 107—108

4712 Ա. Մ. «Լերլերեջի» կոմիք. օպերա. Երաժշտ. Զուխաջյանի. էջ 108—109

4713 Ղազարյան, Ա. Առաջին հայկական կոմ. օպերետը ռուսահայ բեմի վրա. էջ 109—110

4714 Ուսանող: Արմենակ Ճահմուրադյան. էջ 111

4715 Ղազարյան, Ա. Սոմդուկյան։ (1825—1912). էջ 115—122

4716 Հովսեփյան, Ս. Հուշեր Սունդուկյանի մասին. էջ 122—124

1912, № 11, էջ 129—140

4717 Մայիլյան, Ա. Գրիգոր Ավետյան. էջ 129—130

4718 Ար. Մ. Գրիգոր Ավետյան։ (Կենսագրական). էջ 130—132

4719 Մեհրաբյան, Ա. Ո՞վ հոբելյանն ենք տոնում։ [Գ. Ավետյանի մասին]. էջ 131—132

4720 Զարիֆյան, Հ. Երկու խոսք։ [Գ. Ավետյանի դերասանական գործ. 30-ամյակի առթիվ]. էջ 132—135

4721 Զաղալ-Պետուեց բոռեր: Երկու քալմա խոսկ մեր կոմեդաշի Ավետանց Կյուքոմ. էջ 135—136

4722 Առաքելյան, Ա. Դերասան Ավետյանի 25-ամյա հոբելյանի առթիվ. էջ 136—137

4723 Ոսկանյան, Հ. 25 տարի և մեկ օր. էջ 138—139

1913 № 12, էջ 141—160

4724 Մայիլյան, Ա. Հանդեսը դադարեցնում ենք. էջ 141—142

4725 Շեպինսկի, Ա. Ա. Երեխաների նախապատրաստությունը երաժշտական երկեր լսելու համար. էջ 143—146

4726 Անուշավան Տեր-Ղևոնդյան. էջ 147

4727 «Թատրոն և երաժշտություն» հանդեսը մամուլի դատարանի առաջ։ [Կարծիքներ]. էջ 156—159

4728 Բովանդակություն «Թատրոն և երաժշտություն». էջ 159—160

ԹԱՎՐԻԶԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Թավրիզ, տպ. Թեմական, 1910—1912։

— Խմբագիր՝ Կարապետ Եպիսկոպոս։

Тавризи айтарарутюннер. Тавризские Объявления. Тавриз, 1910—1912.

Իրանի Հայոց Առաջնորդարանի հրատարակությունն է եղել։

ԻՐԻՍ: Կիսամյա հանդես։ Եվդոկիա, 1910—1913։ Հրատարակություն Հայ Հառաջադիմասիրական ակումբի։

— Արտոնատեր՝ Հ. Կ. Փոյաճյան։

Ирис. Двухнедельный журнал. Евдокия, 1910—1913.

ԼՈՒՅՍ: Գրական-հասարակական շաբաթաթերթ։ Նախիջևան (Դոնի վրա). 1910, տպ. Սեդրակ Ավագյանի, 16 էջ, (30×21 սմ)։ Բաժանորդագինը 3 ռ.։

Խմբագիր՝ Գեորգ Ռեիզյան։

Луйс. Свет. Литературно-общественный еженедельник. Нахичевань н/Д, 1910.

1910 № 1—45. էջ 1—16 (յուրաքանչյուր համարը)։

«Խմբագրության կողմից» առաջնորդողում [1910 № 1]—հետևյալն է ասված այս շաբաթաթերթի մասին. «...Մեր նպատակն է՝ մի կողմից — ծառայել ըստ չափու կարյաց Նոր-Նախիջևանի ազգային շահերին, լուսաբանել տեղական կարևոր խնդիրները և բերան հանդիսանալ հառաջադեմ և հայության համար շահավետ հոսանքներին, մյուս կողմից — կապ հաստատել բուն Ռուսաստանի մեջ ցրված հայ գաղթավայրերի միջև, արձագանք լինել նրանց շարն ու բարիին և աջակից լինել նրանց կուլտուրական ձեռնարկություններին։ Մենք պետք է աշխատենք նաև մոտակից անել մեր ընթերցողներին ընդհանուր հայկական կյանքին, տեղեկություններ հաղորդել՝ Կովկասից, Տաճկաստանից ու հեռավոր գաղթավայրերից և ծանոթացնել նրանց հայ կյանքի մեջ տեղի ունեցող մտավոր, տնտեսական ու քաղաքական երևույթների հետ։

...«Լույս» շաբաթաթերթը անտես առնելու չէ սակայն ո՛չ ռուսական կյանքն ու գրականությունը և ո՛չ ընդհանուր մարդկային քաղաքակրթությունը»։

Այս շարաթաթերթն ընթացիկ կյանքի հարցերին, Նոր-Նախիջևանի անցուդարձին բավական մեծ տեղ է հատկացրել։

1910 ՀՈՒՆՎԱՐ 1, № 1, էջ 1—1(

4729 Խմբագրության *կողմից։ [Շաբաթաթերթի հրատ. մասին]. էջ 2*

4730 Մեր *միտքը։ [«Լույս»-ի հրատ. մասին]. էջ 2—3*

4731 Սամվել, Խ. *Հայ կուսակցականությունը. էջ 3—4*

4732 Սիմոնի, Ա. *«Շուրջս խավար, մթին խավար...»։ [Բանաստեղծութ.]. էջ 5*

4733 Բաքայան, Ս. *Ճամբիս։ [Բանաստեղծութ.]. էջ 5*

4734 Հրյաներն ու *հայերը։ [Անստորագիր]. էջ 5—6*

4735 *Դու կհանգցնես—ես կվառեմ։ Իոհանի Ահօի. էջ 6—7*

4736 Ես չեմ: *Լաւծ լաֆերես։ [Ֆելյետոն]. էջ 7—9*

4737 Ես իմ: *Նվեր «Ես Ջեմ»-ին։ [Ֆելյետոն]. էջ 9*

4738 Նախջունցի: *Իմիս կաղանդչեքներս։ [Երգիծական]. էջ 9—10*

4739 R. *Նոր-Նախիջևանի քաղաքային դուման. էջ 10—11*

4740 Մամոլ: *[Տեսություն]. էջ 11—13*

4741 Լուրեր. *[Հայ կյանքից]. էջ 13—14*

1 9 1 0*

4742 Նիմանդ: *Հայ հասարակական կյանքը։ [1909 թվին]. № 2, էջ 2—4*

4743 Ծատուրյան, Ա. *Կան մռայլ ժամեր... [Բանաստեղծութ.]. № 2, էջ 15*

4744 Ծատուրյան, Ա. *Կյանքի պարգևները։ (Օ. Շրեյներից). № 3, էջ 5, № 4, էջ 5—6*

4745 Սամվել, Խ. *Անտոն Չեխով. № 4, էջ 3—5*

4746 Մեր *դպրոցները։ [Առաջնորդող]. № 5, էջ 1—3*

4747 Ա. Մ. *Գաղութի շուրջը. № 6, էջ 1—2*

4748 Ծատուրյան, Ա. *Վտակ։ (Պ. Ալտենբերգից). № 8, էջ 5—6*

4749 Աճառյան, Հր. *Գեորգ Դպիր։ (1737—1812). № 8, էջ 6—7*

4750 Խ. Ս. Գ. Լ. *Լավրով. № 8, էջ 10—11*

4751 Աճառյան, Հր. *Սերովբե Պատկանյան. № 9, էջ 4—5*

4752 Մեղրյան, Ա. *Մեր մանկական գրականությունը և հայոց լեզուն. № 10, էջ 1—3*

4753 Աճառյան, Հր. *Գրիգոր պատվելի Փեշտիմալճյան. (1773—1837). № 10, էջ 4—5*

4754 Աճառյան, Հր. *Հովհան Միրզա Վանանդեցի։ (1772—1840). № 11, էջ 5—6, № 12, էջ 3—7*

4755 Ծատուրյան, Ա. *Սիրո տողեր։ (Պ. Ալտենբերգից). № 14, էջ 4*

4756 Աճառյան, Հր. *Մեսրոպ Թաղիադյան։ (1803—1858). № 14, էջ 6—8, № 15, էջ 10—12, № 16, էջ 6—8*

4757 Տեր-Հարությունյան, Ավ. *Շիրվանզադեի հոբելյանը. № 15, էջ 5—6*

4758 Ալեքսանդր *Ծատուրյանի հոբելյանը։ [Խմբագրական]. № 17, էջ 2*

4759 Ծատուրյան, Ա. *«Սև գիշեր»-ից։ [Բանաստեղծութ.]. № 17, էջ 3*

4760 Տեր-Հարությունյան, Ավ. *Ալեքսանդր Ծատուրյան. № 17, էջ 2—8*

4761 Աճառյան, Հր. *Սրապիոն Հեքիմյան։ (1832—1892). № 18, էջ 5—7, № 19, էջ 3—6*

4762 Կաֆայեցի, Օ. *Լև Տոլստոյի հիշատակին. № 41, էջ 2—3*

4763 Լ. Ն. Տոլստոյի *կարծիքը տաճկահայ դատի մասին և նրա համակրանքը դեպի Խրիմյան Հայրիկն ու Գ. Ջանշյանը. № 43, էջ 7—8*

4764 Մ. *Լ. Ն. Տոլստոյի նամակը Սոֆիա Անդրեևնային, գրված 13 տարի սրանից առաջ. № 44, էջ 4—5*

ԿԱՎՌՈՇ-ԿԻԿՈ: *Երգիծական։ Կ. Պոլիս, 1910—1913։*

Каврош-Кико. Сатирические листки. Константинополь, 1910—1913.

Մեջ ընդ մեջ «Կավռոշ»-ը լույս է տեսել «Կիկո»-ի հետ միասին։

ԿԱՅԾԵՐ: *Օրաթերթ։ Թիֆլիս, տպ. «Հերմես», 1910—1911. 4 էջ, (46×31 սմ)։*

— Խմբագիր-հրատարակիչ՝ Գարեգին Երիցյան։

Кайцер. Искры. Газета. Тифлис, 1910—1911.

---

* *Մյուս համարները համառոտ են նկարագրված։*

ԿԱՎՌՈՇԻ ՏԱՐԵՑՈՒՅՑԸ: *Ամեն հայու բարձին տակի գիրքը! Ազգային, քաղաքական և կենիկական և զրվայական։ Կ. Պոլիս, տպ. Տեր-Սահակյան, տպս՝ Յ. Ճարյան. 1910—15, Փարիզ 1928—1930. 160 էջ, (20×14 սմ). 224 էջ (23×15 սմ)։*

— Խմբագիր՝ Եր. Թոլայան։

Кавроши Тарецуйц. Ежегодный календарь Кавроша. [Сатирический]. Константинополь, 1910—15, Париж, 1928—1930.

ԿԻԿՈՅԻ ՏԱՐԵՑՈՒՅՑԸ: *Կ. Պոլիս, 1910—1915։*

— Խմբագիր՝ Գրիգոր Թորոսյան։

Кикои тарецуйц. Ежегодный календарь Кико. [Сатирическ.]. Константинополь, 1910—1915.

ՀԱՅԵԿ: *Քաղաքական, ազգային, գրական։ Շաբաթաթերթ։ Կեսարիայի Մունճուսուն գյուղ, 1910—1914. [Խմորատիպ]։*

— Խմբագիր՝ Կյուրոս Տեեկյան։

Айек. Армянин. Еженедельник литературный, политический. Кесария, 1910—1914.

Այս խմորատիպ շաբաթաթերթի մասին հիշատակել է Արշակ Ալպոյաճյանը իր՝ «Պատմություն հայ Կեսարիոյ» գրքի Ա. հատորում։ [Կահիրե, 1937, էջ 1289]։ 1913 թվին այս թերթը լույս է տեսել տպագիր։ Դաշնակցական թերթուկ է եղել։

ՀԱՅԿՈՒՆԻ: *Նորահասներու հանդեսը։ Կիսամսյա։ Մարզվան, տպ. Ներսո և Սրապիոն. 1910—1912, 16—32 էջ, (24×17 սմ)։ Բաժանորդագինը 15 ղրուշ։*

Արտոնատեր-տնօրեն՝ Անդրանիկ Գըլտըրյան։

Խմբագրապետ՝ Գագիկ Օզանյան։

Айкуни. Армянская юноша. [Молодежный журнал]. Марзуан, 1910—1912.

1910 № 1—3, էջ 1—48

1911 № 4—20, էջ 49—305

1912 № 1—16, էջ 1—235

«Ջվարթնոց» ապաստարանն է նաև այն երիտասարդներուն, որոնք գերի են մեր գրականության ծերացած հոգատարներուն ձեռքը։ Երկար ժամանակե ի վեր, մեր երիտասարդները չունեին իրենց բեմը, անկախության երդիքը, ուրկեղի կարենային գլուխ չծռել «Հավնելու գացող» պատանիներու պես, և ուրկեղի չհամբուրեին գրական ժանգերը։

Սերունդ մըն է հասեր արդեն, հոգ չէ թե խատուտիկ։ Ան շուտով կգտնա մեկ գույն, կրակե որ գտնե իր անկախ հոգիին երկինքը։ Կրակե, որ հավատա, մեզի հետ, հայ հոգիին, հայ երևակայության և հայ ոճին։

Հանուն այդ հայ ոճին, «Ջվարթնոց» կկոչենք «նորերու» այս բնակարանը։ Պատրաստ սեղանին վրա տեղ ունին նաև հին սերունդեն անոնք՝ որ կսիրեն երիտասարդները և երիտասարդ շարժումը։

...«Ջվարթնոց»-ի մեջ պիտի ներկայացվին, մեր սերունդին դիմագծության հետ, արվեստի նորագույն որոնումները, հառաջապահ շարժումները, «ձախ գրականությունը», եվրոպականն ու ասիականը, խափշիկյանն ու անմշակը, տալու համար ձևի զանազանությունները, հավատարիմ մնալով մեր հայ խորքին...»։

1931 թվի № 4—5-ի մեջ բանավեճ է մղվել Գ. Մահարու դեմ, որից երևում է, որ «Ջվարթնոց»-ը հարձակումներ է կատարել սովետահայ գրականության վրա, դաշնակցական ազդեցության տակ է եղել։

1930 [№ 1], էջ 1—48

10343 Ճակատին վրա։ [Խմբագրական]. էջ 1

10944 Զարյան, Կ. Ասիզի։ [Պատմվածք]. էջ 2—4

10945 Պեշիկթաշլյան, Ն. Տաղ ծուլության։ [Բանաստեղծութ.]. էջ 4

10946 Այվազյան, Ե. Գերարթնություն։ [Բանաստեղծութ.]. էջ 5—6

10947 Ֆրենկյան, Հ. Վարդիթեր։ [Պատմվածք]. էջ 6—9

10948 Սարաֆյան, Ն. Աշնանային։ [Բանաստեղծութ.]. էջ 10

10949 Թեքեյան, Վ. Շուն մը։— Տղաքներ կան։ [Բանաստեղծութ.]. էջ 11

10950 Տեմիրճիպաշյան, Ե. Մարմնացյալ աղոթք։ [Բանաստեղծութ.]. էջ 11

10951 Զոպանյան, Ա. Ազգայինն ու միջազգայինը գրականության մեջ. էջ 12—15

10952 Օշական, Հ. Եղիշե։ [Մատենագրական]. էջ 15—18, № 2, էջ 67—69

10953 Նարդունի, Շ. Գրականությունը և զգայարանքները. էջ 19—21, № 2, էջ 72—74, № 3, էջ 110—112, № 7, էջ 296—300

10954 Ցվայգ, Ստ. Տոլստոյի արվեստը. էջ 22—28

10955 Հ. Բ. Նյութեր Ցվայգի մասին. էջ 28—29

10956 Պեշիկթաշլյան, Ն. «Միդոննա» [Գրախոս՝ Հր. Բալուլյան]. էջ 30—36

10957 Բասմաջյան, Կ. Հ. Հայաստանի ամենահին արձանագրությունները. էջ 36—37

10958 Գալբագյան, Ն. Ընդհանուր ակնարկ մը արդի երաժշտության վրա. էջ 38—40

10959 Պարբևյան, Ա. Մ. Շոպեն (Մահվան 100-ամյակի առթիվ). էջ 41—43

10960 Թորոմանյան, Թ. Նախաքրիստոնեական հայ ճարտարապետություն. էջ 44—45, № 2, էջ 89—90, № 3, էջ 124—126

10961 Հ. Բ. Նկարչական շարժումը Փարիզի մեջ։— Շարլ Ադամյանի նկարահանդեսը. էջ 46—48

1930 [№ 2], էջ 49—96

10962 Այվազյան, Ե. Գիշեր է գալիս։ [Բանաստեղծութ.]. էջ 49—50

10963 Զարյան, Կ. Անթել։— Ամեն առավոտ։— Աստղը նոր։ [Բանաստեղծութ.]. էջ 51—53

10964 Համսուն, Կ. Շատ սովորական ճանճ մը... [Թարգմ. Բ. Ջվարթուն]. էջ 54—56

10965—66 Թեքեյան, Վ. Ովկեան։ [Բանաստեղծութ.]. էջ 56

10967 Ֆրենկյան, Հ. Վարդիթեր։ [Պատմվածք]. էջ 58—59

10968 Տատրյան, Ա. Աստվածամայր։ [Բանաստեղծութ.]. էջ 60

10969 Գարոնյան, Հ. Հ. Նամակ Տ. Նազարյանին, 1890, 17—29 ապրիլ. էջ 60

10970 Գեշիկթաշլյան, Ն. Կին և արվեստ. էջ 61—62

10971 Թաթուլ, Վ. Ընդելույզ քառյակներ. էջ 62

10972 Թոռոսյան, Ա. Փոլ Վալերի. էջ 63—67

10973 Սարաֆյան, Ն. Ազգայինն ու միջազգայինը գրականության մեջ. էջ 70—72

10974 Համայնապատկեր ազգերու գրականության [Ռուսական, լեհական գրականութ. մասին]. էջ 75—77

10975 Նարդունի, Շ. Հեքիաթների ծաղկումը [Գրախոս՝ Գ. Մխիթարյան], էջ 78—80

10976 Բալույան, Հ. Ն. Սարաֆյանի «Անջրպետի մը գրավումը»— Համաստեղի «Անձրևը»— Գարեգին արքեպ. Հովսեփյանի «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» [Գրախոսութ.]. էջ 81—86

10977 Սարգիսյան, Հ. Ֆրանսիական արդի թատրոնը և իր ուղղությունը. էջ 87—88

10978 Զվարթուն, Ա. Երաժշտություն, պար, թատրոն [Փարիզի գեղարվեստական կյանքից]. էջ 91—94

1930 № 3, էջ 97—144

10979 Բալույան, Հ. Վահան Թեքեյան [Գրաքննական]. էջ 97—101

10980 Խանամիրյան, Գ. Մոռրա և իր գրելակերպը. էջ 102—104, № 5, էջ 184—185

10981 Ազատունի: Աստղեր [Բանաստեղծութ.]. էջ 105

10982 Վարուժակ: Երեկ գիշեր [Բանաստեղծութ.]. էջ 105

10983 Զարյան, Կ. Ազգայինն ու միջազգայինը գրականության մեջ. էջ 106—109

10984 Իրանյան, Վ. Ուրվագիծ պարսիկ գրականության պատմության. էջ 113—114, № 5, էջ 177—179

10985 Թաշյան, Բ. Լեոն Շանթը և իր «Կայսր»-ը. էջ 115—118, № 5, էջ 180—183

10986 Սարգսյան, Հ. Բեմական հարդարումը և իր արդիական ձգտումը. էջ 119—123

10987 Բալույան, Հ. Մարտիրոս Սարյան. էջ 127—130, № 7, էջ 312—315

10988 Բաշինջաղյան, Գ. Նկարչական արվեստի առթիվ. էջ 131—132

10989 Զվարթուն, Բ. Պե՞տք է այրել թանգարանները. էջ 133—136

10990 X. Անիի ավերակները (Նամակ Հայաստանից). էջ 136

10991 Գալբագյան, Ն. Ռիխարդ Վագներ. էջ 137—141, № 5, էջ 191—192

10992 Զվարթուն, Ա. Ռուսական օպերա [Փարիզում]. էջ 142—144

1930 [№ 4], էջ 145—192

10993 Սարաֆյան, Ն. Ավագ մեկնացում [Պատմվածք]. էջ 145—152

10994 Թաթուլ, Վ. Նժդեհի բաղձ— Ճնշյակ [Բանաստեղծութ.]. էջ 153

10995 Պլպուլ, Զ. Տրակալեակի մանասթըր [Բանաստեղծութ.]. էջ 154

10996 Բաքախյան, Ս. Տնակիս հետ [Բանաստեղծութ.]. էջ 154

10997 Անարոն: Առեղծվածային վարդը [Բանաստեղծութ.]. էջ 155

10998 Կառվարենց, Գ. Վինն անձրևին... [Բանաստեղծութ.]. էջ 156

10999 Վարուժնակ: Պզտիկ ցայգերգ [Բանաստեղծութ.]. էջ 156

11000 Նարդունի, Շ. Լերան բարկությունը (Հեքիաթ). էջ 157—159

11001 Արմեն Անուշ: Աշնանային [Բանաստեղծութ.]. էջ 160—161

11002 Տատրյան, Ա. Ծորյանի մը լճին առջև [Բանաստեղծութ.]. էջ 161

11003 Սեպուհ, Զ. Տավրոս [Բանաստեղծութ.]. էջ 162

11004 Գեշիկթաշլյան, Ն. Երաժշտությունը [Արձակ բանաստեղծութ.]. էջ 163—167

11005 Կառվարենց, Գ. Կոմիտաս վարդապետ— «Տար զիս ձանձրույթ...» [Բանաստեղծութ.]. էջ 169

11006 Երկու եղբայրներ (Եգիպտական ամենահին հեքիաթը): Թարգմ. էջ 169—172, № 6, էջ 201—205

11007 Անդրեև, Լ. Հուդա Իսկարիովտացի [Պատմվածք]. էջ 173—176, № 6, էջ 206—210

11008 Սանասար, Փայլակ: Գեղարվեստական ստեղծագործությունների հոգեկան ազդակները. էջ 186—190

1930 [№ 5], էջ 193—240

11009 Անարոն: *Միջնախոսություն,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 193—194*

11010 Թաթուլ, Վ. *Սիրայինս— Աշուղականս* [*Բանաստեղծութ.*]. *էջ 195*

11011 Թոփալյան, Բ. *Օրհնության և լույսի համար,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 196*

11012 Վարուժակ: *Անմեղ առանձնություն,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 196*

11013 Թեքեյան, Վ. *Հարավի հովեր,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 197*

11014 Փիրանյան, Տ. *Քեմեյի,* (*Արաբական հեքիաթ*). *էջ 198—199*

11015 Տեմիրճիպաշյան, Ե. *Ծիծեռնակ սիրտս,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 200*

11016 Սանասար Փայլակ: *Լուիճի Փիրանդելլո,* [*Ֆրանս. գրող*] *էջ 211—214*

11017 Տարոնյան, Ե. *Տառադարձական թափառումներ. էջ 214—218*

11018 Զվարթենց: *Ասիական արվեստին աղբյուրները. էջ 219—220*

11019 Ստրիշկովսկի: *Ասիական արվեստին աղբյուրները. էջ 220—222, № 7, էջ 305—308*

11020 Սարգսյան, Հ. *Լռության թատրոնը. էջ 228—230*

11021 Զվարթուն, Ա. *Նկարչական շարժումը Փարիզի մեջ. էջ 234—235*

11022 Հայ *միտքը երկրե-երկիր,* [*Վ. Խոջաբեգյանի և Փ. Թերլեմեզյանի նկարչակ. ցուցահանդեսների մասին*]. *էջ 236—240*

1930 [№ 6], էջ 241—336

11023 Անարոն: *Տոնավաճառ,* [*Արձակ բանաստեղծութ.*]. *էջ 241*

11024 Քուչակ, Նահապետ. *«Ո՞նչ եմ արեր քեզ...»,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 224*

11025 Թեքեյան, Վ. *Բանաստեղծության և արվեստի վրա. էջ 243—244*

11026 Կառավարենց, Գ. *Հովվականս— Դաշտահանդես,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 245—246*

11027 Վարուժակ: *Արտակցություն,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 246*

11028 Պեշիկթաշլյան, Ն. *Աստուծո հանդիսալը,* [*Պիես*]. *էջ 247—253*

11029 Ազատունի: *Ընկերակցություն,* [*Արձակ բանաստեղծութ.*]. *էջ 254*

11030 Կոմիտաս վարդապ. *Իբր զարդ,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 255*

11031 Անարոն: *Ղողանջներ,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 256*

11032 Սարաֆյան, Ն. *Ղուկաս այպանելին,* [*Պատմվածք*]. *էջ 257—268, № 8, էջ 345—349, № 10, էջ 424—429*

11033 Լի Ցրինկ Զաօ կամ Լի Նը Նկան: *Միայնակ գիշերվան մեջ,— Դեղձիի դեզ մը ծաղիկներուս— Գարունս— Թեթև անձրևս— Աշնանային երեկո լճափինս— Կրկնակ գարունս— Կաքավի երկինքս* [*Բանաստեղծութ. թարգմ.*]. *էջ 269—271*

11034 Զու Շու Զեն: *Տաք օրս— Լճին վրա...ս— Գարունս* [*Թարգմ.*]. *էջ 271—272*

11035 Փիրանտելլո, Լ. *Դիմացի լույսը,* [*Պատմվածք*]. *էջ 273—277*

11036 Օշական, Հ. *Գրականության համար. էջ 282—286, № 8, էջ 359—363, № 9, էջ 397—401, № 10, էջ 435—439*

11037 Այվազյան, Ե. *Ազգայինն ու միջազգայինը գրականության մեջ. էջ 287—291*

11038 Ակինյան, Ն. *Նորագույն կարծիքներ «Քուչակյան» քառյակներու մասին. էջ 292—295*

11039 Խանճակյան, Վ. *Շարժանկարային արվեստին կազմությունը. էջ 309—311*

11040 Նշմարներ: [*Ալ. Սպենդիարյան*]. *էջ 328—330*

11041 *Հ. Բ. Հովհաննես Հովհաննիսյան,* [*Մահվան առթիվ*]. *էջ 332*

1930 [№ 7], էջ 337—376

11042 Թեքեյան, Վ. *Մեկ հատիկս* [*Բանաստեղծութ.*]. *էջ 337*

11043 Շահնուր, Շահան: *Ավազ ուրբաթ,* [*Պատմվածք*]. *էջ 338—342*

11044 Թաթուլ, Վ. *Կախօրրանս— «Պիտիք-լե՞թն...»,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 343*

11045 Կազել, Ա. *Տրտում է հոգիս,* [*Բանաստեղծութ.*]. *էջ 350*

11046 Թոփալյան, Բ. *Եղերգս* [*Բանաստեղծութ.*]. *էջ 350*

11047 Չինական *գրականությունից. էջ 351—354*

11048 Մարքյան, Ա. *Պատմություն Արևելյան գրականության.* էջ 364—367, № 9, էջ 402—404, № 10, էջ 439—440, 1931 № 1, էջ 28—31

11049 Այվազյան, Ե. *Ազգայինն ու միջազգայինը գրականության մեջ.* էջ 368—370

11050 Հ. Բ. *Վահան Տերյան.* էջ 376

1930 [№ 8], էջ 377—417

11051 Խաճակյան, Ա. *Համբերանքի չիբուխը։* [Պատմվածք]. էջ 377—382

11052 Ոստանիկ։ *Արևելքեն-Արևմուտք։* [Բանաստեղծութ.]. էջ 383—386

11053 Այվազյան, Ե. *Պատմության տեսիլք.* էջ 387—390

11054 Կառավարենց, Գ. *Իմ ցանքս։* [Բանաստեղծութ.]. էջ 396

11055 Տեր-Ղազարյան, Հ. *Լևոն իշխանի պղնձյա կիսադրամը.* էջ 409—410

11056 Հ. Բ. *Նշմարներ։* [Ռուսական թատրոնի մասին]. էջ 411—416

1930 [№ 9], էջ 417—456

11057 Որբունի, Զ. Մ. *Գոհարիկ։* [Պատմվածք]. էջ 417—422, № 3, էջ 57—60, № 4—5, էջ 89—92

11058 Ազատունի։ *Վիթոշ։* [Բանաստեղծութ.]. էջ 423

11059 Հարզվարբյան, Ս. Հ. *Վերահայտնություն.* [Բանաստեղծութ.]. էջ 429

11060 Վիեոժ, Փ. *Գերազույն իղձ։* [Բանաստեղծութ.] էջ 434

11061 Հ. Բ. *Նշմարներ։* [Սատքո օպերայի մասին]. էջ 451—452

11062 Ցանկ Ա. *տարվա նյութերու.* էջ 454—456

1931 [№ 1], էջ 1—40

11063 Մաճարի, Գ. *Սիրո խանդի և Նիցցայի պարտիզպանների մասին.* էջ 1—6, № 2, էջ 47—49

11064 Հարզվարբյան, Ս. Հ. *Դատարկություն։* [Բանաստեղծութ.]. էջ 7

11065 Ոստանիկ։ *Արևելքեն—Արևմուտք։* [Բանաստեղծութ.]. էջ 14—17, № 4—5, էջ 79—83

11066 Շահնուր, Շ. *Լրագիր։* [Ակնարկ երգիծակ.]. էջ 18—27

11067 Մայակովսկի, Վ. *Ես ինքս։— «Վլադիմիր Մայակովսկի» ողբերգության նախամուտը։— Միքանի խոսք իմ կնոջ մասին։* [Թարգմ. Ե. Զարեց]. էջ 23—26

11068 Հ. Բ. *Նոթեր Վ. Մայակովսկու մասին.* էջ 26—27

11069 Հ. Բ. *Գուրգեն Մահարի.* էջ 37—39

1931 [№ 2], էջ 42—56

11070 Զարյան, Կ. *Նավատոմար։— Բանաստեղծության և անհատի մասին.* էջ 42—46, № 4—5, էջ 85—88

11071 Այվազյան, Ե. *Խոսք ընդ աստծոյ։— Ուշ հաչոց։* [Բանաստեղծութ.]. էջ 49

11072 Խաճակյան, Վ. *Շարլ Շափլին (Շարլո).* էջ 53—54

1931 [№ 3], էջ 57—72

11073 Մովսեսյան, Հ. Պ. *Հիշատակդ։* [Բանաստեղծութ.]. էջ 61

11074 Մինասյան, Պ. *Ծովը գարնան։* [Բանաստեղծութ.]. էջ 61

11075 Հարզվարբյան, Ս. Հ. *Անդրադարձում։* [Բանաստեղծութ.]. էջ 62

11076 Հ. Բ. *Շառլոի «Քաղաքին լույսերը».* էջ 70—72

1931 [№ 4—5], էջ 73—104

11077 Կառավարենց, Գ. *Աշնանացան։* [Բանաստեղծութ.]. էջ 83

11078 Թարող, Վ. *Հեռավորուհին։— Գողթան երգ։* [Բանաստեղծութ.]. էջ 88

11079 Տեր-Ղազարյան, Հ. *Նոր անուններ հին հայ բժիշկներու ցանկին վրա.* էջ 93—96

11080 Հ. Բ. *Գաղթային միջազգային մեծ ցուցահանդեսը.* էջ 97—98

11081 Մաճարի, Գ. *«Ջվարթնոց»-ի դեմ.* էջ 99

11082 Հակոբյան, Ա. *«Մենք» պարբերաթերթի Ա. թիվը։* [Գրախոսութ.]. էջ 101—104

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ։ *Ժողովրդական անկախ եռօրյա օրգան։ Աթենք, 1930, 4 էջ, (48×32սմ)։ — Արտոնատեր՝ Բորիս Իգնամետոս։*

Жоховрди дзайн. Голос народа. Трехдневная газета, Афины, 1930.

ԼՊՈՒՏ: *Երգիծաթերթ: Կահիրե, 1930. 4 էջ, (48×32սմ).*

— Արտոնատեր և խմբագիր՝ Վարդան Զաքարյան

Лпут. Сатирическ. еженедельник. Каир, 1930.

ԼՐԱԲԵՐ: *Շաբաթաթերթ: Ֆիլիպե, 1930. № 1—5.*

— Խմբագիր՝ Մինասյան:

Лрабер. Вестник. Еженедельник. Филиппополь, 1930.

ԿԱՄՔ: *Պաշտոնական ամսաթերթ— «Որդի Հայաստանյաց»-ի հավելված: Դետրոյիտ, 1930—1932. 16 էջ, (28×21սմ).*

Камк. Воля. Приложение к религиозн. журналу «Ворди Айастаняц». Детройт, 1930—1932.

ԿԵՆԱՑ ՃԱՄԲԱՆ: *Ոչ հարանվանական անկախ ամսաթերթ (Կրոնական): Ֆրեզնո, 1930—1931.*

Кенац чамбан. Путь жизни. Религиозный журнал. Фрезно, 1930—1931.

ԿԻԹԱՌ: *Գրական, գեղարվեստական, երգիծաբանական: Պոլսահայ երիտասարդության շաբաթաթերթը: Ստամբուլ, տպ. Հ. Աբրահամյան, 1930. 8 էջ, (28×21սմ):*

Китар. Гитара. Литературно-художественн. сатирический еженедельник. Стамбул 1930.

ԿՅԱՆՔ: *Պաշտոնաթերթ կրթասիրաց երկսեռ Վարժարանի շրջանավարտից Միության: Հալեպ, 1930. 4 էջ, (41×27սմ).*

Кянк. Жизнь. Орган Союза окончивших объединенную школу. Алеппо, 1930.

ԿՅՈՒՐԻՆԻ ՀՈՒՇ: *Պարբերաթերթ: Պատմական, գրական և ազգագրական: Նյու-Յորք, 1930—1932. 48 էջ, (26×16սմ). Բաժանորդագինը 1 դոլար:*

— Խմբագրական կազմ՝ Սուրեն Սուրենյան: Պատվական տնօրեն Թադեոս Սառուկյան:

— Տնօրեն՝ Հարություն Սիրանոսյան:

Кюрини уш. Кюринские воспоминания. Периодическое издание, историческое, литературное и этнографическое. Нью-Иорк, 1930—1932.

Կյուրինը գտնվել է Թյուրքիայի Սվազի նահանգում: Ամերիկայում գտնվող Կյուրինցիների հայրենակցական Միության օրգանն է եղել «Կյուրինի հուշը»:

Ներքևում դնում ենք մեկ №-ի նկարագրությունը:

1930 ՆՈՅԵՄԲԵՐ, № 1, ԷՋ 1—48

11083 Խոսքհրդածություն. *էջ 3—5*

11084 Կյուրին: [*Քարտեզը ձեռքի նկարով*]. *էջ 5*

11085 Թամազյան, Թ. *Կյուրինը:* [*Տեղեկանք*]. *էջ 7—9*

11086 Կյուրինի *ուսումնասիրաց ընկ. Նյու-Յորքի մասնաճյուղի հիմնվելը և գործունեությունը. էջ 9—11*

11087 Կյուրինի *Հայրենակցական Միության Ամերիկայի կենտրոնական վարչությունը ի Բոստոն. էջ 11—14*

11088 Տեղեկագիր *Կյուրինո Հայրենակցական Միության 1929 տարեշրջանի. էջ 14—18*

11089 Կյուրինի *հայրենակիցներու շահապաշտպան Միությունը Հալեպի մեջ. էջ 18—21*

11090 Կյուրինցի *գաղութը Ամերիկայի մեջ. էջ 23—26*

11091 Լուրեր: [*Կյուրինցիների մասին*]. *էջ 27—37*

11092 Կեն-օ-կօ: *Գրական զավեշտ. էջ 43—46*

Հ·Մ·Ը·Մ· *Տեղեկատու Պուլկարիո Շրջանի (Ամսաթերթ): Սոֆիա, 1930. № 1—11*

— Խմբագիր՝ Ն. Աստվածատրյան:

А. Г. В. С. (Армянский Гимнастический Всеобщий Союз). Известия Болгарского района. София, 1930.

ՀԱՄԱՍՊՐԱՄ: *Եգիպտահայ ամսագիր: Հրատ. Հայկազնյան Միության: Կահիրե, տպ. Համբարձում Բաղդասար, ապա Սահակ-Մեսրոպ, 1930. 24 էջ, (28×20սմ).*

Амаспрам. Журнал Египетских армян. Каир, 1930.

ՀԱՅ ԱՐԻ: *Օրգան Ֆրանսիայի հայ սկաուտների:* Bagneux (Seine). *1930—1935.*

Ай ари. Армянский храбрец. Орган армянских скаутов, живущих во Франции. Багнукс, 1930—1935.

Այս ամսագիրը եղել է «Հայ Արիների Միության» օրգանը։ Դաշնակցական ուղղություն է ունեցել։

ՀԱՅ ՍԿԱՈՒՏ։ *Պաշտոնաթերթ Հ.Մ.Ը.Մ. հիմնյալ 1918-ին։ Փարիզ, 1930—1934, 16 էջ, (27×18սմ)*

Ай Скаут. Армянский скаут. Париж, 1930—1934.

Ազգայնական ուղղություն է ունեցել «Հայ սկաուտ»-ը։ Այդ պարբերականում լուսաբանվել են Հ.Մ.Ը.Մ. կյանքը և մարզական-սպորտային խնդիրները։

1934 ԱՊՐԻԼ, № 1, ԷՋ 1—16

11093 *Հայ պատանին։ [Խմբագրական]. էջ 1—2*

11094 Սրվանձտյան, Գ. *Եղիսէ. Բինկեոլ։ [Ազգագրական]. էջ 3—4*

11095 Երջանկայաց *եղբերուն— Առողջ և զորեղ ըլլալ. էջ 5—7*

11096 Նազմանյան, Օ. *Հայ սերունդը և Հ.Մ.Ը.Մ. էջ 9—10*

11097 Հ.Մ.Ը.Մ. *Ընտանիք։ [Մարզական կյանք]. էջ 11*

11098 Հայ *մարզական կյանք։ [Խրոնիկա]։ էջ 12—13*

11099 Զվարթագիր։ *[Երգիծանք]. էջ 14—15*

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ։ *Ամսաթերթ։ Օրգան Պոլսո Տեմրքի և շրջակայից հայրենակցական երկսեռ Միության։ Փարիզ, 1930. 4 էջ, (45×28սմ).*

— Խմբագիր և տնօրեն՝ Ա. Կարագուլյան։

Айренакцакан Мамул. Земляческая пресса. Журнал. Париж, 1930.

ՀՈՐԻԶՈՆ։ *Անկախ շաբաթաթերթ։ Լոս-Անջելոս, 1930. 4 էջ, (45×28սմ).*

Оризон. Горизонт. Независимый еженедельник. Лос-Анжелос, 1930.

ՃՐԱԳ։ *Հրատարակություն Հայ Ավետարանական եկեղեցվո, Նյու-Յորք, 1930.*

Чраг. Лампада. Издание армянской евангелической церкви. Нью-Йорк, 1930.

ՄԻԱՑՅԱԼ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ։ *Շաբաթաթերթ. ազգային, գրական, քաղաքական և գիտական։ Սենտ Լուիզ, 1930. 4 էջ (61×46սմ).*

— Խմբագիր՝ Վահան Զուգասըզյան։

Миацял Анках Айастан. Единая Независимая Армения. Национальный литературный, политический и научный еженедельник. Орган партии «Гнчак». Сент-Луиз, 1930.

Հնչակյան պարտիայի շաբաթաթերթ է եղել։

ՆՈՐ ԱՐԱՔՍ։ *Երեկոյան օրաթերթ։ Սոֆիա, 1930,—1932*

— Խմբագիր՝ Օն. Միխիթարյան։

Нор Аракс. Новый Аракс. Вечерная газета. София, 1930—1932.

ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ։ *Օրգան հունահայ աշխատավորության։ Շաբաթաթերթ։ Աթենք, 1930—1932. 16 էջ, (52×37սմ).*

Нор шаржум. Новое движение. Орган трудящихся армян в Греции. Афины, 1930—1932.

ՇԱՐԺՈՒՄ։ *Քաղաքական, ընկերական, գրական թերթ։ Կ. Պոլիս, տպ. Մաղաքաճյան, 1930. 4 էջ (58×40սմ).*

— Արտոնատեր և պատ. տնօրեն Սուրեն Շամըլյան։

Шаржум. Движение. Общественно-политическая, литературная газета. Константинополь, 1930.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱԳԻՐՔ։ *Պարբերագիրք։ Բեյրութ, հրատ. Աբգարյան վարժարանի, 1930.*

— Խմբագիր՝ Եղիա Հ. Տոլպագյան։

Паткеразард орагирк. Иллюстрированный дневник. Периодич. издание. Бейрут, 1930.

ԶԱՆՔ։ *Նորագույն գրողներու ամսաթերթ։ Փարիզ, 1930—1931. 16 էջ, (27×17 սմ)։ Բաժանորդագինը 10 ֆրանկ։*

Джанк. Усилие. Журнал новейших писателей. Париж, 1930—1931.

1930 № 1—6, էջ 1—80

1931 № 7—12, էջ 81—160

1930 թվի մայիսին Փարիզի նորահաս գրողները կազմակերպեցին իրենց «Ն Գ. Ը.»-ընկերությունը և հուլիսից սկսեցին հրատարակել «Ջանք»-ը, որպես ամսաթերթ։ Երիտասարդ գրողների ստեղծագործությունների հետ, այս ամսագիրը տպագրել է թարգմանություններ, թատրոնի ու նկարչության, փիլիսոփայության և գիտական հարցերին նվիրված նյութեր։

Այս ժուռնալում տպագրվել են նաև սովետահայ գրողների երկերից։

1930 ՀՈՒԼԻՍ 1, № 1, էջ 1—16

11100 Սեմա, Ա. *Մինա։ [Բանաստեղծութ.]. էջ 3—5*

11101 Մ. Մ. *Վերապրում։ [Բանաստեղծութ.]. էջ 6*

11102 Նալպանտյան, Ս. *Սերը. էջ 6*

11103 Լուիս, Փ.. *Գիլիթիսի երգերը։ [Թարգմ. ֆրանս.]. էջ 7*

11104 Ժերալդի, Պ. *Տարակույս։ Թարգմ. էջ 7*

11105 Կյուլեսերյան, Ա. *Վենետիկ։ [Բանաստեղծութ.]. էջ 8*

11106 Չիպուկճյան, Պ. *Ներածություն Գերման ժամանակակից իմաստասիրության. էջ 9—10*

11107 Լաո-Ձեու: *[Չին փիլիսոփա]. էջ 11—12*

11108 Մորեր: *[Ռ. Ռոլանից, Վոլթերից]. էջ 12*

11109 Բույա: *[Նորավեպ]. էջ 13—15, № 2, էջ 28—30*

1930 ՕԳՈՍՏՈՍ 1, № 2, էջ 17—32

11110 Բարձիկ, Մ. *Կղզին։— Գաղտնիքը։— Օ՛ պանդուխտ եմ ես, ով տերը— Կը փշե...։ —Հին հուշեր։— Ծովուն հետ։— Հայրենի աղբյուր։— Կապույտ կարոտ։ [Բանաստեղծութ.]. էջ 19—21*

11111 Գոտլեռ, Շ. *Արբեցեք. էջ 21*

11112 Ձևս: *Հոգիի երգեր։ [Բանաստեղծութ.]. էջ 22*

11113 Սեմա, Ա. *Արվեստ թատերագրական. էջ 23—24*

11114 Լոնկֆելլո: *Նետն ու երգը։ [Բանաստեղծութ.]. էջ 27*

1930 ՀՈԿՏԵՄԲԵՐ, № 4, էջ 49—64

11115 Մանուշյան, Մ. *Մտքիս։— Վերհիշում։— Մորս հիշատակին։— Երազանք։— Ընդվզում։ [Բանաստեղծութ.]. էջ 51—53*

11116 Արմանյան, Մ. *Ատիս-Ապեպա. էջ 55*

11117 Սեմա, Ա. *Քաղաքավարությունը. էջ 57—58*

11118 Հայկազյան, Հ. *Մի պտույտ Ճապոնիայում. էջ 58—59*

1930 ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ, № 5—6, էջ 65—80

11119 Դանիելյան, Գ. *Սեր։ [Բանաստեղծութ.]. էջ 67*

11120 Հարենց, Ե. *Գաղթնիքը։ [Բանաստեղծութ.]. էջ 68*

11121 Կապենց, Ա. *Կես մարդը։ [Պատմվածք]. էջ 69—70*

11122 Լին-Չանկ-Ձու: *Գեղոն։ [Բանաստեղծութ.]. էջ 70*

11123 Սեմա, Ա. *Գրաքննություն. էջ 71—73*

11124 Հազարապետյան, Լ. *Նկարիչ Ի. Ե. Ռեպին. էջ 75—76*

11125 Մանուշյան, Մ. *Արտաշես Պալճյան։ [Նկարիչ]. էջ 76*

1931 ՓԵՏՐՎԱՐ—ՄԱՐՏ, № 8—9, էջ 97—114

11126 Արմանյան, Մ. *Երգեր իշխանիս համար։ [Բանաստեղծութ.]. էջ 99*

11127 Միհրունի, Գ. *Վոլթերի ծնունդը։ [Պատմվածք]. էջ 100—101*

11128 Սեմա, Ա. *Հուշերդ Ռաշելին համար։ [Բանաստեղծութ.]. էջ 102*

11129 Մանուշյան, Մ. *Քերթողի սեր։ [Բանաստեղծութ.]. էջ 102*

11130 Քանի մը *կարծիքներ խորհրդային Հայաստանի գրականության մասին։ [Շիրվանզադեի Ալազանի, Գուրգեն Մահարու, Ն. Զարյանի մասին]. էջ 106—107*

1931 ԱՊՐԻԼ, № 10, էջ 114—128

11131 Հակոբ Խոճունի: *1915. (Եղերգություն). էջ 117*

11132 Արմանյան, Մ. Ցայգալին։ [Բանաստեղծութ.]. էջ 117

11133 Հարենց, Ե. Գինովություն— Կսկիծ։— Բաժանում։ [Արձակ երգեր]. էջ 118

11134 Ն. Գ. Ը. Զեկույց նորագույն գրողների ընկ.]. էջ 125—126

11135 Սարյան, Գ. Պատմություն գրված ժայռի վրա։ [Բանաստեղծութ.]. էջ 132—133

11136 Հարենց, Ե. Հույսին։— Տրտմություն։ [Բանաստեղծութ.]. էջ 134

11137 Մանվելյան, Մ. Մտորումներ. էջ 136—137

11138 Սեմա, Ա. Պատճառը։ [Պատմվածք]. էջ 140—142

1931 ՄԱՅԻՍ, № 11, ԷՋ 131—144

11139 Սեմա, Ա. Անգործություն։ [Հատված վեպից]. էջ 147—149

1931 ՀՈՒՆԻՍ. № 12, ԷՋ 145—160

11140 Գնդունի, Տ. Գրական լուման։ [«Զանգ»-ի մասին]. էջ 150—151

11141 Մախուտյան, Ն. Պատմությունը որպես ուսում և գիտություն. էջ 152—154

11142 Ցանկ նյութերու [«Զանգ»-ում տպագրված]. էջ 159—160

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ։ Քաղաքական, հասարակական և գրական շաբաթաթերթ։ Թեհրան, 1930—1952. 40 էջ, (39×30 սմ)։ Համարը 30 ռեալ. — Խմբագիր՝ Հայկ Գարագաշ։

Верацнунд. Возрождение. Политический, общественный и литературный еженедельник. Тегеран, 1930—1952.

Գրամեքենայի վրա տպագրված, պատկերազարդ պարբերական է եղել «Վերածնունդ»-ը։ Առաջադիմական ուղղություն է ունեցել։

1947 ՆՈՅԵՄԲԵՐ 29, ԷՋ 1—40

11143 Հայկական ՍՍՌ Պետական հիմնը. շպկ. 1.

11144 Գարագաշ, Հ. Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձը. էջ 5—6

11145 Հայոց եկեղեցու իրավական դրվածքը Սովետական Հայաստանում. էջ 7

11146 Մելիք-Թանգյան, Ն. արքեպ. Սովետական Հայաստանի 27 ամյակի առթիվ. էջ 8

11147 Դրամբյան, Ռ. եպիսկ. Հայ եկեղեցու կուլտուրական դերը. էջ 9

11148 Կենսագրականներ. [Ա. Իսահակյանի, Մ. Արազու, Ա. Խաչատրյանի, Վ. Վաղարշյանի, Հ. Ստեփանյանի և այլն]. էջ 10—11

11149 Ուստրս Ռեփլըընի վճիռը Հայաստանի սահմանների մասին. էջ 12—16

11150 Տեր-Վարդանյան, Ա. Դարերի երազը. [Սովետ. Հայաստանի մասին]. էջ 17

11151 Շիկաներ: Տոն ցնծության. էջ 18

11152 Երեմյան, Ա. Սովետական Հայաստանի երաժշտական արվեստը և կոմպոզիտորները. էջ 19—21

11153 Իսահակյան, Ա. Հայրենիք։ [Բանաստեղծութ.]. էջ 21

11154 Սովետական Հայաստանի անող գիտական կադրերը։ [Ցուցակ-ակնարկ]. էջ 22—24

11155 Էմին, Գ. Գարնանային երգ։ [Բանաստեղծութ.]. էջ 24

11156 Սարյան, Գ. Տաղ Հայաստանին։ [Բանաստեղծութ.]. էջ 25

11157 Զարյան, Ն. Ազատության զորավարին։ [Բանաստեղծութ.]. էջ 25

11158 Աղավնի: Ջատված երգ։ [Բանաստեղծութ.]. էջ 25

11159 Շիրազ, Հ. Արարատին։ [Բանաստեղծութ.]. էջ 28

11160 Սարմեն: Հայաստան։ [Բանաստեղծութ.]. էջ 28

11161 Վշտունի, Ա. Հայաստան։ [Բանաստեղծութ.]. էջ 28

11162 Կապուտիկյան, Ս. Ներբող Հայաստանի։ [Բանաստեղծութ.]. էջ 29

11163 Արման, Ա. Երևան։ [Բանաստեղծութ.]. էջ 29

11164 Պողոսյան, Հ. Հովհաննես Թումանյանին։ [Բանաստեղծութ.]. էջ 30

11165 Բորյան, Գ. Այս քարերը անխոս... [Բանաստեղծութ.]. էջ 30

11166 Վանունի, Ս. Միակ բառը։ [Բանաստեղծութ.]. էջ 31

11167 Վաճեյան, Վ. *Հայրենի սեր։ [Բանաստեղծութ.]. էջ 34*

11168 Հակոբյան, Ա. Մ. *Ի՞նչ տվեց սովետական իշխանությունը հայ ժողովրդին. էջ 35—36*

11169 Գրիգորյան, Ա. *Փառքի ճամբա Հայաստան։ [Բանաստեղծութ.]. էջ 37*

11170 Սարվարյան, Մ. *Կինը մեր ազատ հայրենիքում. էջ 38*

ՏԵՂԵԿԱՏՈՒ *Մուրատ-Ռափայելյան նախկին աշակերտաց Միության։ Փարիզ, 1930—1931. 16, 32 էջ, (24×15 սմ)։ Բաժանորդագինը՝ ոչ Միութ. անդամներին 25 ֆր.*

— Պատասխանատու տնօրեն՝ Ա. Ալթունյան։

Техекату. Известия Союза бывших учеников Мурат-Рафаелян школы. Париж, 1930—1931.

1930 № 1—6, էջ 1—96

1931 № 6—12, էջ 1—196

1930 ՀՈՒԼԻՍ, № 4, ԷՋ 73—104

11171 Սերի *Մուրատյան վարժարանին պաշտոնական բացման առթիվ. էջ 73—74*

11172 Հանգիստ *Գեորգ Ե. կաթողիկոսին. էջ 75*

11173 Պողոս-Նուպար *փաշա։ [Մահվան առթիվ]. էջ 76—80*

11174-75 Արինե. *Պաշտոնական բացում Մուրատյան վարժարանի. էջ 82—87*

11176 Թ. Ֆրիտեոֆ Նանսեն։ *[Մահվան առթիվ]. էջ 87—88*

11177 Տոպանյան, Հ. *Միությանս կյանքեն. էջ 89—90*

11178 Պրն. Հ. *Գնդունիի ճառը։ [Դպրոցի բացմանը]. էջ 91—95*

11179 Վեր. *Հայր Սահակ վարդապետի ճառը. [Դպրոցի բացմանը]. էջ 95—96*

11180 Խաչատրյան, Ա. *Ողջերձ առ Մուրատ-Ռափայելը։ [Բանաստեղծութ.]. էջ 97*

11181 Սրապյան, Վ. *Մեծն Մխիթարա և բարերարներու հիշատակին։ [Բանաստեղծութ.]. էջ 99—100*

11182 Նոր *անդամակցություններ։ Սահնագրություն. [Միության]. էջ 101—103*

1 9 3 1

ԱՐՄԵՆԻԱ։ *Շաբաթաթերթ ազգային, քաղաքական և հասարակագիտական։ Բուենոս-Այրես, 1931—1934. 4 էջ, (65×47 սմ).*

Армения. Национально-политический и общественный еженедельник. Буенос-Айрес, 1931—1934.

ԱՐՓԻ։ *Հայ ընտանիքին պարբերականը։ 1931—1932. Բոստոն, 16 էջ (24×16 սմ)։ Բաժանորդագինը 2 դոլար։*

Арпи. Солнце. Армянский семейный журнал. Бостон, 1931—1932.

Երկշաբաթաթերթ «Արփի»-ն մանկա-պատանեկական պարբերական է եղել, ծնողների համար նույնպես որոշ նյութեր է տպագրել։ Ծանուցման մեջ ասված է — [1932 № 5]. «Արփի»-ն պիտի տա ազգային պատմութենեն, հայ գրականութենեն, Հայաստանի աշխարհագրութենեն, տոհմիկ ավանդություններեն ու սովորություններեն առնված և պարզ լեզվով ներկայացված ծանոթություններ, իբր օժանդակ միջոց, հայ լեզվի ուսուցման և ամուր հիմ՝ նոր սերունդի հայեցի դաստիարակության։

«Արփի»-ին պիտի տա հաճելի ժամանց ապահովող՝ հանելուկներ, առակներ, զվարթ խոսքեր, մանկական-ընտանեկան խաղեր»։

1932 ՄԱՐՏ 1, № 5, ԷՋ 1—16

11183 Նապաստակը *և կրիան։ [Պատմվածք]. էջ 1—2*

11184 Համբույր *մը։ [Անստորագ. բանաստեղծութ.]. էջ 2*

11185 Հիմա *մայրիկ։ [Պատմվածք]. էջ 3—4*

11186 Գլավանյան, Թ. *Սուտ գմբեթով եկեղեցին։ [Պատմվածք]. էջ 5*

11187 Թանտրնյան, Պ. *[13 տարեկան]. արջն ու մեղուները։ [Պատմվածք]. էջ 5*

1188 Զվարթ *էջեր։ [Երգիծական]. էջ 6—7*

11189 Գյուղացին *և ծառը։ [Առակ]. էջ 7*

11190 Առարկա *գտնել։ [Խաղ]. էջ 7*

11191 Թափառական, Ս. *Կաքավին զրույցը։ (Ավանդություն). էջ 8—10*

11192 Լուֆրի, Մինաս։ *Պատասխան։ [Բանաստեղծութ.]. էջ 13*

11193 Կարին *կարևորությունը. էջ 14—15*

ԳՈՅԱՄԱՐՏ: *Մարսել, 1931. № 1—16.*

Гойамарт. Борьба за существование. Марсель, 1931.

ԶՎԱՐԹՆՈՑ: *Տարեգիրք։ Կ. Պոլիս, տպ. «Խալըք» — Քեչիշյան, 1931—1933. 148 էջ (14×21 սմ). գինը 150 ղրշ.*

— Կազմեց՝ Հմ. Ժ. վրդ. Պախթիարյան։

Звартноц. Ежегодник. Константинополь, 1931—1933.

Այս տարեգիրքը հրատարակվել է Կեդրոնական փաշալի ախքատախնամ մարմնի կողմից։ Տարեգրքի հրատարակումը նպատակ է ունեցել՝ «...անոր հասույթով մղում տալու բազմակարոտ չքավորներու և աղքատիկ երկսեռ ուսանողներու օժանդակության գործին։

ՏԱՐԻ Բ.—Գ. 1932—1933, ԷՋ 1—178

11194 Մանուկյան, Ս. Պ. *Ինչ որ ունիմ։ [Բարոյախոսական]. էջ 12—16*

11195 Սինանյան, Գ. *Կարեկցության զգացումը։ [Բարոյախոսական]. էջ 17—22*

11196 Ախքատախնամ *մարմին Կ. Փաշայի 1908—1933. [25-ամյակի առթիվ]. էջ 25—40*

11197 Տեր-Հակոբյան, Ա. *Սեն-Քլուի անտառը. էջ 41—47*

11198 Հինդլյան, Հ. Թ. *Ազգերու ընկերությունը և դպրոցը. էջ 51—56*

11199 Առսենյան, Ս. *Ջափահասներ կրնա՞ն սովրիլ. էջ 57—61*

11200 Սեպուհյան, Ն. Մ. *Կինը ընտանիքին սրտին գուրս. էջ 62—63*

11201 Նիկողոսյան, Ա. *Գրականության դերը. էջ 64—77*

11202 Գարիպյան, Ա. *Գեղարվեստի հրաշակերտներ. էջ 83—103*

11203 Քեչիկյան, Մ. *Հոգեկան խորհրդավոր երևույթները գիտության առջև. էջ 111—124*

11204 Բ. Ա. Կ. Կ. *Պոլսահայ գաղութը անցյալի մեջ. էջ 131—137*

11205 Բասմաջյան, Կ. Հ. *Բյուզանդիոնի պատմականը. էջ 138—141*

11206 Մառք, Հ. *Պզտիկ լրագրավաճառը։ (Ուրվագիծ). էջ 162*

11207 Այվազյան, Ն. *Խմորում։ [Բանաստեղծութ.]. էջ 163—164*

11208 Բագումյան, Թ. *Ճամբու խաչաձևումներ։ [Պատմվածք]. էջ 168—173*

11209 Ճեպեկյան, Ժ. *Լուսնի լուսով... [Արձակ բանաստեղծութ.]. էջ 174—175*

11210 Սեպուհյան, Լ. *Քա՞ղցր մանկությունս [Արձակ բանաստեղծութ.]. էջ 176*

11211 Խաչենյան, Հ. *Կը հիշե՞ս... [Արձակ բանաստեղծութ.]. էջ 177*

ԺՈՂՈՎՈՒՐԴ: *Օրաթերթ։ Բեյրութ, 1931.*

— Արտոնատեր՝ Միքայել Կապրաչ։

— Խմբագիր՝ Միհրան Աղազարյան։

Жоховурд. Народ. Газета. Бейрут, 1931.

ԻԶՄԻՐ ԱԿԱ: *Զավեշտաթերթ։ Սոֆիա, 1931—1932. № 1.*

— Խմբագիր՝ Ս. Իզմիրյան։

Измир Ака. Сатирикон. София, 1931.

ԽՐԱԽՃԱՆՔԻ ՏԱՐԵԳԻՐՔ: *Կ. Պոլիս, հրատ. Զ. Արշակ, 1931—1932.*

Храхчанки тарегирк. Ежегодник пиршества. Константинополь, 1931—1932.

ԿՅԱՆՔ ԵՎ ԱՐՎԵՍՏ: *Տարեգիրք։ Փարիզ, տպ. «Մասիս», 1931—1936. 274 էջ, (26×17 սմ)։*

— Հրատարակիչ՝ Մերուժան Պարսամյան.

Кянк ев Арвест. Жизнь и искусство. Ежегодник. Париж, 1931—1936.

Այս հանդեսը սկզբում եղել է տարեգիրք, իսկ 1936 թվից հրատարակվել է որպես ամսագիր։

Այս ամսագրի նպատակների մասին հետևյալն է ասված 1936 թվի № 1-ում. «Մեր գուրգուրանքին պաշտամունքի առարկան պիտի դարձնենք մեր միակ գանձը, մայրենի լեզուն, որ խլված չե մեզմե, հայրենի և գրական ավանդությունները, մեր ազգային մշակույթի թանկագին արժեքները։ ...Մյուս կողմե, ժամանակին հետ ստիպված ըլլալով քաշելու, արձագանք պիտի տանք գրական-գեղարվեստական նորագույն շարժումներուն։

ՀԱՅ ԿՅԱՆՔ: *Երկշաբաթաթերթ։ Ազգային, գրական, գեղարվեստական և մարզական։ Փարիզ, 1931.*

— *Խմբագիր՝ Տրդատ Նշանյան։*

Ай Кянк. Армянская жизнь. Двухнедельник. Париж, 1931.

ՀԱՍԿ: *Ամսաթերթ կրոնական, կրթական, գրական և բանասիրական։ Պաշտոնական հրատարակություն Կիլիկիո կաթողիկոսության։ Անթիլիաս [Բեյրութ], տպ. Դպրեվանք, 1931—1957. (շարունակվում է), 32 էջ, (24×16 սմ)։ Բաժանորդագինը 10 Լիբանանյան ոսկի։*

Аск. Колос. Журнал религиозный, филологический. Официальный орган Киликийского Католикосата. Бейрут, 1931—1957.

«Հասկ»-ը Կիլիկյան կաթողիկոսարանի օրգանն է, կրոնական-եկեղեցական նյութերի հետ տպագրել է նաև գրական-բանասիրական հոդվածներ։ «Հասկ»-ը սերտ կապ է պահպանել էջմիածնի հետ, աջակցել է հայ ժողովրդի կրթական-շինարարական գործին։ 1956 թվից «Հասկ»-ը ընդունել է դաշնակցական ուղղություն։

Մենք միքանի տարվա կոմպլեկտներից օգտվելով, ներքևում թվել ենք «Հասկ»-ի բանասիրական և գեղարվեստական նյութերի նկարագրությունը։

11212 Թլկատինցի, Հ. *«Աչեր ի՞նչ եք անցիր...»։ [Բանաստեղծութ.]. 1943, էջ 230—231*

11213 Քասունի, Ե. *Ջ. և Է. դարու հայ դաստիարակությունը. 1944, էջ 19—23*

11214 Գարեգին *արքեպ. Խ. Հայաստանի գիտության ճեմարանը. 1944, էջ 147—150*

11215 Եղիայան, Բ. *Հայը արաբ մատենագրության մեջ. 1944, էջ 164—167*

11216 Տեր-Ներսիսյան, Ս. *Մանրանկարչության մասնագետ [Գարեգին կաթողիկոս]. 1945, էջ 72—73*

11217 Թումանյան, Հ. *«Հայր Գարեգին, մենք երեքով...» [Անտիպ բանաստեղծութ.]. 1945, էջ 216*

11218 Դեմիրճյան, Դ. *Վարդանանք։ [Գրախոսութ.]. 1945, էջ 218—220*

11219 Շիրազ, Հ. *Բեկոր։ [Բանաստեղծութ.]. 1945, էջ 425*

11220 Աճառյան, Հր. *Մաշտոց. 1945, էջ 426—431*

11221 Երեմյան, Ա. *Տաղասաց Օքսիզ Տերտեքի. 1945, էջ 446—449*

11222 Մեսրոպ *Արեղա։ Տաղասաց Մարտերով. 1955, էջ 209—211*

11223 Առաքելյան, Վ. *Հայերենի ոճաբանությունը. 1955, էջ 225—232*

11224 Զարեհ, Ե. *«Այդպես թողած աշխարհն ու ինձ...»։ [Բանաստեղծութ.]. 1955, էջ 232*

ՀՆՉԱԿՅԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ: *Բրավիտենս, 1931—1932.*

— *Խմբագիր՝ Ե. Սիրվարդ,*

Гнчакян тарегир. Ежегодник Гнчаков. Провиданс, 1931—1932.

— *Լույս են տեսել Ա. և Բ. հատորները։*

ՄԱՍԻՍ: *Գրական, գեղարվեստական, ժողովրդական պատկերազարդ տարեգիրք։ Սոֆիա, 1931—1935*

— *Խմբագիր՝ Արմեն Սևան։*

Масис. Литературно-художественный, народный иллюстрированный ежегодник. София, 1931—1935.

Այս տարեգիրքն ունի՝ գրական-գեղարվեստական բաժին, «Դիվան», որտեղ պատմական նյութեր են տպագրվել, հետաքրքրական է նաև «Պոլկաբահայ երեկը և այսօրը» բաժինը։

«Մասիս» տարեգրքի մեջ նութեր կան նաև գիտական-բժշկական բնագավառներից, կա նաև ընդարձակ խրոնիկա և գրախոսություն լույս տեսած հայերեն գրքերի։

ՄԵՆՔ: *Պարբերական գրականության և արվեստի։ Փարիզ, «Արաքս» տպ. Թոփալյան եղբ. 1931—1932. 128 էջ, (23×15 սմ)։ Բաժանորդագինը 40 ֆր.*

Менк. Мы. Периодическое издание литературы и искусства. Париж, 1931—1932.

Այս պարբերականի 1931 թվի № 2-ի առաջին հոդվածում գրված է. «Մենք, ստորագրյալներս, երիտասարդ գրողներ, Փարիզի մեջ կազմած ենք գրական խմբակ մը, «Մենք», հետևյալ առաջադրություններով.—

Սերտ ընկերական կապ հաստատել և զորացնել անկեղծ համերաշխության ոգին իրարու մեջ, այդ-

պիտով ավելի արդյունավետ կերպով ծառայելու համար հայ մշակույթին և գրականության։

Մեր համերաշխությամբ ու համագործակցությամբ իսկ, որ երբեք չպիտի խափանե յուրաքանչյուրիս անհատականության ազատ ու լրիվ զարգացումը, շաղախ հանդիսանալ չորս ափերով ցրըված երիտասարդ գրողներու միջև ու այդպիսով դյուրացնել հայ նորագույն գրականության ազատ զարգացումն ու ծաղկումը։

Փնտրելով յուրաքանչյուրին մոտ նույն ժողովրդի զավակներուն հատուկ հասարակաց գծեր, ներշընչումներ ու մտահոգություններ, ճամբա հարթել, որոնել և կերպարանք տալ, ժամանակի ընթացքին, ընդհանուր հանգանակի մը, որ ազատություն տալով հանդերձ յուրաքանչյուրին անհատականության, համապատասխանի հայ մշակույթի պահանջներուն։

Նշան Պեշիկթաշլյան։
Ղևոնդ Մելոյան.
Հրաչ Սարգիսյան.
Ռաֆայել Զարդարյան.
Հարություն Ֆրենկյան.
Ոստանիկ.
Գ. Գեղարքունի
Նիկողոս Սարաֆյան.
Բյուզանդ Թոփալյան.
Փայլակ Միքայելյան.
Արշամ Տատրյան.
Զ. Մ. Որբունի.
Շահան Շահնուր.
Վազգեն Շուշանյան.
Շավարշ Նարդունի։

1931, № 1, էջ 1—64

11225 Մենք: [Հանդեսի մասին]. էջ 1

11226 Ֆրենկյան, Հ. Վեպի մը հերոսին. էջ 4—6

11227 Տատրյան, Ա. Կարծես ես...։— Ճամբային սպիտակ։ [Բանաստեղծութ.]. էջ 7

11228 Շահան, Շահնուր: Լյուքսեմպուրկի պահապանները. էջ 8—11

11229 Պեշիկթաշլյան, Ն. Մեր ծիծաղը. էջ 12—15

11230 Ոստանիկ: Զառանցանք։— Սովերի մեջ կծխան։— Այս ես եմ...։ [Բանաստեղծութ.]. էջ 17

11231 Մելոյան, Ղ. Խավարը։— Կետ մը միայն։ [Բանաստեղծութ.]. էջ 18—19

11232 Միքայելյան, Փ. Սեր։ [Բանաստեղծութ.]. էջ 20—22

11233 Շուշանյան, Վ. Կը պարավեմ բառերը...։— ...Ու կը չատագովեմ բռնությունը. էջ 23—27

11234 Զարդարյան, Ռ. Փոթորիկ։ [Բանաստեղծութ.]. էջ 28

11235 Թոփալյան, Բ. Երաժշտական։ [Բանաստեղծութ.]. էջ 29—30

11236 Սարգսյան, Հ. Հապճեպ ակնարկ մը ֆրանսիական արդի գրականության վրա. էջ 31—33

11237 Որբունի, Զ. Մ. Գրպանի տետրակ. էջ 34—36

11238 Նարդունի, Շ. Մենք... Մենք... Մենք. էջ 37—40

11239 Սարաֆյան, Ն. [Անվերնագիր հոդված]. էջ 41—47

11240 Գեղարքունի, Գ. Սպիտակ վարդեր։ [Բանաստեղծութ.]. էջ 48—49

11241 Գրականության և արվեստի լրատու. էջ 47—49

11242 Պարբերական մամուլ. էջ 61—63

11243 Թատրոն. էջ 63

11244 Նկարչություն. էջ 64

1931, № 2, էջ 65—128

11245 Սարաֆյան, Ն. Մենք. էջ 69—70

11246 Ոստանիկ: Հայաստան։ [Բանաստեղծութ.]. էջ 71—72

11247 Որբունի, Զ. Մ. Գրպանի տետրակ. էջ 73—75

11248 Զարդարյան, Ռ. Ո՞ւր կերթա ճամբորդը... էջ 76

11249 Նարդունի, Շ. Բաբելոնի աշտարակը. էջ 77—82

11250 Թոփալյան, Բ. Գեղեցկությունն արտասվեց. էջ 83

11251 Շուշանյան, Վ. Վասն տարածության և հաղթանակի։— Ու ներկայության ընդդեմ բոլոր փախստականներուն. էջ 84—92

11252 Ֆրենկյան, Հ. Ընդհատված հեռախոսը. էջ 93—98

11253 Տատրյան, Ա. Գերեզմանի մը քով ու գերեզմանի մը մեջ... [Բանաստեղծութ.]. էջ 99—100

11254 Սարգիսյան, Հ. Երեք քույրերը. էջ 101—105

11255 Գեշիկբաշյան, Ն. Հայրենակցական Միությունները։ [Երգիծական]. էջ 106—114

11256 Գրականության և արվեստի լրատու. էջ 115—126

11257 Թատրոն: [Վ. Փափազյանի մասին]. էջ 126—127

1932, № 3, էջ 129—194

11258 Շահան, Շահնուր: Պարապ սենյակի պատճառավ։ [Պատմվածք]. էջ 129—145

11259 Շահան, Շահնուր: «Պույնուպլըս-ները» [Պատմվածք]. էջ 146—159

11260 Գեշիկբաշյան, Ն. Դերասան Ճաշխաթունի ճառը։ [Երգիծական]. էջ 160—163

11261 Ցրենկյան, Հ. Անձնասպանության փորձ մը։ [Պատմվածք]. էջ 164—170

11262 Գեշիկբաշյան, Ն. Գետափին քով։ [Բանաստեղծութ.]. էջ 171

11263 Կոստանդյան, Հ. Այս իրիկուն։ [Բանաստեղծութ.]. էջ 172—173

11264 Սարգիսյան, Հ. Մարգրիտի իշխանը։ [Պատմվածք]. էջ 174—179

11265 Տատրյան, Ա. Սիրելիդ իմ Հրանդ. էջ 180—189

11266 Գիրքեր: [Անոտացիաներ]. էջ 190—192

1932, № 4—5, էջ 195—278

11267 Գեշիկբաշյան, Ն. Գլուխ մը... [Պատմվածք]. էջ 195—224

11268 Որբունի, Զ. Մ. Գինովը։ [Պատմվածք]. էջ 225—230

11269 Կոստանդյան, Հ. Արևելյան գորգ։ [Արձակ բանաստեղծութ.]. էջ 231

11270 Կոստանդյան, Հ. Խոսելու մասին. էջ 232—236

11271 Շահան, Շահնուր: Պճեղ մը անուշ սիրտ։ [Պատմվածք]. էջ 237—251

11272 Զարոյան, Պ. Հատված։ [Պատմվածք]. էջ 252—258

11273 Ցրենկյան, Հ. Մեկը անցավ։ [Պատմվածք]. էջ 259—270

11274 Գեշիկբաշյան, Ն. Վահրամ Փափազյան. էջ 275

11275 Թակուճց, Ա. Մթնաձոր։ [Ե. Պետհրատ. Գրախոս՝ Նարդունի, Շ.]. էջ 276—277

ՄԵՐ ՈՒՂԻՆ: *Քաղաքական, հասարակական, գրական երկօրյա թերթ։ Փարիզ, 1931—1932. 4 էջ, (60×44 սմ).*

Мер Угин. Наша путь. Политическая, общественная, литературная газета. Париж, 1931—1932.

Սովետական կողմնորոշում ունեցող թերթ է եղել։

ՄԻՄՈՍ: *Երգիծական շաբաթաթերթ։ Ստամբուլ, 1931.*

Мимос. Мим. Сатирический еженедельник. Стамбул, 1931.

ՄՈՒՐԱՏ-ՌԱՖԱՅԵԼ: *Պարբերաթերթ Մուրատ-Ռաֆայելյան նախկին սանոց Միության։ Միլան, 1931.*

Мурат-Рафаел. Периодич. издание Союза бывших воспитанников Мюрат-Рафаельской школы. Милан, 1931.

ՆԱՅԻՐԻ ԱՇԽԱՐՀ: *Պատկերազարդ ամսաթերթ։ Փարիզ, 1931. 8 էջ, (33×25 սմ)։ Բաժանորդագինը 18 ֆր.*

— Խմբագիր՝ Ս. Թորոսյան։

Наири Ашхар. Страна Наири. Иллюстрированный журнал. Париж, 1931.

Գրական-գեղարվեստական իլյուստրացիոն ժուռնալ է եղել «Նայիրի աշխարհ»-ը։

1931 ՍԵՊՏԵՄԲԵՐ 15, № 4, էջ 1—8

11276 Քոչարյան, Ս. Նար-Դոս։ [Գրակ. գործ. 45-ամյակի առթիվ]. էջ 2

11277 Նար-Դոս: Մի գլուխ «Սպանված աղավնի» վեպից. էջ 2—3

11278 Տեսինի «Կոմիտաս» երգչախումբը. էջ 4

11279 Փարիզահայ գաղութի գեղարվեստական կյանքը. էջ 5—6

11280 Սակս-անկս: [Հանելուկ, լուրեր...]. էջ 7

11281 Սինեմա. էջ 8

ՆՈՐ ԹՈՄԱՐԶԱ։ *Պարբերաթերթ Թոմարզայի Միացյալ ընկերության։ Նյու-Յորկ, տպ. «Երիտ. Հայաստանի»։ 1931—1933. 8 էջ, (25×17 սմ)։ Բաժանորդագինը 1 դոլար։*

Нор-Томарза. Новая Томарза. Периодическое изд. Объединенного товарищества Томарзы. Нью-Иорк, 1931—1933.

«Նոր Թոմարզա»-ն նպատակ է ունեցել՝ «...միջոց մը դառնալ աշխարհի ամեն կողմ ցիրուցան եղած Թոմարզացիները իրարու կապելու, իրարու հաղորդակից ընելու»։ Ինչպես ցույց է տալիս ներքևում եղած մեկ համարի նկարագրությունը, այդ պարբերականում տպագրվել են՝ «Թոմարզայի Միացյալ ընկերության» գործունեության վերաբերյալ նյութեր, նրա մասնաճյուղերի աշխատանքը լուսաբանող հոդվածներ և լուրեր, տեղեկանքներ։

1932 ՀՈԿՏԵՄԲԵՐ—ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ, № 9, ԷՋ 1—16

11282 Նամակ *Նոր Թոմարզայեն. էջ 2*

11283 Ողջույն *Խ. Հայաստանին։ [12-րդ տարեդարձի առթիվ]. էջ 2—3*

11284 Զալըմենց, Վ. *Ցենեսէի Ռուբինյանցի Ուսարի մասնաճյուղը կխոսի. էջ 3—5*

11285 Կոչ *բոլոր Թոմարզացիներու և շրջակա գյուղացիներուն. էջ 5—6*

11286 Թոմարզայի *Միացյալ ընկ. Գ. համագումարը. էջ 6—9*

11287 Լուրեր. *էջ 15—16*

ՆՈՐ ՉՆՔՈՒՇ։ *Պաշտոնաթերթ Չնքուշի վերաշինաց Միության։ Նյու-Յորկ, 1931—1933. 12 էջ, (27×21 սմ).*

Нор-Чнкуш. Орган Земляческого Союза Ченкушцев. Нью-Иорк, 1931—1933.

ՊԱՅՔԱՐ։ *Հանդես ազգային, գրական և տնտեսական։ Բոսթոն, տպ. «Պայքարի», 1931. 128 էջ, (27×19 սմ)։*

Пайкар. Борьба. Национально-литературный и экономический журнал. Бостон, 1931.

Ռամկավար-ազատականների պարբերականն է եղել «Պայքար»-ը։

1931 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԷՋ 1—128

11288 Նազար, Ա. Ն. *Կիլիկիո ազատագրական շարժումը։ Հուշեր ու դիտողություններ. էջ 1—8*

11289 Մալեզյան, Վ. *Հովահարը։ [Բանաստեղծութ.]. էջ 8*

11290 Նարպեյ, Խ. *Հայոց մայրերը։ [Բանաստեղծութ.]. էջ 10*

11291 Մեսիայան, Ն. *Ի խնդիր ճշմարտության. էջ 11—15*

11292 Մուրատ, Շատախցի: *Դրվագներ Վասպուրականի ժամանակակից կյանքեն։— Մկրտիչ Ավետիսյան, իր գործերն ու նահատակությունը. էջ 19—24*

11293 Հովնանյան, Հ. *Աննա տիկին։ (Ավանդավեպ). էջ 25—29*

11294 Մալեզյան, Վ. *Ստգտանք։ [Բանաստեղծութ.]. էջ 29*

11295 Կեպենլյան, Ս. *Կիլիկյան հայ դեմքեր։ (Զինադադարի շրջանեն). էջ 30—42*

11296 Պարոնյան, Հ. *Մրջյուններուն բողոքագիրը։ [Երգիծանք]. էջ 43—44*

11297 Դուրյան, Պ. *Նէ։ [Բանաստեղծութ.]. էջ 44*

11298 Երեմյան, Հ. Ս. *Հայ գիրքը Ալիշանեն առաջ և վերջը. էջ 45—57*

11299 Դև: *Քառյակներ. էջ 57*

11300 Նազար, Ա. Ն. *Կիլիկո հայրիկը։ [Ղևոնդ քահ. Նահապետյանի հոբելյանի առթիվ]. էջ 58—59*

11301 Թյուրյուճյան, Լ. *Ընկերային խնդիրներ պատմական ակնոցով։— Հետադիմություն և ընկերավարություն. էջ 61*

11302 Աճեմյան, Լ. *Էջեր Ա. Եկարյանի «Հուշերը»-են. էջ 66—69*

11303 Պողոս Նուբար: *Տնտեսական ռամկավարություն. էջ 70—74.*

11304 Զուտ *եկամուտներ ինչպես բաժանված են ժողովրդին և միլիոնատերերու միջև. էջ 75*

11305 Գնդունի, Հ. *Դրվագներ Կարսի կռիվներեն. էջ 77—85*

11306 Ալփասլան: *Կենդանյաց ժողով։ [Բանաստեղծութ.]. էջ 85*

11307 Օտյան, Ա. *Հիշատակի մը վերադարձը։ (Անոնց որ ծաղկապսակ չունին). էջ 86*

11308 Նարբանյան, Մ. *Սողոմոնի երկրորդ դատաստանը։ (Պատմվածք)։ էջ 87—89*

11309 Դուրյան, Պ. *Ի՞նչ կսեն։ [Բանաստեղծութ.]. էջ 89*

11310 Միրազենց, Վ. Մ. *Հետաքրքրական դըրվագ մը սուլթան Համիտի կյանքեն. էջ 90—98*

11311 Վահան, Վ. Զ. *Ամերիկյան արդի գրականությունը. էջ 99—106*

11312 Շաքլյան, Ա. *Շատ ուրախ եմ այս գիշեր... [Պատմվածք]. էջ 107—112*

11313 Դուրյան, Պ. *Սիրել։— Դրժել։ [Բանաստեղծութ.] էջ 113*

11314 Նազար, Ն. *Հեռապատկերը. էջ 114—115*

11315 Պարոնյան, Հ. Հ. *Մրծաղ և Կերբերոս [Երգիծանք]. էջ 116—118*

11316 Թիրաքյան, Հ. *Այգի և էշ։— Կաթսա։— Պարտատեր։— Նասրետին դատավորը։ [Առակներ]։ էջ 120*

11317 Զոպանյան, Ա. *Պողոս Նուպար փաշայի հայրենակցական գործունեությունը. էջ 121—126*

ՊԱՏԿԵՐ: *Ազգային, գրական, գեղարվեստական։ Նոր սերունդին շաբաթաթերթը։ Ստամբուլ, 1931.*

— Վարիչ-խմբագիր՝ Ավ. Ալեքսանյան։

Паткер. Картина. Национально-литературный, художественный еженедельник. Стамбул, 1931.

ՍԱՎԱՌՆԱԿ-ԶԵՊԼԻՆ: *Ազգային, և քաղաքական թերթ երգիծական։ Կահիրե, 1931—1933*

Саварнак-Зеблин. Самолет-Цепелин. Национально-политическая юмористическая газета. Каир, 1931—1933.

ՎՏԱԿ: *Ամսաթերթ։ Գրական, կրոնաբարոյական, մանկական։ Սաութ-Միլվոքի, 1931.*

Втак. Речка. Литературный, религиозно-моральный, детский журнал. Саути-Милвоки, 1931.

ՕՇԱԿԱՆ: *Գրական, ազգային և ընկերային ամսագիր։ Փարիզ, 1931.*

Ошакан. Литературный, общественно-национальный журнал. Париж, 1931.

Թեև «Գրական, ազգային և ընկերային ամսագիր է կոչվում», բայց շատ աղքատիկ բովանդակություն է ունեցել «Օշական»-ը։

1931 ՀՈՒՆՎԱՐ, № 3, ԷՋ 1—16

11318 *Հայ ապրինք։ [Խմբագրական]. էջ 1—2*

11319 Անտոնյան, Ա. *«Զարխի ֆալագա» [Պատմըվածք]. էջ 3—4*

11320 Տարոնյան, Ա. *Ամանոր։ [Բանաստեղծութ.]. էջ 4*

11321 Ունենյան, Մ. Գ. *Նոր տարվա պատկերներ. էջ 5—7*

11322 Մինասյան, Մ. Գ. *Քանի մը խոսք. էջ 7*

11323 Տարոնյան, Գ. *Ես խնծի. էջ 8*

11324 Գազանճյան, Թ. *Մեմոյի հավատարիմ կինը։ [Պատմվածք]. էջ 9—10*

11325 Տարոնյան, Ա. *Զարագուշակ մղձավանջ։ [Արձակ բանաստեղծութ.]. էջ 10*

11326 Ռուբենյան, Ա. *Այց Սև ծովու ափերուն. էջ 11—12*

11327 Անեմյան, Բ. *Ծնունդի դրվագ։ [Պատմըվածք]. էջ 13*

11328 Նոաիգն: *Երբ սիրտը չմարախեր... [Թարգմ. հունարենից]. էջ 14*

11329 Մինասյան, Ա. *Կաղանդի առթիվ. էջ 15*

11329ա Միութենական *շարժում։ [Սպորտ լուրեր]. էջ 16*

ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

LE FOYER. Organ des Arméniens Refugies en France. Paris, *1931.*

— Խմբագիր՝ Լ. Բաշալյան։

Ֆրանսերեն և հայերեն

1 9 3 2

ԱՅԳԵՍՏԱՆ: *Պարբերաթերթ գրականության և արվեստի։ Աթենք, 1932, տպ. «Նոր-օր» 16 էջ, (47×29սմ).*

— Խմբագրական կազմ։

Айгестан. Сады. Журнал литературы и искусства. Афины, 1932.

ԱՐԳԵՈՍ: *Պաշտոնաթերթ Չոմախլուի Հայրենակցական Միության։ Նյու-Յորկ, 1932—1937*

Аргеос. Орган Землячества Чомахлу. Нью-Иорк, 1932—1937.

ԱՐԵԳ: *Անկախ շաբաթաթերթ։ Մարսել, 1932—1933. 4 էջ, (58×33սմ).*

— *Դիրեկտոր՝ դոքտ. Խաչիկյան։*

Арег. Солнце. Независимый еженедельник. Марсель, 1932—1933.

ԱՐԵՎԵԼՔ–ԱՐՁԱՆ: *Հանդես գրականության և արվեստի։ Կ. Պոլիս, տպ. Հակոբ Աբրահամյան, 1932—1933. 32 էջ (22×14սմ)։ Բաժանորդագինը 250 ղրուշ։*

Արտոնատեր՝ Հ. Երանյան։

Ընդհ. հրատ. տնօրեն՝ Վահան Գերպերյան։

Аревелк-Ардзан. Восток-Статуя. Журнал литературы и искусства. Константинополь, 1932—1933.

1933 № 1, էջ 1—32

1933 թվի մարտ № 1-ի մեջ տպագրված Հ. Քեչիշյանի «Մեր ուղեգիծը» հոդվածում ասված է. «Խորտակելով արգելքները — ավելի բարոյական քան նյութական-գրական երկու պարբերաթերթեր իրարու մեջ կձուլվին այսօր, մեկ ճակատով ներկայանալու համար։ Հստակ է մեր ուղեգիծը և պարզ։ ...Ազատ բեմ մը բոլոր անոնց համար որոնք իրենց հոգին գտնվելով հանդերձ, պիտի բերեն համեստ նպաստ մը հայ գրականության փայլ սփռեցնելով ու տարածելով։

Հին նորի խնդիր ալ չկա մեզի համար։ Արժեքը արժեք է և լայն տեղ ունի մեր հանդեսին մեջ, իսկ գրկաբաց կընդունենք վաղվան խոստումնալից եկվորը։

...Ազատություն տալով երիտասարդության անկեղծ ու տաք խոսքին և ինքնամշակումին, մենք պիտի ներկայացնենք նաև եվրոպական գրականության լավագույն դեմքերը, խնամված թարգմանություններով։

Ասկե զատ, չենք կրնար անտարբեր մնալ այն հարաճուն ու ծավալուն շարժումին հանդեպ, որ այսօր խորհր. Հայաստանի գրականությունը կբեղմնավորի, գեղեցիկ ստեղծագործություններու շարքին մը ծնունդ տալով։ Պարբերաբար պիտի ծանոթացնենք Հայաստանի գրողները, որոնց մեջ ճշմարիտ տաղանդներ չեն պակասիր»։

1933 ՄԱՐՏ 20, № 1, ԷՋ 1—32

11330 Քեչիշյան, Հ. *Մեր ուղեգիծը. էջ 1—3*

11331 Թեքեյան, Վ. *Եկեղեցի։ [Բանաստեղծութ.]. էջ 3*

11332 Այվազյան, Ն. *Ասույթներ, էջ 4—6*

11333 Թրենց, Գ. *Սպիներ։ [Բանաստեղծութ.]. էջ 6*

11334 Նարդունի, Շ. *Կարմիր վարդեր։ (Հեքիաթ). էջ 7—8*

11335 Մերտինյան, Մ. *Թափառումներ։ (Ես ինձ հետ). էջ 9—10*

11336 Նաքանյան, Գ. *Ժամերի թեող պարուհի։ [Բանաստեղծութ.]. էջ 11—14*

11337 Թեոլեոլյան, Մ. *Հեքիաթ. էջ 15—16*

11338 Սինանյան, Հ. Մ. *Մարսել Փրուստ։ (Կյանք և գործ.). էջ 17—21*

11339 Իվան Վազոֆ: *[Բուլղար գրող]. էջ 22—23*

11340 Մարսել, Մ. *Օր. Պատուրյանի մասին։ [Երաժիշտ]. էջ 24—26*

11341 Սիմինյան, էդ. *Հակոբ Մնձուրի։ [Պոլսահայ գրող]. էջ 27—28*

ԱՐԵՎԵԼՔ: *Քաղաքական, տնտեսական և գրական օրաթերթ։ Ստամբուլ, 1932—1934. 4 էջ, (57×41սմ).*

— *Խմբագիր՝ Խորեն Ճամճայան։*

Аревелк. Восток. Политическая, экономическая и литературная газета. Стамбул, 1932—1934.

ԱՐԵՎԵԼՔ: *Կիսամսյա հավելված (համանուն թերթի)։ Գրականության և արվեստներու Ստամբուլ, 1932. 16 էջ (28×21 սմ).*

— *Արտոնատեր-խմբագիր՝ Խորեն Ճամճյան։*

Аревелк. Восток. Двухнедельное приложение к вышеназв. газете. Стамбул, 1932.

ԱՐՁԱՆ: *Պարբերագիր գրականության և արվեստի։ (Պոլսահայ երիտասարդության գրական հանդես)։ Ստամբուլ, 1932. 24 էջ, (25×18 սմ).*

— *Խմբագրություն՝ Մ. Թելելյան, Մ. Մերդինյան։*

Ардзан. Статуя. Периодическое изд. литературы и искусства. Стамбул, 1932.

ԱՐՓԻ: *Հայ ընտանիքին պարբերականը։ Ալիստոն (Ամերիկա), 1932—1934. 24 էջ, (26×18 սմ).*

— Խմբագիր՝ դոկտ. Ա. Բաբախյան։

Арпи. Солнце. Армянский семейный журнал. Алистон, 1932—1934.

ԱՐՇԱՎ: *Քաղաքական, հասարակական, գրական շաբաթաթերթ։ Փարիզ, 1932. 4 էջ, (60×45 սմ).*

Аршав. Наступление. Политический, общественный, научный еженедельник. Париж, 1932.

Այս թերթը շարունակությունն է 1932 թ. «Դարբնոց»-ի.

ԴԱՐԲՆՈՑ: *Քաղաքական, հասարակական և գրական երկօրյա թերթ։ Փարիզ, 1932. 4 էջ, (41×30 սմ).*

Առաջադիմական ուղղության թերթ։

Дарбноц. Кузница. Политическая, общественная, литературная газета. Париж, 1932.

ԴԻՏԱԿ: *Կրոնական թերթ. Նյու-Յորք, 1932. Հրատ. D. Siramark. Նյու-Յորք, 4 էջ (41×30 սմ).*

Дитак. Зрительная труба. Религиезный журнал. Нью-Иорк, 1932.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԻ: *Ամսագիր գրական, գեղարվեստական։ Բեյրութ, տպ. «Ազդակ», 1932—1933. 32 էջ, (28×21 սմ).*

— Հիմնադիր դիրեկտոր՝ Սիրան Սեզա։

Еритасард айуи. Молодая армянка. Литературно-художественный журнал. Бейрут, 1932—1933.

ԶԱՐԹՈՆՔ: *Ազգային, գրական և քաղաքական օրաթերթ։ Ստամբուլ, 1932—1933. 4 էջ, (62×47 սմ).*

— Պատ. խմբագիր՝ Բյուզանդ Ճամլյան։

Зартонк. Возрождение. Национально-литературная и политическая газета. Стамбул, 1932—1933.

ԶԱՐԹՈՆՔ: *Ամսագիր։ Գրական, գիտական և ընկերային։ Ստամբուլ. 1932 տպ. «Կոյումճեան-բերգ», 24 էջ (29×21 սմ).*

— Արտոնատեր՝ Հ. Զարպհանելյան

— Տնօրեն՝ Բ. Ճամլյան

Зартонк. Возрождение. Литературный, научный, общественный ежемесячник. Стамбул, 1932

ԽՌՈՎՔ: *Իմաստասիրական-գիտական ամսագիր։ Սոֆիա, 1932. № 1.*

— Խմբագիր՝ Հ. Ասատրյան։

Хровк. Волнение. Научно-философский журнал. София, 1932.

ՀԱՅ ԽՈՍՆԱԿ ՄԱՆԿԱՆՑ: *Մանկական ամսաթերթ։ Սիրուն պատմվածքներ, հեքիաթներ, մանկական երգեր, քերթվածներ։ Զվարճալիք, մտքի զբոսանք (պարգևավոր)։ Կ. Պոլիս, 1932—1933, 16 էջ, (27×19 սմ)։ Բաժանորդագինը 100 ղրուշ։*

Տնօրեն-խմբագիր՝ Զարմայր ա. քահ. Կեպյուրյան։

Ай хоснак манканц. Армянский детский певун. Детский журнал. Константинополь, 1932—1933.

«Հայ խոսնակ մանկանց»-ի խմբագիրը ամսաթերթի նյութերը խճողել է՝ կրոնա-բարոյախոսական և թարգմանական հոդվածներով, աննշան տեղ հատկացնելով մանկական ստեղծագործություններին։

1933 ՀՈՒՆՎԱՐ, № 1, ԷՋ 1—16

11342 1933. *[Խմբագրական]. էջ 2*

11343 Պապիկ: *Ծննդի նոր հրաշք մը։ [Թարգմ.]. էջ 3—5*

11344 Մամիկ: *Ասիկա ալ ծննդի պատմություն մըն է. էջ 7—8*

11345 Դեպք *մը դպրոցին մեջ։ [Թարգմ]. էջ 89—92 **

11346 Արտասվոր *ժամացույց մը. էջ 93*

11347 Զինագետի *որսորդություն մը. էջ 94—95*

11348 Մտքի *զբոսանք. էջ 95—96*

11349 Սիմքեյան, Գ. *Դանիկն ու Անիկը։ [Բանաստեղծութ.]. էջ 9*

11350 Խոսնակ: *Թագավոր ըլլալ կուզեմ։ [Պատմըվածք]. էջ 10—12*

11351 Կարճ *պատմություններ։ [Թարգմ]. էջ 13—14*

11352 Մեր *գվարթ էջը. էջ 15—16*

1933 ՓԵՏՐՎԱՐ, № 2, ԷՋ 17—32

11353 Մեծ *հայրիկ։ Փորձառության ձայնը. էջ 18—19*

** Էջակալումը փոխված է։*

11354 Կորդյան հանդույցը. էջ 19

11355 Սիմինչյան, Գ. *Մանկիկը — Հայրիկը։ [Բանաստեղծութ.]. էջ 20*

11356 Ճամբորդություն *մը Սելյան կղզին. էջ 21—23*

11357 Կարճ *պատմվածքներ։ [Թարգմ.]. էջ 23*

11358 Պատմվածքներ *Սև անտառեն. էջ 24—27*

11359 Լակերլոֆ, Ս. *Ուրվականի ձայնը։ [Թարգմ.]. էջ 27—29*

11360 Մեր *զվարճալի էջը. էջ 30*

11361 Մտքի *զբոսանք. էջ 31—32*

ՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏ: *Շաբաթաթերթ։ Գոլոմպ, 1932.*

Ай пандухт. Армянский странник. Еженедельник. Коломбо, 1932.

ՀԱՅ ՎԱՍՏԱԿ: *Առևտրական և տնտեսական հանդես։ Բոստոն, 1932—1933. 32 էջ, (26×19սմ).*

Ай вастак. Армянский труд. Торгово-экономический журнал. Бостон, 1932—1933.

ՄԱՄՈՒԼ: *Օրաթերթ։ Կ. Պոլիս, 1932.*

— Խմբագիր՝ Գ. Հրանտ։

Мамул. Печать. Газета. Константинополь, 1932.

ՄԱՐՏԿՈՑ: *Օրաթերթ ազգային, քաղաքական, գրական։ Փարիզ, 1932—1933, 4 էջ, (54×37սմ). Բաժանորդագինը 120 ֆր.*

Марткоц. Бойница. Национально-политическ. и литературная газета. Париж, 1932—1933.

Դաշնակցական ուղղության թերթ է եղել։

ՆՈՐԱՎԵՊ: *Շաբաթաթերթ եվրոպական գրականության գոհարներու Բուխարեստ, 1932—1933. 32 էջ (29×19 սմ).*

— Հրատարակիչ՝ Արամ Հարությունյան։

Норавеп. Новелла. Еженедельник европейской избранной литературы. Бухарест, 1932—1933.

ՆՈՐ ԾԱՂԻԿ: *Կիսամսյա հանդես. գրական-գիտական-գեղարվեստական։ Ադիս-Աբաբա (Եթովպիա), 1932. տպ. «Ալիս». 8 էջ, (27×18սմ)։ Բաժանորդագինը 10 թալեր։*

Нор-Цахик. Новый цветок. Двухнедельник литературный, научный и художественный. Адис-Абеба, 1932.

1932 թվի մայիսի 1-ի № 1-ում ասված է. Եթովպահայ գաղութին մեջ պակաս մը լրացնելու մտադրությամբ... հանձն առինք հրատարակել մեր սեփական հանդեսը «Նոր Ծաղիկ» անունով, որ մտադիր է առանց նկատումի և առանց մասնակի հատվածի ապավինելու, անկախ գետնի վրա, տալ հայ հասարակության՝ ազգային, գրական, քաղաքական և գիտական կյանքի շուրջը ընտիր գրություններ, այսպիսով կարենալ մասամբ սատարելու համար գաղութիս երիտասարդության և առհասարակ ժողովրդյան, առանց հասարակարգի խտրության, մտավոր և բարոյական զարգացման։ Մեծամեծ խոստումներ է տվել խմբագրությունը՝ ...«Սատարելու» տեղի հայ գաղութի մտավոր ու բարոյական զարգացմանը, ժողովրդին տեղյակ պահել Մայր Հայրենիքի մեջ տիրող անցուդարձին, բայց շատ աղքատ է եղել իր բովանդակությամբ։

1932 ՄԱՅԻՍ, № 1, ԷՋ 1—8

11362 Մեր նպատակը: *[Խմբագրական]. էջ 1—2*

11363 Կեվներյան, *Հ. քահ. Ս. Հարության պատգամը. էջ 2—3*

11364 Հասմիկ: *Զատիկ չի գար։ [Բանաստեղծութ.]. էջ 4*

11365 Թերզիպաշյան, Ա. *Այժմեական հարցեր։ [Ատիս-Ապապայի մասին]. էջ 5—6*

11366 Կեոքճյան, Ա. *Կորսվածին ետևեն։ [Պատմվածք]. էջ 6—7*

11367 Տեղական *լուրեր. էջ 7*

11368 Ազգային *լուրեր. էջ 8*

11369 Միջազգային *կյանք. էջ 8*

ՇԵՓՈՐ: *Շաբաթաթերթ։ Մարսել, 1932.*

Шепор. Фанфара. Еженедельник. Марсель, 1932.

ՊԱՐՏԷԶ: Մանկական պարբերաթերթ։ Պլովդիվ [Բուլղարիա], տպ. «Փարոս», 1932—1933. 8—16 էջ, (23×16սմ)։ Բաժանորդագինը 30 լևա։

Տեր և տնօրեն՝ Հ. Մարաշլյան։

Партез. Садик. Детский периодический журнал. Пловдив, 1932—1933.

Այս մանկական պարբերաթերթը հրատարակվել է Բուլղարիայում [Պլովդիվ] տարեկան 10 համար։ Մանկական պատմվածքների, բանաստեղծությունների, հեքիաթների, հանելուկ,շուտասելուկների հետ տպագրվել են նաև օտար գրականության նմուշներ։ Սովետահայ հեղինակներից նույնպես նյութեր կան։ «Պարտեզ»-ը աչքառու է թե իր բովանդակությամբ և թե արտաքինով։

1932 ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ № 3—4, ԷՋ 1—16

11370 Շամալյան, Գ. Հ. Զարգացի՛ր [Բանաստեղծութ.]. էջ 1

11371 Մայրի՛կ, շուտ ոտքի ել. էջ 2—3

11372 Գլպուղ, Զարեհ: Կանաչ երամ։ [Բանաստեղծութ.]. էջ 3

11372ա Հայը պանդուխտ է, բայց... էջ 4—7

11373 Կապիկներու վրեժը. էջ 5

11374 Հրանդ. Հրահան: Դպրոցականներու մեծ մայրիկը. էջ 6—7

11375 Սեպուհ: Մեր պտույտը. էջ 8—9

11376 Խրիմյան հայրիկ. էջ 7

11377 Սերամբեքյան-Շամալյան, Վ. Ֆրանքլինի կյանքը. էջ 10—11

11378 Արջը. էջ 12—13

11379 Փոքրիկ նվագածու։ [Թարգմ.]. էջ 14—15

11380 Հանելուկներ. էջ 16

ՎԷՄ: Երկամսյա հանդես մշակույթի և պատմության։ Փարիզ, 1932—1934. 160, 272 էջ, (25×16սմ). Բաժանորդագինը 60 ֆր.

— Խմբագիր՝ Ս. Վրացյան։

Вем. Столп. Двухмесячный журнал. Париж, 1932—1934.

Դաշնակցության պարբերականն է եղել։

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ: Երկշաբաթաթերթ։ Սոֆիա, 1932.

— Խմբագիր՝ Անդրիաս Հակոբյան։

Верацнунд. Возрождение. Двухнедельник. София, 1932.

ՎԵՐԵԼՔ: Անկախ շաբաթաթերթ։ Աթենք, 1932. 4 էջ, (58×43սմ).

— Արտոնատեր և պատ. տնօրեն՝ Տ. Էնֆիեճյան։

